# ԷՋՄԻԱԾԻՆ



Ե-Զ
1999

ԾԵ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Մայիս – Յունիս
1999

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանգիստ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի .......................... 3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի նախագահին ................ 5
Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի ողջույնի խոսքը Հունաստանի նախագահ Կոնստանտինոս Ստեփանոպուլոսին .................. 7
Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը նորընտիր Ազգային ժողովին ................................................ 9
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի շնորհավորանքները նորընտիր Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին և վարչապետ Վազգեն Սարգսյանին ............................................................................ 11
Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց Ազգային ժողովի նորընտիր նախագահին ............................................................................ 12
Հայաստանի Հանրապետության վարչապետն ստացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը ........................................ 12
Հռոմի Պապի Հայաստան ծրագրված այցելության մասին ............................ 13

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐՆ ՈՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանին արքության պատիվ և տիտղոս շնորհելու մասին ........................................ 16
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի ուղերձը «Հավատք և ժառանգություն» շարժման մասնակիցներին .......................... 18
Հայրապետական խոսք «Արտերկրի հայկական պատմամշակութային ժառանգութեան խնդիրները» միջազգային գիտաժողովի բացման առթիւ ................................................ 20
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնության գիրը Դամասկոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Հայ Երիտասարդաց Ընկերակցությանը ............................................ 23
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի պատգամը Ավստրալիայի հայոց թեմի երեսփոխանական-պատգամավորական ընդհանուր ժողովին ......... 25
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի պատգամը Կանադայի հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովին ........................................ 27
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնության գիրը Նյու Յորքի Իրանահայ Միությանը ............................................................. 30

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Նորայր (Պող) Տեր-Գևորգյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին ........ 31
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Շառլ Ազնավուրին «.Ս Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին........ 32
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Լևոն Սայանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին........ 34
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը դոկտ. Սուրեն Նարպեյ Պայրամյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին........ 35
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը պրոֆ Գեորգ Խրլոպյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին........ 36
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը ֆրանսիացի հայագետ Ժան Միշել Թիերիին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին........ 38
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տիար Գեղամ Թորոսյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին........ 40
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տիար Անդրանիկ Գազարյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին........ 42
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տիար Ժակ Մինասյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին........ 43
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տիար Կարպիս Սոլաքյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին........ 44
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ օրհնության և գնահատանքի կոնդակը տիար Սեդրակ Սամվելյանին ծննդյան 85-ամյակի առիթով........ 45
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի խոսքը Խոր Վիրապում Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու տոնին........ 46
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի բացման խոսքը «Աստվածաշնչյան Հայաստան» գիտաժողովում Օշականի Ս. Մեսրոպ դպրատանը........ 47
Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում........ 49
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի ամփոփ զեկույցը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեության (1998 սեպտեմբեր - 1999 մարտ) ներկայացված Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստին 12 - 15 մայիսի 1999 թ ........ 51

Հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ............ 66
Արցախի թեմի առաջնորդ և Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանին շնորհվեց արքության պատիվ ............ 67
Նորայր (Բոբ) Տեր-Գևորգյանին հանձնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը ............ 68
Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Համաշխարհային բանկի նախագահին ............ 69
Մայր Աթոռ Ս. Էջմածին այցելեց Ջոն Հանթսմանը ............ 69

## ԿՐՕՆԱԿԱՆ

Կ. Պոլսոյ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Պատրիարք Մութաֆեանի քարոզը խօսուած Մայր Տաճարում Երկրորդ Ծաղկազարդի տօնին ............ 70
Կանադահայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի քարոզը՝ խոսված Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցում Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապեն տոնի առիթով ............ 76
Համառոտ ակնարկ «Սուրբ Հոգու բխման հունական և լատինական ավանդությունները» գործի մասին.: ............ 79
Սուրբ հոգու բխման հունական և լատինական ավանդությունները ............ 83

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Ա. ԲՈԶՈՅԱՆ - Սկևռայի Ավետարանի ոդիսականը ............ 93
ՎԻԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ - Սկևռայի Ավետարանը. կրթողային վերահայտնված հուշարձան ............ 102
ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Արժեքավոր հրատարակություններ ............ 109
ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ - Մի հրատարակության առիթով ............ 118
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - «Յոյսի անտես թևերով» ............ 122

## *1700 - ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ*

ՖԼՈՐԱ ԿԱԲԱՂՅԱՆ - «Հավատք և ժառանգություն» ............ 126
ՖԼՈՐԱ ԿԱԲԱՂՅԱՆ - Մկրտություն Զվարթնոցում ............ 128
Միջազգային գիտաժողով Երևանում ............ 130
«Աստվածաշնչական Հայաստան» ............ 131

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Հարգանքի մատուցում հայոց Լուսավորչի հիշատակին ............ 136
ԳԵՎՈՐԳ ՄԱԿԱՐՅԱՆ - Ամավերջի հանդիսություն Գևորգյան Հոգևոր ճեմարանում ............ 139
Գևորգյան Հոգևոր ճեմարանում նշվեց Պարույր Սևակի 75-ամյա հոբելյանը ............ 141

Յոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Սերգեյ Փարաջանովի.......... 141
Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմածնում ........................ 142
ՍԱՀԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՍՊԱՐՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն
Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում.......................................... 148
Տեր Սամուել քահանա Թորոսյան ................................................................ 149
ԳԱԳԻԿ ԲԱԲԱՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Կոտայքի թեմում .... 150
ԲՈՐԻՍ ՔՈՉԱՐՅԱՆ - Ձերմուկում հիմքը դրվեց նոր եկեղեցու ........................ 151
Բուլղարահայ թեմական և եկեղեցական կյանք.............................................. 152
Տ. Տիրայր քահանա Հատավյան.................................................................. 154
Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյան ......................................................... 154
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից ............................................................... 156
Լուրեր Արմավիրի թեմից ............................................................................ 158
Ս. Քեթրինգում գումարվեց Կանադահայոց թեմի պատգամավորական
ԺԶ ժողովը ............................................................................................ 162

*ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ*

Բ.Ս.Ն. - Լուրեր ......................................................................................164

**ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ**

ՄԱՄԻԿՈՆ ՄՐԿ. ԱՎԵՏԻՍՅԱՆ - Համաժողով՝ նվիրված
կրոնական համոզմունքների ազատությանը............................................. 167

*ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀ*

Եթովպական Ուղղափառ եկեղեցի ................................................................ 170
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - Եկեղեցական բեմ. լուրեր ................................................. 173
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата ...... 179
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin..................................184
"Etchmiadzine" organe officiel du Saint-Siège d'Etchmiadzine ....................188

***ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ*՝ ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

**ԴԱՍԻՉ՝ 77764**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ**

ՀՐԱՄԱՆԱՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՋԱՊԱԼԵԱՆԻ



Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՆԳԻՍՏ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Խոր վշտով հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Վեհարանում հունիսի 29-ին, երեքշաբթի, ժամը 17.50-ին, անժամանակ, կյանքի 67-րդ տարում ի Տեր հանգչավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատև և ծանր հիվանդությունից հետո:

Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետը Լուսավորչի Աթոռին բազմեց 1995 թ. ապրիլի 4-ի ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի ընտրությամբ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության 18-ամյա գահակալի հարուստ փորձառությամբ: Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառամյա հովվապետության տարիներին իմաստությամբ ու անսակարկ նվիրումով հովվեց Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցին: Նորին Սրբությունը Մայր Հայրենիքի, Արցախի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգևոր վերազարթոնքի, հզորության ու միասնության սրբազան առաքելությանը ծառայեցրեց իր եռանդն ու անխոնջ ջանքերը, խոսքն ու գործը:

«Հարկ ի վերայ մեր կայ» պարտքի զգացումով իր հայացքը հառած քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյա դարակազմիկ հոբելյանին, Հայոց Հայրապետն արդյունավորեց հովվապետության կարճատև իր շրջանի յուրաքանչյուր օրն ու ժամը: Վերակազմվեցին Հայ Եկեղեցու թեմերը Հայաստանում և ԱՊՀ երկրներում: Ընդարձակվեց եկեղեցաշինությունը՝ վերանորոգվեցին և բարեզարդվեցին խոնարհված եկեղեցիներ ու վանքեր, կառուցվեցին նորերը: Գևորգյան ճեմարանի նորոգյալ հարկից ներս հասունացավ հոգևոր սպասավորների նոր սերունդ: Աշխուժացավ և ընդարձակվեց Քրիստոնեական Դաստիարակության ու Քարոզչության Կենտրոնի գործունեությունը: Գործել սկսեց Օշականի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» նորաբաց դպրատունը: Արգասաբեր եղավ Մայր Աթոռի հրատարակ-

չական գործունեությունը՝ հրատարակությամբ աստվածաբանական և հայագիտական աշխատությունների, որոնց շարքում՝ Վեհափառ Հայրապետի մեծաթիվ գրքեր ու գրվածքներ:

1700-ամյակի շրջագծում Մոսկվայի Կրեմլում, Վատիկանում և աշխարհի այլ քաղաքներում բացվեցին եկեղեցական արվեստի ցուցահանդեսներ, կազմակերպվեցին գիտաժողովներ և ուխտագնացություններ՝ դեպի հայրենի սրբավայրեր: Կյանքի կոչվեցին սոցիալական զարգացման ծրագրեր՝ ուղղված տնտեսական դժվարությունների հաղթահարմանը Հայաստանում և Արցախում: Իր բարձր հեղինակությամբ Վեհափառ Հայրապետն առավել ամրապնդեց էկումենիկ կապերը քույր եկեղեցիների հետ, հովվապետական հաճախակի այցելություններով մխիթարեց և օրհնություն բաշխեց հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս և Սփյուռս: Նորին Սրբությունը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպես խոշոր մտավորական, արժանացել է աշխարհի մի շարք ակադեմիաների և համալսարանների պատվավոր դոկտորի կոչմանը:

Մայր Աթոռի սգավոր միաբանությունը՝ խորազգաց հավատավոր մեր ժողովրդի և Հայրենի պետության՝ առ Վեհափառ Հայրապետը ցուցաբերած որդիական սիրո և սրտակցության դրսևորումից, Սուրբ Հոգու մխիթարությունն է հայցում համայն հայությանը: Մայր Աթոռի միաբանությունը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում են քառասնօրյա սուգ:

Աղոթք, խունկ և բյուր օրհնություն Վեհափառ Հայրապետի անմեռ հիշատակին: Թող Բարին Աստված Իր Փառաց Պսակին արժանացնի և երկնային երանավետ խաղաղության մեջ ընդունի սիրեցյալ Հայրապետի լույս հոգին՝ ընդ դասս աստվածզգյաց Հայոց երանյալ Հայրապետաց:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

*ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մայիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի նախագահ Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը՝ ՀՀ արտաքին գործերի նախագահ Վարդան Օսկանյանի ուղեկցությամբ: Վեհարանի գահասրահում նախագահին և հունական պատվիրակությանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը: Պատվիրակության կազմում էին Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորիս Նիոտիսը, ազգային էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ալեքսանդրոս Բալտասը, պաշտոնատար այլ անձինք ու գործարարներ: Հանդիպմանը ներկա էին նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, գերաշնորհ հայրեր:

«Դարավոր պատմական կապեր ունեն հույն և հայ ժողովուրդները, սկսած Հելենական շրջանից մինչև Բյուզանդիոն և մինչև այսօրվա Հունաստան, ուր այժմ ապրում են մեր բազմաթիվ զավակները, հպարտ լինելով որպես հույն քաղաքացիներ և հպարտ՝ որպես Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու զավակներ» խոսքերով սկսվող Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը՝ ուղղված Հունաստանի նախագահին, ընթերցեց Հունաստանի թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում փաստեց, որ Հունաստանն էր այն երկիրը, որտեղ 1922 թվականի Իզմիրի ջարդերից հետո հանգրվան գտան բազմաթիվ հայեր:

Այնուհետև Նորին Սրբությունն իր երախտիքը հայտնեց Հունաստանի նախագահին՝ անցյալ տարի Հունաստանի խորհրդարանի կողմից ապրիլի 24-ը որպես Հայոց ցեղասպանության օր հռչակման համար և նշեց, որ այն հունական իշխանությունների բարեկամական վերաբերմունքի մի նոր արտահայտություն էր: Բարեկամության ևս մի արտահայտություն էր անցած տարի Աթենքում՝ Մեղարոնի սրահում կազմակերպված «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Նորին Սրբությունն իր ողջույնը հղեց նաև Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, որի հետ Հայոց Եկեղեցին սերտ հարաբերություններ ունի:

Հունաստանի նախագահը ջերմագին շնորհակալություն հայտնեց հանդիպման համար՝ իր և իր ժողովրդի անունից Վեհափառ Հայրապետին մաղթելով շուտափույթ ապաքինում: Կարևորելով հանդիպումը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, նախագահը հավաստիացրեց, որ այն նոր լիցք կհաղորդի երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

«Շնորհակալություն», - հանդիպման ավարտին հունարեն տառերով թղթին հանձնեց Վեհափառ Հայրապետը:

Ապա Հունաստանի նախագահը կաթողիկոսական Ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ուղեկցությամբ ծանոթացավ Վեհարանի թանգարանում պահվող գանձերին, այցելեց Մայր Տաճար:



ՄԻ ՊԱՀ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ ՍՏԵՓԱՆՈՊՈՒԼՈՍԻՆ

Նորին Վսեմաշուք Պարոն Նախագահ Հունաստանի Հանրապետության,

Ողջունում ենք Ձեզ Սուրբգրական Արարատ լեռան լանջերից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որը դարավոր կենտրոնն է հայ ժողովրդի ուղղափառ սուրբ հավատքի: Մեր առաջին լուսավորիչները, մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալներ Սուրբ Թադեոսը և Սուրբ Բարդուղիմեոսը, բերել են Ավետարանի լույսը Հայաստան, և մեր հավատավոր սուրբ հայրերն ընդունել են այն որպես մեր ժողովրդի կենդանության ավիշը:

Դարավոր պատմական կապեր ունեն հույն և հայ ժողովուրդները՝ սկսած Հելլենական շրջանից մինչև Բյուզանդիոն և մինչև այսօրվա Հունաստան, ուր այսօր ապրում են մեր բազմաթիվ զավակները՝ հպարտ լինելով որպես Հունաստանի քաղաքացիներ և որպես Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու զավակներ: Հայ ժողովուրդը երախտապարտ է Հունաստանի պետությանը, հատկապես այսօրվա հունահայությունը, որը 1922 թվականի Իզմիրի ջարդերից հետո եկավ ու հաստատվեց հյուրընկալ հունական ափերում:

Հույն իշխանությունների բարեկամական վերաբերմունքը մենք տեսանք անցյալ տարի, երբ Հունաստանի խորհրդարանը Ապրիլի 24-ը ընդունեց և հռչակեց Հայոց ցեղասպանության օր: Որպես Հայոց Հովվապետ, ընդունեցեք մեր ջերմ շնորհակալության խոսքը: Մենք սերտ հարաբերություններ և կապեր ունենք նաև Հույն Օրթոդոքս Եկեղեցու և Նրա Առաջնորդի ու հոգևորականության հետ:

Ընդունեցեք նաև մեր բարեմաղթությունները՝ ուղղված Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, հույն պետականությանը և հույն ժողովրդին՝ բարօրության, զարգացման և խաղաղ ու արդար կյանքով ապրելու համար, մի արդար կյանք, որի համար տարիներ շարունակ տառապեցին մեր երկու ժողովուրդները, բայց, փառք Աստուծո, այսօր Հայաստան աշխարհը՝ մեր հայրենիքը ևս, Հունաստանի Հանրապետության նման, անկախ հանրապետություն է և ձգտում է արժանավայել դիմավորել մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը և քրիստոնեությունը մեզանում պետականորեն ընդունելու 1700-ամյակը՝ 2001 թվականին, փորձելով վերականգնել գոնե իր կորցրածների մեկ

մասը կառուցելով նոր եկեղեցիներ և վերակենդանացնելով մեր ազգային մշակույթը:

Հարգելի Պարոն Նախագահ, ընդունեցեք նաև մեր օրհնությունը և ջերմ բարեմաղթությունները, առողջություն և երկար տարիների կյանք Ձերդ Վսեմությանը:

Թող Տերը շնորհի և առաջնորդի Ձեզ ավելի ու ավելի բեղուն հասարակական գործունեության, վանն զարգացման, բարգավաճման հույն մեր քույր ժողովրդի և Հունաստանի Հանրապետության:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*12 մայիս 1999 թ.,*

*Ս. Էջմիածին, Հայաստան*

Յունիսի 10-ին Նորընտիր Ազգային Ժողովի անդրանիկ նիստին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսեանն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը՝ ուղղուած Ազգային Ժողովին:

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Հայրական ամենաքաղցր սիրով եւ գնահատանքով ողջունում ենք Ձեզ բոլորիդ, երբ այս պահին համախմբուել էք իբրեւ պետական նոր Խորհրդարանի անդամներ ստանձնելու համար օրինական եւ իրաւական պարտաւորութիւնները բարձրագոյն պատասխանատուութեան աստիճանի վրայ:

Վստահ եմ, որ Դուք զգում էք Ձեր երակների մէջ մեր ժողովրդի զաւակների երակների տրոփիւնը: Գիտակցում էք, թէ որքա՜ն լուրջ եւ ծանր պարտաւորութիւնների առաջ էք գտնւում, ձեր ականջները լսում են հայ աշխարհի նիւթեղէն եւ հոգեղէն աղբիւրների ձայնը:

Դուք Հայ ժողովրդի պատկերն էք մեր եւ օտար աշխարհի օրէնսդրական իշխանութիւնների առաջ: Ձեր որոշումներն են, որ պիտի օրինագծէն կառուցուածքը եւ վարէն դարաւոր այս երկրի կեանքի եւ զարգացման ընթացքը: Ազգային մեր արժանապատուութիւնը ձեզմով պիտի գտնի իր վաւերական արտայայտութիւնը: Պետութեան կառոյցի դպրոցը Ազգային ժողովն է, որի հիմնական դասագիրքը Սահմանադրութիւնն է, ուսման մեթոդը նուիրաբերեալ անշահախնդիր աշխատանքն է, ազգային ինքնութեան եւ անկախութեան խոր հասկացողութիւնը, ժողովրդին ծառայելու անսակարկելի կամքը:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին բնորոշուել է մեր Սահմանադրութեան մէջ որպէս Ազգային եկեղեցի: Պատմութեան պարտադրանքն է այդ: Ուրանալ կամ թուլացնել այդ ինքնըմբռնումը, այդ ճշմարտութիւնը՝ կը նշանակի ուրանալ մեր պատմութեան ուղին եւ բովանդակութիւնը: Հայց. Առաքելական Ս. եկեղեցու Մայր Աթոռը՝ Ս. էջմիածինը, մնում է Ձեր մկրտարանը որպէս քրիստոնեայ ազգ:

Այս Հոգեւոր Տունը այն օջախն է, որտեղից առաքում ենք Ձեզ Մեր

օրհնութիւնները եւ Հայրապետական ողջոյնները, եւ շնորհաւորելով Ձեզ ջերմօրէն աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած որ օրհնի Ձեր բոլորին եւ լիառատ յաջողութիւն շնորհի Ձեր աշխատանքներին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*10 Յունիս 1999*

*Ս. Էջմիածին*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական հետեւյալ ուղերձն է հղել Հայաստանի Հանրապետության նորընտիր Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին:

*«Մեծարգո Նախագահ,*

*Սրտի խոր գոհունակությամբ, անձնապես եւ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, մեր ողջ հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնից՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ողջունում եւ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը՝ որպես նախագահ Հայաստանի Հանրապետության նորընտիր Ազգային ժողովի:*

*Աղոթում ենք առ ամենակարող Աստված, որ Ձեզ շնորհի քաջառողջություն, անսահման իմաստություն եւ աննկուն կորով: Վստահ ենք, որ Ձեր աստվածատուր կարողությունները եւ տարիների փորձը կօգնեն Ձեզ փառավորապես ի գլուխ հանելու Ձեզ վստահված պարտավորությունները հայրենի օրինաստեղծ Ազգային ժողովում:*

*Բյուր օրհնություն մեր քրիստոնեական հավատքի օջախից՝ Սբ. Էջմիածնից:*

*Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Մեկ այլ նամակով Վեհափառ Հայրապետը շնորհավորել է Հայաստանի նոր նշանակված վարչապետ Վազգեն Սարգսյանին: Նամակում մասնավորապես ասվում է.

*«Մեծարգո Վարչապետ,*

*Սրտի խոր գոհունակությամբ եւ անհուն ուրախությամբ իմացանք Ձեր նշանակումը՝ որպես Վարչապետ Հայաստանի Հանրապետության:*

*Այսու Հայրապետական գրով, անձնապես եւ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռի միաբանության եւ Գերագույն Հոգեւոր խորհրդի, ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ այս նոր բարձրորեն պատասխանատու պաշտոնին կոչվելու առիթով:*

*Վստահ ենք, որ Ձեր իմաստությամբ, արիությամբ եւ նվիրվածությամբ կանեք գերագույն կարելին Հայաստանի պետականության ամրապնդման եւ բարգավաճման համար՝ հանուն մեր սիրեցյալ ժողովրդի ապահով եւ բարօր կյանքի: Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին ինչպես միշտ զորավիգ կլինի հայրենի կառավարության ազգ եւ երկիր շենացնող ձեռնարկումներին:*

*Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը ստանալու նպատակով հունիսի 13-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորընտիր նախագահ Կարեն Դեմիրճյանը՝ փոխնախագահներ Ալբերտ Բազեյանի եւ Ռուբեն Միրոյանի ուղեկցությամբ:

Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը եւ բարեմաղթանքը տալով Ազգային ժողովի նորընտիր ղեկավարներին՝ հույս եւ համոզում հայտնեց, որ նոր Ազգային ժողովը կշարունակի իր օրինաստեղծ գործը հայրենի երկրի ամրապնդման համար: Վեհափառ Հայրապետը նորընտիր նախագահի ուշադրությունը հրավիրելով երիտասարդ սերնդի հոգեւոր-բարոյական դաստիարակության եւ կրթության գործում եկեղեցու դերին, կարեւորեց եկեղեցի - պետություն կապերի առավել սերտացումը՝ հետագա նոր օրենքների ամրագրմամբ:

Պրն. Դեմիրճյանը Վեհափառ Հայրապետին վստահեցրեց, որ, ստանձնելով Ազգային ժողովի նախագահի պատասխանատու պաշտոնը, կաշխատի ամեն ինչ անել հօգուտ ընդհանուր ազգային շահի:

Հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին, հյուրերը Նորին Սրբությանը մաղթեցին առողջություն եւ բարի ապաքինում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՍՏԱՑԱՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 19-ին Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելեց Հայաստանի Հանրապետության նոր վարչապետ Վազգեն Սարգսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայրապետական օրհնությունը տալով պրն. Սարգսյանին, հայտնեց Իր վստահությունը, որ նոր վարչապետը կարժեւորի խիստ պատասխանատու պաշտոնն իր նվիրվածությամբ ու փորձառությամբ:

«Խորը սիրով եւ սրտով բարձրագույն հաջողություն եմ ցանկանում: Քեզի պետք ունի հայրենիքը: Պետք է հարատեւել», - հայրապետական իր մաղթանքը հայտնեց Վեհափառ Հայրապետը:

Պրն. Սարգսյանը շնորհակալություն եւ առողջության բարի մաղթանքներ հայտնեց Վեհափառ Հայրապետին:

## ՀՌՈՄԻ ՊԱՊԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն նախապես ձեռք բերված պայմանավորվածության, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի հրավերով սույն թվականի հուլիսի 2-4-ը Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապը այցելելու էր Հայաստան՝ հյուրընկալվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Ըստ կազմված և փոխադարձաբար հաստատված ծրագրի, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը այցելելու էր Խոր Վիրապ, Մեծ եղեռնի հուշարձան, հանդիպելու էր Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, Հոգեհանգստյան արարողություն էր կատարելու Գյումրիի Յայոց Ս. Աստվածածին եկեղեցում՝ ի հիշատակ 1998 թ. դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակի, և կաթոլիկ Պատարագ էր մատուցելու Աշոցքի շրջանի հիվանդանոցում:

Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի վատթարացման պատճառով, սակայն, ծրագրված այցելությունը հնարավոր չեղավ իրականացնել:

Ստորև ներկայացնում ենք Հովհաննես-Պողոս Բ Պապի Հայաստան կատարելիք այցելությանը և վերջինիս հետաձգմանը վերաբերող տեղեկատվությունը ըստ Մայր Աթոռի Մամլո Դիվանի հաղորդագրությունների:

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հունիսի 4-ին գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ: Նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվեցին Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի՝ Հայաստան կատարելիք այցի հետ առնչվող հարցեր:

Հավարտ ժողովի Գերագույն Հոգևոր Խորհրդի հանձնարարությամբ Վեհափառ Հայրապետի առողջության վերաբերյալ Մայր Աթոռի դիվանը հրապարակում է հետևյալ հաղորդագրությունը:

«Առ ի գիտություն մեր հավատացյալ ժողովրդի հայտնում ենք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի ապաքինումը դանդաղ է ընթանում, և առայժմ Նորին Սրբությունը չի կարող ծանր աշխատանք տանել:

Կոչ ենք ուղղում մեր հավատավոր ժողովրդին՝ շարունակել աղոթել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապաքինման համար»:

05.06.1999

## ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշմամբ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի այցը Հայաստան հետաձգվում է մինչ նոր տնօրինություն:

Վեհափառ Հայրապետը որոշումը կայացրել է նկատի առնելով բուժող բժիշկների հանձնարարականը, որով Նորին Սրբությանը խորհուրդ չի տրվում ծանրաբեռնված աշխատել, ինչպես նաև հունիսի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի համաձայն կարծիքը:

Հետաձգման առիթով Վեհափառ Հայրապետը խորհրդակցել է Հայաստանի Հանրապետության նախագահի հետ:

Վեհափառ Հայրապետի սույն որոշման մասին Վատիկանը ծանուցվել է Նորին Սրբության ներկայացուցչի և Վատիկանում ՀՀ դեսպանի կողմից:

Հավատացյալ ժողովրդի հետ մեկտեղ վերստին մեր աղոթքն ենք հղում առ Աստված՝ Վեհափառ Հայրապետի բարի ապաքինման համար:

07.06.1999

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻՆ

Հունիսի 10-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Պապական նվիրակ, Գլաստոնիայի տիտղոսավոր արքեպիսկոպոս Գերապայծառ Պիտեր Զուրբրիգենին:

Պապական նվիրակը Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ եղբայրական հրավերի համար: Վատիկանի ներկայացուցիչը նշեց, որ Սրբազան Քահանայապետն ըմբռնումով է մոտեցել Վեհափառ Հայրապետի կողմից այցի հետաձգմանը և իր ցավը հայտնել Նորին Սրբության վատառողջության կապակցությամբ:

«Այս օրերին, երբ Հռոմի Պապը հովվապետական այցելությամբ գտնվում է իր հայրենի Լեհաստանում, մշտապես իր աղոթքներում ներկա են Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հայաստանը», - ասաց պապական նվիրակը:

Իր հերթին Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Հռոմի Պապի եղբայրական ուշադրության համար և իր ողջույնները հղեց Նորին Սրբությանը:

Նույն օրը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ, Վեհափառ Հայրապետի հատուկ ներկայացուցիչ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը Վարշավայում անձնական տեսակցություն է ունեցել Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ի հետ և Վեհափառ Հայրապետի կողմից ափսոսանք հայտնել այցի հետաձգման կապակցությամբ:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ Է ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԸ

Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը Լեհաստան կատարած պաշտոնական այցի ավարտին, Հռոմ վերադառնալուց առաջ, ս. թ. հունիսի 18-ին, մի քանի ժամով զուտ անձնական այցելություն է տալու իր հոգևոր եղբայր Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որպես եղբայրական սիրո արտահայտություն Վեհափառ Հայրապետի ծանր հիվանդության պահին:

Նկատի ունենալով, որ սույն այցը չի փոխարինում հուլիսի 2-4-ը նախատեսված պաշտոնական այցելությանը, որևիցե պաշտոնական-հրապարակային ընդունելություն և միջոցառում տեղի չի ունենալու:

14.06.99

## ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի առողջական վիճակի ոչ բարվոք լինելու պատճառով Սրբազան Քահանայապետի՝ հունիսի 18-ին նախատեսված անձնական այցելությունը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետաձգվել է:

Հռոմի Պապը հույս է հայտնել, որ մոտ ապագայում կկարողանա իրականացնել էկումենիկ ուխտագնացություն դեպի Հայաստան:

16.06.99

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ԵՎ ՏԻՏՂՈՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ**
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ***
**ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՈՐ Ի ՇՈՒՇԻ, ՅԱՐՑԱԽ**

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք, որ Արցախի Թեմական Խորհուրդը գաղափար է յղացել արժանատրապէս նշելու Ձեր ծննդեան 45-ամեակը եւ առաջնորդական պաշտօնավարութեան 10-ամեակը:

Քաջածանօթ ենք Ձեր արժանիքներին, նուիրումին եւ անձնուիրութեան, որ հոգեւորական դառնալուց ի վեր ցուցաբերեցիք Ձեր ծառայութեան զանազան բնագաւառներում, մասնաւորապէս որպէս Հոգեւոր Ճեմարանի փոխտեսուչ եւ ապա Ս. Հռիփսիմէ վանքի վանահայր:

Սակայն ամէն բանից առաւել Ձեր անունը անքակտելիօրէն կապուեց եւ անբաժանելի մաս դարձաւ արցախեան գոյապայքարի, որին Ձեր անմիջական մասնակցութիւնը՝ բերեցիք որպէս վերահաստատուած Արցախի թեմի առաջին առաջնորդը:

Ահա տասը տարիներ սահեցին այդ պատմական օրուանից, եւ Դուք, Ձեր գործակից ու լծակից հոգեւորականների հետ միասին, երբեմն աննկարագրելի զրկանքների ու տառապանքների գնով, կարողացաք հոգեւոր կեանքից բացարձակապէս զրկուած մեր արցախահայութեանը

մօտեցնել Հայաստանեայց Ս. Եկեղեցուն եւ իր աստուածօրհնեալ ժառանգութեանը: Այսօր Արցախի թեմն իր ողջ կառոյցով դարձել է Հայ Եկեղեցու կարեւորագոյն օղակներից մէկը. ուր կայ կենդանի հաւատք. անձնուրաց նուիրում եւ անսպառ եռանդ:

Ի գնահատութիւն Ձեր տասնամեայ սպասաւորութեան որպէս առաջնորդ Արցախի թեմի՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզ շնորհում ենք

**ԵՐԿԹԵՒԹԵԱՆ** պատիւ եւ տիտղոս:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած. որ Ձեզ պարգեւի քաջառողջ եւ երկար կեանք՝ ի փառս Արցախի օրհնեալ թեմի եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ողջ լերուք ի Տէր. զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն. եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 29 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/240**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ «ՀԱՎԱՏՔ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մայիսի 1-2-ը Հայաստանի և Արցախի ողջ տարածքում շուրջ 17 հազար պատանիներ մասնակցեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված «Հավատք և ժառանգություն» շարժմանը: Այդ օրերին շարժման մասնակիցները՝ 14-18 տարեկան պատանիներ ու աղջիկներ, ավելի քան 80 վանքերի և արգելոցների տարածքներում իրականացրեցին բարեզարդման աշխատանքներ:

Գեղեցիկ միջոցառման առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքի ու քաջալերանքի ուղերձը հղեց բոլոր մասնակիցներին: Ուղերձում մասնավորապես ասվում է.

### ԱՊՐԷ՛Ք, ԵՐԵԽԷՔ

Սրտի գերագոյն ատիճանի ուրախութեամբ տեղեկացայ 1700-ամեակի Յանձնախումբի Վարիչ-Տնօրէն Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանէն, որ այս երկու օրերը, 1-2 Մայիս, դուք ձեր կեանքին մէջ արժեցնում էք մեր Մայր Հայրենիքի փառակերտ հին եկեղեցիներին ուխտի գնալով, աղօթք անելով և քրտինք թափելով նրանց մաքրազարդման համար:

Ապրէ՛ք, երեխէք:

Հիանալի մի գաղափար, որին ահա շօշափելի և պերճախօս արտայայտութիւն էք տալիս շքեղ և օրինակելի հաւատարմութեամբ հանդէպ ձեր հայրերի սուրբ ժառանգութեան:

Երջանիկ եմ, որ ճիշտ էք ըմբռնում եկեղեցու իմաստը: Եկեղեցին սոսկ քարը չէ, նիւթը չէ, այլ՝ ձեր ապրումն է, ձեր մասնակցութիւնն է եկեղեցու կեանքին: Բայց քարը ունի իրեն յատուկ իմաստ, քանի նրա միջից են արտայայտւում կրօնական զգացումը, արուեստի տաղանդը:

Ապրէ՛ք, երեխէք:

Հայաստանի կերպարանափոխութիւնը մի տեսակ պայծառակերպութիւն պիտի լինի նո՛ր սերնդով: Ժամանակին մարդիկ եղան, որ քանդեցին, աւերեցին, կեղտոտեցին, արհամարհեցին: Ահա դուք կը վերաշինէք, կը մաքրազարդէք, կը պայծառացնէք:

Ապրէ՛ք, երեխէք:

Այս երկու օրերը ձեզ համար մի տեսակ դպրոցական դասընթացք է, որի միջից հոգին է, որ խօսում է ձեզի, խօսում է ձեզի հետ, խօսում է ձեր միջոցաւ մեր ժողովրդի հետ: 1700-ամեակի պանծացման լաւագոյն և ամենէն պատուաբեր եղանակներից մէկն է այդ:

Որովհետև՝

«Եկեղեցին հայկական՝
ծննդավայրն է հոգւոյս»:

Եւ ո՞ր անձի համար ծննդավայրը քաղցրագոյն վայրը չէ:

Լծուե՛նք աշխատանքի, որպէսզի այդ ծննդավայրը դառնայ մեր բոլորիս համար կենսավայր՝ աղբիւր երջանկութեան և յաղթանակի:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին
1-2 Մայիս 1999

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ «ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Այսու Հայրապետական գրով ջերմօրէն կ՚ողջունենք Ձեզ, որ համախմբուած էք բաղաքամայր Երեւանի մէջ, քննարկելու համար Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն դուրս գտնուող հայկական պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրման և պահպանութեան խնդիրները:

Մենք իբրև Հայոց Հայրապետ կը գնահատենք «Մէկ ազգ մէկ մշակոյթ» փառատօնի շրջագծի մէջ տեղի ունեցող այս գիտաժողովը և մեր օրհնութեան խօսքը կ՚ուղղենք Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի, երիտասարդութեան հարցերի և սպորտի նախարարութեան և Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան և մշակոյթի յուշարձանների պահպանութեան վարչութեան և կազմակերպիչ այլ մարմիններու այս նախաձեռնութեանը, որ թէև ուշ, և սակայն հեռատես և պատասխանատու այս յանձնառութեամբ, համայն աշխարհի հայութեան և նաև քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութեան առարկայ կը դարձնէ մեր ժողովուրդի ստեղծագործ հանճարի արգասիքը հանդիսացող պատմական յուշարձաններու, վանքերու և եկեղեցիներու ուսումնասիրութեան և պահպանութեան հարցերը:

Բայց, նախ կ՚ուզենք յիշատակել այն փաստը, որ Հայաստանի պետութիւնը, խորհրդային շրջանի ամենէն դժուարին և դաժան տարիներում անգամ, հոգ չէ թէ տարբեր հասկացութիւններով, իր ուշադրութեան առարկայ դարձուց հին եկեղեցիներու և յուշարձաններու նորոգութիւնն ու պահպանութիւնը, յաճախ իսպառ կործանումէ և անհետացումէ փրկելով անոնցմէ ոմանք:

Եւ եթէ Հայաստանի մէջ զանազան կերպերով և մակարդակներով կը պահպանուէին մեր եկեղեցիները, նոյն այդ ժամանակներում, տարբեր ճակատագիր կը վերապահուէր արտերկրի մեր վանքերուն և եկեղեցիներուն: Ծայրագոյն Արևելքի մէջ, անտարբերութեան, և կամ հայ համայնքներու

անդամներու տեղաշարժին հետեւանքով անտէր եւ անխնամ մնացին շատ մը եկեղեցիներ, յատկապէս Հնդկաստանի եւ Ինտոնեզիայի մէջ:

Իսկ անդին, Արեւմտեան Հայաստանի ողջ տարածքին, անտես, անշուք եւ լքուած մնացին հարիւրաւոր եկեղեցիներ եւ վանքեր: Երբ փորձինք կարդալ ցուցակը այն բոլոր վանքերուն, որոնք տակաւին 1915 թ. կանգուն էին, պարզապէս կը սահմռկինք, երբ կ՛անդրադառնանք, թէ ի՞նչ եղաւ անոնց ճակատագիրը: Հրդեհի զոհ գացին, թնդանօթներու երախին կուլ գացին, կամուրջ եւ տուն կառուցելու համար քար առ քար խողխողուեցան այդ քարերը: Ամենատես Աստուած միայն գիտէ, թէ ինչ դժուարին ճակատագրի առարկայ դարձան Մշոյ Սուրբ Կարապետը, Կեսարիոյ Սուրբ Կարապետը, Վարագայ վանքը, եւ միւս վանքերը, միւս տաճարները, միւս աղօթարանները: Եւ ինչ ըսել գերեզմաններու սրբապղծման, որուն զոհ գացին մեր սուրբ հայրերու գերեզմանները, Հայոց աշխարհի ամէն կողմը՝ Դարանաղեաց գաւառէն մինչեւ Կիլիկիա եւ մինչեւ Անի եւ Վասպուրական աշխարհ: Ամբողջ երկիր մը աւերակի վերածուեցաւ, եւ հսկայ գանձեր մնացին երկրի երեսին, երկրի ընդերքին:

1915 թ. տեղահանութեան օրերու, Մուշի եւ Վասպուրականի գաղթական հայերը իրենց ուսերուն շալկեցին Մշոյ ճառընտիրը, հարիւրաւոր ձեռագրեր եւ յաջողեցան հասցնել Հայաստան եւ դարերու ժառանգ թողուլ զանոնք, բայց անոնք չէին կրնար Վարագայ Ս. Նշանը իրենց ուսերուն բարձած Արարատեան դաշտ հանել: Եւ ահա թէ ինչու ճարտարապետական հրաշալիքներ ամբողջութեամբ ոչնչացուեցան:

Բայց շատ բան կայ տակաւին փրկելիք: Մենք կը հաւատանք, որ Անիի տաճարները, Աղթամարը, շատ ուրիշ եկեղեցիներ պիտի փրկուին: Ա՛յս է մեր պահանջը, ա՛յս է համաշխարհային քաղաքակրթութեան պահանջը, ա՛յս է 21-րդ դարու նայող մարդու պահանջը: Միւս կողմէ, չմոռնանք, որ ամբողջ աշխարհով մէկ հայկական գաղթականութիւն ունինք, հարիւրաւոր երկիրներ: Հայը ուր գաղթեր էր, ո՛ւր որ գացեր էր՝ իր եկեղեցին էր կառուցել... Սինկապուրէն մինչեւ Եգիպտոս, Երուսաղէմ, Խրիմ, Լեհաստան, Հնդկաստան եւ Ռումանիա.... ո՞ր երկրի մէջ հայ չկար, ո՞ր երկրի մէջ հայը եկեղեցի չէր կառուցած: Բայց ո՞վ գիտէ անոնց մասին: Ո՞վ պէտք է ուսումնասիրէ, քննէ, արձանագրէ այդ բոլորը: Ո՞վ մեր ժողովուրդի զաւակներուն պիտի ճանչնալ տայ Նոր Նախիջեւանի Սուրբ Խաչ վանքը, Ռումանիոյ Հաճկատարը... ահա թէ ինչքան մեծ գործ կայ անելիք, եւ ահա թէ ինչու ձեր այս գիտաժողովը մեզի համար կարեւորագոյն միջոցառում մըն է՝ ուսումնասիրելու համար արտերկրի մեր պատմամշակութային յուշարձանները,

եկեղեցիները, վանքերը և այն բոլորը, որոնք մեր ազգի հաւաքական հարստութիւնն են և մեր ժառանգութիւնը երրորդ հազարամեակը ողջունող մեր զաւակներում:

Բարձրօրէն կը գնահատենք Ձեր տարած այսօրուայ աշխատանքը: Ձեր ձեռքերը թող ըլլան միշտ թարմ և ուժեղ, ստեղծարար և տոկուն:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի մէնջ:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

21 Մայիս 1999 թ.
ի Ս. Էջմիածին

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆԸ

### ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ *ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ* ՈՐ Ի ԴԱՄԱՍԿՈՍ, ՍՈՒՐԻԱ

Անխառն ուրախութեամբ իմացանք Դամասկոսի թեմի առաջնորդական տեղապահ Գերաշնորհ Տ. Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեանէն, որ Դամասկոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան զոյգ մասնաճիւղերն ունեցան ակումբը, կնքուած անմոռանալի անունովը Դամասկոսի ազնուահոգի ազգայիններէն ՆԱԶԱՐԷԹ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ:

Անկեղծօրէն կ՚ուզենք յուսալ, որ սոյն ակումբն իր արդիական գրադարանով ու սրահով եւ յարակից այլ յարմարութիւններով ու կահաւորումով պիտի դառնայ համայն դամասկահայութեան տունը:

Անձնապէս մօտէն ծանօթ եղած ենք երկար տարիներ շարունակ Հ. Բ. Ը. Միութեան եւ Հ. Ե. Ընկերակցութեան Դամասկոսի մէջ կատարած աշխատանքներուն եւ ժետեւողական ջանքերուն՝ ի խնդիր մեր ժողովուրդի բարեկեցութեան եւ յառաջնուն զարգացման:

Խորապէս վստահ ենք, որ նոյն ոգով եւ նուիրումով պիտի շարունակէք ձեր գործունէութիւնը՝ աչքի լոյսի պէս պահելով մեր ժողովուրդի միութեան եւ միասնութեան անխախտելի սկզբունքը:

Նորակերտ ակումբի բացման առիթով, Դամասկոսի Հ. Բ. Ը. Միութեան եւ Հ. Ե. Ընկերակցութեան բոլոր անդամներուն եւ անդամուհիներուն կը բերենք Մեր Հայրապետական գնահատանքն ու հայրական օրհնութիւնը Սրբազնասուրբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն եւ Մայր Հայրենիքէն: Քաջատեղեակ ենք այն անսահման սիրոյն, զոր կը տածէք մեր ազգի հոգեւոր մայր Ս. Էջմիածնի հանդէպ:

Կ՚օրհնենք բոլոր անդամները Եագուպեան նախապետական մեծ ընտանիքին՝ բարերարները այս շքեղ կեդրոնին:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ բոլորից պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, ոյպէսզի շարունակէք ձեր սպասն ընծայել մեր սիրելի ժողովուրդին՝ Դամասկոսի եկեղեցւոյ եւ ասպնջական հողին վրայ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Օրհնութեան Գիրս**
**ի 5 Մայիսի 1999**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Ե/164**

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ-ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ-ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

**(Մայիս 22-23, 1999)**

Ուրախութեամբ տեղեկացանք Աւստրալիայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիօզեանէն, որ Մայիս 22-23-ին (1999) Մելպուռնի մէջ պիտի գումարուի տիրախնամ թեմիդ երեսփոխանական-պատգամաւորական ընդհանուր ժողովը:

Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգւոյն ծննդավայրն է, իսկ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ հոգեւոր հաղորդակցութիւնը՝ այդ հոգւոյն կենսունակութեան գրաւականն ու երաշխիքը: Ուստիեւ Միածնաէջ Սրբավայրին մէջ կը մնանք աղօթող եւ գործող Հայ Եկեղեցւոյ պայծառութեան, անսասանութեան, ինչպէս նաեւ անխախտ ու անսայթաքելի միութեան եւ միասնութեան համար:

Այսպէս մեր հոգւոյ հայեացքը սեւեռած ձեզ վրայ, լաւատեսութեամբ կը սպասենք, որ դուք՝ ուխտապահ հաւատաւորներդ Հայաստանեայց սրբազնաւուրբ Եկեղեցւոյ, Սուրբ Հոգիով լեցուած, կարգապահ յանձնառութեամբ նուիրուիք ձեր առաքելութեան՝ աներեր եւ անշփոթ, Աստուծոյ փառքին եւ մեր սիրելի ժողովուրդին բարիքին համար:

Անսասան կանգնած մեր նախնեաց լոյս հաւատքի ապառաժին վրայ, վճիտ ու անաղարտ պահեցէք մեր ժողովուրդի ոգին՝ իր քրիստոնէական եւ հայկական ազգային արժէքներով, միշտ յառաջընթաց հայեացքով ու տեսիլքով: Այս պէտք է ըլլայ Սփիւռքի տարածքին վրայ գործող հայորդեաց հիմնական ու տեւական մտահոգութիւնը, մշտական ու կայուն մտասեւեռումը, գործունէութեան կեդրոնական առանցքը:

Սուրբ Էջմիածնէն եւ Մեր սրտէն ձեզի կ՚ուղղենք Մեր հայրական սիրոյ ողջոյնն ու օրհնութիւնը՝ լիակատար յաջողութիւն մաղթելով ձեր հոգեշէն աշխատանքներուն՝ հոգեւոր, կրօնական, եկեղեցական, դաստիարակչական եւ ընկերային մարզերուն մէջ: Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ շէն ու լուսաւոր պահէ ձեր աղօթքի տուները, որ անփորձ ու

անվտանգ. մէկ ու անբաժան պահէ համայն հայ հաւատացեալ ժողովուրդն յԱւստրալիա:

Թող Աստուած նոր ներշնչումներ շնորհէ ձեզի ամենքիդ. որպէսզի միշտ պայծառ մնայ մեր Սուրբ Եկեղեցին աշխարհի չորս ծագերուն մէջ:

«Հսկեցէք. հաստատուն կացէք ի հաւատս. ժրացարուք. զօրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13-14). Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**15 Մայիս 1999**

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

**(Մայիս 24-30, 1999)**

Ուրախութեամբ տեղեկացանք Գանատայի հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանէն, որ Մայիսի 24-30-ը պիտի գումարուի թեմիդ տարեկան Պատգամաւորական ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ Տիկնանց եւ Երիտասարդաց պատգամաւորները, ինչպէս նաեւ Հայաստանեան ծրագրերու պատասխանատուները:

Մեր հայրական սիրազեղ ողջոյնն ու հայրապետական օրհնութիւնը կը յղենք Ժողովի բոլոր աստուածասէր եւ եկեղեցանուէր անդամներուն, որոնք այս օրերուն պիտի հաւաքուին՝ քննարկելու անցնող տարուայ գործունէութիւնը եւ կազմելու յառաջիկայ տարուայ աշխատանքային ծրագիրը:

Անհրաժեշտ է միշտ ի մտի ունենալ, որ Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգւոյն ծննդավայրն է, իսկ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ կենդանի կապը՝ այդ հոգւոյն կենսունակութեան երաշխիքն ու հիմքը: Ուստիեւ Միածնաէջ Աթոռին վրայ կը մնանք արօթող եւ գործող Հայ Եկեղեցւոյ պայծառութեան, անսասանութեան, ինչպէս նաեւ անխախտ ու անփոփոխելի միութեան եւ միասնութեան համար:

Սիրելիք մեր, խորապէս վստահ ենք, որ ձեր այս ժողովը երջանիկ առիթ մը պիտի ըլլայ անգամ մը եւս վերանորոգելու ձեր ուխտը՝ անձնուիրաբար եւ համերաշխօրէն աշխատելու, սիրտ սրտի եւ ձեռք ձեռքի տուած, եղբայրական մաքուր զգացումներով ստգորուած եւ մանաւանդ մեր սուրբ Եկեղեցւոյ գերագոյն շահերու աննուազ գիտակցութեամբ: Այս յանձնառութեամբ է, որ անաղօտ ու լուսատր կը մնան հայոց պայծառ հաւատքը, հայ ոգեկանութեան հոգեւոր ու մշակութային արժէքներն այնպէս, ինչպէս մեզի աւանդեցին մեր երկնաբնակ հայրերը:

Այսօր, երբ կրօնական ու բարոյական արժէքները տագնապալի շրջանէ մը կ'անցնին, մենք պիտի ամուր մնանք դարերու փորձով սրբագործուած

եկեղեցական-ազգային աւանդութեանց ապառաժին վրայ. առանց նորարարական խեղաթիւրումներու ու ժամանակավրէպ երեւոյթներու: Փորձուած ճշմարտու-թիւն է. որ ամեն նորութիւն յառաջդիմութիւն չէ, քանզի չկայ իրական յառաջ-դիմութիւն՝ առանց դարերու քուրայով սրբագործուած արժէքներու: Մեր աղօթքն է, որ այս գիտակցութեամբ ջերմացած բանայ ձեր գործունէութեան նոր շրջանը:

Մայրեր եւ քոյրեր, հպարտ եղէք մեր քրիստոնէական հաւատքով: Հպարտ եղէք մեր մայրենի լեզուով եւ մշակութային անկորնչելի արժէք-ներով: Սակայն այս հպարտութեանը խառնեցէք այդ հաւատքը զօրացնելու մղումը, այդ լեզուն ծաղկեցնելու կամքը եւ այդ մշակոյթը հարստացնելու ճիգը, որպէսզի անցեալը չդառնայ անցած, այլ մնայ ներկայ եւ մղիչ ոյժ դառնայ ամենքիս համար:

Այսպէս եւ միայն այսպէս է, որ մենք պիտի կարողանանք բարձր ու վառ պահել ջահը հայ ոգեկանութեան՝ աշխարհի չորս ծագերուն վրայ: Ոգեկա-նութեան այդ ջահին լոյսով է, որ պիտի կարողանանք լուսաւորել մեր ընթացքի ճանապարհը՝ քայլելով անվախ, հաստատուն եւ աներեր:

Երիտասարդներ, ապագան ձերն է: Դուք էք, որ պիտի կերտէք հայ ժողովուրդի պատմութիւնը ԻԱ դարին մէջ: Խօսքը եւ գործը ձերը պիտի ըլլան նոր հազարամեակին ընթացքին, որը մեր ժողովուրդը, հազար փառք Աստուծոյ, կը դիմաւորէ որպէս ազատ եւ անկախ պետութիւն ունեցող հաւաքականութիւն՝ Արարատի հայեացքին ներքոյ:

Երիտասարդութիւնը աստուածապարգեւ այն ժամանակահատուածն է, երբ մարդ իրապէս կրնայ իր առաւելագոյնն ու մեծագոյնը դնել ի սպաս իր ժողովուրդին, իր հայրենիքին եւ իր Եկեղեցւոյն: Ուստի մեղանչում պիտի ըլլայ Աստուծոյ առջեւ այդ ժամանակը մսխումով եւ վատնումով անցկաց-նել՝ տարուած պահի խաբուսիկ ու պատրող ցանկութիւններով: Պէտք է երիտասարդութիւնը ծառայեցնել հին ու աւանդականի վրայ նորանոր ձեռքբերումներ ու նուաճումներ արձանագրելուն, եւ ոչ թէ անցեալի մոռացութեան աւազուտի մէջ հողէ դղեակներ կառուցելուն: Այս եւ միայն ա՛յս պիտի ըլլայ մեր սփիւռքահայ երիտասարդութեան մղումն ու ճիգը՝ օտարութեան ափերուն վրայ:

Վերջապէս, խօսքս կ'ուղղեմ այն բոլոր նուիրեալ անձանց, որ Հայաստան աշխարհին մէջ զանազան ծրագրերու իրականացումն ստանձնած են եւ ջանք ու եռանդ չեն խնայեր այդ ուղղութեամբ:

Պատմութիւնը մեզի կը վկայէ, որ օտար տարածքներուն վրայ մեր թողած արժէքներն ու ժառանգութիւնը ի վերջոյ այլ վախճան չեն ունենար,

եթէ ոչ կը հարստացնեն տեղւոյն ժողովուրդի մշակոյթն ու աւանդը: Հայաստանի եւ միայն Հայաստանի մէջ եղածն է, որ մերն է եւ պիտի մնայ մերը. ոչ ոք պիտի կրնայ այն մեզմէ օտարել: Ուստիեւ կարեւոր է, որպէսզի մեր բոլոր ոյժերը նուիրենք մեր հայրենիքի զարգացմանն ու զօրացմանը, հայրենիք, որ մեզ տուած է Աստուած, եւ որը շաղախուած է մեր հայրերու արդար քրտինքով եւ անմեղ արիւնով: Երանի, որ ունիցի զաւակ ի Հայաստան: Երանի նրան, ով յիշատակ կը թողնի Հայաստանում:

Այս զգացումներով եւ յորդորներով է, որ կը մնանք աղօթող, որ բարին Աստուած նոր շնորհներ բաշխէ ձեզի ամենքիդ, որպէսզի միշտ լուսառատ մնայ մեր Սուրբ Եկեղեցին աշխարհի չորս ծագերում մէջ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13-14). Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

5 Մայիս 1999

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹՅԱՆԸ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՁԱԽԱԿԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՑ**
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ**
**ԱՆԴԱՄՈՑ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ**
**ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Հոգեկան անխառն ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանէն, որ Նիւ Եորքի Իրանահայ Միութիւնը արժանավայել շուքով կը նշէ իր կազմութեան 50 -ամեակը:

Մենք անձնապէս տեղեակ ենք, որ անցնող հինգ տասնամեակներու ընթացքին Իրանահայ Միութիւնը ազգային եւ մշակութային հանդիսու-թիւններ կազմակերպելով՝ իր օգտակար նպաստը բերած է հայապահ-պանման եւ հայրենասիրական նուիրական առաքելութեան:

Իրանահայ Միութիւնը, ամէն յարմարութիւններով օժտուած իր սեփական կեդրոնը ունենալէ ետք, կրկնապատկած է իր ճիգերը եւ մշակութասէր հասարակութեան ներկայացուցած է բազմաթիւ արժէքաւոր ձեռնարկներ:

Մեր մաղթանքն է որ 50-ամեակի այս խանդավառ նշումը դառնայ նոր եւ յարաճուն իրագործումներու մղիչ ույժ, որպէսզի առաւել եւս ճոխանայ ու ծաղկի համայնքի մշակութային և ազգային հասարակական կեանքը:

Այս ուրախ առիթով Իրանահայ Միութեան կը շնորհենք սոյն

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

ի գնահատութիւն անոր բեղուն գործունէութեան:

Կ՚աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իրանահայ Միութեան բոլոր անդամներուն անխտիր պարգեւէ քաջառողջ կեանք եւ Իր շնորհները առատացնէ անոնց վրայ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Օրհնութեան Գիրս**
**ի 4 Յունիսի 1999**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/ 166**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՈՐԱՅՐ (ՊՈՊ) ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ**
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ՆՈՐԱՅՐ (ՊՈՊ) ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆԻՆ***
**ՈՐ Ի ՊԱՆՔՈՔ, ԹԱՅԼԱՆՏ**

Անցնող տարիների Ձեզ անձամբ ճանչնալու ուրախութիւնը ունեցանք Ծայրագոյն Արեւելքի Պանքոք քաղաքի, ի Մայր Հայաստան եւ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ձեր մէջ տեսանք մարդկային ազնուագոյն զգացումներուն հետ միասին հայկական հարազատ ապրումների եւ նուիրաբերումի օրինակելի ոգի:

Դուք ցուցաբերեցիք բացառիկ սէր եւ զոհողութիւն հանդէպ Ձեր Առաքելական Մայր Եկեղեցիին, Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Բազմաթիւ բարերարութիւններով Դուք Ձեր լայն բաժինը բերիք մեր ազգի զարգացման եւ հայրենիքի շինութեան: Ամենէն գեղեցիկ եւ տպաւորիչ արարքը եղաւ Ձեր իշխանական նուիրատուութիւնը մեր Եկեղեցւոյ հիմնադրութեան 1700-ամեակին առիթով, Դուք լայն բաժին բերիք Երեւան մայրաքաղաքի մէջ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ անունով կառուցուելիք եկեղեցու մուտքին շինուող Ս. ԱՇԽԷՆ մատուռին:

Ի գնահատութիւն Ձեր այս գովելի եւ աստուածահաճոյ արարքին եւ այլ ազգանուէր եւ եկեղեցասէր նուիրատուութեանց՝ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ:

Կ՛աղօթենք առ Աստուած, որ զօրացնէ Ձեզ եւ Ձեր թանկագին տիկինը՝ Լինտան, եւ Ձեր զաւակները, որոնք միշտ զօրավիգ կանգնեցան Ձեզի Ձեր ամբողջ կեանքի ընթացքին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 22 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/ 235**

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

## *ՇԱՌԼ ԱԶՆԱՒՈՒՐԻ*

## ՈՐ Ի ՓԱՐԻԶ. ՖՐԱՆՍԱ

Ողորմութեամբն Աստուծոյ, երգի ազնուագոյն արուեստը մեր ժողովուրդին շնորհուած պարգևներէն մէկն եղած է ի սկզբանէ, որ երբեմն իր շռայլ արտայայտութիւնը գտած է բացառիկ անձնաւորութեանց կեանքին մէջ:

Այդ աստղաբոյլին մէջ առանձնայատուկ լոյսով կը փայլիք նաև Դուք արդէն կէս դար շարունակ՝ միջազգային չափանիշներով ու տարողութեամբ:

Քանիցս Մենք ուրախութիւնն ունեցած ենք տեսնելու և զգալու, որ Դուք Ձեր փառքի գագաթնակէտին անգամ մնացած էք որպէս ճշմարիտ հայ և հայրենասէր: Ձեր հայկական ոգին առանձնապէս պոռթկումի և շողարձակումի պահեր արձանագրեց նամանաւանդ մեր ժողովուրդի և երկրի համար դժուարին տարիներին՝ 1988-ին Հայաստանի մէջ պատահած ահաւոր ու աղէտալից երկրաշարժէն անմիջապէս յետոյ:

Դուք անմիջապէս շտապեցիք օգնութեան ձեռք մեկնել մեր հարուածուած ժողովուրդի զաւակներուն և Ձեր եռանդով ու խանդով, երգով ու գործով աշխարհի ուշադրութիւնն առաւել բևեռեցիք Հայաստանի վրայ: Եղաք Հայաստանի յատուկ դեսպանը և կը շարունակէք Ձեր աստուածահաճոյ գործը մեր հայրենիքի համար:

Ուստի Մենք կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

***Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ*** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած. որ Ձեզի պարգեւէ քաջառողջ և երկար կեանք. որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին և մարդկութեան՝ արդարօրէն վայելելով Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր. զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն. և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի
Յամի Տեառն 1999 և ի թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/236

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԼԵՎՈՆ ՍԱՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՍԱՅԵԱՆԻ***
**ՈՐ Ի ՓԱՐԻԶ. ՖՐԱՆՍԱ**

Փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ, որ մեր ժողովուրդի ծոցէն դուրս կուգան նուիրեալ անձեր, որ իրենց կեանքը կը խառնեն ուրիշներու կեանքին՝ այլոց բարօրութեան և յաջողութեան համար:

Ահա այդպէս Դուք Ձեր կեանքը շաղախեցիք մեր ազգի միջազգային վարկ և ճեղինակութիւն վայելող զաւակներէն Շառլ Ազնաւուրի կեանքին ու գործին և եղաք անոր բոլոր ժամանակներու անբաժան գործակիցն ու լծակիցը:

Այսօրուայ մեր պայմաններուն մէջ, երբ անհաստատապաշտութիւնն ու ինսապաշտութիւնը կը հաւակնին գերակշռող դառնալ մեր հասարակութեան մէջ, Դուք կրցած էք Ձեր կարողութիւնն ու եռանդը ի սպաս դնել Ձեր բարեկամի ու ընկերոջ առաջընթացի և նուաճումներու ճանապարհին:

Մենք մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին և Ձեր բարեկամի հետ միասին արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 և ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/237**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԴՈԿՏ. ՍՈՒՐԷՆ ՆԱՐԴԵՅ ՊԱՅՐԱՄՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏՕՔԹ. ՍՈՒՐԷՆ ՆԱՐԴԷՅ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ***
**ՈՐ Ի ԳԱՀԻՐԷ, ԵԳԻՊՏՈՍ**

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Եգիպտոսի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանէն Ձեր կրթանուէր, եկեղեցասէր, համայնքային եւ մշակութային շինարար աշխատանքներուն մասին:

Ծնած եւ մեծցած ըլլալով Գահիրէի հայաշունչ գաղութին մէջ, Դուք երիտասարդ տարիքէն Ձեզի նուիրած էք ազգային-հասարակական և մշակութային գործունէութեան:

Երկար տարիներ եղած էք «Յուսաբեր» Մշակութային ընկերակցութեան ատենադպիր եւ Ազգային երեսփոխան: Ձեր խանդավառ մասնակցութիւնը բերած էք Թեմական Ժողովի աշխատանքներուն իբրեւ անդամ եւ ատենադպիր: Ձեր մեծապէս օգտակար ներդրումն ունեցած էք սփիւռքահայ մամուլի ծաղկումի մէջ որպէս «Յուսաբեր» օրաթերթի խմբագիր եւ վարչութեան անդամ:

Խորապէս ուրախ ենք, որ Ձեր նուիրեալ ծառայութիւնը արժանացած է թեմի եկեղեցական եւ մշակութային կազմակերպութեանց գնահատանքին եւ ուշադրութեան:

Մենք նոյնպէս մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները եւ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 15 Մայիսի
Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/231

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊՐՈՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊՅԱՆԻՆ « Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ » ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ**
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՊՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻՆ***
**ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Ամերիկայի հայոց Արևմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանէն, որ լրացել է Ձեր գրական-դաստիարակչական նուիրեալ գործունէութեան 50-ամեակը:

Դուք Հայաստանի մէջ եղաք մեր հայրենադարձ ժողովուրդի մտաւորական զաւակներից մէկը, որ իր դաստիարակչական ու կրթական ծառայութիւններու կողքին, հեղինակ դարձաւ 14 հրատարակութիւններու, աւելի քան 400 յօդուածներու և տակաւին 10 անտիպ ուսումնասիրութիւններու, որ կը սպասեն իրենց լոյս ընծայման:

Իբրև Հայաստանի ձայնասփիւռի և հեռուստատեսութեան փոխտնօրէն, յայտնի գոհացութեանց միջոցով կազմակերպեցիք բազմաթիւ հաղորդումներ հայ գրականութեան, մշակոյթի պատմութեան, հայ ազատագրական շարժումի և ցեղասպանութեան մասին:

Լոս Անճելոս հաստատուելէն ետք ալ, Դուք շարունակեցիք Ձեր հետևողական ու անսակարկ ծառայութիւնը՝ զանազան նիւթերու շուրջ բանախօսելով և հայկական թերթերու մէջ բովանդակալից յօդուածներ ստորագրելով:

Խորապէս ուրախ ենք, որ ի գնահատութիւն Ձեր նուիրեալ աշխատանքներուն, մասնաւոր յոբելինական յանձնախումբ մը կազմուած է՝ արժանավայել կերպով պատուելու համար Ձեզ:

Մենք նոյնպէս մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 16 Մայիսի 1999
Յամի Տեառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/232

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԷՏ ՏԻԱՐ ԺԱՆ ՄԻՇԵԼ ԹԻԵՐՐԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ**
***ՏԻԱՐ ԺԱՆ ՄԻՇԵԼ ԹԻԵՐՐԻՆ***
**ՈՐ Ի ՓԱՐԻԶ, Ի ՖՐԱՆՍԱ**

Այսու Հայրապետական գրով եւ ջերմ սիրով կ՛ողջունենք Ձեր ներկայութիւնը հայ ժողովուրդի հաւատքի բերդ, Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներու ներքեւ, ուր, վստահ ենք, Դուք եւս կը զգաք և կը շնչէք հարազատագոյն ապրումներով:

Եւ արդարեւ, մենք քաջ գիտենք, որ Դուք երկար տարիներ ծառայած էք մարդկութեան իբրև բժիշկ, գիտնական, պատմաբան. լեռնագնաց ուղետր: Եղած եք այն քիչերէն, որոնք կրցած են քարին հոգի տալ և ցոյց տալ, թէ ինչպէս քարը ամէն տեղ քար է, ճիշտ է, բայց երբ այդ քարը քարի վրայ կուգայ, կառոյցի մաս կը կազմէ, այլեւ այդ քարը փողոցի անկիւնն ինկած քար չէ, այլ ճարտարապետութիւն է, քարեղէն երաժշտութիւն է, արուեստ է, մարդկութեան պատմութեան մէջ ներդրում է: Դուք եղած էք նաև այն քիչերեն, որոնք կրցած են քարին· լեզու տալ և քարուքանդ, աւերակ վանքերէն անդին լսելի դարձնել նաև այդ վանքերու երգը, այնտեղէն դէպի երկինք բարձրացող աղօթքները և տեսանելի դարձնել այդ տաճարները կառուցող ճարտարապետներու կառուցողական արուեստի շնորհքը:

Մենք հաճոյքով հետեւած ենք Ձեր տարիներու քրտնաջան աշխատանքին և հիացած, թէ ինչպէս երիտասարդի աւիւնով քալած էք անկոխ արահետներէ, հասած էք անմատչելի թուացող գագաթներու, հեռաւոր հովիտներու մէջ ծուարած և յաճախ աշխարհէն մոռացած վանքերու: Տեսած էք վանք, նկարած էք, չափագրած էք, ուսումնասիրած էք և գրքին յանձնած Ձեր վաստակը:

Վրաստանէն Արցախ, Հայաստանի Հանրապետութեան արևելեան սահմաններէն մինչև Թուրքիոյ բազմաթիւ նահանգներու մէջ հարիւրաւոր վանքեր Ձե՛ր շնորհիւ այսօր երկրորդ կեանք մը կ՛ապրին: Մենք պատճառ ունինք երախտապարտ ըլլալու յատկապէս այն իրողութեան համար, որ դուք Վասպուրականէն Կարս ու Անի, Մշոյ աշխարհէն Սիւնեաց աշխարհ, Դաղիվանքէն մինչև Սեպուհ Լեռ քայլ առ քայլ ուսումնասիրած էք և աշխարհին բերած հայ ժողովուրդի հաւատքի արգասիքը. արուեստին

ճաշակը, կառուցելու թափը, իսկ գիտաժողովներու և այլ դաւիլիճներու բեմերէն Ձեր ձայնը բարձրացուցած էք մարդկութեան ժառանգ դարձած եկեղեցիներու և յուշարձաններու պահպանութեան համար, և այդ պատճառաւ այսօր համայն մարդկութիւնը աւելի գուրգուրալից վերաբերմունք ունի նախորդ սերունդներու թողած ժառանգութեան պահպանութեան համար:

Ուստի ի գնահատութիւն արուեստի, բժշկութեան, պատմութեան, ճարտարապետութեան և յատկապէս հայ մշակոյթին Ձեր բերած անգնահատելի օժանդակութեանը, Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի

**Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ** շքանշանը:

Կը յուսանք, որ Աստուած Ձեզ երկար տարիներու առողջ և առոյգ կեանք կը պարգեւէ, որպէսզի կարենաք երկար շարունակել Ձեր ազնիւ գործը:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ: Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 22 Մայիսի
Յամի Տեառն 1999 և ի Թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/234

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
*ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԹՈՐՈՍԵԱՆԻ*
ՈՐ Ի ՓԱՐԻԶ. ՖՐԱՆՍԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Արևմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազաշեանէն՝ Ձեր բացառիկ յանձնառութեանց, քանկագին ծառայութիւններու և նուիրումի մասին:

Անձնապէս մօտէն ծանօթ ենք Ձեզ և Մենք նոյնպէս և նոյնքան կարող ենք վկայել Ձեր հաստատակամ նուիրուածութեան և անմնացորդ հաւատարմութեան մասին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ:

Իբրև Փարիզի և Շրջակայից Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովի բազմամեայ ատենապետ և Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Տաճարի Հոգաբարձութեան ատենապետ, Դուք Ձեր ժամանակի և եռանդի զգալի մասը մատաղ ըրած էք Ձեր ազգի և Եկեղեցւոյ զոհասեղանին՝ ինքնաբնծայման և ինքնազոհութեան գեղեցկագոյն մղումներով ու ապրումներով:

Փարիզի և շրջակայից մեր եկեղեցական համայնքը մեծապէս շահած և օգտուած է Ձեր ներկայութենէն և աշխատանքէն, և ցաւ պիտի ըլլար Ձեզ նման հայորդեաց բացակայութիւնը մեր Եկեղեցւոյ անդաստանէն ներս: Հազար փառք Աստուծոյ, որ իր շնորհներն անպակաս ըրած է մեր ազգէն:

Մենք երջանիկ հայրական սրտով մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գործունէութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 և ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրաքաղաքս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/238**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՋԱՐՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԶԱՐԵԱՆԻ***
**ՈՐ Ի ՊՐԻՒՔՍԷԼ. ՊԵԼՃԻՔԱ**

Անհուն ուրախութեամբ իմացանք Արևմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազաշեանէն՝ Ձեր նուիրեալ և անսակարկ ծառայութեանց մասին հանդէպ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու. յատկապէս Պելճիքայի հողի վրայ:

Փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ, որ մեր ժողովուրդին մէջ անպակաս բրած է ծառայասէր ու եկեղեցանուէր անձերու ներկայութիւնը:

Իբրև Պրիւքսէլի Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Ձեր կարելին առաւելով բրած էք մեր Եկեղեցւոյ պայծառութեան և անսասանութեան համար՝ միշտ աչքի լոյսի պէս պահելով հաւատարմութեան զգացումները մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ:

Մենք մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին և արժանիօրէն վայելէք Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 և ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/239**

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԺԱԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ԺԱԳ ՄԻՆԱՍԵԱՆԻ***
**ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԱ**

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Արեւմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանէն՝ Ձեր բացառիկ յանձնառութեանց, թանկագին ծառայութիւններու եւ նուիրումի մասին:

Դուք Ձեր ժամանակի եւ եռանդի զգալի մասը դրած էք Ձեր ազգի եւ Եկեղեցւոյ զոհասեղանին՝ ինքնաընծայման եւ ինքնազոհութեան գեղեցկագոյն մղումներով ու ապրումներով:

Մեր Եկեղեցին մեծապէս շահած եւ օգտուած է Ձեր ներկայութենէն եւ աշխատանքէն, եւ մենք հազար փառք կուտանք Աստուծոյ, որ իր շնորհներն անպակաս ըրած է մեր ազգէն:

Մենք երջանիկ հայրական սրտով մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները եւ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 19 Յունիսի**
**Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/241**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՍՈԼԱՔՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՍՈԼԱՔԵԱՆԻ***
**ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԱ**

Անհուն ուրախութեամբ իմացանք Արեւմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանէն՝ Ձեր նուիրեալ եւ անսակարկ ծառայութեանց մասին:

Փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ, որ մեր ժողովուրդին մէջ անպակաս բրած է ծառայասէր ու եկեղեցանուէր անձերու ներկայութիւնը:

Դուք Ձեր կարելին առաւելով բրած էք մեր Եկեղեցւոյ պայծառութեան եւ անսասանութեան համար՝ միշտ աչքի լոյսի պէս պահելով հաւատարմութեան զգացումները մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ:

Մենք մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները եւ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Ի խորոց սրտի կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արժանիօրէն վայելէք Ձեր անձնուէր գործունէութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 19 Յունիսի**
**Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Ե/242**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՍԵԴՐԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ**
**ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ՍԵԴՐԱԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ***
**ՈՐ Ի ՄԱՐՍԷՅԼ, ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱ**

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Հարաւային Ֆրանսայի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գերաշնորհ Տ. Տարօն եպիսկոպոս Ճէրէճեանէն, որ լրացել է ալդէն Ձեր ծննդեան 85-ամեակը:

Անձնապէս քաջածանօթ ենք համայնքային չափանիշներով Ձեր կատարած նուիրատուութիւններուն՝ կրթական-մշակութային մարզերուն մէջ:

Մեծապէս գնահատած ենք Ձեր ընտանիքի մէջ տիրող հայկական ոգին եւ շունչը, որ փոխանցած էք Ձեր զաւակներուն եւ թոռներուն:

Խորապէս ուրախ ենք, որ ի գնահատութիւն Ձեր բարերարութեանց, Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ տարեդարձին առիթով պիտի նշուի նաեւ Ձեր կեանքի այս կարեւոր հանգրուանը:

Մենք նոյնպէս մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները եւ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը բերենք մեր հայրապետական գնահատութիւնն ու հայրական օրհնութիւնը:

Ի խորոց սրտի կ՛աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ տարիներ, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին ու Եկեղեցուն եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 15 Մայիսի**
**Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**Ընդ համարաւ Է/230**

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԻՐԱՊԻՑ ԵԼՆԵԼՈՒ ՏՈՆԻՆ

(5 հունիսի, 1999 թ.)

Այսօր նվիրական այս ուխտավայրում, հիշատակում ենք մեր հավատքի Հայր Ս. Գրիգոր Լուսավորիչի կյանքի պատմությունը, թե ինչպես Լուսավորիչ նետվեց խոր վիրապ և այնուհետև, կամոքն Աստծո, դուրս բերվեց՝ Քրիստոսի Սուրբ Ավետարանը քարոզելու և մեր ժողովրդի կյանքում քրիստոնեական հավատքը որպես պետական, պաշտոնական կրոն հաստատելու համար: Այսօր մեզ համար փաստորեն «Ելն ի Վիրապեն» տոնը հաղթանակի տոն է, մեր ժողովրդի համար այս օրը հավատքի, հաղթանակի օր է, և հաղթանակի խորհուրդը խտացրել է այս Նշանի՝ Լուսավորչի Ս. Աջի մեջ, որը դարեր շարունակ առաջնորդել է մեր ժողովրդին, միշտ ամուր պահելով նրա հավատքը՝ գամված այս Աջին, և պատահական չէ, որ մեր հայրերից Դավրիժեցին արձանագրել է, թե յուրաքանչյուր հայի հոգին կապված է Լուսավորչի Աջին:

Այս Աջը, թերևս առաջին անգամ լինելով, խորհրդային տարիներից այս կողմ դուրս է բերված, որպեսզի մեր հավատացյալ ժողովուրդը երկրպագություն մատուցի և օրհնություն ստանա: Ուրեմն, օրհնության արարողությունից հետո յուրաքանչյուրդ հնարավորություն պիտի ունենա երկրպագություն մատուցելու այս սրբությանը, հաղորդվելու այս սրբությունից ճառագող օրհնությանը, նորոգելու ուխտը, դառնալու համար Քրիստոսի Ավետարանի քարոզիչը, դառնալու համար մեր ժողովրդի կյանքի աղն ու լույսը:

Յուրաքանչյուրս նաև պիտի գանք նորոգելու մեր հավատքը, հաստատուն դարձնելու Լուսավորչի կողմից հռչակված և մեր ժողովրդի հավիտենականությունը երաշխավորող քրիստոնեական լույս հավատքը: Ուրեմն, իմ մաղթանքն է և աղոթքը, սիրելիներ, այս պահին, երբ մենք հիշատակում ենք մեր առաջին Հայրապետի տոնը՝ Ելն ի Վիրապեն, մեր հայացքը ուղղում ենք դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր այս պահին մեր Լուսավորչի գահին բազմած է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Բարձրացնենք մեր հոգու հայացքը առ Աստված և անկեղծ, սրտաբուխ աղոթք վերառաքենք առ Աստված՝ Հայոց Հայրապետի առողջության համար, որպեսզի Տերը բարի ապաքինում և արևշատություն պարգևի մեր Հայրապետին, նրա ձեռքերի մեջ հաստատուն պահի Լուսավորչի Աջը և առաջնորդի մեր ժողովրդին դեպի բարին և դեպի գեղեցիկը, դեպի 2001 թվական, դեպի քրիստոնեական մեր հավատքի պետական պաշտոնական կրոն հռչակման 1700-ամյակ: Թող Տերը բարգավաճում և զորացում պարգևի աշխարհին Հայոց ու մեր հավատավոր ժողովրդին:

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԱՇՏՈՑ ԴՊՐԱՏԱՆԸ

**(22 հունիսի, 1999 թ.)**

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,
Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, հանուն Վեհափառ Հայրապետի, բերում ենք Ձեզ մեր ջերմ ողջույնները և օրհնությունը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա դարակազմիկ իրադարձության տոնակատարությունների շրջագծում հրավիրված «Աստվածաշնչյան Հայաստան» գիտաժողովի բացման առիթով և մաղթում հոգեշահ Ձեր առաքելության մեջ ամենայն հաջողություններ, հետաքրքիր և արդյունավետ աշխատանք:

«Աստվածաշնչյան Հայաստան», առաջին մղումով մեր հայացքը մտովի ուղղվում է դեպի Հայաստանի մասին աստվածաշնչյան հիշատակությունները: Հնագույն քաղաքակրթության օրրան Հայկական լեռնաշխարհը, Մերձավոր և Միջին Արևելքի անցուդարձի կենտրոնում, բնականորեն ներկա է Աստվածաշնչյան դրվագներում, որոնց շարքում ամենահուզիչ խտացում-պատկերներից է Արարատի փառաշուք գագաթին Նոյյան տապանի հանգրվանումը՝ որպես Աստված - Մարդ հարաբերության մեջ Արարչական անբավ Սիրո նոր դրսևորում, փրկագործության Աստվածային նոր տնօրինություն: Արարատի մաքուր փեշերից վերստին սկսվում է մարդկության կենսագրությունը, որի էջերին բազմադարյա շարադրանք է թողել նաև բիբլիական մեր ժողովուրդը:

«Աստվածաշնչյան Հայաստան» խորագրով գիտաժողովը կոչված է հարուստ նյութերով և գիտական գնահատականներով առավել ամբողջացնելու հայ ժողովրդի քրիստոնյա լինելիության 2000-ամյա անցյալն ու ներկան, նրա քրիստոնյա նկարագիրն ու դիմագիծը և առավելապես կոչված է արժևորելու աստվածափնտրումի ճանապարհին հայ ժողովրդի անբեկանելի ընտրության՝ քրիստոնեական հավատքի լույս խորհուրդը:

Երանելի Աբգար թագավորի աներերահավատ հավատով մենք համընթաց դարձրինք մեր ուղին Երկնային Սիրո, Խաչի և Հարության կենաց ճանապարհին, որպեսզի Եղիշեի շուրթերով տարբերակենք «մահ իմացեալը» «մահ ոչ իմացեալից», որպեսզի Ավարայրում Վարդանի և Վարդանանց սխրանքով հաստատենք՝ «թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզնից»: Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար արտաքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկարագիր, էություն, որ ծաղկող գրչով դրոշմվել է մագաղաթին և մատյաններ շնչավորել, աներկբա հավատով հայրենյաց մեր սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Աստվածաշնչյան է Հայաստանը, Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գոյությամբ, մեր

ժողովրդի անցյալ ու ներկա հիշատակներով. ավելի ևս՝ նորօրյա մեր հավատի վերազարթոնքով, որպես երաշխիք աստվածաշնչյան մեր հարատևության: 70-ամյա աստվածամերժ պտույտից հետո շտկել է ընթացքը ժամանակի անիվը: Նորոգ մեր հավատով այսօր հիմնվում և վերաբացվում են եկեղեցիներ, Աստվածաշնչյան ճշմարտությունը կրկին ճանաչելի է դառնում մեր ժողովրդին, օգնում իմաստավորելու, հույսով, սիրով և ուրախությամբ լցնելու կյանքը, զորացնում ստանձնելու ազատ ու բարօր Հայրենիք կերտելու պատասխանատվությունը, որպեսզի՝ առ Աստված մեր հավատքի և ինքնության ճանաչման մեջ մեզ համար շարունակաբար իմաստավորվի թերահավատություն չունենալը:

Թող այս գիտաժողովը ևս՝ հրավիրված Սուրբ Մեսրոպ Մաշտոց նորաբաց դպրատանը, ծոնված Հայաստանում քրիստոնեության պետականորեն ճանաչման 1700-ամյա մեծ տարեդարձին, որպես հարանորոգ ուխտի խորհուրդ ծառայի ինքնության մեր դիմագծին նորոգ հավատի կնիք ավելացնելու, զորացնի մեզ հայրենյաց մեր ժառանգությանը հավատարիմ լինելու և առանց թերահավատության ընձյուղված մնալու հարանց մեր հավատին՝ Քրիստոսի խաչով ուղենշված դեպ հաղթական Հարություն կենաց մեր ճանապարհին:

# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 12-15-ը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ և Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Թուրքիո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր խորհրդի ընդլայնված փակ նիստը:

Մայիսի 12-ին բացելով ժողովը, Տերունական աղոթքից հետո Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը փառք և գոհություն հղեց առ Աստված, որ, չնայած առողջական վիճակին, Վեհափառ Հայրապետը ուժ և կորով գտավ նախագահելու ժողովը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով ներկաներին, իր մասնավոր ողջույնն ու շնորհավորանքը հղեց Թուրքիո հայոց նորընտիր Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանին, որ Թուրքիո հայոց գահակալ ընտրվելուց հետո առաջին այցն էր կատարում Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ապա Վեհափառ Հայրապետը մանրամասն տեղեկություններ հաղորդեց իր առողջական վիճակի մասին, շարադրեց նիստի օրակարգը:

Ժողովի առաջին օրը Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, որ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ այս պաշտոնն է վարում Մայր Աթոռում ավելի քան հինգ ամիս, զեկուցեց 1998 թ. օգոստոսից մինչև այս տարվա մարտն ընկած ժամանակահատվածում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գործունեության մասին:

Մայիսի 13-ին, Քրիստոսի Համբարձման տոնին, Գերագույն Հոգևոր խորհրդի նիստը ընդմիջվեց և շարունակվեց մայիսի 14-15-ը:

Նիստերի ընթացքում քննարկվեցին եկեղեցու կանոնադրության, Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի Հայաստան կատարելիք այցելության, միջեկեղեցական հարաբերությունների, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների հետ կապված հարցեր:

Մայիսի 14-ին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները նախագահական պալատում հանդիպում ունեցան Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նախագահին հաղորդեց Վեհափառ Հայրապետի ողջույնները, ապա տեղեկացրեց ժողովի աշխատանքների մասին: Հանդիպման ընթացքում նախագահը նշեց եկեղեցու կարևոր դերը Հայաստան և Սփյուռք կապերի ամրապնդման գործում և մասնավորապես շեշտեց սեպտեմբերին կայանալիք «Հայաստան և Սփյուռք» համահայկական խորհրդաժողովի աշխատանքներում եկեղեցու մասնակցության կարևորությունը:

Մայիսի 15-ին Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցած Գերագույն Հոգևոր խորհրդի նիստն անդրադար-

ծավ նշված խորհրդաժողովի կազմակերպման գործում Եկեղեցու մասնակցության հարցերին: Նիստին իր մասնակցությունը բերեց նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Պրն. Օսկանյանը ժողովականներին տեղեկություններ հաղորդեց խորհրդաժողովի կազմակերպման գործում մինչ այժմ կատարված աշխատանքների ընթացքի մասին:

Նույն օրը Գերագույն Հոգևոր խորհրդի ժողովն ավարտեց իր աշխատանքը:

Ընդլայնված նիստի աշխատանքներին մասնակցում էին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս.Պոզապալյանը, Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպս. Արաբաջյանը, Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, ինչպես նաև Գերագույն Հոգևոր խորհրդի աշխարհական անդամներ Պիոն Հակոբյանը, Ռաֆայել Պապայանը և Վլադիմիր Բարխուդարյանը: Ժողովին մասնակցում էին նաև Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը և ՀՀ Կրոնի գործերի խորհրդի նախագահ Լազար Սուջյանը:

ՄԱՍԼՌ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ
ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (1998 ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1999 ՄԱՐՏ) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻՆ 12 - 15 ՄԱՅԻՍԻ 1999 Թ.

Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան աշխարհական անդամք Գերագույն Հոգևոր խորհրդի: Գոհություն և փառք ենք մատուցում առ Բարին Աստված, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը անկոտրում հավատքով և զորեղ կամքով կարողացավ հաղթահարել երկու ծանր և դժվարին վիրահատություն, և այսօր, թեև տկար մարմնով, բայց ամուր, արի հոգվով, հայրապետական աստվածաշնորհ իր իմաստնությամբ գլխավորում և առաջնորդում է Հայ եկեղեցին:

1998 թ. սեպտեմբերից մինչև 1999 թ. մարտը Նորին Սրբությունը բացակայեց Մայր Աթոռ Սուրբ էջմիածնից: Իր բացակայության ընթացքին Մայր Աթոռի ընթացիկ գործերը վարելու համար Վեհափառ Հայրապետը նշանակեց Վանական խորհուրդ՝ հետևյալ կազմով.

Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյան,
Տ. Ներսես արքեպս . Պոզապալյան,
Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան,
Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյան,
Տ. Վազգեն վրդ. Միրզախանյան,
Տ. Արտակ աբեղա Տիգրանյան,
Պրն. Ներսես Կարամանուկյան:

Անցյալ տարվա դեկտեմբերի 1-ից Վեհափառ Հայրապետի նոր տնօրինությամբ Վանական խորհուրդը՝ Նորին Սրբության գոհունակությունը վաստակած, դադարեց գործելուց, և մենք նշանակվեցինք Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, որպեսզի Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցումներով վարենք Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսության գործերը: Որդիական մեր երախտագիտությունն ենք մատուցում Նորին Սրբությանը՝ մեր նկատմամբ ցուցաբերած վստահության համար: Մեր խորին շնորհակալությունն ու գոհունակությունն ենք հայտնում Մայր Աթոռի միաբաններին, որ սիրով ընդունեցին Վեհափառ Հայրապետի տնօրինությունը և աջակից եղան մեզ մեր գործունեության ընթացքում:

Անհրաժեշտ է նշել, որ Վեհափառ Հայրապետը, հակառակ իր առողջական վիճակին, այս ընթացքում գործուն և լիարժեք կերպով շարունակել է ղեկավարել Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի գործունեությունը:

Այժմ բաժին առ բաժին ներկայացնենք Գերագույն Հոգևոր խորհրդի վերջին ընդլայնված նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցնող յոթ ամիսների ընթացքում Մայր Աթոռ ժամանեցին պետական, եկեղեցական և այլ մարզերի պատվիրակություններ, քաղաքական և գիտական ու մշակութային աշխարհի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց Մայր Աթոռում իր ներկայության ընթացքում ընդունեց Վեհափառ Հայրապետը, իսկ վերջին շրջանում՝ մենք՝ որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

Վեհափառ Հայրապետի հանդիպումներին ի մասնավորի անդրադառնալուց առաջ հարկ է նշել, որ միջեկեղեցական հարաբերությունների շրջանակներում Նորին Սրբությունը Նյու Յորքում հունվարին կարևորագույն հանդիպում ունեցավ Ղպտի Ուղղափառ եկեղեցու պետ Շենուդա Գ Պատրիարքի հետ: Հանդիպման ընթացքում երկու հովվապետերը քննարկեցին էկումենիկ շարժմանն առնչվող մի շարք խնդիրներ:

Վեհափառ Հայրապետի հանդիպումներից հիշատակենք հետևյալները.

1. Սեպտեմբերի 1-ին Վեհափառ Հայրապետն ընդունել է Ֆրանսիայի Քոտ դ'Ազյուր շրջանի (Նիցցա և նրա շրջակայքը) էկումենիկ խմբին՝ շրջանի հայոց հոգևոր հովիվ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի ուղեկցությամբ:

2. Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ այցելեց և Վեհափառ Հայրապետի կողմից ընդունվեց Ուրուգվայի Հանրապետության Գլխավոր Վեհաժողովի ներկայացուցիչների պալատի նախագահ խայմե Մարիո Տրոբոյի գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի և Հայաստանի Հանրապետությունում Ուրուգվայի արտակարգ և լիազոր դեսպանի ուղեկցությամբ:

3. Սեպտեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետն ընդունել է Միացյալ Ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Եվրոպայի գրասենյակի տնօրեն Ան Գիլիեմ Բիյեյդին ու Երևանի մասնաճյուղի ներկայացուցիչ Թումաս Բիրաթին:

4. Սեպտեմբերի 11-ին Նորին Սրբությունն ընդունել է Կիպրոսի Հանրապետության արտգործնախարար Իոաննիս Կասուլիդեսի գլխավորած պատվիրակությանը:

Մեր նոր պաշտոնին կոչվելուց հետո, հանուն Վեհափառ Հայրապետի, հյուրընկալել ենք Հայաստան և Մայր Աթոռ այցելած մի շարք պետական-պաշտոնատար անձանց, այդ թվում՝

1. Դեկտեմբերի 23-ին Մայր Աթոռ ժամանած Վրաստանի Հանրապետության տրանսպորտի նախարար Մերաբ Ադեիշվիլու գլխավորած պատվիրակությանը:

2. Դեկտեմբերի 24-ին՝ Հայաստանում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան Էհար Էյդամին:

3. Հունվարի 8-ին՝ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովին, որ դեսպանի իր կարգավիճակով պաշտոնական անդրանիկ այցելությունը կատարեց Մայր Աթոռ:

4. Փետրվարի 22-ին Մայր Աթոռ իր անդրանիկ այցելությունն ունեցավ նաև Ռումինիայի նոր նշանակված դեսպան Պավել Պլատոնան և մեզ փոխանցեց Վեհափառ Հայրապետին ուղղված առողջության բարեմաղթանքներ:

***ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ***

Միաբանական կյանքը թեև ընթացավ իր բնականոն հունով, սակայն մշտապես զգալի էր Վեհափառ Հայրապետի անմիջական ներկայության և հայրական շնչի պակասը:

Մայր Աթոռում վանաբնակ միաբանների թիվը ներկայումս 37 է, որոնցից 7-ը՝ արքեպիսկոպոս և եպիսկոպոս, 17-ը՝ վարդապետ և աբեղա, 13-ը՝ սարկավագ:

Անցնող ամիսների ընթացքում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ որոշ միաբաններ մեր կողմից ստացան նոր նշանակումներ.

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հաստատեցինք Միջեկեղեցական (էկումենիկ) հարաբերությունների գրասենյակ, որի պատասխանատու նշանակվեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: Վերջինս Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, իբրև միջեկեղեցական հարաբերությունների հարցերով Հայոց Հայրապետի խորհրդական, արդեն իսկ զբաղվում էր այդ աշխատանքներով:

2. Արշակ աբեղա Խաչատրյանը ստանձնեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի պաշտոնակատարի պարտականությունները՝ փոխարինելով տիկին Մարիամ Վարդանյանին:

3. Կիրակի օրերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության համար հռչակեցինք հոգևոր քարոզչության և հովվական գործունեության ծավալման օր՝ հորդորելով միաբանակից մեր եղբայրներին այդ օրը Մայր Աթոռից դուրս որևէ բնակավայրում, ուր չկա հոգևոր սպասավոր, զբաղվել քարոզչությամբ:

Աշխատանքը համակարգելու նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստեղծեցինք Հովվական գործունեության գրասենյակ: Արշեն աբեղա Սանոսյանը պաշտոնի կոչվեց նորաստեղծ գրասենյակում՝ որպես պատասխանատու: Հոգեշնորհ Հայր Արշեն աբեղա Սանոսյանին վստահվեց նաև Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

Միաբաններից և ճեմարանական սաներից մի քանիսը մեկնել են արտասահմանյան երկրներ՝ եռամյա ու վեցամյա և կարճաժամկետ ուսումնառության: Բոլորն էլ՝ Հարություն սրկ. Հարությունյան (Բոսսե, էկումենիկ ինստիտուտ), Բաբկեն սրկ. Նանյան (Պրահա, Չեխիա), Արտակ սրկ. Սահակյան (Ռումինիա), Արթուր սրկ. Հայրապետյան և Սամիկոն սրկ. Ավետիսյան (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ), Վարդգես Սանուկյան (Ժնև, Շվեյցարիա), արդեն վերադարձել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իրենց պաշտոններին: Մայր Աթոռ է վերադարձել նաև (առողջական պատճառներով) Տրդատ աբեղա Մարտիրոսյանը, որ ծառայության էր կոչված Բուլղարիայի Ռուսե քաղաքի հայոց համայնքում: Հոգեշնորհ Հայր Սուրբը տակավին նոր նշանակում չի ստացել:

Հրավերով Գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի, եռամյա ժամկետով, որպես հոգևոր հովիվ, իր ծառայությունը բերեց Սուդանի հայ համայնքին Արժանապատիվ Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը:

Վեհափառ Հայրապետի՝ Մայր Աթոռից բացակայության օրերին, աշխատանքներն առավել արդյունավետ և ճիշտ կազմակերպելու նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գրեթե երկու շաբաթը մեկ կազմակերպվել են թեմակալ առաջնորդների և վանաբնակ եպիսկոպոսների հանդիպումներ,

պարբերաբար՝ ամիսը մեկ. հրավիրվել են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովներ:

Ի մասնավորի հիշենք, որ նշյալ ժողովներից մեկական նիստ նվիրվել է «Գիտության և կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությանը և Ազգային ժողով են ներկայացվել Հայ եկեղեցու կողմից բարեփոխության առաջարկներ՝ մասնավորաբար հանրակրթական դպրոցներում կրոնի ուսուցումը որպես ծրագրային առարկա ներառնելու վերաբերյալ:

Ուրախալի է, որ Վեհափառ Հայրապետի բացակայության ընթացքում անխափար պահպանվեցին չորեքշաբթյա Միաբանական նիստերը:

Միաբանների երեկոյան ազատ ժամերը առավել շահեկան և հետաքրքիր կազմակերպելու նպատակով ստեղծեցինք միաբանների հավաքասրահ, որ գործում է Հոգևոր ճեմարանի հին շենքում:

Մեզ համար ցավ է անդրադառնալ, որ ՊՆ գանձանակից դուրս բերված գումարի յուրացման մեղադրանքով դեռևս անցյալ տարվա ամառվանից ազատազրկման մեջ է գտնվում Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Ասողիկ Սրբազանի գործը տակավին վարույթում է: Մենք և Մայր Աթոռի որոշ միաբաններ մի շարք անգամներ այցելել ենք Սրբազանին:

Ինչպես հայտնի է ամենքիդ, ՀՀ ՊՆ-ի հետ համաձայնեցված, Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաներն ուսման ընթացքն ավարտելուց հետո հոգևոր ծառայության են մեկնում Ազգային բանակ: Այսօր արդեն բանակում ունենք 12 հոգևոր սպասավորներ, որոնցից չորսը՝ ամուսնացյալ քահանաներ:

Նկատի առնելով, որ Մայր Աթոռի միաբանության շարքերը Գևորգյան Հոգևոր ճեմարանի շրջանավարտներով համալրվում են տարին մեկ անգամ, խնդրագիր ենք ներկայացրել Պաշտպանության Նախարարություն՝ հոգևորականներին միայն աշնանային հավաքին բանակ զորակոչելու վերաբերյալ: Ուրախ ենք ասելու, որ մեր խնդրանքին ստացել ենք դրական պատասխան:

## *ՀՈԳԵՎՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### *Գևորգյան Հոգևոր Ճեմարան*

Ինչպես արդեն գիտեք, անցյալ տարվա սեպտեմբերից իրականացավ Վեհափառ Հայրապետի իղձը. և ճեմարանականների դասընթացներն անցկացվում են Գևորգյան Հոգևոր ճեմարանի վերաբացված նորոգյալ շենքում:

Ճեմարանի տեսչությունը կազմված է 4 հոգևորական և 2 աշխարհական անձերից: Տեսուչն է Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

Ճեմարանի այս ուսումնաշրջանում դասախոսական կազմը փոփոխություններ գրեթե չի կրել: Այն կազմում են 16 հոգևորական և 22 աշխարհական դասախոսներ: Ուսումնական տարեսկզբին ճեմարանի դասերին մասնակցել են 116 ուսանողներ և 15 ունկնդիրներ: Տարբեր պատճառներով ուսանողներից 6-ը ինքնակամ թողել են այս հաստատությունը և կամ հեռացվել:

Ընթացիկ դասերին զուգահեռ ճեմարանի հարկից ներս կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ սրբոց հիշատակներին նվիրված, հոբելյանների առիթով հանդիսություններ, հանդիպումներ, համերգներ: Հոգևոր ու աշխարհիկ թեմաներով կարդացվել են տարբեր թեմաների և հարցերի

նվիրված շուրջ 20 տարբեր դասախոսություններ: Կազմակերպվել են ուխտագնացություններ, նաև միջոցառումներ Հայաստանի տարբեր շրջաններում, տեղի բնակիչների համար:

Ճեմարանի սաների ընդհանուր իմացությանը և մտահորիզոնի ընդլայնմանն են նպաստել այցելությունները Մատենադարան, Փարաջանովի, ժամանակակից արվեստի և հայրենագիտական թանգարաններ, Ազգային Պատկերասրահ, ցուցահանդեսներ և մշակութային այլ օջախներ:

Ավելացնենք, որ ճեմարանական կյանքը հանգամանալից կերպով լուսաբանվել է «Էջմիածին» ամսագրում և հատկապես «Քրիստոնյա Հայաստան» թերթում: Ճեմարանը մշտապես գտնվել է Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում: Մենք նույնպես Նորին Սրբության բացակայության այս շրջանում փորձել ենք մոտից առնչվել ճեմարանին: Մասնակցել ենք կրթօջախում կազմակերպված միջոցառումներին, զրուցել սաների հետ: Ներկա ենք գտնվել ճեմարանի դասախոսական ժողովին՝ նկատի առնելու տեսչական ու դասախոսական կազմի առաջարկություններն ու մտածումները:

*Վազգենյան Հոգևոր դպրոց*

Դպրանոցը հիմնադրվել և գործում է 1990 թվականից Սևանի վանական համալիրում: Այն ինգամյա գիշերօթիկ հաստատություն է:

Դպրանոցի վերատեսուչն է Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, տեսուչը՝ Արժանապատիվ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը: Տեսչական կազմում ընդգրկված են 5 անձեր, որոնցից 3-ը՝ հոգևորական: Դպրանոցում ներկայիս սովորում են 50 ուսանողներ: Դասավանդում են Արարատյան թեմի հոգևորականներ, Երևանի Պետական Համալսարանի և հանրապետության այլ բուհերի և գիտական հաստատությունների 21 դասախոսներ:

Առ այսօր դպրանոցն ունեցել է շրջանավարտների երեք սերունդ, որոնք վերջին՝ ավարտական տարին ուսանում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: 1998 թ. դեկտեմբերի 25-ին դպրանոցի ավարտական լսարանի 3 ուսանողներ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի կողմից ձեռնադրվեցին սարկավագ: 1998 թ. դպրանոցի վերին լսարանի երեք ուսանողներ մասնակցեցին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կողմից կազմակերպվող եռամսյա տևողությամբ դասընթացներին Շվեյցարիայում, Ռումինիայում և Չեխիայում: Ուսումնական տարվա ընթացքում դպրանոցում կազմակերպվել են ազգային-եկեղեցական տոներին և նշանակալի իրեբյաններին նվիրված հանդիսություններ և ուխտագնացություններ Հայաստանի տարբեր սրբավայրեր:

Դասընթացներին զուգահեռ ուսանողներն ունկնդրել են հրավիրյալ մասնագետների դասախոսությունները՝ հոգևոր և աշխարհիկ թեմաներով:

Հոգևոր սպասավորությանը և ուսմանը զուգահեռ ուսանողները թղթակցում են հանրապետական և մարզային պարբերականներին (մասնավորաբար՝ «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Հայք», «Սևան» թերթերին), բանախոսություններ գրում, եկեղեցական տոների և այլ առիթներով հանդես գալիս Սևանի հեռուստատեսությամբ (շաբաթը մեկ անգամ՝ «Հոգևոր ժամ» ծրագիր): Ազատ ժամերին իրենց մասնակցությունն են բերում դպրանոցի նոր մատուռի և կացարանային համալիրի շինարարական աշխատանքներին:

*Գյումրիի ընծայարան*

Ընծայարանը Գյումրի քաղաքում գործում է 1991 թվականից: Այն եռամյա ուսուցմամբ գիշերօթիկ հոգևոր-կրթական հաստատություն է: Ընծայարանի տեսուչն է Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը: Դասավանդում են դպրոցական և բուհական հաստատությունների 12 դասախոսներ:

Ընծայարան ընդունվում են միջնակարգ կրթությամբ պատանիներ, որոնք ուսման եռամյա ընթացքն ավարտելուց հետո տեղափոխվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի առաջին լսարան: Ներկայիս Ընծայարանն ունի 27 սաներ:

*Նալբանդյանի Մարդասիրական ճեմարան*

Հյուսիսային Կալկաթայի համայնքի Մարդասիրական ճեմարանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրավասությանը հանձնելու խնդրի հետ կապված աշխատանքները շարունակել և եզրագծին է հասցրել Միջեկեղեցական գրասենյակի տնօրեն Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: 1999 թվականի փետրվարի 15-ին Կալկաթայի Գերագույն Դատարանը խնդիրը վճռեց հօգուտ Մայր Աթոռի, և Մարդասիրական ճեմարանը հանձնվեց Մայր Աթոռի տնօրինությանը:

Վեհափառ Հայրապետի հրահանգով ճեմարանի վերին իշխանությունն ստանձնելու նպատակով 1999 թ. մարտի 7 -14-ը Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը վերստին եղավ Կալկաթայում և պետական իշխանությունների կողմից ճանաչվեց Մարդասիրական ճեմարանի տնօրեն: Տիկին Սոնյա Ջոնը նշանակվեց հոգաբարձու՝ Հայր Միքայելի բացակայության ժամանակ վարելու գործերը՝ համաձայն վերջինիս ցուցումների:

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի գործունեությունը ծավալվել է հետևյալ չորս ուղղություններով.

*1. Ուսուցիչների պատրաստություն.* - Կանոնավոր կերպով շարունակվել են դասընթացները կրոնից ուսուցիչների պատրաստման լսարաններում:

1998 - 99 ուսումնական տարվա նախաշեմին Արարատյան թեմի Երևանի, Արտաշատի և Մասիսի, Արմավիրի թեմի Արմավիրի, Արագածոտնի թեմի Աշտարակի լսարանների շրջանավարտ և վկայական ստացած կրոնի ուսուցիչների (ընդհանուր թիվը՝ 300) հետագա գործունեության պատասխանատվությունը ստանձնեցին վերոհիշյալ թեմերի քրիստոնեական դաստիարակության գրասենյակները: Հիշյալ ուսուցիչների համար թեմերում պարբերաբար կազմակերպվում են դասախոսություններ՝ գիտելիքների խորացման և դասավանդման մեթոդական օժանդակության նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում են եղել նաև նորաբաց լսարանները, որոնցում, բացի Մայրավանքի միաբաններից, դասավանդում են նաև թեմերի հոգևոր սպասավորները: Գուգարաց թեմի Վանաձորի (100 մարդ), Կոտայքի թեմի Հրազդանի (43 մարդ) և Աբովյանի (40 մարդ), Սյունյաց թեմի Եղեգնաձորի (42 մարդ), Արագածոտնի թեմի Աշտարակի

(35 մարդ) լսարանների կողքին, մարտ ամսից սկսյալ, նոր լսարան է ստեղծվել նաև Արագածոտնի թեմի Թալին քաղաքում (39 մարդ):

Գեղեցիկ ավանդույթ է դարձել Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին «Քրիստոնեական դաստիարակության օր» խորագրի ներքո հրավիրել քրիստոնեական դաստիարակության ուսուցիչների համաժողով, որն այս տարի տեղի ունեցավ 1998 թ. նոյեմբերի 29-ին: Հայաստանից և Արցախից ավելի քան 500 ուսուցիչներ մասնակցեցին այդ հավաքին: 1999 թ. մարտի 4-ին տեղի ունեցավ նաև ուսուցիչների պատրաստության լսարաններում դասավանդող հոգևորականների խորհրդաժողով:

*2. Կիրակնօրյա դպրոցներ.* - Կիրակնօրյա նոր դպրոցներ են կազմակերպվել Մասիսում, Արտաշատում (Արարատյան թեմ), Ապարանում (Արագածոտնի թեմ), Վանաձորում (Գուգարաց թեմ), Եղեգնաձորում, Ջերմուկում, Վայքում (Սյունյաց թեմ), Արմավիրում, Մեծամորում (Արմավիրի թեմ):

Քրիստոնեական դասաժամեր պարապվում են նաև հանրակրթական դպրոցներում, ուր ներգրավված են ավելի քան 15000 սաներ: Ուրախալի է նշել, որ Արցախի պետական իշխանությունների տնօրինությամբ հանրակրթական դպրոցներում կրոնի ուսուցումը ներառնված է որպես ծրագրային առարկա:

*3. Հրատարակչական գործունեություն.* - ՔԴՔԿ-ի կողմից հրատարակության են պատրաստվել մեկնողական, հայագիտական ուսումնասիրություններ, թարգմանություններ, կրոնի դասավանդման մեթոդական ձեռնարկ, թերթոններ՝ նվիրված ազգային-եկեղեցական տոներին: 2000 օրինակով տպագրվում է «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը: Հրատարակությունները վրիպումներից զերծ պահելու և դրանց ուղղվածությունը առավել նպատակային դարձնելու մտադրությամբ համապատասխան տնօրինություն ենք արել Կենտրոնի կողմից հրատարակության առաջարկված աշխատասիրությունները նախնական եզրակացության հանձնելու վերաբերյալ: Այս գործի պատասխանատուներ են նշանակված Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը և Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: ՔԴՔԿ-ի հրատարակությունները անվճար բաշխվում են թեմերին, կիրակնօրյա և հանրակրթական դպրոցների մանկավարժներին և սաներին, ինչպես նաև հովվական գործունեության ծավալման նպատակներով՝ հավատացյալ ժողովրդին:

*4. Քարոզչություն.* - Կենտրոնը շարունակել է ՀՀ Ազգային հեռուստատեսության հետ համատեղ «Խորան լուսոյ» և մանկական «Առաւօտ լուսոյ» հաղորդաշարերի պատրաստումն ու հեռարձակումը: Հայկական հեռուստատեսության երկրորդ ծրագրի փակման պատճառով մի քանի ամիս չի հեռարձակվում «Միրեցէք զմիմեանս» հաղորդաշարը:

Ամեն կիրակի Ազգային ռադիոյով եթեր է սփռվում հոգևոր-ուսուցողական զրույց, որ վարում է Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Կենտրոնի կողմից պատրաստվել և Ազգային հեռուստատեսության առաջին ծրագրով ցուցադրվել են «Արցախյան վերածնունդ» ֆիլմը և «Ամանոր ու Սուրբ Ծնունդ» տոնական հանդիսությունը:

Այս տարի ևս բացառիկ հաջողություն ունեցան «Արամ Խաչատրյան»

համերգասրահում Ա. Ծննդյան առիթով կազմակերպված համերգային տոնական ծրագրերը, որոնց մասնակցություն բերեցին Հանրապետության և Արարատյան թեմի Հայորդյաց տների մանկական երաժշտական, պարային, թատերական ստեղծագործական խմբերը: Մայր Աթոռի հովանավորությամբ և նախաձեռնությամբ կազմակերպված այս հանդեսներին անվճար ներկա գտնվեցին և փոքրիկ նվերներ ստացան շուրջ 20 հազար երեխաներ, որոնց զգալի մասը՝ զոհված ու վիրավոր ազատամարտիկների երեխաներ:

Թեև ՔԴՔ կենտրոնի գործունեությանը չի առնչվում, բայց տեղին է հիշել, որ այս տարի, առաջին անգամը լինելով, Երևանի Քաղաքապետարանի նախաձեռնությամբ, Հանրապետության Հրապարակում պետականորեն նշվեց Ս. Ծնունդը: Այդ երեկո բոլոր ներկաներին բաժանվեցին մոմեր և աղոթագրքույկներ: Հանդիսությանը մասնակցում էին ավելի քան 100 000 հայորդիներ, ձեռքերին՝ վառվող մոմեր, որոնց լույսը ցրում էր գիշերային խավարը:

### ՏՊԱՐԱՆ

Անցնող յոթ ամիսների ընթացքում Մայր Աթոռի տպարանը ևս ունեցավ բազմարդյուն գործունեություն: Լույս են ընծայվել 69 անուն հրապարակումներ, որոնց շարքում «Էջմիածին» ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, ուսանողական տարեգիրքը, տարեկան օրացույցը (հայերեն և ռուսերեն), ինչպես նաև՝ Վեհափառ Հայրապետի օրհնագրերը, հայագիտական, կրոնա-մեկնողական գրականություն, դասագրքեր, կրոնի դասավանդման ուղեցույց, աղոթագրքեր մանուկների և զինվորների համար, տոների առիթով՝ Քարոզչական կենտրոնի պատրաստած թերթոններ:

Առանձնակի հիշատակենք նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ծննդյան 90-ամյակի առիթով լույս տեսած «Ոգեղեն կյանք» գրքույկը, լուսատիպ նմանահանությամբ տպագրված «Ճաշոց», «Ժամագիրք» և «Ստենի ժամագիրք» ծիսական գրքերը: Տպագրության ընթացքում է «Շարակնոցը»: Նշված գրքերի անհրաժեշտությունը վերջերս առավել զգալի է՝ պայմանավորված գործող եկեղեցիների և ձեռավորվող նոր համայնքների թվի աստիճանական աճով:

### ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին յոթ ամիսների ընթացքում արդյունավոր եղավ նաև Մայր Աթոռի գործունեությունը միջեկեղեցական հարաբերությունների մարզում:

Նշենք դրանցից կարևոր մի քանիսը՝ ժամանակագրական կարգով.

1. 1998 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը Իտալիայի Բարի քաղաքում տեղի ունեցան Բարիի ժողովի (1098) 900-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններ: Մայր Աթոռից այդ հանդիսություններին մասնակցեց Հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

2. 1998 թ. հոկտեմբերի 22 - 24-ը ժողով գումարվեց Վատիկանում, որին մասնակցեցին աշխարհական պատգամավորներ՝ ուղարկված և հովանավորված եկեղեցիների կողմից: Մայր Աթոռի կողմից ժողովին մասնակցեցին Ռ. Պապայանը և Ա. Մանուկյանը:

3. Անցած ութ ամիսների միջեկեղեցական կարևորագույն իրադարձությունը, բնականաբար, Զիմբաբվեի Հարարե մայրաքաղաքում գումարված ԵՀԽ-ի Ը համաժողովն էր՝ «Դարձիր առ Աստված. ցնծա հույսի մեջ» նշանաբանով: Համաժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը ներկայացնում էին Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Տ. Վիգեն եպս. Այքազյանը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Հարություն սրկ. Հարությունյանը, Կարեն Նազարյանը, Հայկ Մինասյանը, Սիլվա Ղազեյանը, Անահիտ Սիմոնյանը և Ծովինար Ղազարյանը:

Ժողովի ընթացքում ԵՀԽ-ի ԿԿ կազմում Մայր Աթոռի ներկայացուցիչներ են ընտրվել Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը և օրդ. Սիլվա Ղազեյանը:

4. Հունվարի 27-ին Մոսկվայում տեղի ունեցավ Քրիստոնեական Միջհանրվանական խորհրդակցական Մարմնի երրորդ նիստը, որը նպատակ ուներ քննության առնել ԱՊՀ երկրների եկեղեցիների կողմից Տիրոջ Ս. Ծննդյան 2000-ամյակի տոնախմբությունների ծրագրերը: Մայր Աթոռից այս նիստին մասնակցեցին Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը: Հոբելյանական ծրագիրը կազմելու աշխատանքային հանձնաժողովի մեջ ընդգրկվեց Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը:

## ՀՈՎՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշեցինք, Մայր Աթոռում հաստատել ենք Հովվական գործունեության գրասենյակ: Որպես գործունեության ծավալման դաշտ ընտրվեց Արմավիրի թեմը: Այսօր մարզի 5 բնակավայրերում ծավալված է քարոզչական գործունեություն, որն իրականացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, Քարոզչական Կենտրոնի և Գևորգյան հոգևոր ճեմարանի հոգևորականաց դասի և ուսանողության ջանքերով: Աշխատանքներում ներգրավված են նաև Արմավիրի և Արարատյան թեմերի քահանայից դասը: Այս աշխատանքներին իրենց օգտաշատ մասնակցությունն են բերում նաև Արարատյան թեմի Հայորդյաց տների սաները և Երիտասարդաց միության կազմակերպությունները: Ուրախ ենք արձանագրելու, որ ամիսների աշխատանքը մեծ խանդավառություն առաջ բերեց բնակչության մեջ: Գործունեության արդյունքում ծնավորվում են համայնքներ՝ ներառնելով շրջկենտրոնը և շրջանի մոտ 20 բնակավայրեր: Հովվական գործունեության շրջագծում քարոզչությանը զուգընթաց մատուցվում են պատարագներ, ժամերգություններ, հավատացյալներին բաժանվում են Աստվածաշունչ, եկեղեցական տոներին և սրբոց հիշատակներին նվիրված թերթոններ, աղոթագրքեր:

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ուրախալի է նշել, որ օրեցօր ամբողջանում է Գևորգյան Հոգևոր ճեմարանին կից կառուցվող կացարանային մասնաշենքը ազնիվ և մեծահոգի բարերարությամբ տեր և տիկին Շամլյանների: Ավարտված են շենքի քարային աշխատանքները: Իրականացվում են ներքին հարդարման աշխատանքները: Հուսով ենք, որ այն կավարտվի մինչ նոր ուսումնական տարի և իր հարկից ներս կառնի ճեմարանի 120 սաների:

Մասնակի շինարարական նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև Մայր Աթոռի տարածքում գտնվող այլ շենքերում՝ Նոր Վեհարանում, Երեմյան խցերում, Հայկաշենում, ուսանողական հին հանրակացարանում և այլն: Պարսպապատվել է Մայր Աթոռին հատկացված զբոսայգին. Մայր Աթոռում և Հռիփսիմե վանքում կառուցվել են գրատուն-սրահ խանութներ:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռի ֆինանսավորումով շինարարական աշխատանքներ են ծավալվել Հայաստանի տարբեր թեմերում:

Կարևորագույն կառույցը, որը և 1700-ամյակի տոնակատարությունների պսակը պիտի հանդիսանա, Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Ներկայիս աշխատանքներն ընթանում են, և կնքված պայմանագրով մինչ սեպտեմբեր վեր կխոյանան ութ հիմնապատերը, միջնապատերը և կամարները՝ մինչ գմբեթի թմբուկի տակ: Ֆինանսավորման ապահովման դեպքում այս տարեվերջին հնարավոր կլինի ավարտել Մայր եկեղեցու երկաթբետոնյա աշխատանքները, որով կգծագրվի եկեղեցու ամբողջական տեսքը:

## ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

Նվիրապետական Աթոռների հետ Մայր Աթոռի հարաբերությունները եղել են բնականոն:

1998 թ. հոկտեմբերի 14-ին Կ. Պոլսո հայոց Պատրիարքական Աթոռին բազմեց Նոր՝

84-րդ գահակալը՝ հանձին Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի:

Ուրախ առիթն ունենք վերստին ողջունելու և շնորհավորելու Կ. Պոլսո Հայոց նորընտիր Պատրիարք Մեսրոպ արքեպս. Մութաֆյանին, որ, Պատրիարքի բարձր պաշտոնում ընտրվելուց հետո, իր անդրանիկ այցն է կատարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորընտիր Պատրիարքի գահակալությանը (նոյեմբերի 21) մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ կազմվեց Մայր Աթոռի պատվիրակությունը, որի մեջ ընդգրկված էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Տ. Արշեն աբեղա Սանոսյանը և Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ պարոն Լազր Սուքյանը:

Նորին Սրբության առողջական վիճակով անձնապես հետաքրքրվելու նպատակով անցյալ տարվա դեկտեմբերին ԱՄՆ-ում Գարեգին Վեհափառին այցելեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, ավելի ուշ՝ նաև Կ. Պոլսո Ամենապատիվ նորընտիր Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը:

Ապրիլի 14-ին Մայր Աթոռ ժամանեց Արամ Ա Կաթողիկոսը՝ անձամբ առողջության բարեմաղթանքներ մատուցելու Ամենայն Հայոց Հայրապետին: Երկօրյա այցելության ընթացքում Արամ Վեհափառը հանդիպումներ ունեցավ նաև հանրապետության ղեկավար այրերի հետ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանում իր օրհնությունը բերեց ճեմարանականներին:

### 1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1700-ամյակի գրասենյակի գործունեության մասին ներկայացնում ենք Ձեզ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ստվարածավալ զեկույց-հաշվետվությունից հակիրճ կարևոր տեղեկություններ:

Գրասենյակի գործունեության կարևորագույն ոլորտը պետք է համարել եկեղեցաշինությունը, որի իրականացման համար Մայր Աթոռում ձևավորվել է ճարտարապետա-շինարարական հատուկ բաժին: Թվենք վերանորոգված և նորոգման ընթացքի մեջ գտնվող մի քանի եկեղեցիներ.

Մուղնու Սբ. Գևորգ,
Կարբիի Սբ. Աստվածածին,
Սանահին,
Սաղմոսավանք,
Յովհաննավանք,
Սևանի վանք,
Տաթևի վանք (Զանգակատուն, բարեկարգում),
Կեչառիսի վանք:

Անտարակույս, այս ծիրի մեջ ծավալված գործունեության պսակը Նորավանքի նշանավոր եկեղեցու վերանորոգումն էր, որ իրականացավ կանադաբնակ բարեպաշտ հայորդիներ տեր և տիկին Յաճեթյանների ազնիվ բարերարությամբ: Եկեղեցու օծման մեծ իրադարձությանն իր մասնակցությունը բերեց Վեհափառ Յայրապետը՝ իր շուրջ ունենալով մեկ տասնյակ հազարից ավելի ցնծացող հավատացյալների: Նորավանքի բացման առիթով հրատարակվեց պատկերազարդ հուշահանդես, որում ընդգրկված ուսումնասիրություններում բազմակողմանիորեն ներկայացվում է Նորավանքի պատմությունը, հուշարձանի ճարտարապետական առանձնահատկությունները, մշակութային նշանակությունը:

Նշանակալի իրադարձություններ էին «Յայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի կազմակերպումը Ֆինլանդիայում, Մոսկվայի Կրեմլում, Յունաստանում, Վատիկանում, որոնց հաճախեցին հազարավոր այցելուներ՝ ծանոթանալով հայ հոգևոր արժեքներին: Առաջիկայում ծրագրված են ցուցահանդեսներ Յոլանդիայում, Անգլիայում՝ Լոնդոն, Սանկտ-Պետերբուրգում:

Շարունակվում են 1700-ամյակի շրջանակներում կազմակերպվող ուխտագնացությունները, որոնց համար հրատարակվել են ուղեցույցներ, քարտեզներ, նաև՝ գրքեր՝ ներկայացնելով Յայաստանի պատմական նշանավոր վանքերն ու եկեղեցիները:

1999 թ. Յայաստան այցելած ուխտավորների հյուրընկալն էր Գուգարաց թեմը: Յարյուրից ավելի բարեպաշտ սփյուռքահայեր եղան Օձունում, մասնակցեցին Սուրբ Յովհան Օձնեցու հուշարձանի բացմանը, այցելեցին նրա դամբարան՝ Արդվիում, հյուրընկալվեցին Դիլիջանի Յաղարծին վանքում, ապա նաև՝ Յաղպատում և Սանահինում:

Մեծ ոգևորություն առաջացրեց նաև Օավ գետի ափին կատարված հավաքական մկրտությունը, երբ մեր եկեղեցու հոգևոր ավազանից սրբազան մյուռոնով վերածնվեցին Արցախի և Յայաստանի հարյուրավոր հայորդիներ: Աննախադեպ էր նաև «Յավատք և ժառանգություն» կարգախոսի ներքո

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կազմակերպված եկեղեցիների և պատմական հուշարձանների բարեկարգման միջոցառումը, որին մասնակցեցին շուրջ 12000 պատանիներ ու պարմանուհիներ: Միջոցառումն ընդգրկեց բազմաթիվ դպրոցների աշակերտների, բուհերի ուսանողության և թեմերին կից երիտասարդաց կազմակերպությանց անդամների, ինչպես նաև Ազգային բանակի զինվորներին և Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաներին:

1700-ամյակի գրասենյակի իրագործումներից հիշատակելի է նաև շուրջ 100 սրբանկարների պատրաստման նախաձեռնությունը, որն ընթացքի մեջ է, և մանուկների համար հոգևոր բովանդակությամբ խաղերի ստեղծումը, քարտեզների և գրքույկների հրատարակումը:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռում գործում է ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» գրասենյակը, որն հաշվետու ժամանակաշրջանում շարունակեց իր արդյունավետ գործունեությունը՝ հետամուտ ինչպես նախկին ծրագրերի, այնպես էլ՝ նոր մշակված ծրագրերի իրականացմանը:

Գրասենյակի դրամական միջոցները հիմնականում գոյանում են եվրոպական և ամերիկյան մի շարք եկեղեցական և բարեսիրական կազմակերպություններից: Գրասենյակը որոշակի դրամական աջակցություն է ստանում նաև Գարեգին Ա Վեհափառ Հայրապետից, նպատակային հատուկ ծրագրերի համար: «Կլոր սեղան»-ի ղեկավարումը իրականացվում է երկու հանձնախմբերի միջոցով: Հայաստանյան խորհուրդի մասն են կազմում Հայ Եկեղեցու և Հայաստանում գործող Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներ՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյան, Տ. Սեպուհ եպս. Չուլջյան, Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, պատվելի Ռենե Լևոնյան (Հայ Ավետարանչական ընկերակցություն): Կենտրոնական հանձնախմբի անդամներ են նաև եվրոպական եկեղեցիների ներկայացուցիչներ: Գրասենյակի տնօրենն է տիար Կարեն Նազարյանը:

Գրասենյակի գործունեությունը.

1. Շարունակվում է մասնավոր անձանց ցածր տոկոսադրույքով վարկավորումը՝ խրախուսելու փոքր բիզնեսի տնտեսական ծրագրերը և նպաստելու ընկերային կյանքի բարվոքմանը: 1999 թ. տրամադրվել է 75 վարկ՝ հազարից մինչև հինգ հազար դոլարի սահմաններում:

2. Գրասենյակի տրամադրած միջոցներով վերանորոգվել է Մայրավանքի Մկրտարանի շենքը:

3. Վերանորոգվել է Գուգարաց թեմին պատկանող ճամբարը, որ ծառայում է մասնավորաբար ծնողազուրկ և կարիքավոր ընտանիքների երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար:

4. ԵՀԽ-ի կողմից իրականացվել են Սյունյաց թեմի Կապանի բարեգործական ճաշարանի վերանորոգման աշխատանքները և կահավորումը, վճարվել Սիսիանի ու Վայքի բարեգործական ճաշարանների ընթացիկ ծախսերը:

5. Գյումրիում իրականացվել է մարզադպրոցի վերանորոգում:

6. Անասնապահական ծրագրեր են ֆինանսավորվել Գավառում և Գուգարքում:

Նշենք, որ «Կլոր սեղան»-ի գրասենյակի գործունեությունը շարունակաբար ընդլայնվում է՝ նոր ծրագրերի ընդգրկումով:

## *ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ*

Արձանագրենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի Հանրապետության ու Արցախ աշխարհի՝ հայրենի մեր պետությունների միջև ստեղծված հարաբերությունները ջերմ են և փոխըմբռնված: Սուրբ Ծննդյան և Սուրբ Զատկի պատարագներին Մայր Աթոռում մշտապես ներկա են պետության ղեկավար այրերը՝ գլխավորությամբ Հանրապետության Նախագահի: Եկեղեցու և պետության փոխըմբռնված համագործակցությունը, ինչպես պատմությամբ է հաստատված, մշտապես ազգաշահ է:

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի պաշտոնին կոչվելուց անմիջապես հետո, դեկտեմբերի 3-ին, մեզ ընդունեց ՀՀ Նախագահը՝ անձամբ հետաքրքրվելու Նորին Սրբության առողջությամբ և տեղեկանալու մեր նշանակման հետ կապված տնօրինության շրջագծին:

Ներկայիս համագործակցաբար պետական հատուկ հանձնաժողովի հետ կազմակերպում ենք Հռոմի Պապի Հայաստան այցելությունը, որը կայանալու է հուլիս 2 - 4-ը:

Հունվարի 12-ին ներկա գտնվեցինք Հայաստանի Հանրապետության նոր նշանակված 123 դատավորների երդման արարողությանը՝ բերելով արդարադատության խրախուսանքի մեր խոսքն ու օրհնությունը:

Մարտի 12-ին ԱՄՆ-ում Վեհափառ Հայրապետին այցելեցին ԼՂՀ նախագահ պրն. Արկադի Ղուկասյանը և Արտգործնախարար տիկ. Նաիրա Մելքումյանը: Նրանք Վեհափառ Հայրապետին տեղեկացրին ԱՄՆ-ում ունեցած իրենց հանդիպումների արդյունքների մասին:

## *ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

Անշուշտ, անցնող յոթ ամիսների ընթացքում այս մարզում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունը «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի բացումն էր, որ կայացավ այս տարվա մարտի 24-ին, Վատիկանում: Վեհափառ Հայրապետը, տակավին չհաղթահարած իր ֆիզիկական տկարությունը, անձամբ այցելեց Հռոմ և Վատիկանում Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ նախագահեց ցուցահանդեսի բացման արարողությանը: Ցուցահանդեսի բացման առիթով Հռոմ ժամանեց հատուկ պատվիրակություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ցուցահանդեսի բացմանը իր մասնակցությունը բերեց նաև ՀՀ Նախագահը՝ պետական պատվիրակության շքախմբով:

Աշակութային կյանքում առանձնացնենք այն ուրախալի իրողությունը, որ հոկտեմբեր ամսին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիան, բարձրորեն գնահատելով Նորին Սրբության մեծ ներդրումը գիտական-մշակութային բնագավառում, Վեհափառ Հայրապետին ընտրեց ԳԱԱ պատվավոր անդամ:

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի պաշտոնավարության

շրջանում անձամբ, հանուն Վեհափառ Հայրապետի, մասնակցություն ենք ունեցել ազգային-հասարակական և մշակութային կարևոր միջոցառումների, որոնցից հատկապես կարևորում ենք հետևյալները.

Դեկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եպիսկոպոսաց դասի և միաբանների ուղեկցությամբ մեկնեցինք աղետի գոտի՝ Սպիտակ, Գյումրի՝ ՀՀ պետական ու պաշտոնական այրերի (գլխավորությամբ՝ Ռ. Քոչարյանի) հետ միասնաբար հարգանքի տուրք մատուցելու Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին:

Հայ երաժշտական արվեստի վաստակաբեռն գործիչ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի 70-ամյակին նվիրված մեծարման հանդիսությանը հոբելյարին փոխանցեցինք Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրհնությունը և շնորհը՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» բարձր շքանշանով պարգևատրվելու մասին: Շքանշանի հանձնումը արվեստի մեծանուն գործչին տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հատուկ հանդիսությամբ: Նույն կերպ նման պարգևի արժանացավ մեծանուն քանդակագործ Սիլվա Կապուտիկյանը՝ ծննդյան 80-ամյակի առիթով: Ցանկալի է և անհրաժեշտ, որ համայն հայության հոգևոր օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակաբար լինի համախմբող և ոգեշնչող սրբակենտրոնը հայ մտավորականության և մշակութային գործիչների:

Մարտի 17-ին Նախագահ Ռ. Քոչարյանի հետ մասնակցեցինք ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովին՝ ծանոթանալու Ակադեմիայի գործունեությանը, վերջին շրջանում հայ գիտության կաճառում ստեղծված ճգնաժամից դուրս գալու ծրագրերին:

Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ մշակութային ասպարեզում նոր կյանքի է կոչվել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը: Դպրատան վարիչ-տնօրենն է պրն. Ալֆրեդ Շահնազարյանը:

Դպրատանը շարունակում է գործել պատկերասրահ-ցուցահանդեսը՝ ներկայացնելով հայ կերպարվարվեստի և քանդակագործության հայտնի գործիչների ստեղծագործություններ և արվեստի այլ ցուցանմուշներ: Պատկերասրահը և գրադարանն այս ամիսներին համալրվել են արվեստի նոր գործերով և գրականությամբ՝ հիմնականում նվիրատվություններով:

Դպրատանը օգոստոսին հրավիրվեց «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» գիտաժողովի նիստերից մեկը, որին հետևեցին ԳԱԱ-ի հետ համատեղ հրավիրած «Քրիստոնեությունը և արդի իրականությունը» գիտաժողովը, գիտագործնական հանդիպումներ, դասախոսություններ և այլ միջոցառումներ: Առաջիկայում ծրագրված է անցկացնել նոր գիտաժողով՝ «Աստվածաշնչյան Հայաստանը» խորագրով:

Կուզենայինք մասնավորաբար անդրադառնալ այն իրողությանը, որ վերջին տարիներին Հայաստանում Հայ Եկեղեցու ներկայությունն առավել տեսանելի է հասարակական, մշակութային, ընկերային կյանքում, ոչ միայն որովհետև Եկեղեցին է նորոգ գործունեություն ծավալում, այլ նաև՝ ժողովրդի ընկալման մեջ և կենցաղում կարևորվում է Հայ Եկեղեցին նաև այս բնագավառներում ունեցած իր առաքելությամբ:

Տեղեկագրի ավարտին վերստին ի խորոց սրտի փառք ենք մատուցում առ

Բարձրյալն Աստված, որ առողջական դժվարին վիճակներ ապրած Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում է և անձամբ նախագահում է Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված այս նիստին: Մեր հոգու աղոթքն է և մաղթանքը, որ Ամենախնամ Տերը ապաքինում պարգևի Հայոց Հայրապետին, պահպանելով կորովամիտ և ծրաջան, ղեկավարելու Հայ եկեղեցին՝ հուրախություն մեզ և ի շինություն ազգի ու Հայրենիքի:

Թող Ամենաբարի Աստված անսասան պահի Հայաստան աշխարհը՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը, Աստվածադիր Առաքելահաստատ ու Լուսավորչապսակ Հայ եկեղեցին, և Իր օրհնաբաշխ Աջով զորակից լինի մեր ժողովրդին՝ նորոգ հավատով Աստվածապարգև իր հողում և ի Սփյուռս աշխարհի կերտելու շեն ու բարգավաճ և բարօր իր գալիքը:

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 28-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Մայր Աթոռի դիվանապետ Գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, տեղի ունեցավ Հանրապետական մաղթանքի արարողություն՝ ի ոգեկոչումն 1918 թ. Հայաստանի առաջին հանրապետության:

Հավարտ արարողության «Մի երկնչիր հոտ փոքրիկ» բնաբանով քարոզեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սրբազան Հայրը, իր պատգամը հաղորդելով ներկա հավատացյալներին, հորդորեց երբեք չլքել հայրենիքը և ամեն կերպ աշխատել արյունով գնված մեր հայրենիքի ծաղկման ու բարգավաճման համար:

Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը նշեց, որ հայրենի մեր իրականությունը գնված է նաև Սարդարապատի հերոսների արյունով, պատմական մի ճակատամարտ, որին մահապարտների գնդի հետ իրենց մասնակցությունը բերեցին ավելի քան 500 հոգևորականներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

# ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ

Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակով արքության պատիվ եւ տիտղոս շնորհվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանին:

Կիրակի, հունիսի 6-ին, Սբ. էջմիածնի հիմնադրման տոնին, հանդիսացավ Սբ. Պատարագի, Մայր Աթոռ Սբ. էջմիածնի լուսարարապետ Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը հանդիսավորապես ընթերցեց եւ Հայրապետական սրբատառ կոնդակը հանձնեց Պարգեւ Սրբազանին:

Արքության բարձր պատիվը Սրբազան Հորը տրվում է ծննդյան 45 եւ առաջնորդության 10-ամյակի առիթով:

Լինելով Երեւանի Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի շրջանավարտ, 1980 թ. ընդունվել է Սբ. էջմիածնի Հոգեւոր ճեմարան: Աստվածաբանական լրացուցիչ կրթություն է ստացել Լենինգրադի հոգեւոր ակադեմիայում, ուր փայլուն կերպով պաշտպանել է ավարտական թեզը՝ «Աստվածճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության եւ միստիկական ուսմունքների՝ յոգայի, թեոսոֆիայի եւ անտրոպոսոֆիայի» թեմայով, որի համար եւ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան.

Սրբազան Հայրը, իբրեւ դասախոս եւ փոխտեսուչ, իր նպաստն է բերել Սբ. էջմիածնի Հոգեւոր ճեմարանի դաստիարակչական գործին, եղել է Սբ. Հռիփսիմե վանքի վանահայրը:

1989 թվականից ի վեր Պարգեւ Սրբազանը Արցախի թեմի առաջնորդն է, եւ Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ՝ Սրբազան Հոր անունը անքակտելիորեն կապվել ու անբաժանելի մասն է դարձել արցախյան գոյապայքարի:

«Ահա տասը տարիներ սահեցին այդ պատմական օրվանից, եւ Դուք, Ձեր գործակից ու լծակից հոգեւորականների հետ միասին, երբեմն աննկարագրելի զրկանքների ու տառապանքների գնով, կարողացաք հոգեւոր կյանքից բացարձակապես զրկված մեր արցախահայությանը մոտեցնել Հայաստանյայց Ս. եկեղեցուն եւ իր աստվածօրինյալ ժառանգությանը: Այսօր Արցախի թեմն իր ողջ կառույցով դարձել է Հայ եկեղեցու կարեւորագույն օղակներից մեկը, ուր կա կենդանի հավատք, անձնուրաց նվիրում եւ անսպառ եռանդ»,- ասվում է Վեհափառ Հայրապետի կոնդակում:

Պարգեւ արքեպս. Մարտիրոսյանը Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամ է:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

## ՆՈՐԱՅՐ /ԲՈԲ/ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով բանգկոկաբնակ հայազգի բարերար Նորայր /Բոբ/ Տեր-Գևորգյանին շնորհվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը: Նորայր Տեր-Գևորգյանի կողմից վերջերս Հայոց եկեղեցուն արված մեծագումար նվիրատվությունը մեծ ներդրում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Երևանում կառուցվող Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մուտքի Սբ. Աշխեն մատուռի շինարարությանը:

Մինչ սրբատառ կոնդակի ընթերցումը, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը խնդրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը բարերարի համար:

Ապա Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրագույն շքանշանը հանձնեց բարերարին:

Այս արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ամերիկահայ բարերար Հրայր Հովնանյանը, հոգևորականներ ու այլ հրավիրյալներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ
ՊՈՊ (ՆՈՐԱՅՐ) ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՈՎ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՋԵՅՄՍ ՎՈՒԼՖԵՆՍԵՆԻ ԵՎ ՆՐԱ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Համաշխարհային բանկի նախագահ Ջեյմս Վուլֆենսոնին և տիկնոջը: Նրանց ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով իր վաղեմի բարեկամին՝ պրն. Վուլֆենսոնին, շնորհակալություն հայտնեց Համաշխարհային բանկի այն ներդրումների համար, որոնք այնքան կենսական են Հայաստանի տնտեսության ամրապնդման համար:

Իր հերթին ՀԲ-ի նախագահը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ ցանկալով Նորին Սրբությանը առողջություն և բարի ապաքինում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պրն. Վուլֆենսոնին նվիրեց Սբ. Էջմիածնի պատկերով գոբելեն:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՋՈՆ ՀԱՆԹՍՄԱՆԸ

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց ամերիկացի գործարար Ջոն Հանթսմանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրին, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը պրն. Հանթսմանին փոխանցեց Հայոց Հայրապետի գնահատանքը՝ անցնող տարիների ընթացքում Հայաստանում իրականացրած գործունեության և մարդասիրական ձեռնարկների համար:

Իր նվիրվածությունը հայտնելով Հայաստանին, պրն. Հանթսմանը նշեց, որ մեծագույն հարգանք է տածում դեպի Հայոց Եկեղեցին, և իր սերն առ Հայաստան պայմանավորված է նաև այս զգացումով:

Հանդիպման ավարտին պրն. Հանթսմանը առողջության և ապաքինման իր բարի մաղթանքները խնդրեց հայտնել Վեհափառ Հայրապետին, ում հետ նախկինում հանդիպելու մեծագույն պատիվն է ունեցել:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

# ԿՐՕՆԱԿԱՆ

## Կ. ՊՈԼՍՈՅ
## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ
## ՔԱՐՈԶԸ ԽՕՍՈՒԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
## ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԻՆ
**(Մայիսի 16-ին, կիրակի 1999 թ.)**

*«Հայրն փառաց տացէ ձեզ... լուսաւոր առնել զաչս սրտից ձերոց»:*
*(Եփես. Ա 17-18)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Փառաց Հայրը թող լուսաւորէ ձեր սրտերու աչքերը»:

Երեք օր առաջ նշեցինք մեր Տիրոջ և Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի Համբարձման տօնը, յիշատակելով, թէ ինչպէս Ան, Իր Հրաշափառ Յարութենէն քառասուն օրեր ետք, երկինք համբարձաւ և «նստաւ ընդ աջմէ Հօր» (Սղմ. ճԹ. 1, Մտթ. ԻԲ. 44, Մրկ. ԺԶ. 19, Գործք Է. 55, Եփես. Ա. 20): Այսօր ևս կը շարունակենք խորհրդածել Համբարձման խորհուրդին մասին, այս անգամ Ագաթանգեղոսի կողմէ փոխանցուած ազգային աւանդութեան բովով՝ ակնարկուած օրուան Օրհնութեան շարականին մէջ:

Համբարձումը ոչ միայն կը յիշեցնէ մեզի մեր Տիրոջ համբառնալուն՝ երկրէ երկինք ելանելուն դէպքը, այլ և կը փոխանցէ խորհուրդ մը, որուն իմացումը անհրաժեշտ է մեր հոգիներու փրկութեան համար: Քրիստոս Հայր Աստուծոյ աջ կողմը բազմեցաւ, ուր Ան կը շարունակէ բարեխօսել որպէս մեր Երկնաւոր Քահանայապետը: Սողոմոն Իմաստունի, ապա Հերովդէսի կողմէ շինուած Երուսաղէմի Տաճարն ունէր երկու գլխաւոր սրբարաններ, ուր պատարագներ կը մատուցուէին ի քաւութիւն ապաշխարող ժողովրդի մեղաց: Ասոնցմէ երկրորդը, որ փակ էր ժողովրդի և մինչև իսկ քահանաներու մուտքին, կը կոչուէր «Սրբութիւն Սրբութեանց»: Սոյն սրբարանին մէջ կային խունկ մատուցելու ոսկեայ սեղանը և Ուխտի Տապանակը: Այս Տապանակին մէջ դրուած էին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծաղկեալ գաւազանը և Ուխտի տասնաբանեայ պատուիրաններուն տախտակները: Քահանայապետը տարին սոսկ մէկ անգամ կը մտնէր այն սրբարանը ոչ միայն ժողովրդին, այլ նաև իր սեփական մեղքերուն համար զոհ մատուցելու նպատակաւ:

Պօղոս Առաքեալ Եբրայեցիներուն ուղղած իր նամակին մէջ կը յիշեցնէ, թէ տաճարին մէջ մատուցուած զոհերու եւ նոխազներու արիւնով ժողովուրդը կը կարծէր, թէ կը սրբուէր իր մեղքերէն: Իսկ եթէ զոհերու արիւնը սրսկելը կը բաւէր ծիսականօրէն պղծուած մէկը սրբելու համար մարմնական մաքրութեամբ, որքա՜ն աւելին կարող էր ընել Քրիստոսի արիւնը:

Մեր Քահանայապետը իսկապէս ուրիշ է (Եբր. Դ.15): Ան այս պահուն Հայր Աստուծոյ աջ կողմը բազմած կը բարեխօսէ եւ կը քահանայագործէ մեր հոգիներու փրկութեան համար: Ան, Հին Ուխտի քահանայապետներուն նման պէտք չունի Ինքն Իր համար աղօթելու, որովհետեւ Ան կատարելապէս անմեղ է: Ուրեմն մենք, Քրիստոնեաներս, Համբարձման տօնի այս օրերուն կը յիշենք, թէ արդարեւ որքա՜ն բախտաւոր ենք, որ մեզի համար անդադար բարեխօսող կատարեալ Քահանայապետ մը ունինք: Մենք զԱստուած ճանչցանք Իր յայտնութեան շնորհիւ: Քանի մը ամիսէն բոլոր Քրիստոնեայ ժողովուրդներու հետ պիտի սկսինք պատշաճ հանդիսութիւններով նշել, թէ Ան 2000 տարիներ առաջ ինչպէս մարմին առաւ եւ կատարելապէս ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն ի Բեթղեհէմ, շրջեցաւ մեր մէջ, եղաւ մեզմէ մէկը, բնակեցաւ մեր մէջ, շուրջ երեք տարիներ վարդապետեց, ապա ճաշակեց չարչարանքի ու խաչածանքի դառնութիւնը եւ ապա Գողգոթայի վրայ պատարագուեցաւ համայն աշխարհի փրկութեան համար, թաղուեցաւ եւ երրորդ օրը արթնցաւ ի մեռելոց: Յարուցեալ Փրկիչը քառասուն լման օրեր զանազան տեղեր երեւելէ ետք, մեծ փառքով համբարձաւ յերկինս եւ բազմեցաւ Հայր Աստուծոյ աջ կողմը, ուր Ան կը շարունակէ բարեխօսել վասն մեր որպէս մեր Յաւիտենական Քահանայապետը:

Համբարձման այս օրերուն, մենք՝ Քրիստոնեաներս՝ անգամ մը եւս կ'անդրադառնանք, որ մեր Երկնաւոր Քահանայապետը՝ Տէր Յիսուսը կրնանք վստահիլ եւ Անոր Քահանայապետական Աթոռին առջեւ կրնանք բերել մեր բոլոր խնդրանքները: Քանզի Ան կը հասկնայ մեր տկարութիւնները եւ կը կարեկցի մեզի, քանզի Ինք եւս անցած է մարդոց յատուկ բոլոր փորձութիւններէն, առանց սակայն մեղանչելու (Եբր. Դ.15): Այո՛, Ան, որ համբարձմամբ Հայր Աստուծոյ Աջ կողմը բազմեցաւ, յիրաւի մե՛ր Քահանայապետն է: Փա՜ռք եւ պատիւ Իրեն, յաւիտեանս յաւիտենից:

Սիրելի հաւատացեալներ,

Մեր եկեղեցւոյ աւանդութեան մէջ այս օրը կոչուած է նաեւ Երկրորդ Ծաղկազարդ: Մեր Հայրերը Քրիստոսի Համբարձումը նմանեցուցած են մուտքին՝ ի Վերին Երուսաղէմ: Ինչպէս որ Ծաղկազարդին Ան Երուսաղէմ մտաւ «Ովսաննա»ներով եւ «Ալէլուիա»ներով, այնպէս նաեւ Ս. Յարութեան քառասուներորդ օրը՝ Երկրորդ Ծաղկազարդին, մտաւ Երկնային, Վերին Երուսաղէմ:

Աստր մասին ունինք ազգային աւանդութիւն մը:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, երբ որ Վիրապի խաւարի առանձնութեան մէջ էր, ուժասպառ եւ արգելափակուած, յանկարծ Աստուածային քաջալերութիւն ստացաւ, այնպէս, ինչպէս Տէր Աստուած Իր սիրելի Որդին Գեթսեմանիի մէջ քաջալերած էր, երբ Ան արեան կաթիլներու պէս գետին հոսող քրտինքներու

մէջ կ'աղօթէր. «Հայր, եթէ կամենաս, հեռացուր ինձմէ այս բաժակը» (Ղուկաս ԻԲ. 42) և երկինքէն հրեշտակ մը երևեցաւ՝ զինք զօրացնելու համար: Ճիշտ այդպէս, որ Վիրապին մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ յանկարծ զգաց ներկայութիւնը հոգեղէն էակի մը, և Վիրապի խաւարը իսկոյն լուսաւորուեցաւ:

Աւանդութիւնը կը պատմէ, որ այդ հրեշտակը ամէն օր կ'այցելէր սուրբին: Եւ սակայն օր մը յանկարծ բացակայեցաւ: Յաջորդ օրը, երբ վերստին յայտնուեցաւ, Սուրբ Հայրը հարցուց. «Երէկ ինչո՞ւ չեկար»: Հրեշտակը բացատրեց, որ ինն օրեր շարունակ Համբարձում է, հրեշտակներու երկնային ինը դասերը Քրիստոսի՝ Վերին Երուսաղէմ մուտքը կը տօնեն, իսկ ինք, սուրբին այցելող հրեշտակը, զուարթուններու չորրորդ դասուն կը պատկանէր, հետևաբար երէկ չէր կրնար Վիրապ այցելած ըլլալ, քանի որ կը մասնակցէր երկրորդ Ծաղկազարդի տօնախմբութեան:

Տեսէք, սիրելի՛ հաւատացեալներ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ որ Վիրապին մէջ միայնակ էր, բայց քանի իր հաւատքի աչքերը բաց էին, և քանի խորապէս կը հաւատար Անոր՝ որ Լոյս էր ի Լուսոյ, կրցաւ զգալ ներկայութիւնը Աստուծոյ ու Անոր հրեշտակին:

Կան մարդիկ, որոնք ծնած են ծրիօրէն ստացուած աւանդական ժառանգութեան մէջ և այսօր կ'ապրին վայելելով անոր հոգևոր բարիքները, այսպէս ասած՝ կը լողան հոգևոր սքանչելիքի մէջ, ցաւօք սակայն բան չեն տեսներ, որովհետև իրենց հոգիները զգայուն չեն, չեն գիտեր իրենց ժառանգած սրբութեանց արժէքը: Այսօր կ'ըսենք, թէ Քրիստոնեայ ենք, քանի որ 1700 տարիներ առաջ Քրիստոնէութիւնը պաշտօնապէս ընդունած ազգի զաւակներն ենք: Իրականութիւնն այն է սակայն, թէ մեզմէ շատեր կ'ապրին Քրիստոսին անծանօթ՝ հեթանոսներու նման: Ինչպէ՞ս չյիշել Տէր Յիսուսի այն խօսքը, երբ Ան շրջապատուած էր փարիսեցիներու խումբով. «...քանի կ'ըսէք, թէ կը տեսնէք, կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք» (Յովհ. Թ. 41): Զգոյշ պիտի ըլլանք, որ առօրեայ մեր կեանքին մէջ չանտեսենք սրբութիւնները՝ Աստուծոյ ներկայութեան և ներգործութեան նշանները: Եթէ տեսնել ուզենք, ապա անոնցմով շրջապատուած ենք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ Վիրապի մէջ անյոյս վիճակի մատնուած էր, երբ մեզմէ շատեր պիտի մտածէին՝ թէ այլևս փակուած էր իր հաշիւը, հաւատքի կատարեալ զօրութեամբ, կը զգար Աստուծոյ ներկայութիւնը: Մեծ սուրբը գիտէր, թէ Աստուած կարող է զինք այդ վիճակէն ալ դուրս հանել: Հաւատաց և տեսաւ: Վիրապի իր առանձնութեան մէջ զգաց Աստուծոյ անտեսանելի, սակայն հոգւով շօշափելի ներգործութիւնը:

Ո՜վ հաւատացեալներ, մեզմէ շատեր առանձնութիւնը կամ բարեկամներու հետ լինելը միշտ կը բացատրեն մարդոց տեսանելի բացակայութեամբ կամ ներկայութեամբ: Բայց ո՞րքան ճիշտ է այդ: Օրինակի համար, կրնա՞նք «Եկեղեցին այսօրուան մեր տեսած Եկեղեցին է» ըսելու աստիճան միամիտ ըլլալ: Սիրելիներ, Հայաստանեայց Եկեղեցին այսօր միայն այստեղ հաւաքուածներս չէ, որ կը բաղկանայ: Սա փոքրիկ տաճար մըն է: Այստեղ գտնուողներս Հայաստանի երեք ու կէս միլիոն հայութեան կամ աշխարհի չորս ծագերուն

ցրուած հայութեան ո՞րքանն է: Ոչ միայն տեղի, այլ նաև ըստ ժամանակի, Հայաստանեայց մեր Առաքելական եկեղեցին՝ այսօրուան տեսանելի եկեղեցին շատ աւելի մեծ է: Ձեր հոգիին աչքերով յետադարձ ակնարկ մը նետեցէք մեր պատմութեան վրայ, առաջին օրերէն մինչև այսօր, երբ առաքեալները առաջին անգամ այցելեցին մեր աշխարհը և առաջին անգամ Քրիստոսի Աւետարանը քարոզել սկսան մեզի: Այդ օրերէն սկսեալ հաւատացողներ և Քրիստոսի հետևողներ եղան մեր մէջ, դարէ դար հաւատքը փոխանցուեցաւ նոր սերունդներու: Ահաւասիկ ա՛յս է մեր ժառանգութիւնը:

Եկեղեցին արդարև մեծ է, մեր աչքերով տեսնուածէն շատ աւելի մեծ: Եկեղեցին ոչ միայն կ՚ընդգրկէ հրեշտակներն ու հրեշտակապետները, Հին Ուխտի մարգարէներն ու արդարները, այլ նաև երկու հազար տարիներու ընթացքին Քրիստոսի հետևած բոլոր հաւատացեալները:

Մեր հաւատքի հայրն ալ, որ Վիրապին մէջ, թէև ըստ երևոյթին առանձին մնացած էր, սակայն ան Աստուածութեան հրաշալի զօրութեան առընթեր լեցուած էր նաև հրեշտակներու և սուրբերու, մէկ խօսքով՝ Յաղթական եկեղեցւոյ, ներկայութեան երանական զգացումներով: Այսօր մենք ալ երբ Ս. Պատարագ կը մատուցենք, մեզի հետ ներկայ են պահապան հրեշտակները, մեր բոլոր հանգուցեալ Հայրապետները, սուրբերը և սրբուհիները, մեր բոլոր եռամեծ վարդապետները, որոնք հաւատացին Քրիստոսի և նախընտրեցին մինչև իսկ իրենց կեանքը տալ Քրիստոսի սիրոյն, քան հաւատափոխ կամ դաւանափոխ ըլլալ:

Սիրելի և հաւատաւոր ժողովուրդ մեր, Այս պահուն ես կը յիշեմ Սուրբ Պօղոս Առաքեալի, Եփեսացիներուն գրած այն գեղեցիկ խօսքը, որով այսօրուայ իմ մտածումներս բացի. «Հայրն փառաց տացէ ձեզ ... լուսաւոր առնել զաչս սրտից ձերոց» (Եփես. Ա.17): Փառաց Հայրը տայ, որ ձեր սրտերուն աչքերը լուսաւորուին: Ս. Գրիգոր Լուսաւորչի արժանի թոռներն ըլլալու համար պէտք է աղօթել Աստուծոյ, որ Իր Աստուածային, երկնային և ճշմարիտ խօսքով բանայ մեր սրտերուն աչքերը, որուն այնքան պէտք ունինք մանաւանդ այս օրերուն, երբ ազգովին կ՚անցնինք շատ դժուար պայմաններու մէջէն:

Այստեղ կը փափաքէի իմ հոգևոր ուրախութիւնս յայտնել, երբ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ անդրանիկ Ս. Պատարագս կը մատուցեմ, որպէս Կոստանդնուպոլսոյ հայոց նորընտիր Պատրիարքը: Շնորհակալ եմ, որ Ազգիս Վեհափառ Հայրապետը բարի եղաւ հայրաբար հրաւէր ուղղել, որպէսզի ուխտս վերանորոգեմ Իջման Սուրբ Սեղանին առջև, պարտականութիւն մը, զոր երկիւղիւ կատարեցի անցեալ երեքշաբթի երեկոյեան: Շնորհակալ եմ Վեհափառ Հայրապետի և մեր Միաբանութեան բոլոր հայրերուն ու եղբայրներուն ջերմ ընդունելութեան համար:

Մեր եկեղեցին փոքր է, բաղդատուած ուրիշ մեծ եկեղեցիներու հետ: Սակայն եկեղեցւոյ պարագային խնդիրը մեծութեան կամ բազմամարդութեան հետ կապուած չէ, կարևորը մեր կենդանի աւանդութեան խորքն է, մեր հոգևոր կեանքի կենսունակութիւնն է: Աստուած միայն գիտէ, մէյ մըն ալ իւրաքանչիւրս

մեր սրտին մէջ, թէ ո՛րքան խորն է մեր հաւատքը, որքանո՞վ ենք մենք այսօր ջերմ հետեւորդները մեր հայրերուն, մեր սուրբերուն: Սակայն ամէն ինչ մեզմէ անձնապէս կախուած չէ. եթէ եկեղեցին միայն մեր ձեռքը մնացած ըլլար, վստահ կրնանք ըսել, որ ան այս օրերուն չէր հասներ: Պատերազմներ, կոտորածներ, աշխարհագրական դժուար տարածք... Փա՜ռք Բարձրեալն Աստուծոյ, այդ ամենուն մէջէն մենք դուրս եկանք, հասանք այս օրերուն: Երրորդ հազարամեակի սեմին կը գտնուինք ազատ ու անկախ Հայաստանի ինքնիշխան պետութեամբ: Հայ եկեղեցին անոր առընթեր հետզհետէ պիտի զօրանայ: Մեր ժողովրդի զաւակները պիտի անդրադառնան, որ ուրիշ եկեղեցիներու սեղաններուն վրայ պէտք չունին հոգեւոր սնունդ փնտրելու, որովհետեւ մեր փրկութեան համար ինչ որ անհրաժեշտ է, կայ մեր Ս. Սեղաններուն վրայ: Պատմութեան առաջին եկեղեցիներէն մէկը, պետութեան մը կողմէ պաշտօնապէս ճանաչուած առաջին եկեղեցին ենք: Դարերու հոլովոյթին՝ մինչեւ այսօր, թէեւ տարբեր կայսրութիւններու, տարբեր ռեժիմներու ենթարկուած ժողովուրդ ենք, սակայն մեր այդ հոգեւոր ջիղը առողջ ենք պահեր մինչեւ այսօր: Եթէ ունինք իմաստութիւն, պիտի հասկնանք, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցիէն բացի, Սուրբ Էջմիածինը իբրեւ իր կեդրոնը ընդունող եկեղեցիէն բացի, ուրիշ որեւէ հոգեւոր հաստատութիւն, հայ Քրիստոնեայ ժողովրդի գոյատեւման միեւնոյն անսակարկ նուիրումով պիտի չսատարէ: Ինչպէս ազգն ու հայրենիքը, այնպէս նաեւ Հայ Եկեղեցին մէկ պէտք է ըլլայ: Եւ անոր կեդրոնը չի կրնար ըլլալ որեւէ այլ տեղ, բացի Սուրբ Էջմիածնէն, որ մեր հաւատքի Հայր Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռն է: Ամէն եկեղեցի ունի երկրորդական Աթոռներ, բայց ամէն եկեղեցի աշխարհին կը ներկայանայ մէկ գլուխով:

Բնական է այն մարմինը, որ ունի մէկ գլուխ: Անբնական եւ հիւանդ է այն մարմինը, որ ունի աւելի քան մէկ գլուխ: Այս գիտակցութեամբ մենք պիտի համախմբուինք մեր Նախամեծար եւ Մայր Աթոռին շուրջը: Պատմութեան բերմամբ ստեղծուած երկրորդական մասնաւոր կեդրոններ, նուիրապետական եւ առաջնորդական բոլոր վիճակներ գերակայութիւնը պիտի ճանչնան եւ կատարեալ հաղորդութեան մէջ պիտի ըլլան Ամենայն Հայոց Հայրապետութեան հետ: Հայ եկեղեցին է մեր հոգիներուն ծննդավայրը: Իսկ տեղ-տեղ տարբեր եւ օտարոտի աւանդոյթներու մուտքը մեր ժողովրդի տուներէն ներս մտահոգիչ երեւոյթ է: Անոնք կրնան հայերէն խօսիլ, անոնք կրնան հայերէն գեղատիպ հրատարակութիւններ տալ մեզի: Մենք կրնանք կարծել, որ անոնք հարազատ են մեզի: Բայց գիտցած ըլլանք, որ չեն:

Անոնք, որոնք Քրիստոնէական լոյս հաւատքը մեր հայրերու աւանդական գծով չեն բացատրեր մեզի, հարազատ չեն մեր ժողովրդի սրտին ու հոգիին:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Ինչպէս Գեթսեմանիի մէջ մեր Փրկչին՝ Յիսուսին, եւ ինչպէս որ Վիրապին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին, հաւատացէք, որ մեր ամենէն դժուար օրերուն մէջ Տէր Աստուած մեզի հետ ալ պիտի ըլլայ եւ զանազան նշաններով պիտի քաջալերէ մեզ, պիտի լուսաւորէ մեր հոգիները, պիտի փարատէ մեր

շուրջը տիրող խաւարը և մեզ պիտի քաջալերէ, հաւատքի, ապրելու տեսլական պիտի տայ մեզի: Երկրորդ Ծաղկազարդին, երբ Քրիստոսի Վերին Երուսաղէմ մուտքը կը տօնենք, գիտնանք, որ պիտի ըլլան պահեր, երբ առանձինն մնացած լինելու զգացումով պիտի պատուինք: Բայց պիտի չվախնանք, ինչպէս Դաւիթ Գողիաթին առջև չվախցաւ, պիտի չվախնանք և խոր համոզումով պիտի ըսենք. «Տէր Աստուած ընդ մեզ է», Աստուած մեզի հետ է. մենք մինակ չենք: Մենք ունինք մեր հայրերը, մեր սուրբերը, և իբրև անոնց հոգևոր թոռները կը պահենք նոյն ուղղափառ հաւատքը Աստուծոյ նկատմամբ:

Աստուած անցեալին չանտեսեց այս ժողովուրդը. դեռ առաջին դարուն մեզի առաքեալներ ուղարկեց՝ մեզ լուսաւորելու համար: Աստուած այսօր ալ չ'անտեսեր մեզ, եթէ մենք շարունակենք հաւատքով կանչել Իր ամենասուրբ Անունը:

Եկէք Ս. Պատարագին աղօթենք վասն անսասանութեան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ: Աղօթենք, որ իւրաքանչիւրս լուսաւորուի Աստուծոյ Իմաստութեան Հոգիով: Տէրը թող բանայ մեր սրտերը, մեզ պայծառակերպէ Իր ներկայութեամբ, մեզի զգայուն սիրտ տայ, որ տեսնենք Իր հրաշագործութիւնները: Աղօթենք նաև Ազգիս Վեհափառ Հայրապետին առողջութեան, արագ և կատարեալ ապաքինման համար, որպէսզի վայելելով Իր օրհնութիւնը, շարունակենք փառաւորել անունը Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

# ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԵՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

**(5 հունիսի, շաբաթ, 1999 թ.)**

*«Որ առաքեցեր զփրկելի եւ զհաւատարիմ քո պաշտօնեայն՝ զՍուրբն Գրիգոր եւ ի ձեռն լուսաւորեցեր զՀայաստան աշխարհս»:*
*(Շարական)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այս օրը մեր եկեղեցու կյանքի մեջ հավատքը թթխմորող օր է: Լուսավորչի «Ելն ի վիրապեն» տոնը յուրաքանչյուր հայ հավատացյալի կյանքի մեջ կներդնե հոգևոր վերածննդի այնպիսի պահ մը, որը մեր առօրյա կյանքին մեջ կդառնա հոգևոր ուժականության աղբյուր, նորոգություն ներշնչող աղոթքի պահ: Այս պահուն, պատմական այս հողին վրա, բոլորս մեկ մարմին և մեկ աղոթք դարձած, կուգանք հաղորդվելու Լուսավորչի հավատքեն, կուգանք մեր մեջ նորոգելու ուխտագնացությունը, որը մեր կյանքում ճանապարհ է դեպի Աստված, և այդ հոգևոր ճանապարհորդության մեջ յուրաքանչյուրս յուրովի կմտածենք, թե ինչ կերպով կրնանք արժևորել հոգևոր մեր կյանքը՝ կանգնած լինելով հանդերձ Քրիստոսի Ծննդյան 2000- ամյակի ու քրիստոնեությունը Հայաստանում իբրև պետական կրոն հռչակման 1700-ամյակի շեմին:

Իմ կյանքում երբեք չէի ունցած այն ապրումը, երբ Պատարագեն առաջ, երկյուղածությամբ, ձեռքս առի Լուսավորչի Աջը: Սրտիս մոտ պահելով, այն իմ մեջ նորոգեց ուխտս առ Աստված, դեպի իմ եկեղեցին, իմ ժողովուրդը: Զգեստավորումե առաջ քաղեցի Լուսավորչին նվիրված շարականնեն հատված մը, որուն մեջ հինգ հիմնական խորհուրդներ սնունդ տվին իմ հավատքի գիտակցական կյանքին, և այդ խորհուրդներուն կուզեմ բաժնեկից դարձնել նաև ձեզ: Շարականին բովանդակությունը ձեզի կուզեմ ներկայացնել հատված առ հատված, քանզի այն կբովանդակե մեր հավատքի Հոր՝ Լուսավորիչ Հայրապետի առաքելատիպ կյանքը:

Շարականագիրը առաջին տողին մեջ կըսե.

«Որ առաքեցեր զփրկելի եւ զհաւատարիմ քո պաշտօնեայն՝ զՍուրբն Գրիգոր եւ ի ձեռն լուսաւորեցեր զՀայաստան աշխարհս»:

Շարականի այս տողին մեջ կտեսնենք, որ Լուսավորիչ Հայրապետը

ընտրված, կանչված էր նվիրական պաշտոնի մը՝ այս հողի վրա ապրող ժողովուրդի կյանքը Քրիստոսի Ավետարանի լույսով լուսավորելու համար:

Շարականի երկրորդ տողը հետևյալն է.

«Որ ետուր համբերութիւն անտանելի չարչարանացն սրբոյն Գրիգորի եւ նորին ժուժկալութեամբն լուսաւորեցեր զՀայաստան աշխարհս»։

Մեր հավատքի Հոր՝ Լուսավորչի չարչարանաց խորհուրդը հավատքի աչքերով կտեսնենք այս սուրբ հողին մեջ, այս եկեղեցուն կից վիրապի խավարին մեջեն կտեսնենք հավիտենական կյանքը, հավերժական լույսը, որ Քրիստոսի մեջ ունեցավ իր զուաբերյալ կյանքի արժևորումը:

Երրորդ հիմնական գաղափարը, որը շարականագիրը կուզե մեզի փոխանցել, կրկին կխոսի մեր հավատքի Հոր՝ Լուսավորչի մասին և կըսե.

«Որ նորին սուրբ աղօթիւք բարձեր զխաւար կռապաշտութեան ի Հայաստան աշխարհէ»։

Այստեղ կտեսնենք, որ Լուսավորիչ Հայրապետը ոչ միայն Աստուծմե իրեն տրված շնորհքովը անտանելի չարչարանքները համբերությամբ կտաներ, այլ նաև իր կյանքը կշարունակեր անցուցանել անձանձրույթ աղոթքի մեջ:

Այս երեք տողերե հետո շարականագիրը կշարունակե ու կըսե.

Եկեք, սիրելի հավատացյալներ, մենք, որ կանչված ենք դառնալու որդեգիրները Լուսավորիչ Հայրապետի, օրհնենք և փառաբանենք Աստծուն:

Վերջապես, հինգերորդ խորհուրդը, որ շարականեն կքաղենք՝ տոնակատարությունն է, որ ցնծությամբ տոնենք հիշատակը մեր հավատքի Հայր Լուսավորիչ Հայրապետի և այնուհետև փառավորենք մեր Տերը և Թագավորը՝ Հիսուս Քրիստոս:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, այս հինգ խորհուրդները, որոնք մեզ կխոսին Լուսավորիչ Հայրապետի հավատքին կյանքին մեջեն, ճառագայթումն են Ս. Էջմիածնի խորհուրդին, որը մարմին առավ, նոր պատգամ դարձավ և լուսավորեց Հայաստան աշխարհը: Այս առավոտ, երբ մենք եկած ենք մեր աղոթքը վերառաքելու առ Աստված, կկարծեմ, որ երեք կարևոր պատգամներ է, որ կուտա մեզի մեր հավատքի Հայրը՝ Լուսավորիչ.

Առաջին՝ մեր մեջ նորոգվում է մասնակցության ոգին հոգևոր եկեղեցաշինության կյանքին մեջ: Այս մասնակցության մեջ կտեսնենք, որ քրիստոնյայի կյանքեն ներս լայնորեն կբացվի իրեն տրվածի մասին ըմբռնելու գիտակցությունը: Տրվածը հոգևոր ժառանգությունն է, հոգևոր եկեղեցին, որը Քրիստոսով ծնունդ առավ և առաքյալներով բարեզարդվեցավ և մեր նախատակներու ու հայրապետներու արյունովը արմատ նետեց ժողովուրդներու կյանքին մեջ:

Երկրորդ պատգամը, որ մեր հավատքի Հայրը կկարդա այսօր, երբ եկած ենք մեր հոգևոր կյանքը աղոթքով ամրացնելու, այն է, որ յուրաքանչյուր հավատացյալ Քրիստոսի եկեղեցու կյանքի մեջ հանձնառություն մը պետք է առնի, հանձնառություն յուրաքանչյուր հավատացյալի՝ իրեն տրված հոգևոր ժառանգության վրա բան մը ավելցնելու իմաստով, որպեսզի մասնակցու-

թյունը կրավորական կերպով չըլլա միայն, աղոթքը չըլլա եսին ու անհատին համար, բայց ըլլա հավաքական աղոթքի արտահայտություն, և եկեղեցաշինության սրբազան գործին մեջ դառնա նաև հանձնառություն առնող աղոթքի կյանքը: Եվ, վերջապես, ամենեն կարևոր պատգամը, որ մեզի կկարդա Լուսավորիչ Հայրապետը, այն է, որ յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալ իր կյանքը վերածի նվիրումի, պատարագումի: Եթե քրիստոնյա հավատացյալը իբրև մտատիպար չունենա Քրիստոսի զոհաբերյալ կյանքի օրինակը, ապա չի կրնար իր կյանքը լեցնել Աստծո ներկայությամբ:

Փառք կուտանք Ամենակալին այս գեղեցիկ օրվան համար: Թող Տերը օրհնե մեր Սուրբ Եկեղեցին, թող Աստծո օրհնությունը տարածվի ձեր բոլորի ընտանեկան հարկերեն ներս, որպեսզի Լուսավորչի տեսիլքը և Էջմիածնի խորհուրդը ձեր հոգու մեջ դառնան հոգևոր նոր ուժականություն և նոր կյանքի շարժում, որպեսզի կարողանանք դիմագրավել բոլոր դժվարությունները և բարձր դասել հոգևոր արժեքները, որը և կապահովի մեր հոգիների հավիտենականությունն ու հավերժությունը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

# ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ «ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԲԽՄԱՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Առաջին անգամ այս աշխատանքը լույս է տեսել «**L'Osservatore Romano**»-ում 1995 թ. սեպտեմբերի 13-ին: Սակայն քննարկվող նյութի բովանդակությունն այնքան կարևոր, իսկ թեմատիկ ընդգրկման շրջանակն այնքան մեծ էր, որ մի քանի ամիս հետո Քրիստոնեական Միության Աջակցության Պապական խորհրդի (**Pontificum Concilum ad Christianorum Unitatem Forendam**) կողմից. այն հրատարակվեց քառալեզու մի գրքույկով[1]:

**Filioque**-ի (ինքը՝ **Filioque** եզրը բառացի նշանակում է «եւ յՈրդւոյ») նախնական կիրառության արտահայտությունները գտնում ենք ոչ թե Օգոստինոսի, ինչպես ընդունված է ասել, այլ որքան էլ դա տարօրինակ թվա՝ Տերտուղիանոսի մոտ[2]: Եթե սկզբնապես Սուրբ Երրորդության երեք Անձերի համագոյության հավաստման հարցը դարձավ հիմնական վիճարկելի խնդիրը, ապա հետագայում, արդեն Օգոստինոսից սկսած՝ կոնկրետ Որդու և Սուրբ Հոգու համագոյությունը հավաստելու նպատակով առաջ քաշված այս տեսությունը դառնալով բուռն քննարկումների առարկա, միևնույն ժամանակ դարձավ Հունական և Լատինական եկեղեցիների միջև գայթակղության քար: Հույներն առաջին անգամ լրջորեն ուշադրություն դարձրին այս բառի վրա, երբ Երուսաղեմում խռովություն առաջացավ արևելյան և արևմտյան վանականների միջև: Բանն այն էր, որ վերջիններս, կրկնօրինակելով Կառլոս Մեծին, որն իր արքայական կապելլային հրաման էր տվել Հանգանակը երգել **Filioque**-ով, սկսել էին նույն Հանգանակը երգել նաև Ձիթենյաց լեռան վրա: Խնդիրը Լևոն III Պապի կողմից քննության ենթարկվելով, այնուամենայնիվ չստացավ իր վերջնական լուծումը, հակառակ այն բանի, որ նա հրահանգեց երկու արծաթյա տախտակների վրա փորագրել հավատո Հանգանակը, իր սկզբնական տեսքով, այսինքն՝ առանց **Filioque**-ի, մեկը հունարենով և մյուսը լատիներենով, և ի

---

[1] Այն հրատարակվել է Վատիկանում 1996 թ. (MCMXCVI) ֆրանսերեն, հունարեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ համապատասխան վերտառություններով՝

- LES TRADITIONS GRECQUE ET LATINE CONCERNANT LA RPOCESSION DU SAINT- ESPRIT.
- ΤΟ ΠΡΟΙΕΝΑΙ ΤΟΥ ΑΓΙΟΥ ΠΝΕΥΜΑΤΟΣ ΕΙΣ ΤΗΝ ΕΜΗΝΙΚΗΝ ΚΑΙ ΤΕΝ ΛΑΤΙΝΙ ΚΗΝ ΠΑΡΑΔΟΣΙΝ.
- THE GREEK AND THE LATIN TRADITIONS REGARDING THE PROCESSION OF THE HOLY SPIRIT.
- ГРЕЧЕСКАЯ И ЛАТИНСКАЯ ТРАДИЦИИ ОБ ИСХОЖДЕНИИ СВЯТАГО ДУХА.

[2] Տե՛ս В. В. Болотов «К ВОПРОСУ О FILIOQUE», С. Петербург, 1914, стр. 116, (adv. Prax. n. 4).

ցույց մարդկանց փակցնել Սբ. Պետրոսի Տաճարին. դրանք սկսվում էին «Ես՝ Լևոնս, դրեցի սա ի սեր ուղղափառ հավատքի և վասն նրա պահպանության» բառերով:

Այդ պահից ի վեր Հունական և Լատինական Եկեղեցիները չդադարեցին միմյանց մեղադրելուց ու բանադրելու սպառնալիքներով վախեցնելուց: Սուրբ Հոգու բխման խնդիրը առավել կնճռոտվեց Փոտ և Միքայել Կեռուլարիոս Պատրիարքների օրոք, իսկ 1054 թ. հունիսի 17-ին, երբ պապական նվիրակները, Գումբերտի գլխավորությամբ, Սբ. Սոֆիայի Տաճարի ավագ խորանի վրա Հունական Եկեղեցու բանադրման կոնդակը դնելով, թոթափեցին իրենց ոտքերի փոշին «ի վկայութիւն նոցա» և դուրս եկան, այն դարձավ բաժանման ավետարանական հաստատումն ըստ Մարկոս Ավետարանչի այն խոսքի, թե «Եվ ուր որ ձեզ չեն ընդունի ու ձեզ չեն լսի, երբ այնտեղից ելնեք, ձեր ոտքերի փոշին թափ տվեք՝ իբրև նրանց դեմ վկայություն» (Զ, 11) :

Հույների պատասխանն իրեն շատ սպասեցնել չտվեց. հունիսի 20-ին նրանք պաշտոնապես բանադրեցին Լատինական Եկեղեցուն: Այս բաժանումը երկուստեք՝ թե Լատինական և թե Հունական Եկեղեցիների կողմից տարբեր որակումների տեղիք տվեց՝ սկսած հերետիկոսությունից (Haερεα), հերձվածից ու վերջացրած սխիզմայով (Σχισμα), և միայն Լևոն III Պապն է, որ իր **«Praeclara»** շրջաբերականում պաշտոնապես խոսում է տարակարծության (**dissensio, разномыслие**) մասին: Երկու Եկեղեցիների ընդունած վերջնական հայտարարագրում ևս աստվածաբանները խոսում են նմանաբնույթ կատեգորիայի՝ տարաձայնության (**difficulty** (դժվարություն), **разногласие**) մասին:

Ինչևէ, այս երկու Եկեղեցիները քանիցս վերամիավորման փորձեր են կատարել, հատկապես՝ Լիոնի II (1274) և Ֆլորենցիայի (1438-1445) ժողովներում: Սակայն, այդուհանդերձ, խնդիրն իր մեռյալ կետից մազաչափ իսկ առաջ չի շարժվել, այլ ավելի խորացել ու բարդացել է: Հակառակ ամեն ինչի, Ուղղափառ Եկեղեցին գտնում է, որ **Filioque**-ի վարդապետությունը ոչ միայն երկու Եկեղեցիների բաժանման գլխավոր պատճառն է[3], այլև նրանց միջև եղած հիմնական խոչընդոտն ու անանցանելի անդունդը[4]:

---

[3] Տես «МИСТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ», Киев, 1991, Вл. Лосский, «ОЧЕРК МИСТИЧЕСКОГО БОГОСЛОВИЯ ВОСТОЧНОЙ ЦЕРКВИ», стр. 101-102.

Նույն միտքն է արտահայտում նաև Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն իր «ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ» (անտիպ) գործում. «Ինչպէս Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութեանց փոխ-յարաբերութեան հարցը եղաւ պատճառը Արեւելեան քրիստոնէութեան պառակտումին, այդպէս ալ Ս. Հոգիի բղխման հարցը եղաւ *գլխաւորագոյն պատճառը* Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիներու խզումին ԺԱ դարուն» (էջ 87):

Սակայն տեղին է հիշել ճիզվիտ մի կրոնավորի՝ ժողովների մասին ասված այն խոսքը, թե «не спрашивайте объ этомъ у папъ, которые никогда не воображали, что нужно прибегать къ помощи *вселенскихъ соборовъ*, чтобы подавить ересь Арія и другихъ, спросите объ этомъ у императоровъ, которые хотели этихъ соборовъ и созывали ихъ, требовали на то согласія папъ и *бесполезно возбуждали весь этотъ шумъ въ церкви*»:

Սուրբ Հոգու բխման խնդիրը զգալի առաջընթաց ապրեց հատկապես 1965 թ. դեկտեմբերի 7-ին, երբ Հռոմում՝ Վատիկանի II ժողովի նիստերից մեկի ընթացքում և Ստամբուլում՝ կրոնական արարողության ժամանակ ընթերցվեցին Հռոմի Պողոս VI Պապի և Տիեզերական Պատրիարք Աթենագորասի համատեղ հայտարարությունը, որով երկու եկեղեցիները հանում էին դարեր առաջ իրար նկատմամբ ընդունած բանադրանքները: Սա իր հերթին հիմք դարձավ խնդրո առարկայի հետագա համատեղ քննարկումների համար:

Գալով բնագրում օգտագործված եզրաբանությանը, նախևառաջ անդրադառնանք «ելում»-ի փոխարեն գործածված «բխում» եզրին: Բանն այն է, որ «ելանել» (ἐκπόρευσις, processio, исхождение) եզրը, ինչպես Օրմանյան Պատրիարքն է գտնում, «ընդհանուր իմաստով կառնուի»[5], այսինքն՝ հավասարապես վերաբերում է և՛ Որդուն, և՛ Հոգուն (Հմմտ. Հովհ. ԺԶ 28 // Հովհ. ԺԵ 26): Այս պարագայում հայկական և լատինական ավանդույթները մոտ են իրար: «ելում, procession - ...ելումն Բանին ասի ծնունդ, իսկ ելումն Հոգւոյն՝ ոչ ասի ծնունդ, այլ բղխումն»[6]: Ահա այս հանգամանքն ի նկատի ունենալով է, որ

(Տես «БЕСЕДА, преосвященнаго Никанора, Архіепископа Херсонскаго и Одесскаго О ТОМЪ, ЕСТЬ ЛИ ЧТО ЕРЕТИЧЕСКОЕ ВЪ ЛАТИНСКОЙ ЦЕРКВИ ?»: Վեհափառ Հայրապետը ևս, իր արժեքավոր «THE COUNCIL OF CHALCEDON AND THE ARMENIAN CHURCH» գործում, ըստ ամենայնի քննության է ենթարկում քաղաքական կամ, այսպես կոչված, «արտաքին» գործոնի ազդեցությունը եկեղեցու բաժանման գործընթացի մեջ:

[4] Տես «THE CAMBRIDGE COMPANION TO CHRISTIAN DOCTRINE» ed. by Colin E. Guntor, article «THE HOLY SPIRIT», Geofrey Wainwright, page 292: Այս հարցն առանձին քննության նյութ դարձնողներն այն հետեւյալ կերպ են ներկայացնում. «The *dividing line* between Eastern and Western trinitarian theology (not simply dogma !) is not so much the filioque ... although that is often the *flashpoint*, as it is the weight given to the monarchy of the Father» (Նույն տեղում, article «THE TRIUNE GOD», Ralph Del Colle, page 131) :

[5] Տես Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ», Պէյրութ, 1960, Բ հատոր, § 1130, էջ 1643:

[6] Տես «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ ԿԱՄ ՅԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ» թարգմանեալ Աստուածատուր վրդ. Բարիկեանց Ջուղայեցի, հատոր III, Վիեննա, 1833 «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՑԱՆԱՑԱՆ ԵԶՐԻՑ», էջ 10 :

[7] Տես «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ», Սբ. էջմիածին, 1914, «ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ՝ ՅԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՔԱՂՑՐՈՒՆՈՅ ... ՊԱՏՈՒՄՆ ՃԱՌԻՑՆ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ», էջ 18 :

[8] Բանն այն է, որ մինչև Սբ. Գրիգոր Տաթևացին հայ հեղինակներն իրենց աստվածաբանական գործերում «բխում» եզրի կողքին համահավասար կերպով շարունակում էին գործածել «ելանել» եզրը, և միայն Գրիգոր Տաթևացին է, որ կոնցեպտուալ մուտեցում է որդեգրում տվյալ եզրի նկատմամբ: Օրինակ՝ «ԺԱՄԱԳԻՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ» , Վաղարշապատ, 1903, էջ 2. «Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայր Աստուած անեղ, անծին, և անսկիզբն, այլ և ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն Սրբոյ: ... Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած անեղ, անժամանակ, ո՛չ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ»: Գրիգոր

կյուրեղ Ալեքսանդրացու նման եկեղեցական հայրերը. Որդու՝ Հորից առա-
ջանալու մասին խոսելիս օգտագործել են ἐκπορεύεσθαι բայը:

Ինչ վերաբերում է հայկական աստվածաբանական ավանդությանը, ապա Լուսավորչի «Հաճախապատում» ճառերից սկսած Հորից Սուրբ Հոգու առաջացումը անվանվեց «բխում»: Կասկածից վեր է, որ «հայոց լեզվի վարդապետը» անմիջապես կռահել է «ելանել» եզրի հասկացական ընդարձակությունը, և միայն սրանով է բացատրվում, որ նա, սկզբնապես հունարեն կամ հունատառ հայերենով գրված Լուսավորիչի ճառերում, վերոհիշյալ հունարեն եզրը թարգմանել է «բխում» եզրով. «Հաւատամք ... ի հաստիչն Աստուած, ի մինն, ի բարերարն բնութեամբ եւ կամաւք, ի յանպատճառն, որ ամենեցուն պատճառն է՝ աներեւութից եւ աներեւելեացս, Որդւոյ եւ Հոգւոյ՝ ծննդեամբ եւ բղխմամբ»[7]: Սակայն «ելանել» եզրը այդպիսով դուրս չմղվեց աստվածաբանական այդ հատուկ համատեքստից, այլ մինչև վերջ շարունակեց գործածվել, հակառակ Գրիգոր Տաթևացու բոլոր հիմնարարական նախաձեռնությունների[8]:

Միչդեռ Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքը միևնույն ավանդության հիման վրա ընդունում է «ելանել» եզրի առանձնահատուկ ու կոնկրետ այն իմաստը, որն առնչական հարաբերությամբ Սուրբ Հոգուն կապում է Հոր հետ:

Թարգմանության ժամանակ մենք հատուկ տարբերակում ենք մտցրել **communicatio = общение** և **relationship = отношение** եզրերի միջև, որոնք մենք համապատասխանաբար թարգմանել ենք հարաբերակցություն և առնչություն հասկացություններով[9]: Եւ վերջապես. ընագրում թարգմանաբար օգտագործված «խորհուրդ» եզրը համապատասխանում է լատիներեն **«Mysterium»** և ոչ թե **«Sacramentum»** եզրին[10]:

---

Տաթևացի, «ԱՄԱՌԱՆ ՀԱՏՈՐ», վերատպված Երուսաղեմում 1988, էջ 55. «Երրորդութիւն գերակայ գերագոյնդ Աստուած և գերագոյնդ բարութիւն. քրիստոնէից վերակացու. երեքլուսեան Աստուածութիւն: Լոյս, և Լոյս, և Լոյս. անծին և ծնունդ և բղխումն անճառ. Հայր և Որդի և Հոգի Սուրբ»: Գրիգոր Տաթևացի, «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ». Երուսաղեմ, 1993, էջ 108. «Հարց. Վասն է՞ր Հոգի: Պատասխան. Զի յաւիտենական բղխէ ի Հօրէ առ Որդի, նովաւ առ մեզ գա, որպէս ջերմութիւն արեգական»: «ելանել» եզրը նրա մոտ օգտագործվում է զուտ ավետարանական վկայակոչությունների պարագաներին:

[9] Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս «Սիոն» ամսագիր, 1972, թիւ 3-4, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, «ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ», ինչպես նաև Երվանդ վրդ. Հիւրմիւզ. «ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ», էջ 120-121 , Վենետիկ, 1862, հատոր Ա, էջ 416-418:

[10] Տե՛ս «ՎՃԻՌՆԵՐՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԵԱՆ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ», Վենետիկ, 1967, «ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ», Հ. Լեւոն Զէքիեան, էջ 12:

# ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԲԽՄԱՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 29-ին Սբ. Պետրոսի Տաճարում, Բարդուղիմեոս I Տիեզերական Պատրիարքի ներկայությամբ, Հովհաննես-Պողոս II Սրբազան Քահայանապետն իր քարոզում ցանկություն հայտնեց, որ պարզաբանվի Հավատո Հանգանակի ծիսական լատիներեն թարգմանության ետևում կանգնած Filioque-ի ավանդական վարդապետությունը, որպեսզի կարելի լինի ցույց տալ նրա կատարյալ համապատասխանությունը այն բանին, որը 381 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած Տիեզերաժողովը դավանում էր իր Հանգանակում՝ Հորը իբրև ամբողջ Երրորդության աղբյուր ու Որդու և Սուրբ Հոգու միակ սկիզբ:

Պարզաբանությունը, որը ցանկացել էր տեսնել Սրբազան Քահանայապետը, ստորև հրատարակված է Քրիստոնեական Միության Աջակցության Պապական խորհրդի (Pontifical Council for Promoting Christian Unity ) կողմից: Նրա նպատակը՝ միացյալ միջազգային Կոմիտեի (Joint International Commission) կողմից Հռոմեա-Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիների միջև սկսած տրամախոսությանը նպաստելն էր:

Իր առաջին զեկույցում՝ «եկեղեցու ու Հաղորդության խորհուրդը Սուրբ Երրորդության խորհրդի լույսի ներքո», Հռոմեա-Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիների միջև աստվածաբանական տրամախոսությամբ զբաղվող միացյալ միջազգային Կոմիտեն հաստատելով 1982 թ. հուլիսի 6-ին Մյունխենում ձեռք բերված համաձայնությունը, հիշեցրեց Սուրբ Հոգու հավիտենական բխման խնդրի առնչությամբ երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող դարավոր տարաձայնությունների մասին: Տակավին ի վիճակի չլինելով բուն խնդրո առարկան քննարկել տրամախոսության առաջին փուլում՝ Կոմիտեն հայտարարեց. «Առժամանակ մտադիր չլինելով լուծել Արևելքի ու Արևմուտքի միջև Որդու և Հոգու՝ միմյանց նկատմամբ ունեցած առնչության խնդրի կապակցությամբ առաջացած տարաձայնությունները, մենք արդեն հիմա կարող ենք ասել, որ Հորից՝ (Հովհ. ԺԵ 26) իբրև Երրորդության միակ աղբյուրից բխող Հոգին դարձավ մեր որդեգրության Հոգին (Հռոմ. Ը 15), քանզի Նա նաև Որդու Հոգին է (Գաղ. Դ 6), որը հաղորդակցվում է մեզ հետ (նախևառաջ Հաղորդությամբ) այն Որդու միջոցով, Որի վրա Նա հանգչում է ժամանակի և հավիտենականության մեջ (Հովհ. Ա 32)» (Քրիստոնեական միության աջակցության Քարտուղարության լրատվական ծառայություն /Servise d'Information/,№ 49, էջ 116 , I, 6):

Կաթոլիկ եկեղեցին ընդունում է 381 թ. Կ. Պոլսի Տիեզերական ժողովում հունարեն դավանված Հավատո Հանգանակի ընդհանրական, տիեզերական, կանոնական ու անվիճարկելի հեղինակությունը՝ իբրև եկեղեցու և համայն քրիստոնյաների միասնական հավատքի արտահայտություն: Քրիստոնեական և ոչ մի դավանություն իրեն հատուկ ծիսական ավանդությամբ չի կարող

մերժել հավատքի այս արտահայտությունը, որն ուսուցանել և դավանել է անբաժան եկեղեցին:

Այդ հավատո Հանգանակը, հիմնվելով Հովհ. ԺԵ 26-ի վրա, դավանում է Հոգուն՝ «τὸ ἐκ τοῦ Πατρὸς ἐκπορευομενον » (« որ ելնում է Հորից»): Միայն Հայրն է Երրորդության մնացյալ երկու Անձերի անսկիզբ սկիզբը (ἀρχὴ ἄναρχος), Որդու և Սուրբ Հոգու միակ աղբյուրը (πηγή): Այդ իսկ պատճառով Սուրբ Հոգին ի սկզբանե իսկությամբ և անմիջականորեն[1] բխում է միայն Հորից (ἐκ μόνου τοῦ Πατρός):

Եկեղեցու Հույն Հայրերը և ամբողջ քրիստոնյա Արևելքն այստեղ խոսում են «Հոր միապետության» մասին. արևմտյան ավանդությունը նույնպես, Սբ. Օգոստինոսի հետևողությամբ, դավանում է, որ Սուրբ Հոգին pricipaliter, այսինքն՝ ի սկզբանե բխում է Հորից /De Trinitate, XV, 25, 47, P.L. 42, 1094-1095/: Ուստի, այս իմաստով երկու ավանդություններն էլ ընդունում են, որ «Հոր միապետությունը» համարվում է Որդու և Սուրբ Հոգու միակ սկիզբը (principium) կամ Երրորդութենական (**Троичный**, Trinitarian) Պատճառը (Αἰτία) :

Միայն Հորից՝ իբրև Երրորդության միակ սկզբից, Սուրբ Հոգու այսպիսի առաջացումը հունական ավանդության մեջ կապադովկյան հայրերի հետևողությամբ անվանվեց ἐκπόρευσις («բխողություն»): Իրապես, Սբ. Գրիգոր Նազիանզացին՝ Աստվածաբանը, նկարագրում է Սուրբ Հոգու բխումը Հորից հենց ἐκπόρευσις եզրով, որը՝ նա տարբերում է Որդուն և Սուրբ Հոգուն ընդհանուր (τὸ προϊέναι) («առաջացում») բառից. «Հոգին ճշմարտապես Հոգի է՝ Հորից առաջացող (προϊόν), ոչ թե որդիաբար, քանի որ այստեղ չկա ծնունդ, այլ՝ ἐκπόρευσις-ով» (Ճառ 39, 12, Sources Chrétiennes 358, p. 175): Նույնիսկ եթե Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացուն երբեմն առիթ է ներկայանում օգտագործելու ἐκπορεύεσθαι բայը Որդու՝ Հորից ելնելու մասին խոսելիս, այնուամենայնիվ, նա երբեք այն չի օգտագործում Հոգու՝ Որդու հանդեպ ունեցած առնչության մասին խոսելիս (Հմմտ. Հովհանու Ավետարանի մեկնության հետ X, 2, P.G. 74, 910 D; Ep. 55, P.G. 77, 316 D): Սբ. Կյուրեղի մոտ ևս ἐκπόρευσις եզրը, ի տարբերություն «առաջանալ» (προϊέναι) եզրի, միայն կարող է նշանակել Հոգուն՝ Երրորդության անսկիզբ սկզբի՝ Հոր հետ կապող բխողության առնչությունը:

Այդ իսկ պատճառով ուղղափառ Արևելքը միշտ մերժել է τὸ ἐκ Πατρὸς καὶ τοῦ Υἱοῦ ἐκπορευόμενον բանաձևը. Կաթոլիկ եկեղեցին նույնպես դեմ էր καὶ τοῦ Υἱοῦ բառերի ավելադրությանը Նիկիո-Պոլսյան Հավատո Հանգանակի հունարեն տեքստի ἐκ τοῦ Πατρὸς ἐκπορευόμενον բանաձևին՝ անգամ լատինների պատարագում դրա գործածության պարագային:

Ընդ սմին, ուղղափառ Արևելքը բնավ չի մերժում Հորից առաջանալուց՝ Որդու և Սուրբ Հոգու միջև եղած հավիտենական առնչությունը: Մակեդոնի հարցին, թե «ի՞նչ է պակասում Սուրբ Հոգուն Որդի լինելու համար, քանի որ

[1] Այս բառերն օգտագործում է Սբ. Թովմա Աքվինացին իր «Համառոտություն Աստվածաբանության» երկում Ia, q. 36,a. 3, 1um et 2um.

եթե Նա ոչնչի կարիք չզգար, ապա Որդի կլիներ», Սբ. Գրիգոր Աստվածաբանը՝ մեր երկու ավանդությունների մեծագույն վկան, առարկում է հետևյալ կերպ. «Մենք ասում ենք, որ Նա ոչնչի պակասություն չի զգում, քանի որ Աստված ոչնչի կարիք չունի, սակայն դրսևորման, եթե կարելի է այդպես ասել, կամ Նրանց միջև եղած առնչության տարբերությունը (τῆς πρὸς ἄλληλα σχέσεως διάφορον) հանգեցնում է Նրանց անունների զանազանմանը (Ճառ 31, 9, **Sources Chre´tiennes** 250, pp. 290-292) :

Այդ առնչությունը ուղղափառ Արևելքը հաջող կերպով արտահայտում է διὰ τοῦ Υἱοῦ ἐκπορευόμενον («[Հորից] Որդվով բխող») բանաձևով: Դեռևս Սբ. Բարսեղն այսպես էր խոսում Սուրբ Հոգու մասին. «Որդվով (διὰ τοῦ Υἱου), Որը միակ է, Նա կապված է Հոր հետ, Որը միակ է. և Իրենով ամբողջացնում է ամենայն փառաբանության արժանի Երրորդությունը» (Ճառ Սուրբ Հոգու մասին, XVIII, 45,**Sources Chre´tiennes** 17 bis, p. 408): Սբ. Մաքսիմիանոս Խոստովանողն ասում է. «Սուրբ Հոգին բնությամբ (φύσει)՝ իր էությանը (κατ’ οὐσίαν) համապատասխան, էութենաբար (οὐσιδῶς) բխում է (ἐκπορευόμενον) ծնված Որդու միջոցով (δι᾽ Υἱοῦ γεννηθέντος)» (Հարցեր Թալասսիոսին, LXIII, P.G. 90, 672 C): Նույնն ասում է Սբ. Հովհան Դամասկացին. «,ὁ Πατὴρ. ἀεὶ ἦν, ἔχων ἐξ ἑαυτοῦ τὸν αὐτοῦ λόγον, καὶ δὶα τοῦ λόγου αὐτοῦ ἐξ ἑαυτοῦ τὸ Πνεῦμα αὐτοῦ εκπορευόμενον», որը թարգմանվում է հետևյալ կերպ. « /Հայրը/ միշտ եղել է՝ Իրենում ունենալով Իր Բանը և Իր Բանի միջոցով Սուրբ Հոգուն՝ Նրանցից բխողին» (Երկխոսություն ընդդեմ մանիքեականների 5, P.G. 94, 1512 B, ed. B. Kotter, Berlin 1981, p. 354; հմմտ. նաև P.G.94, 848-849 A):

Երրորդության խորհրդի այս ասպեկտը դավանվեց նաև 787 թ. Նիկիայում տեղի ունեցած VII Տիեզերական ժողովում[*], Կ. Պոլսի Պատրիարք Սբ. Տարասիոսի կողմից, որն այսպես էր շարադրում Հավատո Հանգանակը. τὸ Πνεῦμα τὸ ἅγιον κύριον καὶ ζωοποιόν, τὸ ἐκ τοῦ Πατρὸς δὶ Υἱοῦ ἐκπορευόμενον (Mansi XII, 1122 D) :

Դավանական արտահայտությունների այս ամբողջությունը վկայում է Երրորդության հանդեպ սկզբնական այն հավատքի մասին, որը և՛ Արևելքը, և՛ Արևմուտքը միաբան դավանում էին Եկեղեցու Հայրերի դարաշրջանում: Սա այն հիմքն է, որը կոչված է նպաստել կաթոլիկների և ուղղափառների միջև տարվող աստվածաբանական տրամախոսության շարունակությանը:

Filioque-ի ուսմունքը Կաթոլիկ Եկեղեցու կողմից պետք է ընկալվի և շարադրվի այնպես, որ տպավորություն չստեղծվի, թե այն կարող է հակասել Հոր միապետությանը կամ էլ այն հանգամանքին, որ Նա է Հոգու բխողության (ἐκπόρευσις) միակ սկիզբը կամ պատճառը (ἀρχή, αἰτία): Իրականում Filioque-ն ամփոփված է այնպիսի աստվածաբանական և տեքստաբանական կոնտեքստերում, որոնցում չի հաստատվում Որդու և Հոգու միակ աղբյուրի՝ Հոր բացարձակ միապետությունը: Ի հակակշիռ արիոսականության, որն այն ժամանակ տակավին հզոր էր Արևմուտքում, այս ուսմունքը պետք է ընդգծեր,

---

[*] Հարկ ենք համարում հիշեցնել, որ Հայոց Եկեղեցին Տիեզերական է ճանաչում միայն Նիկիայի, Կ. Պոլսի և Եփեսոսի Սուրբ ժողովները (խմբ.):

որ Սուրբ Հոգին ունի Որդու նույն Աստվածային բնությունը՝ կասկածի չենթարկելով Հոր միապետությունը:

Ստորև ներկայացնում ենք Filioque-ի վավերական դավանաբանական իմաստը, որը Երրորդության հավատքի հիման վրա դավանվել է Կ. Պոլսի II Տիեզերաժողովի Հանգանակում: Այս հեղինակավոր մեկնաբանությունը մենք տալիս ենք քաջ գիտակցելով, որ մարդկային լեզուն ի վիճակի չէ համարժեքորեն արտահայտելու Սուրբ Երրորդության՝ Միակ Աստծո անճառելի խորհուրդը, որն «ի վէր է քան զամենայն միտս և զբանս»:

* * *

Կաթոլիկ եկեղեցին Filioque-ն մեկնում է Սուրբ Հոգու հավիտենական բխման, հավատքի խոստովանության ընդհանրական, տիեզերական, համապարտադիր և անառարկելի հեղինակության լույսի ներքո, ինչպես այն իր Հանգանակում սահմանում է 381 թ. Կ. Պոլսի Տիեզերական ժողովը: Այդ Հանգանակը Հռոմին հայտնի դարձավ և ընդունվեց միայն 451 թ. Քաղկեդոնի Տիեզերական ժողովի կապակցությամբ: Մինչ այդ, հիմնվելով նախորդ՝ լատին աստվածաբանական ավանդության վրա, Արևմտյան եկեղեցու այնպիսի հայրեր, ինչպիսիք էին Սբ. Հլարիոսը, Սբ. Ամբրոսիոսը, Սբ. Օգոստինոսը և Սբ. Լևոն Մեծը, դավանում էին, որ Սուրբ Հոգին ի հավիտենից առաջանում է (procedit) Հորից և Որդուց[2]:

2 Տերտուղիանոսն էր, որ, հիմնվելով Հորից Որդուն և Որդվով Սուրբ Հոգուն անցնող էութենական հարաբերակցության վրա, լատինական ավանդության մեջ հիմք դրեց Երրորդութենական աստվածաբանությանը. « Քրիստոս Հոգու մասին ասում է. «Իմից պիտի առնի» (Հովհ. ԺԶ 14), ինչպես Ինքն է վերցնում Հորից: Այսպես, Հորից Որդուն, Որդուց էլ Պառակլետին անցնող կապը հանգեցնում է նրան, որ երեքը հաջորդաբար առաջանում են մեկը մյուսից: Նրանք կազմում են մեկ (unum), բայց ո՛չ մեկ Անձ (unus)՝ սուբստանցիայի միության, և ոչ թե թվային միակության պատճառով» (Adv. Praxean. XXV, 1-2): Երրորդության ստորաստիճանակարգի համաձայն, աստվածային էության այս հաղորդակցումը նա նկարագրում է «առաջանալ» (procedere) բայով (Ibid., VII, 6): Նմանօրինակ աստվածաբանական կոնցեպցիա է շարադրվում նաև Սբ. Հիլարիոս Պիկտացու կողմից, որը դիմում է Հորը. «Որպեսզի ես կարողանամ Միածին Որդվովդ ծեսք բերել Քեզնից առաջացող Հոգին» (De Trinitate, XII, P.L. 10, 471): Նա նշում է. «եթե մեկը կարծում է, թե ինչ որ տարբերություն կա Որդուց վերցնելու (Հովհ. ԺԶ 15) և Հորից առաջանալու (procedere) (Հովհ. ԺԵ 26) միջև, ապա Որդուց վերցնելը և Հորից վերցնելը, անկասկած, միևնույն բանն է» (Ibid. VIII, 20, P.L. 10. 251 A): Այս առումով, այսինքն՝ առաջացման միջոցով, աստվածային հաղորդակցման մասին խոսելիս, Սբ. Ամբրոսիոս Մեդիոլանացին առաջին անգամ բանաձևում է Filioque-ն. «Երբ Սուրբ Հոգին առաջանում է (procedit) Հորից և Որդուց, նա չի զատվում Հորից, չի զատվում նաև Որդուց» (De Spiritu Sancto I, 11, 120, P.L. 16. 733 A=762 D): Սուրբ Օգոստինոսը զարգացնելով Filioque-ի աստվածաբանությունը, Երրորդության համագո հարաբերակցության մեջ՝ Հոր միապետությունը պաշտպանելու համար, այնուամենայնիվ, նախազգուշական քայլերի է դիմում. «Սուրբ Հոգին ի սկզբանե (principaliter) բխում է Հորից և ժամանակից դուրս Ինքն Իրեն ընծայաբերելով Որդուն՝

Ինչպես լատիներեն Աստվածաշնչում (Վուլգաթա և նախորդ լատիներեն թարգմանությունները) Հովհ. ԺԵ 26-ի παρὰ τοῦ Πατρὸς ἐκπορεύεται թարգմանվել է «qui a Patre procedit», այնպես էլ Նիկիո-Պոլսյան Հավատո Հանգանակի լատիներեն թարգմանության մեջ ἐκ τοῦ Πατρὸς ἐκπορευόμενον թարգմանվել է՝ «ex Patre procedentem» (Mansi VII, 112 B): Այսպիսով, Սուրբ Հոգու բխման խնդրում արևելյան աստվածաբանության «բխման» ἐκπόρευσις և լատինական աստվածաբանության «առաջացման» processio միջև ստեղծվեց թվացյալ համասարազորություն:

Հունարեն ἐκπόρευσις բառը նշանակում է բխում միայն Հորից՝ իբրև Երրորդության անսկիզբ սկզբից: Մինչդեռ լատիներեն procession-ն ավելի լայն եզր է, որը նշանակում է Աստվածային համագոյության հաղորդակցում Հորից Որդուն և Հորից ու Որդուց և Որդվով Սուրբ Հոգուն[3]: Լատինները դավանելով Սուրբ Հոգուն «ex Patre procedentem», ակամայից նրա տակ ենթադրում էին Filioque-ի կոնցեպցիան, որը հետագայում պարզորոշ կերպով մշակվեց Հավատո Հանգանակի նրանց ծիսական թարգմանության մեջ:

Արևմուտքում, V դարից սկսած, Երրորդության համագոյությունը հաստատելու համար, Filioque-ի վարդապետությունը դավանվել է Quicumque (կամ «Աթանասյան», DS 75) Հանգանակում, ապա 589-693 թթ. միջև ընկած Թոլեդոյի և վեստգոթյան Իսպանիայի ժողովներում (DS 470, 485,490, 527,

---

Հոր և Որդու հարաբերակցությունից (communiter)» (De Trinitate XV, 25, 47, P.L. 42, 1095) ; Սբ. Լևոն (Sermo LXXC, 3, P.L. 54, 402; Sermo LXXVI, 2, ibid. 404) :

3 Առաջինը Տերտուղիանոսն օգտագործեց procedere («առաջանալ») բայը և՛ Բանի, և՛ Հոգու վերաբերման իմաստով, քանի որ Նրանք Հորից են ստանում աստվածությունը. «Բանը ինչ-որ դատարկ և ունայն բանից չի առաջացել: Նա՝ նույն [աստվածային] սուբստանցիայից առաջացածն (processit) ու այսքան [արարչական] սուբստանցիաներ ստեղծողը՝ զուրկ չէ սուբստանցիայից » (Adv. Praxean , VIII, 6) : Սբ. Ամբրոսիոսին հետևելով՝ Սբ. Օգոստինոսն ընդունում է առաջացման այս ավելի լայն կոնցեպցիան. «Իրականում, ամեն առաջացող չէ, որ ծնվում է, նույնիսկ եթե ամեն ծնվող առաջանում է» (Contra Maximinum, II, 14, P.L. 42, 770): Բավականին ուշ Սբ. Թովմա Աքվինացին նշում է, որ «աստվածային բնությունը հաղորդվում է յուրաքանչյուր բխողությանը, որն ուղղված չէ ad extra (Summa Theologica, I a, q. 27, a. 3, 2 um): Նրա, ինչպես նաև Որդու և Հոգու կապակցությամբ առաջացման մասին խոսող ամբողջ լատինական աստվածաբանության համար «Ծնունդը առաջացում է, որն Աստվածային Անձին դարձնում է Աստվածային բնության տիրապետող» (Ibid, I a, q. 43, a. 2.c.), քանզի «Որդին Աստված լինելու համար, հավիտենաբար առաջանում է» (Ibid.): Նմանապես, նա հաստատում է, որ « Սուրբ Հոգին Իր առաջացման միջոցով ծեռք է բերում Հոր, հետևաբար հավասար կերպով նաև Որդու բնությունը» (Ibid, I a, q. 43, a. 2, c) : «Առաջացմանը վերաբերող բոլոր բառերից ամենից ընդհանուրը processio-ն է: Մենք գործածում ենք այն ցանկացած առաջացման մասին խոսելիս. օրինակ՝ ասվում է, որ ուղիղ գիծը ելնում է (исходит) (procedit) կետից, ճառագայթը բխում է (procedit) արեգակից, իսկ գետը՝ իր ակունքից, նույնպես և մնացյալ պարագաներում: Այսպիսով, եթե թույլատրվում է առաջացում նշանակող այս կամ այն բառի գործածությունը, ապա կարելի է եզրակացնել, որ Սուրբ Հոգին առաջանում է (procedit) Որդուց» (Ibid., I a, q. 36, a. 2, c):

568)։ Չնայած որ այդ ժողովները, հավանաբար, չներառեցին Filioque-ն Նիկիո-Պոլսյան Հավատո Հանգանակի մեջ, այդուհանդերձ այս ուսմունքը հստակորն նկատվում է VIII դարի վերջից, ինչպես այդ մասին վկայում են 796 թ. Ակվիլա-Ֆոիուլիում (Mansi XIII, 836 D և հաջ.) և 809 թ. Աախենում (Mansi XIV, 17) գումարված ժողովները։ IX դարում, ի հակակշիռ Կարլոս Մեծի՝ Արևելքի հետ միության պահպանմամբ մտահոգված Լևոն III-ը դիմադրություն ցույց տվեց Հանգանակի մեկնաբանության այսպիսի զարգացմանը, որը միաժամանակ պահպանելով Filioque-ում ամփոփված ճշմարտությունը, արդեն ինքնաբե-րաբար տարածվել էր Արևմուտքում։ Օփսական լատիներեն Հանգանակի թարգմանության մեջ Հռոմն այն թույլատրեց միայն 1014 թ.։

Հայրաբանական դարաշրջանում, սկսած Սբ. Աթանասից, նման աստ-վածաբանություն էր զարգանում նաև Ալեքսանդրիայում։ Ինչպես լատիներեն ավանդության մեջ, այն օգտվում էր առաջացման (προϊέναι) ավելի ընդհա-նուր հասկացությամբ, որը նշանակում էր՝ Հորից և Որդուց՝ Նրանց համագոյա-կան հարաբերակցությունից Աստվածության հաղորդակցում Սուրբ Հոգուն. «Հոգին առաջանում է (πραεῖσι) Հորից և Որդուց, պարզ է, որ Նա Աստվածային էությունից է՝ առաջանալով (προϊὸν) էութենաբար (ouvsiodw/j) Նրանում և Նրանից» (Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացի, Thesaurus, P.G. 75, 585 A)[4]։

VII դարում բյուզանդացիները ընդվզեցին՝ Սուրբ Հոգու առաջացմանը վերաբերյալ խոսքերում, Filioque-ն պարունակող պապական հավատքի խոստովանությունից, որը նրանք սխալմամբ թարգմանում էին ἐκπόρευσις բառով։ Այնժամ Սբ. Մաքսիմիանոս Խոստովանողը Հոգու հավիտենական բխման վերաբերյալ Հռոմից՝ միանգամից երկու կապադովկյան և լատինա-ալեքսանդրյան մոտեցումները ներկայացնող մի նամակ գրեց. Հայրը Որդու և Հոգու միակ անսկիզբ սկիզբն է (հունարեն «պատճառ», αἰτία)։ Հայրն ու Որդին այդ նույն Հոգու առաջացման (τὸ προϊέναι) համագո աղբյուրն են։ «Բխման խնդրի կապակցությամբ նրանք (հռոմեացիները) դիմեցին լատին հայրերի վկայություններին և բացի այդ, բնականաբար, Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացու՝ Հովհաննու Ավետարանի մեկնությանը։ Հիմնվելով դրանց վրա, նրանք ցույց տվեցին, որ Որդուն Հոգու Պատճառ (Αἰτία) չեն համարում, քանզի գիտեն, որ Հայրն է Որդու և Հոգու միակ պատճառը՝ Մեկինը ծննդյամբ, Մյուսինը՝ բխմամբ (ἐκπόρευσις), այլ միայն՝ որ Հոգին Որդվով է առաջանում (προϊέναι), այդպիսով էության միակությունն ու անփոփոխելիությունը ցույց տալու համար» (Թուղթ առ Մարինիոս Կիպրացի, P.G. 91, 136 A-B)։ Ըստ Հռոմի միտքն

---

[4] Այստեղ Կյուրեղը վկայում է Երրորդության վարդապետության մասին, որն ընդհանուր դարձավ ամբողջ Ալեքսանդրյան դպրոցի համար Սբ. Աթանասից հետո, որը գրում է. «Ինչպես Որդին է ասում, թե այն ամենը, ինչ ունի Հայրն, Իմն է (Հովհ. ԺԶ 15), այնպես էլ մենք համարում ենք, որ Որդվով այդ ամենը կա նաև Հոգու մոտ» (Թուղթ առ Սրապիոն, III, 1, 33, P.G. 26, 625 B)։ Սբ. Եպիփան Սալամինացին (Ancoratus, VIII, P.G. 43, 29, C) և Դիդիմոս Կույրը (Ճառ Սուրբ Հոգու մասին, CLIII, P.G. 34, 1064 A) նույն ἐκ նախդրի օգնությամբ են նկարագրում Հոր և Որդու՝ առ Սուրբ Հոգի ունեցած աստվածային համագոյության հաղորդակցումը։

արտահայտող Սբ. Մաքսիմիանոսի. Filioque-ն չի շոշափում Հորից՝ իբրև Երրորդության աղբյուրից, Հոգու բխումը (ἐκπόρευσις), այլ արտահայտում է Հոր և Որդու համագոյական հարաբերակցությունից Նրա առաջացումը (processio, προϊέναι)՝ բացառելով Հոր միապետության հնարավոր որևէ սուբորդինացիոն մեկնություն:

Լատինական և ալեքսանդրյան աստվածաբանության մեջ Սուրբ Հոգու՝ Հորից և Որդուց՝ Նրանց էութենական հարաբերակցությունից առաջացման (προεῖσι) փաստը չի նշանակում, թե Սուրբ Հոգու մեջ փոխանցվում է Աստվածային էությունը կամ սուբստանցիան, այլ որ այն հաղորդվում է Նրան Հորից և Որդուց, Որոնց համար այն ընդհանուր է: Այս դրույթն իբրև դոգմա դավանվել է 1215 թ. IV Լաթերանի ժողովում. «Սուբստանցիան չի ծնում, չի ծնվում, չի բխում. Հայրը ծնում է, Որդին ծնվում, իսկ Սուրբ Հոգին բխում է, քանի որ այստեղ Անձերի միջև տարբերություն, իսկ բնության մեջ միություն կա: Չնայած Հայրը մի բան է (alius), Որդին՝ ուրիշ, իսկ Սուրբ Հոգին՝ մեկ այլ բան, Նրանք միմյանց նկատմամբ ինչ որ այլ բան (aliud) չեն ներկայացնում: Հայրը կատարելապես հավասար կերպով նույնն է, ինչ Որդին և Սուրբ Հոգին. այսպես ուղղափառ և կաթոլիկե հավատքի համաձայն, մենք հավատում ենք, որ Նրանք համագո են: Որովհետև Հայրը հավիտենաբար ծնելով Որդուն, հաղորդում է Նրան Իր էությունը (...) Պարզ է, որ ծնվելիս Որդին ընդունում է Հոր էությունը, սակայն այն ոչնչով չի պակասում. և՛ Հոր, և՛ Որդու մոտ միևնույն էությունն է: Այսպիսով, Հայրը, Որդին և Սուրբ Հոգին՝ Նրանցից բխողը, Իրենցից միևնույն բանն են ներկայացնում» (DS 804-805):

1274 թ. Լիոնի II ժողովը դավանում էր. «Սուրբ Հոգին ի հավիտենից բխում է Հորից և Որդուց, ոչ թե երկու, այլ՝ մեկ սկզբից (tamquam ex uno principio)» (DS 850): Լիոնյանի ժողովին նախորդած Լաթերանի ժողովի լույսի ներքո, պարզ է, որ Աստվածային էությունը չի կարող լինել Սուրբ Հոգու առաջացման «միակ սկիզբը»: Այս բանաձևը, Կաթոլիկ եկեղեցու Կատեխեզիսը, 248 էջի վրա, մեկնում է հետևյալ կերպ. «Աստվածային Անձերի հավիտենական կարգը՝ իրենց էութենական հարաբերակցությունից, ենթադրում է, որ Հայրը՝ իբրև «անսկիզբ սկիզբ», Հոգու սկզբնաղբյուրն է (DS 1331), ինչպես նաև, որ Նա՝ Միածին Որդու Հայրը լինելով, Նրա հետ միասին «միակ սկիզբ» է, որից բխում է Սուրբ Հոգին» (Լիոնի II ժողով, DS 850 ):

Կաթոլիկ եկեղեցու համար «արևելյան ավանդությունը նախևառաջ ընդգծում է Հոր՝ Հոգու նկատմամբ սկզբնաղբյուր լինելը: Դավանելով «Հորից բխող» (ἐκ τοῦ Πατρός ἐκπορευόμενον (հմմտ. Հովհ. ԺԵ 26) Հոգին, այն հաստատում է, որ Նա Որդվով է բխում Հորից: Հոգու՝ Հորից և Որդուց առաջացում ասելով (Filioque)՝ արևմտյան ավանդությունը շեշտը դնում է Հոր և Որդու էութենական հարաբերակցության վրա: (...) Այս վավերական հավելվածը եթե միայն չսրի նրանում ներդրված տարբերությունները, չի կարող ազդել միևնույն խոստովանվող խորհրդի իրական հավատքի նույնականության վրա» (Կաթոլիկ եկեղեցու Կատեխեզիս, էջ 248): Գիտակցելով սա, Կաթոլիկ եկեղեցին հրաժարվեց καὶ τοῦ Υἱοῦ բառերը ավելացնել Նիկիո-Պոլսյան հավատո Հանգանակի ἐκ τοῦ Πατρός ἐκπορευόμενον բանաձևին, նույնիսկ լատինա-

կան ծիսակարգ ունեցող այն Եկեղեցիներում, որտեղ կիրառվում է հունարեն լեզուն: Իրականում, կաթոլիկ եկեղեցում միշտ էլ կանոնական է եղել այդ ընագրատեքստի ծիսական գործածությունը:

Լատինական ավանդության Filioque-ն, եթե այն զետեղենք պատշաճ համատեքստում, Երրորդության աստիճանակարգության մեջ չպետք է հանգեցնի Սուրբ Հոգու ենթակայությանը: Թեև կաթոլիկ վարդապետությունը հաստատում է Հորից և Որդուց՝ իրենց համագո աստվածության հաղորդակցումից Սուրբ Հոգու բխումը, այդուհանդերձ, այն ընդունում է Սուրբ Հոգու՝ իբրև Երրորդության Անձի, Հոր հետ կապող նախասկզբնական առնչության ճշմարտացիությունը, այն առնչությունը, որը հույն Հայրերը կոչում էին ἐκπόρευσις[5]:

Նմանապես, նույնիսկ եթե Երրորդության աստիճանակարգում Սուրբ Հոգին՝ Միածին Որդու[6] Հորից առաջանալու պատճառով հետևում է Հոր և Որդու միջև եղած առնչությանը, այ՛ս առնչությունն իր երրորդութենական ամբողջությունն է գտնում Սուրբ Հոգու մեջ: Ինչպես Հայրն է բնութագրվում իբրև Իր ծնած Որդու Հայր, այնպես էլ Հոգին առաջանալով Հորից երրորդութենաբար բնութագրում է Նրան՝ Իր Որդու և Որդուն՝ Հոր նկատմամբ ունեցած Իրենց առնչություններում. Երրորդության խորհրդի ամբողջության մեջ՝ Նրանք Հայր և Որդի են Սուրբ Հոգում [7]:

Հայրը ծնում է Որդուն, Նրանով միայն արտաշնչելով (հուն. προβάλλειν) Սուրբ Հոգուն, և Որդին ծնվում է Հորից միայն այն չափով, որքանով այդ արտաշնչումը (προβολή) կատարվում է Իրենով: Հայրը Միածին Որդու Հայրն է, միայն Նրա և Նրանով Սուրբ Հոգու աղբյուրը լինելու համար[8]:

Հոգին չի նախորդում Որդուն, քանզի Որդին բնութագրում է Հորը՝ իբրև Հայր, Որից Հոգին առնում է Իր առաջացումը, Որը և կազմում է Երրորդության աստիճանակարգությունը[9]: Բայց Հորից՝ Հոգու արտաշնչումը կատարվում է

---

5 «Որդու առ Հայր և Սուրբ Հոգու առ Հայր առնչությունները պարտավորեցնում են մեզ Հորը վերագրել երկու տեսակ առնչություններ. մեկը Որդու, մյուսը՝ Սուրբ Հոգու նկատմամբ» (Սբ. Թովմա Աքվինացի, Summa Theologica, I a, q. 32, a. 2, c ):

6 Հմմտ. Կաթոլիկ Եկեղեցու Կատեխեզիս, էջ 248 :

7 Սբ. Գրիգոր Աստվածաբանը ասում է, որ «Հոգին անջրպետ է (μέσον) Ծնվածի և Անծինի միջև» (Ճառ 31, 8, Sources Chre'tiennes n. 250, p. 290). G.Leblond, Point de vue sur la procesion du Saint-Esprit -Revue Thomiste LXXXVI, t. 78, 1978, pp 293-302

8 Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացին ասում է. «Սուրբ Հոգին Հորից իջնում է Որդու մեջ (ἐν τῷ Υἱῷ)» (Thesaums, XXXIV, P.G. 75, 577 A) .

9 Սբ. Գրիգոր Նյուսացին գրում է. «Սուրբ Հոգու մասին ասվում է, որ Նա Հորից է և վկայվում է, որ Նա Որդուց է. «Եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, - ասում է Սբ.Պողոսը, - նա Նրանը չէ» (Հռոմ. Ը 9): Ուրեմն Աստծո (Հոր) Հոգին նաև Քրիստոսի Հոգին է: Մինչդեռ Որդու մասին, որը Հորից է, չի ասվում, թե Հոգուց է. այս կապի շարունակականությունը անդառնալի է» («Տերունական աղոթքի մասին» Հովհան Դամասկացու մոտ մեջբերվող հատվածից. P.G. 46, 1109 BC): Սբ. Մաքսիմիանոսը նման ձևով հաստատում է Երրորդության աստիճանակարգությունը, երբ գրում է. «Ինչպես

Որդու ծննդյան միջոցով և միջնորդությամբ (այսպիսիք են հունարեն διά, նախդիրի երկու իմաստները), որը բնութագրում է Նրան ներերրորդութենական առնչություններում: Այս իմաստով Սբ. Հովհան Դամասկացին ասում է. «Իր սեփական, հատուկ Առանձնավորության մեջ դիտված, Սուրբ Հոգին էութենական ուժ է, որը բխում է Հորից և հանգչում Բանի մեջ» (Յաղագս ուղղափառ հաւատոյ, I, 7, P.G. 94, 805 B, ed B. Kotter, Berlin 1973, p. 16; Երկխոսություն ընդդեմ մանիքեականների 5, P.G. 94, 1512 B, ed. B. Berlin 1981, p 354) [10]:

Ինչպիսի՞ն է ուրեմն այն Երրորդութենական բնույթը, որը Սուրբ Հոգու Անձը մտցնում է Հոր և Որդու առնչության մեջ: Խոսքը Որդու առաքելության և գործունեության հարաբերակցությամբ փրկական տնտեսության (Իկոնոմիա) մեջ Հոգու սկզբնական տեղի մասին է: Աստված սեր է Իր աղբյուրում (հմմտ. Բ Կորնթ. ԺԳ 13, Ա Հովհ. Դ 8, 16), Որդին «իր սիրելի Որդին է» (Կողոս. Ա 13): Մինչև Սբ. Օգոստինոսին հասնող ավանդությունը ևս Սուրբ Հոգու մեջ տեսնում էր Աստծո սերը, որը «սփռված է մեր սրտերում» (Հռոմ. Ե 5) և որն՝ իբրև հավիտենական Շնորհ տրվեց Հորից «իր սիրելի Որդուն» (Մարկ. Ա 11, Թ 7, Ղուկ. Ի 13, Եփես. Ա 16)[11]:

Հորից բխող աստվածային սերը հանգչում է «իր սիրելի Որդու» վրա, նրանով սիրո Շնորհ՝ Հոգու Անձի հետ էությամբ մեկ լինելու համար: Սա բացատրվում է այն իրողությամբ, որ Սուրբ Հոգին Հիսուսի ամբողջ կյանքը սիրով ուղղում է առ Հայրը՝ Նրա կամքը կատարելու ընթացքում: Հայրը առաքում է Որդուն (Գաղ. Դ 4), երբ Մարիամը ՝ հղիանում է Նրանով Սուրբ Հոգուց (հմմտ. Ղուկ. Ա 35): Նույն Ինքը հայտնում է Հիսուսի Աստծո Որդի լինելը՝ մկրտության պահին Նրա վրա իջնելով (հմմտ. Ղուկ. Գ 21-22, Հովհ. Ա 33): Տանում է Նրան անապատ (հմմտ. Մարկ. Ա 12): Հիսուս վերադառնում է այնտեղից «Սուրբ Հոգով լի» (Ղուկ. Դ 14), ապա սկսում է Իր ծառայությունը:

---

Միտքը (Հայրը) Բանի սկիզբն է, այնպես էլ Նա, Բանի միջնորդությամբ, Հոգու սկիզբն է: Եվ ինչպես չի կարելի ասել, որ Բանը Ձայնից է (Ճնչից), այնպես էլ, որ Բանը Հոգուց է» (Quaestiones et dubia, P.G. 90, 813 B ) :

10 Սբ. Թովմա Աքվինացին, որը ծանոթ էր «Յաղագս ուղղափառ հաւատոյ»-ին, հակասություն չի տեսնում Filioque-ի և Սբ. Հովհան Դամասկացու վերոհիշյալ մտքի միջև. «Երբ ասում են, թե Սուրբ Հոգին հանգչում կամ բնակվում է Որդու մեջ, դա չի բացառում, որ Առաջինը բխում է Վերջինից, քանի որ ասվում է նաև, որ Որդին բնակվում է Հոր մեջ, թեպետև Նա առաջանում է Հորից» (Summa Theologica, I a, q. 36, a. 2, 4 um) :

11 Սբ. Օգոստինոսի հետևողությամբ Սբ. Թովմա Աքվինացին գրում է. «Եթե ասում են, որ Սուրբ Հոգին հանգչում է Որդու վրա, նույնպես էլ սիրողի սերը հանգչում է սիրվողի վրա» (Summa Theologica I a, q. 36, a. 2, 4 um): Սուրբ Հոգու՝ իբրև սիրո այս ուսմունքը ներդաշնակորեն ընդունվեց Սբ. Գրիգոր Պալամայի կողմից հունական՝ միայն Հորից «բխման» (ἐκπόρευσις) աստվածաբանության մեջ. «Բարձրյալ Բանի Հոգին նման է անճառելի ծնված Որդու հանդեպ Հոր անպատմելի սիրուն: Սեր, որից Աստծո Սիրելի Որդին՝ Բանը, օգտվում է (χρῆται) Հորից, միայն այն պատճառով, որ ունի Հոգուն՝ Հորից իր հետ առաջացողին ( συνπροελθόντα ) և համագոյաբար իր մեջ հանգչողին» (Capita physica XXXVI, P.G. 150, 1144 D, 1145 A):

Նա օծնում է Սուրբ Հոգով և փառավորում Հորն Իր բարեհաճության համար (հմմտ. Ղուկ. Ժ 21): «Սուրբ Հոգով» (Գործք. Ա 2) ընտրում է Իր առաքյալներին: Աստծո Հոգով հանում է դևերին (Մատթ. ԺԲ 28): «Հավիտենական Հոգով» (Եբր. Թ 14) Ինքն Իրեն մատուցում է Հորը: Խաչի վրա Հոր ձեռքն է ավանդում Իր Հոգին (հմմտ. Ղուկ. ԻԳ 46), «Որով» Նա իջնում է դժոխք (Ա Պետր. Գ 19) և Նրանով՝ «զորությամբ Աստծո Որդի» (Հռոմ. Ա 4) սահմանված լինելով հարություն է առնում (հմմտ. Հռոմ Ը 11)[12]: Մարդացած Աստծո Որդու մարդկային գոյության խորքերում կատարվող Հոգու այսօրինակ գործունեությունը սկիզբ է առնում ներերրորդական հավիտենական այն հաղորդակցումից, որով Հոգին, Իր սիրո Շնորհի խորհրդում բնութագրվում է Իր և սիրո աղբյուր Հոր ու Նրա սիրելի Որդու միջև եղած առնչության մեջ:

Հոգու Անձի՝ իբրև Հոր սիրո հավիտենական Շնորհի սկզբնական բնույթը Իր սիրելի Որդու նկատմամբ ցույց է տալիս, որ Հոգին թեև Իր առաքելության ընթացքում ելնում է Որդուց, հանդիսանում է մարդկանց՝ Հոր հանդեպ Քրիստոսի որդիական հարաբերության մեջ դնողը, քանի որ միայն Նրանում է այսպիսի հարաբերությունը դառնում Երրորդութենական. «Աստված մեր սրտերի մեջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր» (Գաղ. Դ 6): Փրկագործության ու Եկեղեցու կյանքի խորհրդում Հոգին անում է ավելին, քան սոսկ Որդու գործի շարունակությունը: Իրոք, այն ամենը, ինչ հաստատեց Քրիստոս՝ Հայտնությունը, Եկեղեցին, խորհուրդները, առաքելական ծառայությունն ու Իր վարդապետությունը, պահանջում են մշտական աղերսանք (ἐπίκλησις) Սուրբ Հոգուն, և Նրա գործունեությունը (ἐνέργεια), որպեսզի երբեք չսպառվող սերը (հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 8) հայտնվի Երրորդության կյանքում՝ սրբերի հարաբերակցության ընթացքում:

*Ներածական մասը գրեց և անգլերենի ու ռուսերենի համադրությամբ հայերեն թարգմանեց ԲԱԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆԸ*

---

12 Հմմտ. Հովհաննես-Պողոս II, շրջաբերական Dominum et Vivificantem, nn. 18-24, AAS LXXVIII, 1986, 826-831, հմմտ. նաև Կաթոլիկ Եկեղեցու Կատեխեզիս, nn. 436, 689, 690, 695, 727 :

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*Ա. Ա. ԲՈԶՈՅԱՆ*
*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՍԿԵՎՌԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Հայ ձեռագրական արվեստի գլուխգործոցներից է Սկևռայի Ավետարանը, որի մասին դեռևս ներկա դարի 30-ական թվականներին ամփոփ աշխատանք էր հրատարակել Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Ներսես Ակինյանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մատյանը կորել էր: Այն հայտնաբերվել է միայն 1993 թ. մարտին, բյուզանդագետ Գյունտեր Պրինցինգի կողմից, Լեհաստանի Գնիեզնո քաղաքի արքեպիսկոպոսական արխիվում: Մայնցի Գուտենբերգ թանգարանում երկարատև վերանորոգումից հետո, մատյանը ստացել է այսօրվա տեսքը: Ձեռագիրը շատ արագ իր վրա է հրավիրել գերմանացի, ավստրիացի և ամերիկացի հայագետների, բյուզանդագետների ու արվեստաբանների ուշադրությունը: 1997 թ. գարնանը մատյանը ցուցադրվել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում կազմակերպված «Բյուզանդիայի փառքը» ցուցահանդեսում:

Այդ մատյանի պատմությանը, գրման ու պահպանման մշակութային

---

[1] Բերում ենք գրքի գերմաներեն ամբողջական վերնագիրը և հայերեն թարգմանությունը- Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte Armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts / herausgegeben von Günter Prinzing und Andrea Schmidt, mit beiträgen von Anton von Euw, Christian Hannick, Mesrob K.Krikorian, Annette Lang-Edwards, Günter Prinzing, Andrea Schmidt, Christian Weise.- Wiesbaden, Dr.Ludwig Reichert Verlag, 1997, 186 S., 2 Karte und XXIX Tafeln.[Sprachen und Kulturen des christlichen Orients / hearausgegeben von Johannes den Heijer, Stephen Emmel, Martin Krause, Andrea Schmidt. Bd. 2] (Լեմբերգի Ավետարանը. վերագտնված ԺԲ դարի մի նկարազարդ հայերեն ձեռագիր / հրատարակությունը Գյունտեր Պրինցինգի և Անդրեա Շմիդտի, աշխատակցությամբ Անտոն ֆոն Էվի, Քրիստիան Հաննիկի, Մեսրոպ Կ. Գրիգորյանի, Անետ Լանգ-Էդվարդսի, Գյունտեր Պրինցինգի, Անդրեա Շմիդտի, Քրիստիան Վայզի: Վիսբադեն, դր. Լյուդվիգ Ռայխերտ հրատարակչություն, 1997, 186 էջ, երկու քարտեզ և ԻԹ տախտակ [Քրիստոնյա Արևելքի լեզուները ու մշակույթները / հրատարակված Հովհաննես դեն Հայների, Ստեֆան Էմմելի, Մարտին Կրաուզի, Անդրեա Շմիդտի կողմից, հտ. 2]): Գրքիս մասին գրախ. տե՛ս նաև Ekkehard Kraft, Das Lemberger Evangeliar: Abenteuerliche Wege einer armenischen Bilderhandschrift, in: Neue Züricher Zeitung, 21 November, 1998.

միջավայրերի ուսումնասիրությանն է նվիրված գրախոսվող հետազոտություն-ալբոմը, որի հրատարակության նախաձեռնողներն են Գյունտեր Պրինցինգը և Անդրեա Շմիդտը[1]: Նրանց ձեռնարկին սատար են եղել գրքի վերնագրում հիշատակված մյուս հեղինակները: Գիրքը բաղկացած է մի շարք առանձին հետազոտություններից, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն արժեք, իսկ գրքի միասնական շարադրանքի մեջ դրանք ամբողջական գաղափար են տալիս Սկևռայի Ավետարանի գրման, արվեստաբանական նշանակության, հայագիտության և բյուզանդագիտության մեջ ունեցած արժեքի, ձեռագրի ճակատագրի, գիտական հետազոտության և վերանորոգման սկզբունքների մասին: Սա հայագիտության մեջ առաջին փորձն է նկարազարդ ձեռագրի համակողմանի ուսումնասիրության, այդ իսկ պատճառով մի կողմից այս շքեղ հրատարակությունը շատ ուսանելի է իբրև նմանատիպ հետազոտության առաջին փորձ, մյուս կողմից՝ պատմական պրոցեսի ընկալման տեսանկյունից լիակատար չէ, հաճախ միևնույն միտքը և միևնույն իրադարձության նկարագրությունը կրկնվում են մի քանի հեղինակների կողմից: Ինչ խոսք, հեղինակներն ամեն ինչ արել են գիրքը պատշաճ մակարդակով հրատարակելու համար և արժանի են միայն գնահատանքի:

Առաջին իսկ հայացքից արհեստական է թվում գրքի «Լեմբերգի Ավետարան» վերնագիրը, քանի որ արդեն մեր դարի երեսնական թվականներին Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերից Ներսես Ակինյանի հրապարակած ուսումնասիրության մեջ խնդրո առարկա ձեռագիրն ընդօրինակման վայրի անունով անվանվել է «Սկևռայի Ավետարան» և այդպես մտել գիտական շրջանառության մեջ[2]: Մատյանի մասին այդ առաջին հիմնավոր ուսումնասիրության պատճառով է, որ գրախոսվող գրքի մեջ Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանն ընդհանուր գծերով անդրադարձել է հայագետ Ն. Ակինյանի հետ իր ծանոթությանը, նրա կենսագրությանն ու գիտական գործունեությանը: Աշխատանքի այս հատվածում Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանն անդրադառնում է հայկական ձեռագրերի՝ հ. Ներսես Ակինյանի նկարագրություններին, հատկապես Լեմբերգ-Լվովի համալսարանի և հայ-կաթոլիկների եպիսկոպոսարանի գրադարանների հայերեն ձեռագրերի ցուցակի կազմման աշխատանքներին, որին բազմագբաղ հայագետը ձեռնամուխ է եղել 1932 թ.: Սկևռայի Ավետարանի մասին իր բանասիրական և արվեստաբանական ուսումնասիրությունը Ն. Ակինյանը 1930 թ.

---

2 Տարօրինակ է, որ Ներսես Ակինյանի այդ ուսումնասիրությունը տեղ չի գտել գրքի մատենագիտական ցանկի մեջ (էջ 177), այն հիշատակված է միայն ձեռագրի նկարագրության վերջում դրված մատենագիտության մեջ (տե՛ս էջ 30): Սկևռայի Ավետարան անվանումը իմաստավորված է և պատահական չէ, որ հայոց բանասիրության ամենամեծ գիտականներից մեկը՝ հ. Ներսես Ակինյանը, այդ անվանումն է տվել մատյանին:

3 Հրատարակված է նաև այս ուսումնասիրության առանձնատիպը, ընդարձակ գերմաներեն ամփոփումով:

հրապարակել է «Հանդէս Ամսօրեայ»-ում[3], հիմնվելով հ. Գ. Գալեմքերյանի մանրամասն նկարագրության վրա: Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը համառոտակի ներկայացնում է հ. Ն. Ակինյանի հետ իր անձնական շփումները և վերապատմում Սկևռայի Ավետարանին նվիրված նրա աշխատանքի բովանդակությունը (էջ 175-6):

Գրախոսվող գիրքը սկսվում է 1997 թ. Գերմանիայի Դաշնակցային հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ֆելիքս Մամիկոնյանի շնորհակալական խոսքով, որն ուղղված է այս աշխատանքին ձեռնամուխ եղած գերմանացի գիտնականներին, իսկ Անդրեա Շմիդտը իր առաջաբանում շնորհակալություն է հայտնում հատորի հրապարակման աշխատանքներին նպաստած պաշտոնյաներին ու մասնագետներին. Գնիեզնոյի եպիսկոպոսական արխիվի տնօրեն՝ կապլան դր. Մարիան Ալեքսանդրովիչին, Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարանի աշխատակից դր. Կազիմիեռզ Իլսկուն, Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի աշխատակիցներ՝ դր. Հելեն Էվանսին, դր. Վիլիամ Վիքսոմին, Հոլգեր Կլայնին, Մայնցի եպիսկոպոս պրոֆ.-դր. Կառլ Լեհմանին, Մայնցի Գուտենբերգի թանգարանի տնօրեն տիկին դր. Եվա Հանեբուտ-Բենցին, Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի ստենապետ դր. Ջ. Եկավյանին, Քյոլնի Սալոմոն Օպենհայմ կրթական հիմնադրամի աշխատակից դր. Հ. Պիստորին, Մայնցի Գուտենբերգի համալսարանին և նրա բարեկամներին: Շնորհակալական խոսքն ուղղված է նաև հրատարակիչ տիկին Ուրսուլա Ռայխերտին, դր. Արմենուհի Դրոստ-Աբգարյանին, պրոֆ.-դր. Հերման Գոլցին (Հալլեի Մարտին Լյութերի համալսարան) և Լարս Հոֆմանին (Հովհաննես Գուտինբերգի համալսարան): Հեղինակները գիրքը նվիրել են արվեստագետ Կլաուս Վեսելի հիշատակին:

Ուսումնասիրության առարկա Ավետարանի նշանակության բացահայտմանն ու նրա պատմությանն է իր հոդվածը նվիրել Գ. Պրինցինգը (էջ 11-26): Հեղինակն անդրադառնում է այս Ավետարանի և ընդհանրապես միջնադարյան արևելաքրիստոնեական գրքի ստեղծման ավանդույթներին, մի դարաշրջանում և տարածաշրջանում, ուր խաչաձևվում էին Արևմուտքի և Արևելքի արվեստները, զուգահեռ է անցկացնում լատին մատենագրության սեփականությունը հանդիսացող Հենրի Առյուծի (մոտ. 1188 թ.) և Քվեդլինգբուրգի Սամուհել (մոտ. Թ դար) Ավետարանների հետ, որոնք վերջին հոբելյանի ընթացքում հայտնվել են Արևմուտքի վաճառատներում: 1993 թ. մարտին Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարանում տեղի ունեցած դասախոսությունից հետո, հեղինակը դասախոս Կ. Իլսկու և արքեպիսկոպոսական արխիվի տնօրեն Մ. Ալեքսանդրովիչի աջակցությամբ հետազոտում է այնտեղ պահպանվող հնագույն լատինատառ ձեռագրերը, իզուր փնտրելով որևէ հունական ձեռագիր:

Արխիվի տնօրենը Գ. Պրինցինգի ուշադրությունն է հրավիրում մագաղաթի վրա գրված մի նկարազարդ հայերեն ձեռագիր Ավետարանի

վրա, որը գրված է եղել Կիլիկիայում, այնուհետև պահվել է Լեմբերգ-Լվովի հայ-կաթոլիկների համայնքում, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայտնվել Լեհաստանում: Այնուհետև մատյանը մի շարք կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ վերանորոգ-վել է Մայնցի Գուտենբերգ թանգարանում, ուր լուսանկարվել են մատյանի բոլոր մանրանկարները, կանոնական տախտակներն ու հիշատակարանները: 1997 թ. մարտի 11-ից հուլիսի 6-ը մատյանը ցուցադրվել է Նյու Յորքում բացված «Բյուզանդիայի փառքի» և այլ ցուցահան-դեսներում, իսկ գիտական հասարակությանը պատշաճորեն ներկայաց-նելու համար ծրագրվել է շարադրել ներկա աշխատությունը: Գ. Պրին-ցինգը, Ա. Շմիդտը և Ա. ֆոն Էվը 1996 թ. նոյեմբերի 27-ին Գուտենբերգ թանգարանում հանդես են եկել թեմային վերաբերող զեկուցումներով:

Այնուհետև Գ. Պրինցինգն առաջ է քաշում այն դրույթը, որ այս մատյանը կարող է լինել Լևոն Ա-ի թագադրման Ավետարանը: Ըստ ձեռագրի գրիչ և մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցու հիշատակարանի, մատյանը գրված է հայոց թվականության 647(=1198/9) թ.: Հեղինակը ներկայացնում է Կիլիկյան Հայաստանի և նրա շուրջ ձևավորված քաղաքական իրավիճակը[4] Լևոն Ա Ռուբինյանի իշխանության տարինե-րին, անդրադառնում Լևոնի թագադրման[5] գործում Արևելքում Կելեստին Գ Պապի և Հռոմեա-գերմանական կայսր Հենրիխ Զ-ի նվիրակ՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտենբախի դերին: Գ. Պրինցինգը անդրա-դառնալով բյուզանդացիների կողմից Կիլիկիայի տիրակալին թագ ուղարկելու պատմությանը[6], հավանական է համարում Լևոն Ա-ի հռոմեական կայսեր ուղարկած թագով թագադրումը թվագրել 1199 թ. հունվարի 6-ով (տե՛ս էջ 20, ծան. 23): Մի հայացք ձգելով ձեռագրի ստեղծման պատմությանն ու դեգերումների շղթային, հեղինակն ընդգծում է, որ ձեռագրի վերջին վերանորոգումը (1997 թ.), թերևս ոչ պատահա-կանորեն, կատարել են Մայնցում, Կոնրադի արքեպիսկոպոսական նստավայրում:

Սկևռայի Ավետարանն իր արժեքով հավանաբար լիովին համապա-տասխանում է հեղինակի այն ենթադրությանը, ըստ որի այն կարող էր լինել Լևոն Ա-ի թագադրության Ավետարանը, քանի որ ձեռագրի ընդօրինակման հիշատակարանից հետո, 1219/20 թ. գրված հետագայի հիշատակագրությունում («Ի թուականիս Հայոց ի :ՈԿԸ: հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ և Աստուածասէր թագաւորն Հայոց Լեոն, ի մայիս ամսոյ ի մեկն և պատկեր ատւրն չորեքշաբաթի, որոյ յիշատակ նորա

[4] Այս շրջանում Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը դեռևս Սիսը (էջ 18) չէր, այլ՝ Տարսոնը:

[5] Հեղինակն անդրադառնում է Լևոնի թագադրության թվականի շուրջ ծավալված վեճին (էջ 19, ծան. 22):

[6] Տե՛ս F.Dölger, Regesten der Kaiserurkunden des oströmischen Reices, 2. Teil. Zweite erweit. und verb. Aufl., berarb. v. P. Wirth, München 1995, Nr. 1642.

ωուրհնութեամբ եղիցի: Ամէն: Վասն որոյ աղաչեմք զքեզ՝ մարդասէ՛ր, հայցմամբ արժանապատիւ ընթերցողաց կենդանի բանի քո, տէ՛ր թողցես զ(յ)անցանս սորա») խնդրվում է օրհնությամբ հիշել մահացած Լևոն արքային: Հանգամանք, որը թվում է, թե պետք է արձանագրվեր թագավորին պատկանած ձեռագրում: Սակայն պետք էր հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այս մատյանը գրվել է Ռուբինյանների գլխավոր հակառակորդ Օշինյան իշխանական տան հոգևոր-մշակութային կենտրոն Սկևռայում, այն դեպքում, երբ նույն հաջողությամբ թագավորի համար կարող էր Ավետարան գրվել նաև Ռուբինյանների հոգևոր կենտրոններում, ասենք՝ Դրազարկում կամ այլուր: Հարց է առաջանում, թե որքանո՞վ է այս ենթադրությունը համապատասխանում իրականությանը: Ինչևէ, նշանակետը վնասված է, և հեղինակներին մնում է հիմնավոր փաստարկներով ամրապնդել ասվածը:

1592 թ. Սկևռայի Ավետարանը վերանորոգում է լեհահայ մեծահարուստ Թորոս Պեռնաթենը, իսկ մոտ 1830 թ. ձեռագիրը պահպանվում է Ուկրաինայի Լեմբերգ-Լվովի հայկական համայնքում, որը սկսած 1635 թ. ընդունել էր կաթոլիկություն: Այս համայնքը հիմնականում ձևավորվել է Կիլիկյան թագավորության կործանումից՝ 1375 թ.-ից հետո, երբ Կիլիկիայից Ղրիմ, այստեղից էլ Ուկրաինա էին շարժվում հայ գաղթականները: Լվովում հայերի ներկայությունը նորոգվում է նոր գաղթով, որը հաջորդում է 1453 թ. թուրքերի կողմից Կ. Պոլսի առմանը: Գ. Պրինցինգը ենթադրում է, որ մատյանի ՊՀԱ (=1422/3) թ. հիշատակարանը (տախտակ Գ, նկ. 11) գրված պետք է լինի Ղրիմում: Անհայտ է, որ ըստ ՌԽԱ (=1591/2) թ. հիշատակարանի (տախտակ Գ, նկ. 12-13) ձեռագիրն արդեն հայտնվել էր Ռեչ Պոսպոլիտայի սահմաններում: Ըստ հեղինակների հավաստիացման, այս ձեռագրի մանրանկարների հետևողությամբ է գրիչ Ղազարն ընդօրինակել 1630 թ. Բեռլինի պետական գրադարանի թիվ 2 հայերեն ձեռագիրը: ԺԸ-Ի դարերի ընթացքում Սկևռայի Ավետարանը գտնվել է Լեմբերգ-Լվովի հայ-կաթոլիկների եպիսկոպոսությունում, ուր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը պահպանվել է շուրջ 51 հայատառ ձեռագիր մատյան:

Ք. Հաննիկը և Գ. Պրինցինգը մի ամբողջ գլուխ (էջ 27-30) են նվիրել Սկևռայի Ավետարանի նկարագրությանը, հղելով համապատասխան գրականությունը: Իսկ գրքի հաջորդ հատվածում Ք. Հաննիկն անդրադաձել է հայերենով պահպանված Ավետարանների մատենագրական արժեքին, թարգմանության և հրատարակման պատմությանն, ընդգրկված բնագրերի ամբողջությանը, համեմատելով քրիստոնեական մյուս մատենագրություններում պահպանված նույնանուն բնագրերի հետ: Այստեղ հանիրավի շրջանցվել է Հակոբ Անասյանի հայոց աստվածաշնչային գրքերին վերաբերող ուսումնասիրությունը[7]: Հեղինակն

[7] Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Բ, Երևան, 1975:

անդրադառնում է Ավետարանների տնատման և մյուս ծիսական գրքերում (Ճաշոց, Մաշտոց) ընթերցվածների նշման և ընտրության սկզբունքներին, փորձում է գնահատել Սկևռայի մատյանի տեղը մյուս հայալեզու ձեռագիր Ավետարանների համակարգում: Այս մատյանի արվեստաբանական արժեքին, զարդանախշերի և մանրանկարների ավանդույթին իր հոդվածում անդրադառնում է Անտոն ֆոն Էվը (էջ 39-83)[8]: Սկևռայի Ավետարանի հիշատակարանները գերմաներեն է թարգմանել Ա. Շմիդտը (էջ 93-105): Ավետարանի Մայնցում վերնորոգման ողջ գործընթացը նկարագրում է Անետ Լանգ-Էդվարդսը (էջ 111-119), անդրադառնալով մագաղաթյա մատյանում օգտագործված գույներին ու թանաքին, պրակների կառուցվածքին, կազմի վիճակին: Հեղինակն անդրադառնում է նաև նախորդ՝ հատկապես 1592/3 թ. Հակոբ Պեռնովենցի միջոցներով կատարված վերանորոգմանը:

Անդրեա Շմիդտի հեղինակած մյուս հատվածն անվանված է. «Սկևռայի վանքը (12-13 դդ.) Կիլիկիայի եկեղեցական և մշակութային կյանքի խաչմերուկում», որի սկզբում հեղինակը թարգմանաբար բերում է Ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնութիւն» մատյանի հիշատակարանը, ուր պատմվում է 1189/90 թ. սելջուկների կողմից մերձեփրատյան շրջանում Ներսես Լամբրոնացու և նրան ուղեկցող կրոնավորների կողոպտման և մի քանիսի սպանության պատմությունը: Միայն երեք տարի անց է, որ Լամբրոնացին կարողանում է ետ գնելով վերադարձնել միակ օրինակով կողոպտիչների ձեռքն անցած Պատարագի մեկնության բնագիրը: Նման կորուստները կանխելու միտումով է, որ Լամբրոնացին բազմաթիվ ձեռագրեր է ընդօրինակել տալիս Լամբրոնի և Սկևռայի վանքերում, Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատանը և այլուր: Այս ձեռագրերի հիշատակարաններում եզակի վկայություններ են պահպանվել ժամանակի քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, որոնց մասնակիցն են եղել Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին և մի շարք նշանավոր գրիչներ: Օրինակ՝ Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին և Գեորգ Սկևռացի գրիչը ուղեկցել են Լևոն Ռուբինյանին և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին, որոնք ուղևորվում էին Սելևկիա, հանդիպելու համար գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսին (Բարբարոսա), որը ղեկավարում էր Գ խաչակրաց արշավը:

Ա. Շմիդտն անդրադառնում է Սկևռայի վանքի և նրա նոտարատան գործունեությանը, մատնանշում, որ այն գտնվում էր Օշինյան իշխանների տիրույթում, որոնք բյուզանդական կայսրության ստորականերն էին ու կրում էին սեբաստոս պատվանունը[9]: Վանքի ծաղկման ժամանակաշրջանը հեղինակն իրավամբ համարում է Օշինյան տան ներկայացուցիչ,

---

8 Գրքի այս հատվածը մանրամասն գրախոսել է արվեստագիտության դոկտոր Վ. Ղազարյանը (տե՛ս ամսագրի հաջորդ հոդվածը):

9 Այդ մասին տե՛ս նաև Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը, Երևան, 1988, էջ 226-227:

Տարոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու գործունեության շրջանը: Անդրադառնալով վերջինիս մատենագրական ժառանգությանը, հեղինակը թռուցիկ հայացք է նետում Կիլիկիայում ձևավորված մշակութային միջավայրի վրա, ուր կողք-կողքի խաչաձևվում էին մի շարք քրիստոնեական մշակույթներ: Այստեղ Լամբրոնացու ղեկավարությամբ հայերեն էին թարգմանվում հունարեն, լատիներեն և ասորերեն բազմաթիվ երկեր: Այնուհետև հեղինակը ստեղծված պատմական ֆոնի վրա կրկին անդրադարձել է Սկևռայի Ավետարանի գրչի և մեկենասի գործունեությանը (տե՛ս էջ 93–105 և 130–131):

Այս մասում, այնուամենայնիվ, կարելի է կատարել մեկ անհրաժեշտ ճշտում. Լամբրոնացին և Կիլիկիայի մշակութային գործիչները ԺԲ դարում առնչություններ են ունեցել միայն հակոբիկ-ասորական Եկեղեցու ներկայացուցիչների հետ[10], և չի կարելի մշակութային այդ փոխհարաբերությունները ներկայացնել իբրև առնչություններ ընդհանրապես ասորական Եկեղեցու և մատենագրության հետ: Կարելի էր նաև ավելի մանրամասն անդրադառնալ Սկևռայի ու Մլիճի դպրոցների մատենագրական վաստակին, ճշտել յուրաքանչյուր վանքում ընդօրինակված ձեռագրերի բովանդակությունն ու տվյալ դպրոցի ուղղվածությունը, որով լուրջ քայլ կկատարվեր հայոց մշակույթում հիշյալ դպրոցների ավանդի ուսումնասիրության բնագավառում:

Այնուհետև հեղինակը թռուցիկ անդրադառնում է Կիլիկյան հայկական պետության և մշակույթի ինքնության խնդիրներին: Պարզ երևում է, որ Ա. Ծմիդտն անդրադառնալով այդքան խճողված և դեռևս լիակատար ուսումնասիրության չենթարկված հարցերին, բավարարվում է միայն հայտարարություններով, որոնք վերաբերում են հայ-բյուզանդա-ասորալատինական եկեղեցական փոխհարաբերություններին, Կիլիկիայի թագավորների և Հռոմկլայի կաթողիկոսների «Ամենայն Հայոց» տիտղոսին, ԺԲ դարի կաթողիկոսների Արշակունյաց ծագման մասին ավանդությանը: Հիշատակված խնդիրներից յուրաքանչյուրի ուսումնասիրությունն ունի առանձին գիտական արժեք և վերջին տարիներին է միայն ուսումնասիրության նյութ դարձել[11]: Չգիտես ինչու, հեղինակը պետք եղած տեղե-

---

10 Այս ժամանակաշրջանում մեզ հայտնի չեն Հայոց Եկեղեցու Նեստորականների հետ փոխհարաբերությունների փաստեր:

11 Տե՛ս օրինակ. Ա. Ա. Բոզոյան, Հայ Եկեղեցին Տիեզերական Նուիրապետութեան աստիճանակարգում (Հռոմկլայի ժողովը եւ Անտիոքի պատրիարքական Աթոռի հարցը ԺԲ դարի հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւններում).- Գանձասար, Զ (1996), էջ 192–147. Նույնի, «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, - «Էջմիածին», 1997, էջ 72–81, Նույնի, La culture de l' "Âge d'Argent" et Rome (fin XI^e-début XIII^e siècle), տե՛ս Roma-Armenia / sous la direction de Claude Mutafian, Edizioni de Luca 1999, p.131-136:

12 Տե՛ս Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178), Երևան, 1995, էջ 183–185:

ռում չի հիշատակում իր սկզբնաղբյուրը կամ օգտագործած ուսումնասիրությունը: Խոսելով Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասին, Ա. Ծմիդտն այն թվագրում է 1179 թ., չնայած որ սպառիչ փաստարկներով ցույց է տրված, որ այդ ժողովը պետք է տեղի ունեցած լիներ 1178 թ.[12]:

Հետաքրքիր է հեղինակի անդրադարձը ԺԳ–ԺԴ դարերում Սկեռայի գրատան գործունեությանը, հատկապես Ներսես Լամբրոնացու՝ հաջորդ՝ Վարդան և Գրիգոր վանահայրերի օրոք: Հատկանշական է, որ վերջինս 1221 թ. Ներսես Լամբրոնացու հետևողությամբ, հավակնում էր Ամենայն Հայոց կաթողիկոսության գահին: Ա. Ծմիդտն իրավամբ առանձնացնում է Սկեռայի գրատան գործունեության երկու զարթոնքային շրջան, որոնցից առաջինը թվագրում է ԺԲ դարի վերջին քառորդով և հաջորդ դարի սկզբով, իսկ երկրորդը՝ ԺԳ դարի գրեթե նույն ժամանակահատվածով (էջ 137): Առաջին փուլում իր վառ անհատականությամբ առանձնանում է Ներսես Լամբրոնացին (1178–1198), իսկ երկրորդում՝ հայտնի են վանքի Մխիթար, Սիմեոն, Մինաս և Կոստանդին վանահայրերը (էջ 137): Հեղինակն Սկեռայում ընդօրինակված առաջին ձեռագիրն է համարում 1173 թ. թվագրվող Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգությունը» (ՄՄ–1568, հիշատակարանը տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե–ԺԲ դարեր, Երևան, 1988, էջ 210–211)[13], իսկ վերջին՝ 1279 թ. Սիմեոն վանահոր մեկենասությամբ Կոստանդին գրչի կողմից ընդօրինակված Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը» (ՄՄ-416, տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 493): Սկեռայի դպրոցի երկրորդ զարթոնքի շրջանն համընկնում է գրիչ Ստեփանոս Գոյներիցանցի (մոտ 1272–1316 թթ.) և Գեորգ Սկեռացու (1246–1301 թթ.)[14] մշակութային գործունեության հետ: Նրանց ջանքերով է ստեղծվել Գրչության արվեստին նվիրված մեր միջնադարյան լավագույն ձեռնարկներից մեկը, ընդօրինակվել Հեթում Բ-ի Աստվածաշունչը: Այս շրջանում է ընդօրինակվել Կեռան թագուհու Ավետարանը (1283 թ.): ԺԳ դարի վերջին տասնամյակով է թվագրվում նաև Հռոմկլայում պատրաստված Սկեռայի նշանավոր մասնատուփը, որն այժմ պահպանվում է Էրմիտաժում: Անդրադառնալով ԺԳ դարի վերջին Կիլիկիայի եկեղեցական կյանքում Գեորգ Սկեռացու խաղացած դերին, հեղինակի ուշադրությունից վրիպել է Մխիթար Սկեռացու գործունեու-

---

[13] Ձեռագրի գրիչն է Գրիգորը, ստացողը՝ Ներսես Լամբրոնացին, սակայն Սկեռայի վանքը հիշատակարաններում չի արձանագրվում:

[14] Վերջինիս գործունեության մասին տե՛ս V. Mistrih, Trois Biographies de Georges de Skevra, (Studia Orientalia Christiana. Aegyptica 14) Kairo 1970; D. Bundy, The Anonymous Life of Georg Skewrac'i in Erevan 8356. A Study in Medieval Armenian Historiography and History, տե՛ս REArm 18(1984) 491-502.

[15] Նրա մասին տե՛ս Ա. Բոզոյան, Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկեռացին) Հայոց Եկեղեցու նվիրապետական կառույցի պաշտպան, «Գանձասար», Ե (1994), էջ 137-157, Զ (1996), էջ 403-420:

թյունը, որը 1263 թ. որպես Կոստանդին կաթողիկոսի դեսպանագնաց, մասնակցել է Աքքայում տեղի ունեցած հայ-հռոմեական բանակցություններին[15]։ ԺԴ դարի սկզբին մամլուկներն ավերում են Սկևռայի վանքը, Ստեփանոս Գոյներիցանցը ստիպված էր հայկական մատյանների ընդօրինակության գործը շարունակել Կիպրոսում։ Սկևռայում գրված վերջին ձեռագիրը թվագրվում է 1349 թ.։

Աշխատության հաջորդ հատվածը Կրիստիան Վայզեն նվիրել է Լեմբերգի հայկական համայնքի պատմությանը (էջ 143–169)։ Հեղինակը պատմական էքսկուրս կատարելով, մատնանշում է այն ճանապարհները (Անի-Ղրիմ, Կիլիկիա-Ղրիմ-Ուկրաինա-Լեհաստան) ու պատմական ժամանակաշրջանը (ԺԱ-ԺԵ դդ.), երբ հայերը սկսել են հաստատվել Արևելյան Եվրոպայում և հետզհետե հիմնավորվել Լեմբերգ-Լվովում։ Այն ԺԶ-ԺԷ դարերում Հայոց Եկեղեցու արքեպիսկոպոսական նստավայր էր և գրչության կենտրոն։ ԺԷ դարի առաջին կեսից Նիկողոս Թորոսյանի (Թորոսովիչ) նախաձեռնիր գործունեությամբ սկսվում է Ռեչ Պոսպոլիտայի հայկական բնակչության կաթոլիկացումը, ապա և ձուլումը։

Եկեղեցական այդ գործչին Ուրբանոս Ը պապը արքեպիսկոպոս է օծում և թույլ տալիս եպիսկոպոսական Աթոռներ հիմնել Կամենեցում և Մոգիլևում։ Այս թեմերում է, որ նոր զարթոնք է ապրում հայ-ղփչաղական գրականությունը։ Լեհաստանի հայ կաթոլիկների վերջին արքեպիսկոպոսն է եղել Ժոզեֆ Թեոֆիլ Թեոդորովիչը, որը 1919-1923 թթ. ընտրվել է Լեհաստանի պառլամենտի դեպուտատ։ 1990 թ. Լեհաստանում հաշվվել է շուրջ 6000 կաթոլիկ հայ։ Կ. Վայզեն արձանագրում է, որ վերանկախացումից հետո Ուկրաինայում հիմնվել է Հայոց Եկեղեցու եպիսկոպոսական Աթոռ, որը 1994 թ. գլխավորում է Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը։ Ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների Ուկրաինայում հաշվում են 54000 հայ, որոնցից 1500-ը բնակվում են Լեմբերգ-Լվովում։ Հեղինակն անդրադառնում է նաև Լեմբերգի հայկական շինությունների և գրադարանի ճակատագրին, ներկայացնելով դրանց լուսանկարները։

Գրքում պատճենված են Սկևռայի Ավետարանի հիշատակարանները և մանրանկարչության տեսանկյունից արժեքավոր էջերը։ Աշխատության վերջում հեղինակները կցել են կիլիկյան Հայաստանի և Արևելյան Եվրոպայի սխեմատիկ քարտեզները։

Մոտավորապես այս է գրախոսվող գրքի բովանդակությունը։ Աշխատանքը հրատարակված է բարձր տպագրական կուլտուրայով։ Գերմանացի հետազոտողները հայագետների սեղանին են դրել մի արժեքավոր ուսումնասիրություն, որն ընդլայնում է մեր պատկերացումները հայկական ձեռագրական մշակույթի շփումների և ճակատագրի վերաբերյալ։

***ՎԻԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ***
*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*

# ՍԿԵՎՌԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ. ԿՈԹՈՂԱՅԻՆ ՎԵՐԱՀԱՅՏՆՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Սկևռայի Ավետարանը, որն իր մեջ պարունակում է կիլիկյան մանրանկարչության փառավոր նմուշներ, երկրորդ աշխարհամարտից հետո երկար ժամանակ ասպարեզից անհետացել էր: Նույնիսկ Ս. Տեր-Ներսեսյանն իր վերջին գրքում[1] Սկևռայի Ավետարանը (1197-98 թթ.) կորած էր համարում:

1993-ին Գնեսենում (Լեհաստան) երջանիկ պատահականությամբ Ավետարանը գտնվեց: 1997-ի մարտի 11-ից մինչև հուլիսի 6-ը այն, որպես աչքի ընկնող ցուցանմուշ, ներկայացվեց «Մետրոպոլիտենն» թանգարանի «Բյուզանդիայի փառքը» ցուցահանդեսում: Ցուցահանդեսից հետո ձեռագիրը 1997-ին նորոգվել է Մայնցի Գուտենբերգի թանգարանում (տե՛ս գրքում Աննետե Լանգէդվարդսի հոդվածը՝ «Լեմբերգի /Լվովի/ Ավետարանի նորոգման առթիվ)[2]: Նորոգումը հարմարեցված էր ձեռագրի ընդօրինակման 800-ամյակին:

Ավետարանը մի անգամ նորոգվել էր 1592-93 թթ. պարոն Թորոս Պեռնաթենցի կողմից: Ըստ հիշյալ հոդվածի, ձեռագրի մագաղաթի վիճակը մինչև նորոգումը վատ չէր, բայց մատյանը ալիքաձև տեսք էր ստացել, որի պատճառով կարող էին վնասվել թե՛ բնագիրը և թե՛ մանրանկարները[3]: Բարեբախտաբար թե՛ մանրանկարները և թե՛ տեքստը լավ են պահպանված, թեև որոշ նկարների պիգմենտներ (ներկանյութ) արտատպված են հանդիպակաց էջի վրա, որ մեզ հայտնի է նաև կիլիկյան պատկերազարդ այլ ձեռագրերից: Նորոգման հիմնական աշխատանքը կատարվել էր մագաղաթի թերթերի հարդարման, ուղղման և արդեն քայքայված կարերի հեռացման և ձեռագրի վերակազմման վրա:

Ավետարանի գեղարվեստական կողմի քննությանն է նվիրված Անտոն Ֆոն Էվի ընդարձակ հոդվածը («Լեմբերգի Ավետարանը որպես արվեստի գործ»)՝ իր մի շարք ենթագլուխներով, որոնց մի մասին կանդրադառնանք ստորև: Այստեղ իմաստ չունի անդրադառնալ ձեռագրի կազմությանը և ցանկերին: Ուղղակի կարևոր տեղեկություն ենք համարում Ավետարանի մագաղաթի ձեռքբերումը Կիպրոսում, որ գտնվում էր Լուսինյանների լատինական իշխանության ներքո: Խաչակիրների տարածքներից ներմուծված մագաղաթի մասին

---

[1] S. Der Nersessian Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Forteenth Century. Vol. I, II. Washington, 1993, p. 16.

[2] «Das Lemberger Evangeliar. Eine Wiederentdekte armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts». Herausgegen von Günter Prinzig u. Andrea Schmidt. Wiesbaden, 1997, S. III u.f.

[3] Նույն տեղում, էջ 111-112:

կան նաև այլ վկայություններ[4], ինչպես նաև լատինական տիպի բազմաթիվ «թավշյա» մագաղաթի օրինակներ: Այն բերել էր Ադամ մականունով Ստեփանոս քահանան, որը և ձեռագրի ստացողն էր:

Սկևռայի Ավետարանը միջին չափի է համարվում՝ 16-րդ դարից առաջ եղել է 300x240 մմ չափի, նրանից հետո՝ 290x215 մմ: Պրակները կազմված են 3 և 4 կրկնաթերթերից: Հետաքրքիր է, որ պրն. Ֆոն էվը հատուկ ուշադրություն է դարձրել ժամանակով մոտ Բալթիմորի Ուոլթերս թանգարանի N536, Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի N1635 (1193 թ.) և Սկևռայի Ավետարանի չափերին և տողերի թվին (Բալթիմորինը՝ 19-21, Վենետիկինը՝ 19-20, Սկևռայի Ավետարանինը՝ 15 տող): Ենթադրվում է, որ ստացող Ստեփանոս քահանան էական դեր է խաղացել Լևոն Մեծագործի թագադրության ժամանակ (1199 թ.), երբ թերևս օգտագործվել է խնդրո առարկա ձեռագիրը:

Ձեռագրի բոլորագիծ վայելուչ երկաթագիրը բաց շագանակագույնից հասնում է մինչև մուգի և սևի: Սկզբնական ծեփանը եղել է սև, որը, ինչպես երբեմն այլ ձեռագրերում, վերածվել է շագանակագույնի: Եվսեբիական հատվածները սկսվում են ոսկե գլխատառերով (Ֆոն էվը դրանք համարում է «իմաստային հատվածներ», էջ 49), որոնց համարները նշված են կողմնակի լուսանցքներում փոքր երկաթագրով: Տեքստային ստորին լուսանցքներում եվսեբիական ցանկերն են: Հայկական Ավետարաններում միշտ տրված են եվսեբիական համեմատական ցանկերը (դա խիստ հազվադեպ է բյուզանդական գրչարվեստում, հատուկենտ՝ ասորականում): Լուսանցազարդերով օժտված է Գլխավոր Ավետարանների սկիզբը (եկեղեցական տոների հետ կապված խոշոր գլխաբաժանումների): Եթե հետազոտողի մոտ չեն ճշտված որոշ նրբություններ, ապա շոշափված է էջերի ձևավորման գլխավոր զարկերակը - հանդիպակաց էջերի ներդաշնակումը երկսյուն բնագրի լայն գեղեցիկ գրերի, լուսանցազարդերի (Ֆիգուրատիվ թե անօթներ ու բուսազարդեր ներկայացնող), ոսկե առաջին տողերի, գլխատառերի ու եվսեբիական գլխահամարների շնորհիվ ( էջ 43):

«Տեխնիկան և գույները» ենթագլխում խոսվում է հանդիպակաց էջերի տողատման մասին՝ ենթադրելով, թե այն կամ Կիպրոսում է արվել, կամ ծաղկող Գրիգորի և նրա օգնականի ձեռքով (էջ 43): Մենք գիտենք, որ հայ գրիչները մեզ հասած հին ձեռագրերում տողատման համար գործածել են հատուկ գործիք՝ տողաշար, ավելի ուշ՝ փարտավար, որը շատ հարմար էր, և հայ գրիչները հարկ չունեին նման աջակցության: Խոսվում է ձեռագրի զարդարվեստում երեք հիմնական գույների մասին, որոնք ընտրված էին կիլիկյան մանրանկարչության մեջ նաև հագուստների համար (արտակարգ զրնգուն կապույտ, կանաչ, կարմիր): Բայց չի խոսվում նրանց սիմվոլիկ և կոնտրաստային նշանակության մասին, որը մենք ցույց ենք տվել մեր մի քանի աշխատություններում: Գույների նկարագրությունը բավական ճշգրիտ է և

---

[4] Der Nersessian S., Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington, 1963, p. 56, 110.

ընդհանուր, բայց դրանց ո՛չ գեղարվեստական-դեկորատիվ, ո՛չ էլ սիմվոլիկ արտահայտությունները չեն բացահայտված:

«Եվսեբիոսի թուղթը և կանոնի տախտակները (խորանները)» գլխում պրն. Ֆոն Էյլը ներկայացնում է թղթի բովանդակությունը, ընդունում Կ. Նորդենֆալկի դրույթը, որ 989 թ. Էջմիածնի Ավետարանը եվսեբիական նախատիպն է ներկայացնում: Բյուզանդական արվեստի խոշոր գիտակ Կլաուս Վեսսելը (ի դեպ սույն ժողովածուն նվիրված է նրա հիշատակին) խորանների շարքը դիտում էր իբրև բազիլիկայի պատկեր[5], որ ճիշտ է ինտուիտիվ իմաստով (իբրև դեպի Ավագ խորանը տանող կամարաշարք), բայց խորհրդանշորեն բացահայտված է «Խորանների մեկնություններում» (ի դեպ, յուրաքանչյուր խորան ունի իր որոշակի խորհուրդը)[6]:

Ճիշտ նկարագրելով կամարների զարդանախշերը՝ գիտնականը ուղղանկյուն գլխազարդի մեջ առնված կամարները դիտում է իբրև պայտաձև: Այդ դեպքում խորանների ձևը պիտի մերձենար ասորականներին: Մինչդեռ հայկական ձեռագրերի մեծ մասում կամարների համար շրջանն ընդունվում է որպես հիմք: Կիսաշրջանաձև կամարներն ավելի ներդաշնակ և մոնումենտալ տեսք են տալիս խորաններին, քան երեք քառորդ շրջաններով հատվածները, որոնք ծանրացնում են գլխազարդը (ինչպես 1193 թ. Վենետիկի N1635 Ավետարանում): Սկևռայի Ավետարանում խորանները կա՛մ կիսաշրջանաձև են, կա՛մ մի փոքր ավելի, և ավելի վայելուչ են, քան Վենետիկինը: Գլխազարդի ուղղանկյան մեջ ընդգրկված կիսաշրջանաձև կամարները, որ գերիշխում են Ռոսլինի խորաններում, գրեթե անճանաչելի են կամ վերացած՝ արքունական դպրոցի շատ ձեռագրերում: Կարելի է ավելացնել նաև, որ Եվսեբիոսի և Կարպիանոսի նկարները թղթում հայտնվում են Մեծ Հայքում, այնուհետև՝ 12-րդ դ. վերջերից՝ Կիլիկիայում (հենց Վենետիկի հիշյալ և Սկևռայի Ավետարանները), հետագայում դառնալով օրինաչափ:

Երկու ենթագլուխ նվիրված է ավետարանիչների պատկերներին: Գնահատելի է, որ հատուկ ուշադրություն է հատկացվում նրանց շրջանակների զարդարվեստին, քանի որ 11-12-րդ դդ. բյուզանդական ավետարանիչների պատկերները այդպիսի ճոխ նախշազարդ շրջանակներ չունեն: Եվրոպական միջնադարում, ինչպես նշված է Օտտո Պեխտի գրքում[7], միշտ պայքար է գնացել «հարթության և տարածության» միջև, այսինքն՝ իռլանդական ավանդույթի «հարթասիրության» և կարոլինգյան արվեստի՝ անտիկ տարածականության նկատմամբ հակման միջև: Հետևաբար թեև եվրոպական միջնադարում հարուստ էր շրջանակը, բայց այն հաճախ անորոշ էր տարածության արտահայտման իր ձգտմամբ կամ գունատոնային ու ճարտարապետական միջամտության շնորհիվ: Կիլիկյան մանրանկարչության մեջ շրջանակը սառը գույնի մեջ՝ սառը և տաք գույնի մեջ տաք գունային կոնտրաստի բավական

---

[5] K. Wessel. Kanontafeln.- RBK, 3, 1978, S. 967.

[6] «Խորանների մեկնություններ». Աշխատասիրեց՝ Վ. Ղազարյան. Երևան, 1995, էջ 20-29:

[7] O. Pächt. Buchmalerei des Mittelalters. München, 1984, S. 173 u.f.,

գրաֆիկական ձևերա պահելով՝ երբեք չէր ընդվզում հարթության դեմ և ցունականոտրաստային առումով կրկնվում էր պատկերի ներսում:

Պրն. Ջոն էվը Սկևռայի Ավետարանի ավետարանիչների պատկերների համար հինգ հատկանիշ է նշում. ա/ հայացքները դեպի աջ են ուղղել՝ միմյանցից անհատապես տարբերվելով. բ/ նրանց աթոռները նրքանաշակ են կամ ունեն քնարաձև թիկնակ. գ/ պատկերված է մի փոքր պահարան՝ մատյանը պահող ծկնաձև ննցուկի տակ. դ/ նկարի ձախ մասում ճարտարապետական շրջակայքը սահմանափակվում է տան ճակատով, որն ունի բարձր ուղղանկյունաձև դուռ. ե/ օդերից կախված է վարագույր (Velum) վերին շրջանակից, բացի Մարկոսի պատկերից (էջ 57):

Նման նկարագրությունը, ձգտելով քնականության ու ճշգրտության, թերի է և ունի անճշտություններ. ա/ աթոռները քմաճաշակ չեն, այլ կորացրած կողերով, որոնք այսօր էլ հանդիպում են զանազան թիկնաթոռներում, իսկ թիկնակը հյուսված է ռոմբաձև (ոչ թե քնարաձև) կամ ծածկված է շորով. բ/ մատյանը կամ բացված գալարը պահող ննցուկի տակի պահարանը Մատթեոսի նկարում պատկերված է երկու դուռը բաց, Մարկոսի նկարում՝ փակ դռներով, որոնք սխեմատիկ զարդեր են ցույց տալիս (ասես սենյակի կենտրոնական հեռանկարի ձևով), Ղուկասի մոտ բաց է մի դուռը, իսկ Յովհաննու և Պրոխորի նկարում այն չկա, քանի որ Յովհաննեսը ներկայացված է ներշնչման պահին: Չի խոսվում մուրաքաների մասին, որոնց վրա նստած են Մարկոսը և Ղուկասը, իսկ համաբարբառ ավետարանիչների ոտքերի տակ գորգիկներ են փռված (Յովհաննու ոտքի տակ չկա): Պրոխորի աշակերտ լինելը շեշտված է թե՛ նրա կերպարանքի և թե՛ աթոռակի ու սեղանների փոքրությամբ:

Ի վերջո, կիլիկյան մանրանկարչության մեջ կարևոր է նաև տարածականության և հարթապատկերի հարաբերության հարցը, որն այստեղ ցայտուն է և ավելի նուրբ ու հարուստ է դառնում 13-րդ դարում: Գրքի սույն հրապարակումը հնարավոր է դարձնում Ս. Տեր-Ներսեսյանի[8] և մեր նյութերի հետ[9] ամբողջացնելու ավետարանիչների պատկերագրության լիարժեք ուսումնասիրությունը կիլիկյան մանրանկարչության մեջ, որ նույնքան ինքնուրույն ու որոշակի արտահայտություն ունի, որքան բյուզանդական և եվրոպական մանրանկարչության մեջ, թերևս մեր դեպքում ավելի օրգանական լինելով թե՛ ավետարանիչների անհատականացման (որ դեռ որոշակի չէ Սկևռայի Ավետարանում) և թե՛ տարածական կազմակերպման հարցում:

«Անվանաթերթեր» ենթագլխում նշվում է Սկևռայի Ավետարանի անվանաթերթերի կապը Սեբաստիայի Ավետարանի անվանաթերթերի հետ (դրա մասին ժամանակին գրել էր նաև Ս. Տեր-Ներսեսյանը): Սկզբնատառերի կապը ավետարանիչների խորհրդանիշերի հետ արևմտյան ավանդույթ է համարվում (սկսած Սբ. Յիերոնիմոսից), թեև 12-րդ դարից ունենք հայկական հանգավոր բանաստեղծություններ, որոնք կապվում են ավետարանիչների սիմվոլների

[8] Der Nersessian. Miniature Painting... .

[9] Տես Վ. Ղազարյան. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ – XIV դ. սկիզբ), Երևան, 1984 , («Ավետարանիչներ» գլուխը):

հետ: Դեռևս 7-րդ դ. հայկական որմնանկարներում Քրիստոս պատկերվում էր քառակերպ խորհրդանիշերի հետ, ըստ Եզեկիելի տեսիլքի: Մեզ համար դժվար է պահանջել հեղինակից ցույց տալու, թե հայ մանրանկարչության մեջ անվանաթերթի ձևավորման ո՞ր փուլում են Սկևռայի Ավետարանի անվանաթերթերը (մանավանդ էջի բարձրությամբ ձգվող Ի գլխատառը, որ կա նաև Վենետիկի N1635 Ավետարանում, ինչպես նաև 12-րդ դարի մի շարք ոչ կիլիկյան հայկական ձեռագրերում, ինչը հիշեցնում է իռլանդական ազդեցությամբ սկզբնատառերը արևմտյան ձեռագրերի անվանաթերթերում):

Դեռևս Ֆրանսիական պատկերագրության դպրոցի հայրերից մեկը՝ Ս. Տեր-Ներսեսյանի ուսուցիչ Գաբրիել Միլլեն էր նշում, որ հայ մանրանկարչության մեջ, սկսած 989 թ. «Էջմիածնի Ավետարանից», կարևոր տեղ են գրավում լուսանցապատկերները[10]: Մեր հեղինակը «արտակարգ» է համարում Սկևռայի Ավետարանի 27 լուսանցանկարները: Ինչպես Վենետիկի 1893 թ. N1635 Ավետարանում, այնպես էլ այստեղ նման պատկերները սկիզբ են դնում ճոխ և միրտուռզ այն լուսանցապատկերներին, որոնց բազմազանությունը և կենդանությունը ապշեցուցիչ է Թորոս Ռոսլինի և Արքունական դպրոցի ձեռագրերում: Այդ պատկերների հակիրճ սյուժետային բնույթը մենք նախնական պրիմիտիվ տեսքով տեսնում ենք «Էջմիածնի Ավետարանի» տեքստում՝ ստորին և կողմնային լուսանցքներում («Մկրտությունը»՝ աղավնու և Աստծո աջի պատկերով, Հովհաննես Մկրտչի գլուխը, հրեշտակի հայտնությունը Յուղաբեր կանանց և այլն): Իսկ ինչ վերաբերում է տեքստի ներսում սյուժետային պատմողական նկարներին (բժշկության, հրաշքների, առակների և այլ պատկերներ), ապա այդպիսիք չկան ո՛չ Սկևռայի, ո՛չ էլ Վենետիկի 1193 թ. Ավետարաններում: Դրանք ամբողջ բազմազանությամբ հանդես են գալիս Ռոսլինի և Արքունական դպրոցի ձեռագրերում և Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարանի 11-12-րդ դդ. VI. 23 Ավետարանում, որն ուղղակի ազդեցություն ունի «Ութ մանրանկարիչների» Ավետարանի վրա (1280-ական թթ.-1320 թ.):[11]

Անշուշտ հագուստների ծալազարդման, տերևների, ծաղիկների գունավորման և զարդարվեստի զարգացումը չի գնում բյուզանդական ճանապարհով: Այն փոքր-ինչ նման է Արևմուտքի անցած ուղուն, թեև իր նրբությամբ, մշակման եղանակով ավելի հարազատ է բյուզանդական արվեստին: Թեև պրն. Ֆոն էվը ենթադրում է, որ Սկևռայի Ավետարանի զարդերը և ոճը պատկանում են Կոստանդնուպոլսի «ձևագանձարանին» (էջ 71), սակայն նա չի նշում, որ 11-12-րդ դդ. Մեծ Հայքում գոյություն ուներ արդեն բյուզանդամետ մանրանկարչական ուղղություն, և 11-րդ դ. Կարսի Ավետարանի նման ձեռագրերը իրենց լուսանցանկարներով, իսկ 12-րդ դ. մի շարք ձեռագրեր իրենց զարդարվեստով կարող էին սնել հենց Սկևռայի Ավետարանը, որի մանրա-

---

[10] Միլլեն սյուժեների համառոտումը լուսանցքներում կապում է 6-րդ դ. ասորական Ռաբուլայի Ավետարանի հետ (G. Millet. Recherches sur l'Iconographie de l'Evangile aux XIV^e, XV^e et XVI^e siècles, Paris, 1960).

[11] Այդ մասին տես Վ. Ղազարյան. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում ..., էջ 12 և հետո:

նկարչական ձևավորման համակարգը հիմնված էր Մեծ Հայքի որոշակի ոճական ուղղության մի շարք ձեռագրերի վրա: Ըստ էության Գրիգոր Սկևռացին հետևում է կիլիկյան սպեցիֆիկ գրքարվեստին, որի հիմնադիրները 1173 թ. նշանավոր «Նարեկի» ծաղկող և գրիչ Գրիգոր Մլիճեցին և Սեբաստիայի ու Վենետիկի հիշյալ Ավետարանների ծաղկողներն էին: Ո՛չ սկզբնատառերը, ո՛չ տերևազարդերը, ո՛չ ծալազարդումները չեն զարգանում ինչ-որ բյուզանդական կամ արևմտյան ուղղությամբ, այլ՝ սեփական (տես «Տեխնիկան և ոճը. սկզբնատառեր և լուսանցազարդեր» ենթագլուխը):

«Մոտիվների թափառումը - մոտիվների այլափոխումը» ենթագլխում հեղինակը վերստին Կոստանդնուպոլիսն է հռչակում որպես ակունք խորանների, ավետարանիչների, ֆիգուրատիվ էջերի և բուսական լուսանցազարդերի համար (էջ 76): Անշուշտ նման մոտիվներ շատ կան 11-12-րդ դդ. բյուզանդական ձեռագրերում, բայց նրանք ավելի շատ են 10-12-րդ դդ. հայկական ավետարանագրքերում, այդ թվում՝ այնպիսի մոտիվներ, որոնք Բյուզանդիայում չկան (թռչնային խոյակներ խորաններում, որ 11-րդ դ. տեսնում ենք Կարսի Ավետարանում[12], թռչուններ, որսի մոտիվներ (արծվի մագիլներում՝ նապաստակ կամ գառ), որ ցրված են 10-12-րդ դդ. ճարտարապետական զարդաքանդակներում և այլն): Անշուշտ կենդանիների կռիվը, ինչպես ճիշտ նշում է հետազոտողը, գալիս է ոսկերչությունից, փղոսկրից, մետաքսից (կավելացնեինք նաև՝ խճանկարից, դրվագումից, փայտարվեստից, քարարվեստից): Բայց դժվար է վստահ լինել, թե գլխազարդերում արծվի հարձակումը որսի վրա և այլ տիպի նկարներ սիմվոլիկ իմաստ չունեն (էջ 77): Արծվի սիմվոլիկ իմաստներն արդեն բացահայտված են եղել 8-րդ դ. սկզբից (նույնիսկ դրանից էլ առաջ) հայ հոգևորական շրջաններում Դիոնեսիոս Արեոպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկի թարգմանությունից սկսած (արծվի սրատեսությունը, արքայական լինելը, զորացուցիչ կերակուրների սերը և զգաստությունը և այլն)[13], իմաստներ, որոնք ցույց են տալիս հրեշտակային (նրանց նմանողությամբ՝ նաև սրբերի) արժանիքները, այդ թվում՝ հոգիների որսը Ավետարանի միջոցով: Այդ պատճառով 7-րդ դարից (գուցե և 4-րդ, 5-րդ դարերից) որսի տեսարանը սիրված է եղել որմնաքանդակներում (Զվարթնոցի արծիվները հենց խորհրդանշում են զվարթուններին-հրեշտակներին):

Ս. Տեր-Ներսեսյանին հետևելով, պրն. Ֆոն էվը «Նարեկի» գրիչ և ծաղկող Գրիգոր Մլիճեցուն չի նույնացնում Սկևռայի Ավետարանի գրիչ և ծաղկող Գրիգորի հետ: Մեր կարծիքով, Սկևռայի Ավետարանի տարբեր հատվածները (լուսանցապատկերները և ավետարանիչները, նաև խորանները՝ զարդապատկերների հետ) տարբեր ձեռք են ցույց տալիս: Բայց մեր դիտողությունը կարիք ունի հետագա ճշտման: Բայց միանգամայն ճիշտ է, որ 12-րդ դ. վերջին տասնամյակներում Բալթիմորի N538, Վենետիկի N1635 և Սկևռայի Ավետարաններում ձևավորվում է կիլիկյան Ավետարանների կազմության հիմնական

---

[12] Լ. Ռ. Ազարյան. Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դդ., Երևան, 1964, էջ 67:

[13] «The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite». Ed. by R. W. Thomson. Louvain, 1987, p. 51 (H. H. XV. 8).

տիպը: Այդ Ավետարանները միմյանց հետ ավելի են կապված թե՛ գեղարվեստական, թե՛ կառուցվածքային առումով, քան որևէ բյուզանդական ձեռագրախմբի հետ: Այնպես որ Գրիգոր Սկևռացին կարիք չուներ Հռոմկլայում նկարելու տեխնիկա սովորելու հույն որմնանկարչից (էջ 81): Իսկ որ կիլիկյան վարպետները տիրապետում էին բարձր տեխնիկայի, ցույց է տալիս նրանց մանրանկարների առավել լավ պահպանվածությունը բյուզանդական նույնիսկ ավելի ուշ օրինակների համեմատությամբ, որ զարմացնում էր նույնիսկ 13-14-րդ դդ. բյուզանդական մանրանկարչության լավագույն գիտակ Հուգո Բուխթալին, երբ նա աշխատում էր Մատենադարանում:

Մեզ համար արդեն սովորական է դարձել, որ հայ միջնադարյան արվեստի մասին օտարալեզու աշխատություններում անտեսվում են հայերեն և ռուսերեն գրված արվեստագիտական աշխատությունները: Խոսքը վերաբերում է ոչ միայն վերջին տարիներին, այլև վերջին հարյուրամյակին (սկսած մեծավաստակ գիտնական Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի երկերից): Եվ դա խանգարում է ճուշարձանը տեսնել հայ մանրանկարչության և գրքարվեստի գեղարվեստական պատմության մեջ իր օրգանական տեղում:

Մեր լրացումները և ճշտումները, իհարկե, չեն նսեմացնում այն մեծ գործը, որ կատարել է պրն. Ֆոն Էվը: Ձեռագիրը ներկայացված է իրեն արժանի մակարդակով, որպես հայ արվեստի, նաև միջնադարյան քրիստոնեական արվեստի 12-րդ դարի ցայտուն գործերից մեկը՝ սկսած մանրամասն նկարագրություններից, վերջացրած պատկերագրական ու գեղարվեստական հաճախ նուրբ վերլուծություններով ու դիտարկումներով:

*ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալը հաճախ գայթակղության քար է դառնում: Ոմանք անցյալը դիտում են սոսկ որպես հետամնացության ու ժամանակավրեպության մի արտահայտություն, ուրիշներն այն դարձնում են տեսիլք՝ ամբողջ մի կյանք վատնելով անցյալի խնկարկմամբ ու թմբկահարմամբ:

Սակայն որքան էլ որ անցյալը հարաբերվի այս երկու ըմբռնումների հետ, ուրիշ մի մոտեցման է կարոտ, մոտեցում, որի անկյունաքարը իրատեսությունն է: Իրատեսությունը ձևավորվում է փաստերի անաչառ վերլուծմամբ ու համադրմամբ: Եվ եթե մեր ժողովրդի պատմության ոչ բոլոր ժամանակահատվածների վերաբերյալ մենք կարող ենք լիովին ամբողջական պատկերացում կազմել (այն պարզ պատճառով, որ հիշատակություններ չկան և կամ քիչ են), ապա ոչ վաղ անցյալի դեպքում վիճակը միանգամայն այլ է: 19-րդ դարի վերջից սկսյալ պատմության լուսաբանման համար մեզ հստակ ու մեկին պատկերացումներ են տալիս նաև «Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության» մատենաշարի հատորները, որոնցից երկուսը՝ հինգերորդը և վեցերորդը, հրատարակվեցին բոլորովին վերջերս:







Այս երկու հատորները լույս են ընծայվել բազմավաստակ արխիվագետ Սանդրո Բեհբուդյանի աշխատասիրությամբ, Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի նախաձեռնությամբ և մեկենասությամբ ամերիկահայ ազնվաբարո բարերար Սուրեն Փափազյանի՝ ի հիշատակ վերջինիս սիրեցյալ և վաղամեռիկ որդու՝ Արամ Փափազյանի:

Ինչպես և հուշում է մատենաշարի անվանումը, ջանադիր արխիվագետը լույս ընծայված հատորներում զետեղել է Հայ եկեղեցու պատմության նորագույն շրջանի բազմակողմանի ու բազմաբնույթ գործունեությունն արտացոլող պատմական վավերաթղթեր:

Հայ եկեղեցու պատմությանը վերաբերող վավերագրերի մատենաշարի հինգերորդ հատորը նվիրված է Հայ եկեղեցու 1918-20 թթ. ծավալած գործունեությանը: Իրապես բարդ ու բազմակնճիռ խնդիրներով լեցուն մի ժամանակաշրջան, երբ Առաջին աշխարհամարտի բոցերից հազիվ փոքր-ինչ հանգիստ

առած աշխարհը պետք է բռնկվեր արդեն Ռուսաստանում ծայր առած և աստիճանաբար ծավալվող սոցիալիստական հեղափոխության մրրիկով:

Քաղաքական իրադրության այսպիսի քոհուբոհի մեջ բացառիկ ու ճակատագրական իրավիճակ էր ստեղծվել նաև Հայաստանում, որտեղ սոցիալապես անապահով ու արևմտահայության արհավիրքների սոսկումով ապրող հայ բնակչության մեծ մասը, ի հավելումն ամենայնի, ստիպված էր նաև ապաստան տրամադրելու թուրքական բռնություններից մազապուրծ եղած սովալլուկ ու խեղճ իրենց ազգակիցներին:

Այս ամենին եթե ավելացնենք նաև այն, որ թուրքական զորքերը, օգտվելով պատմաքաղաքական խառնակ իրավիճակից, ներխուժել էին նաև Արևելյան Հայաստան և հետևողականորեն փորձում էին նվաճել ռուսական ազդեցության ներքո գտնվող այս հատվածը, կունենանք 1918-20 թթ. Արևելյան Հայաստանում առկա քաղաքական իրավիճակի, տիրող տրամադրությունների ու կացության մոտավոր համապատկերը, որի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նկատի առնել այդ տարիներին Հայ Եկեղեցու ծավալած գործունեությունը, որը չափազանց վառ գույներով է արտացոլված խնդրո առարկա հատորում: Ինչպես դիպուկ կերպով նկատել է Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը հատորի «Երկու խոսք» բաժնում. *«Այս հատորին մէջ փաստաթուղթեր կան՝ որոնք իրենց բովանդակութեամբ յարգանք կը պարտադրեն մեզի, հանդէպ անոնց՝ որոնք հեղինակներն են այդ փաստաթուղթերուն, և կամ գնահատենք անոնց հոգին, սիրտը, հայրենասիրութիւնը, մշակոյթի հանդէպ պաշտամունքը, հայրենիքի հանդէպ խոր հաւատքը, որոնք բոլորը կը վերբերուին այդ երբեմն մացաղաթանման էջերէն...»*[1]:

Ընդհանուր խոսքերը մասնավորեցնելով՝ պետք է նշել, որ իրապես հատորում տեղ գտած փաստաթղթերն ամենատարբեր ու բազմաբնույթ հարցերի առնչվելու հետ միաժամանակ արտացոլում են Հայոց Եկեղեցու այդ շրջանի գործունեության երեք հիմնական ոլորտները.

1. Փաստաթղթեր, որոնք ներկայացնում են Հայոց Եկեղեցու հարաբերությունները արտաքին աշխարհի հետ:

2. Վավերագրեր, որոնք վերաբերում են հայ հոգևորականության գործուն մասնակցությանը ներքին կյանքի զանազան միջոցառումներին ու ձեռնարկներին:

3. Վավերագրեր, որոնք առնչվում են եկեղեցու և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների կանոնակարգմանը:

Անդրադառնանք հատորում ընդգրկված նյութերի վերը նշված ուղղություններից յուրաքանչյուրին:

Ակնհայտ և պատմականորեն փաստված ճշմարտություն է, որ Հայոց Եկեղեցին հիմնադրման օրվանից սատարել է հայրենի պետությանը և պետականության չգոյության պայմաններում հաչս արտաքին աշխարհի ստանձնել հայ ժողովրդի ներկայացուցչությունը:

---

[1] Սանդրո Բեհբուդյան, «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», Գիրք Ե, Երևան, 1999, էջ 3:

Նույն կերպ, 1918-20 թթ., երբ Հայաստանի նորաստեղծ պետությունը տակավին ճանաչում և հայ ժողովրդի շահերը պաշտպանող ներկայացուցչական մի մարմնի հեղինակություն չուներ, Հայոց Եկեղեցին, հանձինս Ամենայն Հայոց Հայրապետի և հայ բարձրաստիճան հոգևորականության, ինքն էր ստանձնել հայ ժողովրդի մտահոգությունները ու ցավերը, տրամադրությունները ու ընդվզումները արտաքին աշխարհին փոխանցող պատգամախոսի պարտականությունները:

Այս առումով հատկանշական է Գևորգ Ե Կաթողիկոսի 1918 թ. Պարսից Շահին ուղղած նամակը, որում Ամենայն Հայոց Հայրապետը արտահայտում է իր մտահոգությունը՝ կապված Ատրպատականի երեսուն գյուղերի հայ ազգաբնակչության գոյավիճակի հետ, ովքեր բռնությունների էին ենթարկվել պարսից խաների կողմից: Նամակի վերջում Գևորգ Կաթողիկոսը հայց է ներկայացնում Պարսից Շահին. *«...սանձել խաների անհանդուրժելի ապերասանութիւնը, զսպել նոցա, պատժել և հրամայել արդարադատութիւն, վերադարձնելով կողոպտուած ինչքը հայերին, որոնք միշտ վայելել են Ձերդ Մեծութեան բոլոր շնորհները»*[2]:

Հատկանշական է, որ Գևորգ Ե Կաթողիկոսի դիմումը անարձագանք չի մնում, և Պարսկաստանի արտաքին գործոց նախարարը հանում Շահի հավաստիացնում է, որ հայերի ապահովության համար անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն:

Մեկ ուրիշ վավերագիր, որը թեև Հայոց Եկեղեցու արտաքին հարաբերությունների ոլորտին չի վերաբերում, բայց և այնպես լիարժեքորեն արտահայտում է ժամանակաշրջանի իշխող տրամադրություններում Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ունեցած ներկայացուցչական բացառիկ լիազորությունները ու գործառույթները:

1918 թ. մարտի 23-ով թվագրված հետևյալ վավերագրում «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը դիմում է Գևորգ Ե Կաթողիկոսին՝ Հայոց դատի պաշտպանությունը ստանձնելու և Ամենայն Հայոց Հայրապետության հեղինակությունը գործադրելու խնդրանքով (Տե՛ս էջ 18-20):

Այն հանգամանքը, որ «Մշակ»-ի խմբագրությունը և նրան հարող գաղափարական որոշ հոսանքներ զգալիորեն թոթափել էին նախորդող տասնամյակներին Հայոց Եկեղեցու նկատմամբ ցուցաբերած կծու և անառողջ քննադատությամբ լեցուն իրենց հայացքները և հանգել այն մտքին, որ արտաքին աշխարհում Եկեղեցին վայելում է բարձր վարկ ու հեղինակություն, արդեն իսկ հավաստումն է այն իրականության, որ միջազգային ասպարեզում Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը իսկապես լայն ճանաչում ուներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության բացառիկ հեղինակությունն արտաքին աշխարհում նույնքան կարևոր ու անփոխարինելի կշիռ էր հաղորդում նրան Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Հատորի հեղինակի գործը կարևորվում է հատկապես այն իրողությամբ, որ նա ընթերցողին վավերագրերի միջոցով ներկայացրել է Հայաս-

---

[2] Նույն տեղում, էջ 15:

տանի. համար այդքան դժվարին ու ծանր պայմաններում, ներքին կյանքում Հայոց եկեղեցու ծավալած գործունեությունը:

Այս առումով վավերագրերի մի ստվար մաս վերաբերում է բանակին, նրանում տեղ գտած երևույթների գնահատմանը, և առավելապես Կաթողիկոսության՝ նորաստեղծ հանրապետության պաշտպանությունն ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ գործադրած ջանքերին: Փաստաթղթերից մեկն, օրինակ, բանակում զինվորական քահանաների գործունեության կանոնակարգմանը նվիրված ծրագիր է: Հատկանշական է, որ կանոնադրության մեջ քահանաներին շնորհվել է ոչ միայն հոգևոր-բարոյական գործունեության արտոնություն, այլև ազգային-հայրենասիրական ոգին բարձր պահելու նպատակով իրահանգվել է «դասախօսել նաև ազգային եկեղեցական պատմութիւնից՝ վառ պահելով նրանց մէջ պարտքի գիտակցութիւնը և սէր դէպի ազգը և ազգային սրբութիւնները»[3]:

Մեկ ուրիշ վավերագրում, կրկին թելադրված ազգային ինքնապաշտպանության ու ներքին քաղաքության շահերից Գարեգին եպս. Հովսեփյանն իր մտահոգություններն է արտահայտում բանակի վերաբերյալ: Դատապարտելով բանակից դասալքության տարածված երևույթը և «ներքին թշնամի» որակելով այն, նա եզրակացնում է.«դասալքութիւնը, իրօք, դաւաճանութիւն է հայրենիքի դէմ, որ անգիտակցաբար ձեռք է տալիս արտաքին թշնամուն խորտակելու մեր թանկագին ազատութիւնը»[4]:

Բանակն ամբողջովին Ամենայն Հայոց Կաթողիկոսության ուշադրության կենտրոնում էր, և այն հանգամանքը, որ հայկական զորամասերն իրենց դրսևորած մարտական ոգով ու խիզախությամբ անհնարին թվացող ճակատամարտեր էին շահում, անշուշտ եկեղեցու ծավալած ջանադիր գործունեության արդյունքն էր նաև: Ասենք նաև, որ Մայր Աթոռի կողմից առաջարկվել ու Գևորգ Ե Կաթողիկոսից հաստատվել էր, որ պետք է «ըստ ամենայնի աջակցել կառավարութեանը այս խնդրում»[5]:

Թե՛ ներքին և թե՛ արտաքին հարաբերություններում Ամենայն Հայոց Կաթողիկոսության ունեցած մեծ դերն ու կշիռը բնական է, որ յուրահատուկ անհրաժեշտություն էին ստեղծելու կանոնակարգման ենթարկելու և կամ հարաբերության որոշակի ձև ու բովանդակություն հաղորդելու Հայաստանի Հանրապետության հետ Հայոց եկեղեցու փոխհարաբերություններին:

Եթե եվրոպական երկրներում պետության ու եկեղեցու հարաբերություններում տարբեր ժամանակահատվածներում նկատելի են եղել որոշ ձևախեղումներ ու արտառոց դրսևորումներ, ապա ի պատիվ Հայոց եկեղեցու պետք է նշել, որ նման երևույթներ տեղ չեն գտել մեր եկեղեցու պատմության ընթացքում: Եվ բազմավաստակ արխիվագետի մոտեցումը չափազանց գնահատելի է այն առումով, որ հատորում ներկայացրել է մի շարք վավերագրեր, որոնք մեկ անգամ ևս հավաստում են այս իրողությունը:

---

[3] Նույն տեղում, էջ 73:

[4] Նույն տեղում, էջ 513:

[5] Նույն տեղում, էջ 504:

Դրանցից մեկը, օրինակ, պարունակում է Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցու և Հայաստանի նորաստեղծ Հանրապետության միջև կնքվելիք դաշնագրի նախագիծը, որը սակայն կյանքի չկոչվեց Հայաստանի խորհրդայնացման պատճառով:

Սակայն ներկա պայմաններում կարծում ենք որևէ դժվարություն չկա նախագծում առկա դրույթները կյանքի կոչելու:

Փոխանակ մտացածին, օտար, մեր արմատներից ու ազգային շահերից չբխող սնամեջ տեսությունների ու հայացքների, պրն. Սանդրո Բեհբուդյանը ընթերցողի առջև է դրել մի փաստաթուղթ, որում մի շարք արժեքավոր գաղափարներ կան հատկապես այսօր կիրառելու համար:

Վերը նշված փաստաթղթում, ի շարս մի շարք կետերի, գրված է նաև. *«Հայաստանեայց Առաքելական Մայր եկեղեցին սրբագործում է Միացեալ և Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը և օրհնում նրա օրինական ու Վեհապետական իշխանութիւնը, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը երաշխաւորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախամեծար ու գերիշխան իրաւունքները ազգային-եկեղեցական և կրօնաբարոյական խնդիրներում»*[6]:

Սա միանգամայն փոխշահավետ, ազգօգուտ ու հասարակական կյանքի ոլորտներն ըստ պատկանելվույն սահմանազծելու առողջ մոտեցում է:

Բացի հատորում առկա այն փաստաթղթերից, որոնք փորձեցինք խմբավորել երեք ուղղությունների մեջ, կան նաև արժեքավոր ուրիշ հարուստ նյութեր, որոնցից արժե անդրադառնալ հատկապես Ապրիլի 24-ին, որպես հայոց Մեծ եղեռնի խորհրդանիշի և սգո օր հռչակելու վերաբերյալ եղած վավերագրերին[7]:

Հատկանշական է, որ նրանցում ներկայացված առաջարկներն առաջին փորձերն էին Ապրիլի 24-ը, որպես համազգային սգո օր ճանաչելու ճանապարհին:

Հաջորդ՝ վեցերորդ հատորը նվիրված է Գևորգ Զ Կաթողիկոսին: Հեղինակը վավերագրերի նպատակային ընտրությամբ ընթերցողի առջև է դրել Հայ եկեղեցու դժվարին մի ժամանակաշրջանի պատմությունը, որն ընդգրկում է 1938-ից մինչև 1955 թվականը, այսինքն՝ Խորեն Ա Կաթողիկոս Մուրադբեկյանի ողբերգական վախճանից հետո Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի Կաթողիկոսական Տեղապահ և ապա Ազգընտիր Տեղակալ ու Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելն ու վախճանը: Հատորի վերջում զետեղված են նաև մի քանի վավերագրեր նվիրված Գևորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանի մահվանից հետո կաթողիկոսական նոր ընտրությունների կազմակերպման որոշ դրվագների և ապա Վազգեն եպիսկոպոս Պալճյանի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուն:

Գևորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանին նվիրված այս հատորը այն կազմող հեղինակի հավաստմամբ, «գալիս է պատասխանելու բազմաթիվ

---

[6] Նույն տեղում, էջ 514:

[7] Նույն տեղում, էջ 360-363:

«ինչու»-ների, ցույց տալու, թե ինչպես և ինչ միջոցով, որպիսի զոհողությունների գնով Հայ եկեղեցին կարողացավ հաղթահարել անլուր հալածանքներն ու դժվարությունները և դուրս գալով ճգնաժամից՝ ուղղել կորացած մեջքը, վերստին դուրս գալով լայն ճանապարհ»[8]:

Հայ եկեղեցու դժվարին ճգնաժամից դուրս գալու գործում անուրանալի է Գևորգ Զ կաթողիկոսի դերը: Առավել ճշգրիտ ու որոշակի գնահատած լինելու համար երջանկահիշատակ կաթողիկոսի ծավալած գործունեության բացառիկ նշանակությունը, հարկ է անդրադառնալ այս շրջանում Հայ եկեղեցու և ընդհանրապես Հայաստանի քաղաքական կյանքում առկա ճգնաժամային իրավիճակին, երբ ամենայն ուժգնությամբ աշխատում էր բոլշևիկյան որևէ այլախոհություն չհանդուրժող մեխանիզմը: Դեռևս չէին դադարել 30-ական թվականների սկզբից ծայր առած հալածանքները, որոնց հետևանքով հարյուրավոր հոգևորականներ ու բազմահազար հայեր աքսորվեցին հեռավոր Սիբիր, որտեղ տաժանելի պայմաններում կամ մահացան և կամ էլ սպանվեցին:

Հոգևորականության նկատմամբ կիրառվող հալածանքների բուռն ալիքը ուղեկցվում էր համապատասխան գաղափարական հողի նախապատրաստմամբ: Այս ճանապարհի հարթման նպատակով ոմն Ս. Սուրգունյան 1938 թվականին գրում է. *«Կապիտալիզմի մնացորդների վերացումը մարդկանց գիտակցությունից անհրաժեշտ պահանջ է և պարտականություն խորհրդային երկրի ամեն մի ազնիվ քաղաքացու համար:*

*Այդ վնասաբեր մնացորդների շարքում առաջին տեղերից մեկն են գրավում կրոնական հավատալիքները, որոնք դեռ մնացել են որոշ տարրերի գիտակցության մեջ»*[9]:

Շարունակելով մոլուցքով ու խաբեությամբ լեցուն իր խոսքը, Սուրգունյանն անդրադառնում է հոգևորականության պարտականություններին, որը նա բնութագրում է հետևյալ կերպ. *«Անհավատությունները ամրացնել հավատացյալների գիտակցության մեջ, խաբեությամբ ծեսեր վաճառել նրանց, չեղած «սրբերի» շինծու հրաշքների առասպելներով շշմեցնել հավատացյալներին, ցնորական դրախտի հրապույրով խաբել և դժոխքով սարսափեցնել ու իրենց ազդեցության տակ պահել մարդկանց, պայքարել լուսավորության, գիտության դեմ և ընդհատակյա լրտեսությամբ ու ոճիրներով պայքարել հօգուտ իր դասի շահերի և ի վնաս ժողովրդի»*[10]:

Կոմունիստների հակաեկեղեցական նման կեցվածքի հետևանքով բնական է, որ գաղափարական հողի նախապատրաստմանը պետք է հաջորդեին բուն բռնությունները:

Ժողովածուի մեջ տեղ գտած վավերագրերի մի շարք արտացոլում է այդ հալածանքների իրական պատկերը:

---

[8] «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», Երևան, 1999, գիրք Զ, էջ 5:
[9] Նույն տեղում, էջ 13:
[10] Նույն տեղում, էջ 14:

Եկեղեցուց խլվում են կալվածքներն ու գույքը, փակվում են մի շարք եկեղեցիներ, սկսվում է հոգևորականության նկատմամբ կանխատրամադրված մի քաղաքականություն վարվել:

Ստիճանաբար թեժացող այս հալածանքները մեղմանում են միայն Հայրենական մեծ պատերազմի սկսումով, երբ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի տքնաջան ջանքերով Հայոց Եկեղեցին հաչս կոմունիստական վերնախավի կարողանում է հաստատել Ամենայն Հայոց Կաթողիկոսության հայության համախմբող ու Հայրենիքի պաշտպանության համար ամեն զոհողության գնացող բացառիկ դերը:.

Վավերագրերի մի խումբ ներկայացնում են պատերազմի դաժան տարիներին Ազգընտիր Տեղակալ Գևորգ արքեպս. Չորեքչյանի այն թղթակցությունները, որոնք նվիրված են «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար կատարված հանգամանքներին ու դրանց նպատակային իրացմանը: Հանգամանակությանը անձնապես իր նպաստն է բերում նաև Ազգընտիր Տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսը՝ տանկային շարասյան ստեղծման համար նվիրաբերելով թանկարժեք մի պանակե, ադամանդյա քարերով երկու խաչեր և այլն[11]:

Հատկանշական է, որ Ազգընտիր Տեղակալի ջանքերով հանուր հայության խորհրդային զորքերին ցուցաբերած աջակցությունը չի վրիպում Ստալինի հայացքից, և նա, ով իր ամբողջ կառավարման ընթացքում փոքր-ինչ բարյացակամություն չի ունեցել կրոնի և հոգևորականության նկատմամբ, հարկ է համարում շնորհակալական նամակ հղել Գևորգ արքեպս. Չորեքչյանին:

«Խնդրում եմ հաղորդել հաւատացեալ հայութեան (հայերին), որոնք դրամական միջոցներ են ներմուծել Դաւիթ Սասունցու անուան տանկային շարասեան կառուցման համար, իմ ողջոյնը և կարմիր բանակի շնորհակալութիւնը»[12],- գրված է Ստալինի 1944 հունիսի 7-ի թվակիր նամակում:

Դյուրին չէր խնդրո առարկա ժամանակաշրջանում, երբ պետական շրջանակներում Եկեղեցու նկատմամբ ձևավորված խիստ բացասական միտումներն ամբողջանում էին «փարաջայավորների» դեմ բուռն անհանդուրժողականությամբ, արժանանալ այդ հալածանքը սանձազերծող գաղափարահայրերից թերևս ամենաիրեշավորի՝ Ստալինի բարյացակամ վերաբերմունքին:

Սակայն այս վերաբերմունքը Գևորգ արքեպիսկոպոսը նվաճել էր տքնաջան աշխատանքով ու բացառիկ տոկունությամբ: Հայաստանի ներքին թեմերը հիմնովին կամ գրեթե կազմալուծված էին, չէին գործում թեմական կառույցները, բայց այս ծանր իրավիճակում Ազգընտիր Տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսը սերտ համագործակցություն էր հաստատել Հայ Եկեղեցու արտաքին թեմերի հետ, ինչի շնորհիվ հնարավոր էր դառնում պահպանությունը հայ ժողովրդի հոգևոր միության:

Ժողովածուում ընդգրկված են Մայր Աթոռի և արտաքին թեմերի հարաբերությունը արտացոլող մի շարք վավերագրեր:

---

[11] Նույն տեղում, էջ 221-222:

[12] Նույն տեղում, էջ 222:

Դրանցից մեկում Գևորգ Զ կաթողիկոսը 1948 թվականին, դիմելով Տիրան եպս. Ներսոյանին, գրում է. «Ս. Էջմիածինը գլխաւորում է Հայ եկեղեցին. ինքնին հասկանալի է ուրեմն, որ էջմիածնի զօրացումը նշանակում է Հայ եկեղեցու զօրացումը: *Հայ եկեղեցու միասնութիւնը և ազգահաւաքը էջմիածնի զօրացման նպաստող հանգամանքներ են.* (ընդգծումը մերն է - հ.) սակայն նորա իրական զօրացման և անկախացման հիմքն է՛ զարգացած և հոգով եկեղեցուն ու ազգին նուիրուած հոգևորականութիւնը և նորա տնտեսական ապահովութիւնը»[13]:

Հարաբերությունների այս ծիրի մեջ Գևորգ Չորեքչյանը ամենասերտ հաղորդակցությունների մեջ է մտնում հատկապես Հյուսիսային Ամերիկայի, Հունաստանի, Բուլղարիայի, Պարսկաստանի Հայոց թեմերի հետ, որոնց առաջնորդների և թեմական կառույցների պատասխանատուների կողմից համապատասխան տեղեկություններ է ստանում թեմերի ներքին կյանքի մասին՝ միաժամանակ բարոյական ու նյութական օժանդակություն ստանալով Մայր Աթոռի ծով կարիքների բավարարման համար:

Ուշագրավ է, որ արտաքին թեմերի հետ հարաբերությունը խիստ կարևորվում էր հատկապես Խորեն Ա Կաթողիկոսի վախճանումից հետո, երբ կաթողիկոսական նոր ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ էր ամբողջ Սփյուռքից ի մի բերել ողջ հայությունը ներկայացնող պատվիրակներին: Պետք է նշել, որ թե՛ ենթակայական և թե՛ առարկայական պատճառներով 1938-1945 թվականների ընթացքում հնարավոր չեղավ կաթողիկոսական ընտրություններ անցկացնել :

Այն սոսկալի ու մղձավանջային իրավիճակը, որ ձևավորվել էր բոլշևիկյան ժամլիչի ազդեցության տակ, մի շարք սփյուռքահայ հոգևոր և ազգային գործիչների մեջ կասկածամտություն էին առաջացրել՝ Հայաստանում հնարավոր բռնությունների ենթարկվելու համար, և երկրորդը, որ անհնարին էր դարձնում Ազգային Եկեղեցական ժողովի գումարումը, Երկրորդ աշխարհամարտի սկսվելն էր: Ժողովածուում ամփոփված է կաթողիկոսական նոր ընտրության կազմակերպման հետ առնչվող վավերագրերի մի ստվար շարք, որում արտացոլվում են այն բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, որոնք արգելակում էին Ազգային Եկեղեցական ժողովի գումարմանն ու նոր Կաթողիկոսի ընտրության կայացմանը:

1940 հունիս 9 թվակիր մի վավերագրում ամփոփված է Գևորգ արքեպս. Չորեքչյանի հաղորդումը Գերագույն Հոգևոր Խորհրդին, որում Գևորգ արքեպիսկոպոսը ծանուցում է, թե Գերագույն Խորհրդի նախագահ Մաղաք Պապյանի հավաստմամբ «(կաթողիկոսական) ընտրութիւնը անշուշտ տեղի պիտի ունենայ, սակայն եթէ այժմ լինի, չեն կարող թոյլատրել մուտքը արտասահմանի պատգամաւորների՝ նկատի առնելով ներկայ քաղաքական կացութիւնը»[14]:

---

[13] Նույն տեղում, էջ 452:

[14] Նույն տեղում, էջ 63-64:

Մեկ ուրիշ վավերագրում, որը պարունակում է 1941 թվականի ապրիլի 10-13-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովի նիստերի արձանագրությունները, հաստատվում է, որ «Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը յետաձգուած է»[15]: Ապա նշվում են նաև պատճառները, որոնց շարքում ամենահիմնականը արտասահմանի պատգամավորների ժողովին մասնակցել չկարողանալն էր:

Ժողովում որոշվում է նաև, որ մինչև կաթողիկոսական նոր ընտրությունների կատարումը, Հայ եկեղեցու ժամանակավոր կառավարումը իրականացնելու համար ընտրել Գևորգ արքեպս. Չորեքչյանին, ով այդուհետ կրելու էր Ազգընտիր Տեղակալ տիտղոսը:

Չորս տարի անց միայն, 1945 թվականի հունիսի 16-22-ին, հնարավոր եղավ գումարել այնքան սպասված Ազգային եկեղեցական ժողովը:

Վավերագրերից մեկում, որը համառոտ հաղորդում է նշված ժողովի մասին, վկայվում է, որ «գաղտնի քուէարկութեամբ միաձայն Ծայրագոյն Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչեանը: Ընտրութիւնից յետոյ եկեղեցական ժողովի ամբողջ կազմը երգեց «Էջ Միածինն ի Հօրէ»:

1945 թվականին գումարված ժողովի կարևորությունը շեշտվում է նաև այն հանգամանքի շնորհիվ, որ այս ժողովի ընթացքում ընդունվեց մի կանոնադրություն, որը ցարդ ուղենիշ է կաթողիկոսական ընտրությունների կազմակերպման համար:

Ներկայացված այս հարցերով հարկավ չի սահմանափակվում Սանդրո Բեհբուդյանի կազմած վավերագրերի մատենաշարի հինգերորդ և վեցերորդ հատորների ունեցած կարևորությունը, ուստի և ընդգրկված ժամանակահատվածներում Հայոց եկեղեցու պատմությունը ն ծավալած գործունեությունը առավել հանգամանալից կերպով ներկայացնելու համար խիստ հանձնարարելի է այդ հատորներում զետեղված սկզբնաղբյուրային նյութերի հիման վրա նոր ուսումնասիրություններ կատարելը:

Վերջում ավելացնենք, որ այս առումով կազմող հեղինակի կողմից իսկ ստեղծվել են անհրաժեշտ դյուրություններ, շնորհիվ հատորների վերջում ամփոփված նյութերի և փաստաթղթերի, օգտագործված ֆոնդերի և անձնանունների ցանկերի:

[15] Նույն տեղում, էջ 108:

***ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ***
***Պատմական գիտությունների թեկնածու***

# ՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

1991 թվականին Իսրայելում, «Կավկասիոնի» հրատարակչությունում, լույս տեսավ «Կովկասում գտնվող հրեաների պատմություն» երկհատորյակը[1]: Այս աշխատության հեղինակը՝ պրոֆեսոր Իցհակ Դավիդը, չի թաքցնում, որ այս աշխատության նկատմամբ բացառիկ հետաքրքրություն է ցուցաբերել Իսրայելի կառավարությունը և հատկապես այն ժամանակվա վարչապետ Իցհակ Շամիրը, որը հեղինակին ցույց է տվել «լիարժեք և հասարակական-բարոյական օգնություն»: Կարդալով Կովկասի հրեաների պատմությանը նվիրված այս երկու ստվարածավալ հատորները՝ գնահատում ես հեղինակի կատարած զգալի աշխատանքը:

Ինչպես արդեն վերը նշվեց, այս աշխատությունը նվիրված է Կովկասյան հրեաների կյանքին, տեղաբնակների հետ նրանց հարաբերություններին, ինչպես նաև մշակույթին, կենցաղին և ավանդույթներին: Այս ամենի հետ հրեա պատմաբանը չի մոռանում հիշատակել նաև Կովկասի բնիկ ազգերի կողմից հրեաների նկատմամբ գործադրված ճնշումները: Սակայն երբ հրեաներին ճնշողների թվում հեղինակը հիշատակում է նաև հայերին և հատկապես Հայոց եկեղեցուն, որոնք իրենք օտար բռնակալների կողմից գտնվում էին չափազանց ճնշված և կեղեքված պայմաններում, կասկած է առաջանում հեղինակի անկեղծության և գիտական անաչառության հանդեպ: Առաջին հատորի 278-րդ էջում հեղինակը, գրելով 19-րդ դարի սկզբի դեպքերի մասին, նշում է. «Պետք է ընդգծել, որ Հարավային Դաղստանի և Ադրբեջանի շատ գյուղերում (ինչպես Աոջո, Նուխի, Վարդաշեն) ազգաբնակչությունը խառն էր. այստեղ ապրում էին թաթարներ, հայեր, հրեաներ: Հայերը, ինչպես հրեաները (Նուխիում և Գուսալիում - Ս. Կ.), տանջվում էին թաթար-մահմեդականների կեղեքումներից: Բացի դրանից՝ հայ-հրեական հարաբերությունները շատ լարված էին: Հաճախ էին տեղի ունենում կրոնական բնույթի արյունալի բախումներ, որոնք հրեաների դեմ գրգռում էր տեղի հայ հոգևորականությունը»:

Այս նույն առաջին հատորում հեղինակը շարունակում է ոչ տրամաբանորեն պնդել հրեաների նկատմամբ հայերի կողմից դրսևորած անբարեհաճության մասին: Նշելով, որ 1856 թվականին Վարդաշեն գյուղում տեղի ունեցած հրդեհից հետո հայերը ընդունել, կերակրել և պատսպարել են հրեաներին, հեղինակը միաժամանակ պնդում է, որ 1864 թվականի հրեական գյուղի հրդեհը տեղի էր ունեցել «Հարևան բնակչության կողմից տեղի հայերի դրդմամբ»:

Ցավալի է, որ այս աշխատանքը գրելիս հեղինակը չի շեշտել հրեաներին և հայերին վիճակված ծանր ճակատագրի ընդհանրությունը:

---

[1] Ицхак Давид, "История евреев на Кавказе", "Кавказский", Тель-Авив, 1991, в 2-х томах.

Հիմնվելով Փարիզի Ասիական ընկերության անդամ հրեա Գ. Չեռնիի «Թերեքի մարզի լեռնային հրեաների մասին 17-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը համառոտ պատմական տեղեկություններ» մենագրության վրա՝ նա այստեղից և վկայաբերում է առանձին հատվածներ, ուր «մատնանշվում են» հայերի կողմից հրեաների նկատմամբ գործադրված ճնշման դեպքեր:

«Առաջներում Ախալցխայի հրեաներն ապրում էին Մարդա գյուղից ավելի հյուսիս, որտեղ կանգնած էր հինավուրց մի սինագոգա, հետագայում քանդված հայերի կողմից» (էջ 84): Ծանրակշիռ գիտնականն այսպիսի անհեթեթություն չէր գրի, քանզի 17-19-րդ դարերում Ախալցխայի կառավարիչները ոչ թե հայերն էին, այլ Ախալցխայի փաշան, իսկ հետո այս տարածքը (կամ Փաշալիկը) մտավ ռուսական կայսրության Կովկասի փոխարքայության կազմի մեջ, իսկ ինչպես հայտնի է, կայսերական հողերը, ինչպես նաև այդ հողերի վրա գտնված շինությունները տնօրինում էր ոչ թե հայ գյուղացին, այլ պետական գույքի նախարարությունը և Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարիչը, ուստի բոլոր դժգոհությունները պետք է հասցեագրել նրանց:

Երկրորդ հատորի 109-րդ էջում Ի. Դավիդը նշում է այդ նույն Գ. Չեռնիի 1870 թ. Կովկաս կատարած ճանապարհորդության մասին, որի ժամանակ նա բերել էր հույն ժողովրդին ուղղված Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Գեորգիի ուղերձը, որում նա հույներին նախատում էր այն կասկածանքի համար, թե իբրև հրեաները ծիսակատարության ժամանակ օգտագործում են քրիստոնյա երեխաների արյունը:

Իր ճանապարհորդության ժամանակ Գ. Չեռնին, նպատակ ունենալով հայտնաբերել հին հրեական ձեռագրեր, այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին: 1870 թ. օգոստոսին նա ընդունվեց Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի կողմից: Ընդունելության ժամանակ Գ. Չեռնին Վեհափառին խնդրեց հույն Պատրիարքի նման ուղերձով դիմել իր հոտին: Վեհափառ Հայրապետը այսպիսի խնդրանքից շատ զարմացավ, բայց, այնուամենայնիվ, 1870 թ. օգոստոսի 16-ով թվագրված կոնդակում, անդրադառնալով այս հարցերին (թ. 272), զարմանքով նշում էր նման տարօրինակ խնդրանքի մասին (տե՛ս ՀՀ Պետական Պատմական Կենտրոնական արխիվ, ց. 57, ց. 2, գ. 16, թ. 79-80). սակայն, Վեհը հրաժարվում էր դիմել իր հոտին՝ պատճառաբանելով, որ այդպիսի առաջարկը կարող է ճիշտ չընդունվել և ընկալվել:

Ապա Ի. Դավիդը, հիմնվելով Գ. Չեռնիի գրածների վրա, ուր նշվում է, որ Երևանի նահանգում տասնհինգ պարսիկների ձեռքով իր երկու տղաների հետ միասին մորթվել էր նաև ունևոր մի հրեա վաճառական, գրում է. «Անկասկած այստեղ ասված է Հայաստանի պարսիկների մասին: Սակայն ոչ մի կասկած չկա, որ Հայաստանի սահմաններում, ինչպես նաև ամբողջ Կովկասում, հակահրեական ելույթների նախաձեռնողները կարող էին լինել և իրենք՝ հայերը» (էջ 110):

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Ռուսաստանի հրեության մի զգալի մասը հասկացավ, որ Ռուսաստանին սպասում են անասելի ցնցումներ: Ռուսական բանակի ապաշնորհ հրամանատարությունը, որոնց մեջ շատ էին գերմանացիները, գերմանամետ պալատական շրջանները,

վկայում էր ռուսական բանակի շուտափույթ պարտվելու և դրանից հետո սպասվող համընդհանուր ցնցումների և հրեական ջարդերի մասին: Հենց այդ պատճառով հրեաները, դուրս գալով հուդայականությունից, սկսեցին ընդունել ռուսական ուղղափառությունը, ինչպես նաև Հայոց եկեղեցու դավանանքը: Պատմության այս էջի մասին, կարելի է ասել, շատ քիչ է հայտնի: Հրեաները դիմում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ռուսաստանի տարբեր ծայրամասերից, ինչպես նաև Անդրկովկասից: 1917 թ. Մայր Աթոռը թույլատրեց Հայոց եկեղեցու ծեսով մկրտել Թիֆլիսի բնակիչ Այզեկ Գուրիսին, Վլադիկավկազի բնակիչ Մոշե Գիրշոնին և Լեոնտի Մարգուլիսին, Խարկովի բնակչուհի Ելկե Մերսոնին և Շուշիի բնակչուհի Մարիա Պարադիչին:

1915 թ. Խարկովի բնակչուհի Ռիվկա Գուրևիչը Մայր Աթոռի ուղղված իր նամակում գրում էր, որ ինքը «սովորել է Հայոց եկեղեցու պատմությունը», և խնդրում է «թույլատրել իրեն՝ ընդունել Մկրտություն հայ-լուսավորչական ծեսով»: Բացի Ռ. Գուրևիչից, 1916 թ. Հայոց եկեղեցում մկրտվել էր Վաղարշապատի բնակչուհի Պիրել Ջեյդմանը:[2]

Սակայն 1916 թվականին Հայոց եկեղեցում մկրտվելու ցանկություն ունեցող հրեաների թիվը միանգամից մեծացավ: Հենց այդ պատճառով Նոր Նախիջևանի առաջնորդության փոխանորդ Գևորգ վարդապետ Չորեքչյանը 1914 թվականի սեպտեմբերի 15-ի թ. 208 հայտարարությամբ դիմեց Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին, ուր նշում էր, որ հրեությունից Հայոց եկեղեցուն դարձողների հարցը քննելու համար Նոր Նախիջևանում գումարվել է քահանայական ժողով, ուր մշակվել է մի ծրագիր՝ «ըստ այնմ առաջնորդվելու համար» Նոր Նախիջևանում: Այնուհետև Գևորգ վարդապետը գրում էր. «Պարտք եմ համարում հայտնել և այն, որ քահանայական ժողովը ծրագիր կազմելիս ունեցել է այն համոզմունքը, թե հրեադավանների մուտքը Հայ եկեղեցու ծոցը հայ ընտանիքի համար միայն կազմալուծող նշանակություն կարող է ունենալ, քանի որ այդպիսի դավանափոխությունները, ինչպես փորձը ցույց է տալիս, գլխավորապես կատարվում են ամուսնական հաշիվներով, որով կազմվում են ընտանիքներ, որոնց դաստիարակող սյունը՝ ընտանիքի մայրը, ո՛չ ծանոթ է ազգային սովորություններին և ո՛չ էլ գիտակ մայրենի լեզվին և ուրեմն անընդունակ հայ ընտանիք կազմելու, որ եղել է և պիտի լինի ազգային հոգու պահապանը:

...Քահանայական ժողովը՝ եկեղեցու օրենքների և կարգերի միակերպության նախանձախնդրությամբ լցված, ցանկալի է համարում, որ ողջ թեմի համար գոյություն ունենա մի ընդհանուր հրահանգ, ուստի խոնարհաբար կխնդրեի ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹՅԱՆԴ, եթե հարմար համարեք, մշակված ներփակ ծրագիրը բարեհաճեիք ներկայացնել Ս. Էջմիածնի Սրբազան Սինոդին, որ ըստ յուր հայեցողության փոփոխությունների ենթարկելով՝ իբրև ընդհանուր հրահանգ առաջադրեր բոլոր թեմերին ի գործադրություն»[3]:

---

[2] ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 56, ց. 14, գ. 265, թ. 13:

[3] ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 56, ց. 14, գ. 276, թ. 1:

Այս ծրագիրը, որպես «հրաժանգ հրեադավանությունից Հայ եկեղեցու ծոցը անցնողների», հաստատվեց Վեհափառ Հայրապետի կողմից: Դավանափոխվող հրեաները պետք է ծանոթ լինեին Նոր Կտակարանին, Քրիստոնեական ուսմունքին, Ընդհանրական և Հայոց եկեղեցու պատմությանը և ծիսակարգին, Պատարագի խորհրդին, ինչպես նաև պետք է իմանային գոնե մի փոքր գրել և կարդալ հայերեն:

Չնայած այս պահանջներին, 1916 թվականին Հայոց եկեղեցու ծոցն անցան Սոչիի բնակչուհի Օլգա Զեյդմանը, Գուտա Խայկինան՝ Մոսկվայից, Պեսե Ռիսյերը՝ Տոբոլսկից, Դվոյրա Ռուբինը, Դվոյրա Գուլկոն և Խիդոր Այզբերգը՝ Թիֆլիսից, Գուտա Խայկինան՝ Ալեքսանդրապոլից, Մոիսեյ Կուրովերը՝ Բաքվից, և ուրիշներ: 1917 թվականին ևս մի քանի հրեաներ ընդունեցին Հայոց եկեղեցու դավանությունը:

Ինչպես արդեն նշվեց, հայերը փրկում էին հրեաներին տարաբնույթ վտանգներից, և դա դեռ ամբողջը չէր: Հայերը օգնեցին հրեաներին իրենց պատմական հայրենիքի՝ Պաղեստինի ազատագրմանը թուրքական զավթիչներից: 1916 թվականին ֆրանսիական բանակի կազմում ստեղծվեց Հայկական Արևելյան լեգեոնը, որը պետք է կռվեր թուրքերի դեմ Պաղեստինում: Դրա փոխարեն ֆրանսիական կառավարությունը խոստացավ այս լեգեոնի ստեղծողին և, կարելի է ասել նաև կնքահորը՝ Պողոս Նուբար փաշային, Կիլիկիայի անկախությունը: Հայկական լեգեոնն իր մարտական մկրտությունը ստացավ 1918 թվականի սեպտեմբերի 19-ին Պաղեստինի Ռաֆաթ-Արարա կոչվող բարձունքի մոտ, հենց այդ պատճառով ճակատամարտն ստացավ Արարայի անվանումը: Հայերը (երեք գումարտակով) կռվի բռնվեցին թուրքական «Ելդըրըմ» բանակի (հրամանատար՝ գերմանական գեներալ Լիման Ֆոն Սանդերս) զորամասերի հետ: Կռվի ժամանակ, որը շարունակվում էր մի քանի ժամ, լեգեոներները, ճնշելով թշնամու դիմադրությունը, գրավեցին շատ կարևոր բարձունքը՝ դրանով աջակցելով թուրքերի վռնդմանը ծովափնյա Սարոնի դաշտավայրից և Պաղեստինից: Այդ կռիվների ընթացքում հայերը տվեցին 23 սպանված և 76 վիրավոր:

Ինչպես վերը նկատեցինք, պրոֆեսոր Ի. Դավիդի աշխատությունը շատ բովանդակալից է և բացառապես հրեա ընթերցողի համար: Ցավալի է, որ եղբայրության և բարեկամության քարոզի փոխարեն հեղինակն իր ոչ միշտ պատմականորեն ճիշտ այս աշխատությամբ հրեա ժողովրդի մեջ սերմանում է թշնամության և ատելության տրամադրություններ Կովկասի այն ազգերի նկատմամբ, որոնք ժամանակին հրեաներին ապաստան և կացարան են տվել:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի*
*գիտաշխատող*

# «ՅՈՅՍԻ ԱՆՏԵՍ ԹԵՒԵՐՈՎ»

*«Գրքէն լոյս կը ծագի. մենք աչք պէտք է ունենանք առնելու համար այդ լոյսը. մեր տուներում մէջ զայն վերածելու համար ընտանեկան ճրագի»:*

*Գարեգին Ա*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց*



Այդպես մեր «ընտանեկան ճրագին» լույսի մի շող ավելացրեց վերջերս Ստամբուլի «Արաս» հրատարակչության կողմից լույս ընծայված «Յոյսի անտես թևերով» հոգևոր բանաստեղծությունների ժողովածուն, որի հեղինակը հանրածանոթ հոգևորական, արդեն նաև որպես բանաստեղծ հայտնի դարձած, Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն է:

Պոլսի «Մարմարա» օրաթերթի սույն թվականի մարտի 25-ի համարում զետեղված է «Պատրիարքարանի մէջ գրական վայելք եղաւ Ներսէս Արք. Պոզապալեանի նոր գիրքին շնորհահանդէսը» խորագրով ընդարձակ նյութը, որում պատմվում է պոլսահայության՝ Մայր Աթոռի դիվանապետին մատուցած հարգանքի տուրքի մասին: Շնորհանդեսը կայացավ հեղինակի ներկայությամբ, որին մասնակցում էին պոլսահայ անվանի մտավորականներ, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականներ, մասնավորաբար՝ Գերշ. Տ. Շահան արքեպս. Սվաճյանը, Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Հոգեշ. Տ. Արամ ծ. վրդ. Աթեշյանը և այլք:

Շնորհանդեսին ընդարձակ մի ելույթով հանդես եկավ Ռ. Հատտեճյանը, որը բարձր գնահատականի արժանացրեց տեր և տիկին Արետ և Մոնիք Երկանյանների մեկենասությամբ և Պատրիարք Հոր նախաձեռնությամբ տպագրված ժողովածուն:

Հանդիսության ավարտին Գերաշնորհ Հայրը ներկաներին հղեց երախտիքի իր ջերմ խոսքը, քանի որ Պատրիարք Սրբազանի շնորհիվ տեսավ «հավատքի վրա հիմնված իր երազների իրականացումը»:

Հոգևոր բանաստեղծության ժանրը ինքնին յուրօրինակ է: Դարերի վաղեմություն ունենալով հանդերձ՝ այն առժամանակ անջրպետված էր

եկեղեցուց խորթացած մեր հայրենակիցներից: Այժմ հարկ է, որ մեր ժողովուրդը, կրկին վերագտնելով դեպի Մայր եկեղեցի տանող ճանապարհը, նոր ոգով ու նոր մոտեցումով ընկալի բանաստեղծական այս ընտրանին: Գրքի առաջաբանում (հեղ.՝ Աստղիկ Ստամբուլցյան) քննված են ժողովածուում զետեղված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները, վերլուծված հոգևորական բանաստեղծի քնարերգության ակունքներն ու դրանց առանձնահատկությունները:

Ժողովածուն ամփոփում է հեղինակի վերջին տասը տարիների քերթվածներից: Դրանց հենքը քրիստոնեությունն է, իսկ ներշնչանքի աղբյուրը անպարագրելի հավատը և սերը դեպի ամենակալ Տերը, որոնց միահյուսումից էլ ծնվել է վանական-բանաստեղծի անխորտակելի հույսը, որի անտես թևերով. «չարականների, տաղ ու գանձերի երգով ուզում է երկինք բարձրանալ»: Ժողովածուն ընդգրկում է նաև հայրենասիրական, խոհափիլիսոփայական, ինչպես նաև մարդկային հոգեբանությունն արծարծող երկեր:

Դյուրին չի եղել Ներսես Արքազանի կյանքը: Այն մեր ժողովրդի ճակատագրի խտացումն է: Նրա՝ Բեյլանից գաղթած ծնողներն անցել են գաղթի ճանապարհով, սակայն չկորցնելով իրենց հոգու կորովն ու արիությունը՝ որդու մեջ սերմանել են մարդկային վսեմ հատկանիշներ, անմնացորդ նվիրում Երկնային Հոր նկատմամբ, անսահման սեր մայր հողի ու ժողովրդի հանդեպ, բնության հրաշակերտումների խորաքնին ընկալում, բարություն, հույս, որոնց զտվածքն էլ հենց հանդիսանում են Ներսես Վանականի ստեղծագործությունները:

«Խօսք երախտիքի» բանաստեղծությամբ նա, կարծես, ուզում է վարձահատույց լինել ծնողներին, որոնք դեռևս մանկուց իր մեջ սերմանել են աստվածային երկյուղածություն, սեր ճշմարտության հանդեպ, անիծելու փոխարեն օրհնել են սովորեցրել, քենի և ատելության դիմաց ներողամտություն են արմատավորել, մարդկային հարաբերություններում կասկածամտության փոխարեն՝ պարզամտություն, գութ ու կարեկցանք՝ մախանքի տեղակ:

*Ինձ դարձրիր անօթ վերին կոչումնի սպասարկութեան,*
*Վառեցիր իմ մէջ ջահը հաւատի հանդէպ Արարչի և հայրենիքի,*
*Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ, լոյս ու աշխատանք:*
*Քեզ բի՜ւր օրհնութիւն, զոհ եմ Տիրոջից, որ եղել եմ ես*
*Քո իսկ զաւակը և քո միջոցով ծնուել եմ տանջուած,*
*Բայց խաղաղասէր, բայց խաղաղարար իմ ազգի ծոցում:*

Բնական է, որ ընտանեկան այս ջերմ հարկի տակ պիտի ծնվեր այն պայծառ հույսը, որը միշտ եղել է բանաստեղծի կյանքի ուղեկիցը: Այդ է պատճառը, որ ժողովածուն ինքնին լույս հավատ է, անմիջականություն ու հոգեպարար թափանցելիություն:

Հեղինակը նաև իր ժողովրդի հոգսերով ու մտահոգություններով ապրող անհատն է: Ազգային ցավից են ծնվել «Բողոք», «Ռեքվիեմ», «Խօսք ընդ Աստուծոյ» և այլ գործեր:

Պոզապալյան բանաստեղծի սրաթռիչ միտքը թափանցել է մարդկային

հոգեբանության գաղտնարանները, բացահայտել բարուն հասնելու, հոգեպես զուլալվելու, այսրաշխարհային մեղքի կապանքներից ազատվելու գաղտնիքները:

Բանաստեղծն իրեն մեղքերից զերծ չի կարծում և իրեն համարում է «երբեք չարդարացող» ու «մեղաւոր մի ուխտաւոր»: «Մի՛ մերժեմար յիս» բանաստեղծության մեջ նա գրում է, որ այս աշխարհի վայելքներից օգտվելն անգամ մեղք է: Այս գիտակցությամբ է նա որոնում դեպի հավիտենական կյանք և երկնքի արքայություն տանող ճանապարհը: «Արդարութեան ճանապարհը բացւում է մեղքի գիտակցումով»,- հաստատում է նա:- Նիւթական պահանջներով աստուածութեան չես մօտենայ»: Եւ բանաստեղծը տենչում է ջահ դառնալ գիշերվա մեջ և ոչ թե աշխարհիկ կյանքով ապրելով՝ նմանվել ցերեկը զուր վառվող անիմաստ կանթեղի:

Ազգային կյանքի ելևէջումների, պատմության ուսանելի դասերի արձագանքն են «Աւանդ յաւերժական», «Էլ երբեմն», «Յաւերժ երախտաւորին», «Տեսլիք յաւերժական» պոեմները, որոնք ազգասիրական զգացմունքով են համակում ընթերցողին: Եւ այդ զգացումը բխում է բանաստեղծի հոգուց: Հոգևոր ծառայության բերումով նա ապրել է աշխարհի հրաշալի ծագերում, բայց իր համար աշխարհի գեղեցկագույն ոստանը այս սրբավայրն է: Կարոտի մի անմեկնելի կանչ նրան միշտ ձգել է դեպի տուն: Հայրենասիրական այս զգացումներից էլ հյուսվել են «Տեղերի վանքում», «Սուրբ էջմիածին», «Գեղարդավանք», «Ոգով Վարդանանց», «Դարավերջեան յայտնութիւն» և այլ բանաստեղծություններ:

Արտաքուստ պարզ, դյուրընկալելի թվացող բանաստեղծություններն ունեն այլաբանական խոր իմաստ և փիլիսոփայական ենթատեքստ: Հեղինակի համամարդկային գաղափարներն արտահայտված են դիպուկ համեմատությունների, փոխաբերությունների, այլաբանությունների, երբեմն էլ՝ անձնավորումների միջոցով:

Հատկանշական է հեղինակի յուրահատուկ լեզվամտածողությունը: Այն արևմտահայերենի և արևելահայերենի նուրբ միահյուսում է, կուռ համաձուլվածք, որի ատաղձը գրաբարն է: Հեղինակը չի անտեսում նաև բարբառային հարստությունները և պատեհ առիթով, ելնելով ոճական նկատառումներից, գործածում է բարբառային ձևեր (օրինակ՝ դեղ ու դարման, բալասան, աhել-ջահել, վանքի կշտին և այլն), որոնք ասելիքն ավելի սրտամոտ և հարազատ են դարձնում: Ստեղծագործություններին առանձնահատուկ ոճավորում և երաժշտականություն են հաղորդում գրաբարյան բառաձևերը: Անցյալ դերբայի հետաքրքիր դրսևորումներով է կառուցված «Առ յարուցեալն» բանաստեղծությունը: Օրինակ՝ ծաղիկ բացեալ, խաչ զարդարեալ, զորունս խորտակեալ, կեանք բուսեալ, քօղասքօղեալ աղաւնի, զխաւարն պճնեալ, հոտ բուրեալ և այլն: Գրվածքներին յուրահատուկ ոճավորում են հաղորդում նաև գոյականի գրաբարյան հոլովաձևերի կիրառությունները, ինչպես, օրինակ, ողորմածաց, դժոխոց, յուսոյ, Նախնեաց, թախանձանաց, կռոց, տեսլեան, հոգւոց, եղջերուաց, ունկամբ, ոտամբ, ձեռամբ և այլն:

Բառապաշարային ուրույն հետաքրքրություն են ներկայացնում բանաստեղծական արխաիկ բառերը (օր.՝ ոգեղինանալ, ոսկի, ոտամբ, արեան

ճապաղք, խնջոյքի որոջներ, դատակնիք և այլն): Բառային նորակերտումները՝ նորակազմությունները, ինչպիսիք են դրախտազարդել, երկնաքաղաք, շնորհածիր, քօղասքօղել, քաղցրերգել, քարակերտել և այլն, գալիս են հարստացնելու մեր մեսրոպյան բառագանձը:

Սրբազան Յոր բանաստեղծությունների ժողովածուն հարուստ է գեղարվեստական պատկերավորման զանազան միջոցներով՝ դիպուկ համեմատություններով, անձնավորումներով, գեղեցիկ մակդիրներով և պատկերավոր արտահայտություններով: Այսպես՝ լուսէ մսուր, սրովբէ հողեղէն, փթթող ժպիտ, հոգին տիղմին թաթախել, անհաղորդ սրտի խոր գաւիթ, մեռելութեան սառոյց, աչքի կուրացեալ շամանդաղ, խռհուն խաչքար, քարակերտեալ ներշնչանք, թրթիռ խաչ, յաղթութեան դատակնիք, փառքի ցնցոտի, մոմով ծեփել հոգու ժահրը, աղօթքով սրտի պատերը քերել, զգայարանքի բողբոջ, անիմանալի խորհուրդ լուսաճեմ, դարերը հիւսող շաղկապ ամրակուռ, տիեզերքն ամբողջ համադրող բեւեռ, լուսացայտ ասուպ, օազիս չքնաղ հոգւոց ծարաւի, հոգու աղօթք՝ օդում քարացած, ծաղկած պաղատանք, մեղքի ձորձ, ոսկի ուռ, հարսն երկնատուր հայ գրերի, լուսէ անձրեւ, օրհնածիր Աջ, հոգու եւ մարմնի զօտեմարտ և այլն, և այլն: Գեղարվեստական խոսքի պատկերավորման այս և բազում այլ միջոցները հեղինակի բանաստեղծական մտածողության արգասիքն են, որոնք ներքին երաժշտականություն են հաղորդում ստեղծագործություններին: Սրան նպաստում է նաև երբեմն կիրառվող բաղաձայնույթը (ալիտերացիա). ինչպես օրինակ. Աչքեր ծալի, ծով ծիծաղ, դատակնիք յաղթութեան, ցօղեց սէրն իր ու շաղեց, լուսնի լոյսի տակ լոյսի ծարաւով, շողն աստուածային շողակաթում է, խիճեր եւ խութ անտեսելով և այլն:

Լեզվաոճական առանձնահատկություններն ամբողջացնում և արժևորում են Գերաշնորհ Յոր գեղարվեստական խոսքը և հենք տալիս ժողովածուն բնորոշելու իբրև ժամանակակից հոգևոր բանաստեղծության ժանրի լավագույն արտահայտություններից մեկը:

# 1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## «ՀԱՎԱՏՔ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

(բարեկարգման աշխատանքներ Հայաստանի և Արցախի վանքերի և պատմական հուշարձանների շրջակայքում)

Օրերս ավելացավ իր բնույթով յուրօրինակ ու միևնույն ժամանակ հիշարժան մի միջոցառում ևս, որի նախաձեռնողը 1700–ամյակի գրասենյակի վարիչ–քարտուղար Գերաշնորհ Տ. Սեպուհ արքեպս. Աշճյանն էր, իսկ հովանավորները Ամերիկայում ապրող մեր հայրենակիցներն էին՝ տեր և տիկին Գալուստ Սողոյանը, տեր և տիկին Մայոր Չերին Սաչակլյանը, պրն. Նազարեթ Գևոնյանը և տեր և տիկին Հարութ Աղավյանը: Այն կրում էր «Հավատք և ժառանգություն» կարգախոսը և նպատակ ուներ ընդգրկել հատկապես մատաղ սերնդին, որը ժառանգորդն է մեր հավատի, եկեղեցու և մշակույթի...

Թվում էր, թե ծրագիրը պարզ է. դպրոցականների և ուսանողների ուժերով մաքրել ու բարեկարգել Հայաստանի և Արցախի ավելի քան հարյուր վանքերը և բազմաթիվ պատմական հուշարձաններն ու նրանց շրջակայքը: Սակայն միջոցառման կազմակերպիչները՝ 1700–ամյակի գրասենյակը, Մշակույթի, երիտասարդության և սպորտի, Գիտության ու կրթության, ինչպես նաև Բնապահպանության նախարարությունները, Համազգային սկաուտական կազմակերպությունը (ՀԱՍԿ) առավել մեծ պատասխանատվությամբ էին մոտեցել ամիսներ տևած կազմակերպական աշխատանքներին: Նրանց նպատակն էր, որ պատանիներն ու երիտասարդներն աշխատելուց բացի ծանոթանային Հայ եկեղեցու պատմությանը, ծիսակարգին, ավանդություններին, աստվածաշնչյան պատումներին, հոգևոր և հայրենասիրական երգերին:

Այդ նպատակով 1700–ամյակի գրասենյակը տպագրել և միջոցառման մասնակիցներին էր բաժանել հոգևոր և հայրենասիրական երգերի երգարան: Նրանք ստացան նաև 1700–ամյակի խորհրդանշանով շապիկներ: Այս պատանիների ուժերով երկու օրվա ընթացքում՝ մայիսի 1–ին և 2–ին, բարեկարգվեցին Արցախի և Հայաստանի վանքերի և պատմական հուշարձանների շրջակայքը, իսկ այդ աշխատանքներին մասնակցեցին ավելի քան 12 հազար պատանիներ ու երիտասարդներ, ինչպես նաև 500 զինծառայողներ:

Միջոցառումը ինքնատիպ էր նաև մի այլ առանձնահատկությամբ: Դրան մասնակցողները աշխատանքների կազմակերպման համար նախատեսված հիմնադրամին մուծել էին խորհրդանշական մի գումար, և դրանով առավել բարձրացել էր նրանց պատասխանատվությունը: Դաստիարակչական նշանակություն ունեցող այս երևույթը նորույթ էր մեզ համար և, չնայած ոմանց մտավախություններին, արդարացրեց իրեն: Մասնակից պատանիները գոհ էին, որ նման փոքրիկ մուծումներով ներդրում ունեցան իրենց իսկ՝ հայրենանվեր այդ գործին:

Այս ընթացքում կազմակերպվեցին նաև մշակութային միջոցառումներ,

որին մասնակցեցին ոչ միայն մարզերում գործող ինքնագործ խմբեր, այլ նաև այս միջոցառմանը մասնակցող շնորհալիներ: Իսկ ուշ երեկոյան վառվեցին խարույկները, որոնց շուրջը տեղի ունեցան հետաքրքիր զրույցներ, հանդիպումներ, նոր ծանոթություններ:

Ասենք նաև, որ բոլոր վանքերում հոգևոր դասի ներկայացուցիչները կազմակերպեցին կրոնական թեմաներով դասախոսություններ, ներկայացրեցին եկեղեցիների ստեղծման պատմությունն ու դարերի ընթացքում ծավալած գործունեությունը: Աշխատելուց բացի պատանիներն ու երիտասարդները ներկա եղան եկեղեցական տարբեր արարողությունների:

Երբ ավարտվեցին «Հավատք և ժառանգություն» կարգախոսով նախատեսված երկօրյա աշխատանքները և ամփոփվեցին արդյունքները, նախաձեռնության հեղինակ Սրբազան Հայրը՝ Մեսրոպ արքեպս. Աշճյանը, գնահատելով միջոցառման մասնակիցների, նրանց ուսուցիչների, խմբի ղեկավարների, ինչպես նաև աշխատանքների կազմակերպմանը օժանդակած նախարարությունների աշխատանքը, հատկապես նշեց. «Այս պատանիներն ու երիտասարդները ոչ միայն աշխատեցին, այլ նաև եկեղեցուց սիրո, հավատի, միաբանության պատգամ ստացան, որը իրենք էլ, հուսով եմ, տարածելու են ամենուր՝ իրենց բնակավայրում, ընտանիքում, կրթօջախում...

Իսկ հոգիներն իրենց նորոգվելու են և բոլորն էլ ապրելու են նորովի՝ իբրև ճշմարիտ տերն ու ժառանգները մեր հավատի, եկեղեցու, մշակույթի...»:

*ՖԼՈՐԱ ԿԱԲԱՂՅԱՆ*

# ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ

«Հավատք և ժառանգություն» շարժման միջոցառումների մեջ առանձնացավ եզակի մի արարողություն: Զվարթնոցում 10-րդ դարից հետո առաջին անգամ կատարվեց մկրտություն՝ տաճարի կենտրոնում գտնվող մկրտության ավազանում: Իսկ մկրտվող 11 պատանիները Արմավիրի մարզի կրթօջախների 450 կամավորներից էին, որոնք մայիսի 1-2-ը մասնակցեցին Հայաստանի վանքերի և պատմական հուշարձանների շրջակայքի մաքրման աշխատանքներին: Նրանցից 200-ը աշխատեցին Էջմիածնում՝ մաքրելով և բարեկարգելով Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ վանքերի շրջակայքը, Ներսիսյան անտառը և նրա հարևանությամբ գտնվող գերեզմանատունը, ուր ամփոփված են 1915–18 թվականների սովին ու հիվանդությանը զոհ գնացած բազմաթիվ գաղթականներ:

Ոչ միայն Էջմիածնում աշխատող, այլ նաև շարժման մասնակից ավելի քան 12000 պատանիներն ու երիտասարդները միջոցառման ընթացքում աշխատելուց բացի, վերափոխվեցին հոգեպես՝ նորոգելով նաև իրենց հավատը: Իսկ նրանց հոգևոր դաստիարակության մասին նախապես հոգացել էին միջոցառման կազմակերպիչները, որոնց ջանքերով և վանքերում ու եկեղեցիներում գործող հոգևոր դասի ներկայացուցիչների օժանդակությամբ այդ օրերին կազմակերպվեցին կրոնական թեմաներով դասախոսություններ, խոսվեցին քարոզներ: Իսկ շարժման մասնակից երիտասարդները իրենց բաժանված գրականության, ինչպես նաև պատարագներին, ժամերգություններին, հոգեհանգստյան արարողություններին մասնակցելով, առավել մոտիկից ծանոթացան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդներին, ծեսերին, երաժշտությանը:

«Հավատք և ժառանգություն» շարժման մասնակիցները լինելով Հայաստանի բոլոր մարզերում, ականատես դառնալով այն խանդավառությանը, որը համակել էր շարժման մասնակից պատանիներին ու աղջիկներին, իրոք երջանիկ էին: Նրանց ցանած սերմերը պարարտ հողի մեջ էին, և իրենք հույս ունեին, որ, ինչպես աստվածաշնչյան առակում է ասվում, դրանք աճելով հարյուրապատիկ պտուղ կտան: Դրա վկայություններից մեկն էլ այն 11 պատանիների խնդրանքն էր միջոցառման նախաձեռնողներին, որով կամենում էին մկրտվել Զվարթնոցի տաճարում, որտեղ դարեր շարունակ հոգևոր ոչ մի արարողություն չէր կատարվել: Համաձայն մատենագրական որոշ վկայությունների, 7-րդ դարում Ներսես Իշխանցի (Շինող) Կաթողիկոսը, կառուցելով տաճարը, այն Զվարթնոց կոչեց, «յանուն երկնաւոր Զուարթնոցն», և երազեց այն Աստծու տուն դարձնել նաև սերունդների համար, սակայն դարերի ընթացքում տաճարը, ավաղ, ավերվել էր, և անկատար էր մնացել Ներսես Իշխանցու երազը:

Այդ օրը, սակայն, տաճարի ավերումից շատ դարեր անց, այդ երազը ոգեկոչվեց կրկին: Սրբազան հայրը սիրով համաձայնեց Զվարթնոցում կատարել պատանիների մկրտությունը: Եվ ահա, մայիսի 2–ին, աշխատանք-

ների ավարտից հետո, բոլորը հավաքվեցին տաճարում: Սկսվեց մկրտության արարողությունը՝ նախագահությամբ Մեսրոպ արքեպս. Աշճյանի, մասնակցությամբ Զարեհ, Ներսեհ աբեղաների և Մկրտիչ քահանայի: Այդ օրը մկրտվածները իրենց երկօրյա առաքելությունից հետո տուն վերադարձան Աստծուն որդեգրված:

Իսկ «Հավատք և ծառանգություն» շարժման կազմակերպիչները հավատում են, որ այդ պատանիները և նրանց հետ նաև շատերը կդառնան «պարարտ հողում ցանված սերմեր», որոնք անպայման ծլարձակելու են «հարյուրապատիկ պտուղ» տալու:

*ՖԼՈՐԱ ԿԱԲԱԴՅԱՆ*

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Արտերկրի հայկական պատմա-մշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանման խնդիրներին էր նվիրված մայիսի 20-24-ը Երևանում անցկացված գիտաժողովը, որին մասնակցում էին տասնվեց երկրներից ժամանած թվով ութսուն մասնակիցներ: Այն կազմակերպվել էր ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության, ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման վարչության համատեղ ջանքերով, ինչպես նաև Հայկական հուշարձանների պետական ֆոնդի (ԺՆԼ), «Երկիր և մշակույթ» կազմակերպության, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի (RAA), Unesco-ի և Icomos-ի հայկական ընկերությունների օժանդակությամբ:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ ՀՀ Ազգային Ակադեմիայի կենտրոնական սրահում՝ մշակույթի նախագահ պարոն Ռոլանդ Շառոյանի նախագահությամբ: Ողջույնի խոսքերով հանդես եկան՝ հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը (տե՛ս էջ 20), ՀՀ Ազգային ժողովի նախագահ խոսրով Հարությունյանը և ուրիշներ:

Լիագումար նիստին զեկույցներ կարդացին Հուշարձանների պահպանության վարչության նախագահ Գ. Գյուրջյանը, Հայկական պատմական հուշարձանների պահպանության ֆոնդի (ԺՆԼ) նախագահ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Ժան Միշել Թիերին (Ֆրանսիա), Թոմ Սամուելյանը (ԱՄՆ), Գեղամ Գևոնյանը (Ֆրանսիա), Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը (Հայաստան):

Շաբաթ և կիրակի օրերին չորս նիստերով և երկու մասնաճյուղերով ներկայացվեցին 36 զեկույցներ՝ Հայաստանի, ազատագրված տարածքների, Վրաստանի, Նախիջևանի, Թուրքիայի, Իրանի, Ռումինիայի, Եգիպտոսի, Լեհաստանի, Հունգարիայի և Իտալիայի հայկական հուշարձանների ու եկեղեցիների մասին:

Երկու մասնաճյուղերի ներկայացրած թեմաներն էին՝ ա) Վիճակագրություն և իրավունք («Հայկական անշարժ հուշարձանների վիճակն արտերկրում և դրանց պահպանության կազմակերպումն ըստ միջազգային ու պետական օրենքների») և բ) Հետազոտում («Արտերկրի հայկական պատմա-մշակութային ժառանգության վավերագրման և ուսումնասիրման խնդիրները»):

Նիստերն անցկացվեցին «Էրեբունի» հյուրանոցի սրահում, ուր և կազմակերպվել էր ճարտարապետական ցուցահանդես:

Առանձնակիորեն կարևորելով այս համաժողովի նշանակությունը, շաբաթ օրը, հետկեսօրին, չնայած առողջական ծանր վիճակին, մասնակիցներին ընդունեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը: Վեհարանի սրահում Նորին Սրբության օրհնանքի խոսքն ընթերցեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Ապա հյուրերն այցելեցին Մայր Տաճար, Սուրբ Գայանե և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիներ, Զվարթնոցի ավերակված տաճար:

Կիրակի երեկոյան, վերջին լիագումար նիստին, գիտաժողովն ընտրեց համազգային խորհուրդ և 25 անդամներից բաղկացած գործադիր մարմին:

Ժողովը որոշեց նաև հրատարակել հռչակագիր՝ միաժամանակ խնդրելով զանգվածային լրատվամիջոցների լայն արձագանքն ու աջակցությունն այդ խնդրում:

## «ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
(միջազգային գիտաժողով Օշականում)

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ, նշանավոր տարեդարձի նախաշեմին, հրավիրվեց աննախադեպ մի գիտաժողով՝ «Աստվածաշնչային Հայաստան» խորհրդանշական խորագրով: Այն նպատակ ուներ մեկ անգամ ևս արժևորելու Աստվածաշունչը ոչ միայն իբրև Աստծու խոսքն իր մեջ կրողի, այլ նաև իբրև գիտական մտքի անսպառ աղբյուրի:

Գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներին իրենց մասնակցությունն էին բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմը, Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատունը, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետը, Հայ ժողովրդի պատմության ամբիոնը, Տիեզերական չափումների կենտրոնը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արևելագիտության, պատմության, գրականության, լեզվաբանության ինստիտուտները, գրողների, նկարիչների, կոմպոզիտորների միությունները, Մատենադարանը, Ազգային գրադարանը և Ազգային պատկերասրահը:

Հունիսի 21-ին գիտաժողովի շրջանակներում Երևան քաղաքում բացվեցին երկու ցուցահանդեսներ՝ «Աստվածաշունչը հայ ձեռագրերում» (Մատենադարան) և «Հայ տպագիր Աստվածաշունչը» (Ազգային Գրադարան):

Մատենադարանում բացված ցուցահանդեսի առիթով, ողջունելով ներկաներին, 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը նշեց, որ ձեռագիր մատյանները մեր հայրերը ստեղծել են ոչ միայն մեծ արվեստով, այլ նաև Աստծու հանդեպ ունեցած անպարփակ սիրով, քրիստոնյայի նվիրումով:

Այնուհետև Մայր Աթոռի դիվանապետ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության նախագահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ներկաներին փոխանցեց Վեհափառ Հայրապետի պատգամը:

Ազգային գրադարանում բացված ցուցահանդեսը այցելուներին հնարավորություն ընձեռեց տեսնելու զանազան լեզուներով և տարբեր քաղաքներում՝ Վենետիկում, Ամստերդամում, Կոստանդնուպոլսում, Կահիրեում, Թեոդոսիայում, Լոնդոնում, Երուսաղեմում տպագրված Աստվածաշունչ մատյաններ և Ավետարաններ:

Հաջորդ օրը, հունիսի 22-ին, առավոտյան, գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Օշական: «Ով զմայլելի» շարականի երգեցողության ներքո մուտք գործեցին Ս. Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցի՝ հաղորդակցվելու և Մեծ Սրբի բարեխոսությունը հայցելու ու ծաղիկներ զետեղելու նրա շիրիմին: Ժամերգության ընթացքում «Տէր ողորմեա»-ի երգեցողության պահին մասնակիցները իրենց աղոթքը վերառաքեցին առ Աստված՝ ապաքինում և քաջառողջություն հայցելով Բարձրյալից Վեհափառ Հայրապետի համար, որից հետո շարժվեցին դեպի Ս. Մեսրոպ Մաշտոց նորակառույց դպրատուն,

որտեղ և կայացավ գիտաժողովի բացման արարողությունն ու առաջին լիագումար նիստը:

Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը և Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը Աստվածաշնչից հատվածներ ընթերցեցին՝ գիտաժողովի մասնակիցներին փոխանցելով Տիրոջ խոսքից բխող խաղաղությունը, սերն ու իմաստնությունը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսք ասաց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը (Տե՛ս էջ 47):

Լիագումար նիստին զեկուցումներով հանդես եկան Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ «Աստվածաշունչը որպես կյանքի ճանապարհ», Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-տնօրեն Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը՝ «Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը», Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը՝ «Խորենացին և Աստվածաշունչը», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Աստվածաշունչը և Հայ իրականությունը» թեմաներով:

Երկրորդ օրը գիտաժողովն իր աշխատանքները վերսկսեց վեց մասնաճյուղերով, և ներկայացվեցին շուրջ 90 ուշագրավ զեկուցումներ՝ «Աստվածաշունչը և հայրաբանական գրականությունը», «Աստվածաշունչը և հայ ծեսը», «7-8-րդ դարերի հայ շարականները և նրանց առնչությունը Աստվածաշնչի հետ», «Աստվածաշունչը և հայ ծագումնաբանությունը» և այլ թեմաներով:

Զեկուցումների մեծ մասը հայ իրականության մեջ նոր խոսք էին Աստվածաշնչի դերի լիարժեք և ճշմարիտ ներկայացման գործում:

Աշխատանքային օրվա ավարտին ժողովականներն ապաքինման մաղթանքներով ողջույնի ուղերձ հղեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին:

Գիտաժողովի երրորդ օրը, հունիսի 23-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Ս. Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցում Ս. Պատարագ մատուցվեց: Պատարագիչն էր Ե.Պ.Հ.-ի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Ս. Սեղանին սպասավորում էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ Տ. Անուշավան ծ. վրդ. Դանիելյանը և Տ. Գարեգին քհն. Գասպարյանը: Պատարագիչ Սրբազան Հայրը քարոզի ընթացքում մեկ անգամ ևս բարձր գնահատեց Աստվածաշնչի Մեսրոպյան հայերեն թարգմանությունը, կարևորեց նրա նշանակությունը հայ մարդու կյանքում, հայ իրականության մեջ, ինչպես նաև այդ ամենը նորովի արժևորելու եկած ներկա գիտաժողովը:

Պատարագից հետո եկեղեցու բակում դպրաց դասը և դպրատան սաները հոգևոր և ազգային երգեր կատարեցին՝ էլ ավելի տոնական տրամադրություն հաղորդելով գիտաժողովի անցկացման ընթացքին:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Օրգովի տիեզերական չափումների կենտրոն և ծանոթացան կենտրոնի գործունեությանը:

Նույն օրը, երեկոյան, գիտաժողովի շրջանակներում նախատեսված միջոցառումների ծրագիրն իր հանգրվանին հասավ Երևանում Կամերային

երաժշտության տանը, որտեղ մասնակիցները ունկնդրեցին ժամանակակից հոգևոր երաժշտության նոր ստեղծագործություններ:

Գիտաժողովի երեք օրերի ընթացքում ներկայացված զեկուցումների առանցքն Աստվածաշունչն էր՝ աշխարհի արարչագործության պատմությունից մինչև Աստծու թագավորության հաստատման ժամանակաշրջանը: Դրանց մեջ միակն ու գերիշխողը աստվածաշնչային ոգին էր, որը ներկայանում էր Աստծու մեծագործություններով, Աստվածային օրենքներով, սկզբունքներով, պատգամներով, հայտնագործություններով: Դա այն ոգին է, որ ամենատարբեր աղերսներով շաղկապվել է Հայ Եկեղեցու ծեսին, ավանդույթին, մեր արվեստին, գրականությանը, մշակույթին, գիտությանն ու ազգագրությանը:

«Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովը 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի կողմից նախաձեռնված բազմաթիվ միջոցառումներից մեկը չէր սոսկ, այլ ոգու տոն էր, հոգևոր արթնության հրաշալի մի կոչ, հավաստում աստվածաշնչային ճշմարտությանը, որը վկայում է. «Կենդանի է Աստծու խոսքը, ազդու և ավելի հատու, քան ամեն մի երկսայրի սուր… այն քննում է սրտի մտածումները և խորհուրդները»(Եբր. Դ 12 ):

### 1999 թվականի հունիսի 21-24-ը Օշականում հրավիրված «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովի մասնակիցների ուղերձը հայ ժողովրդին

Հայ ժողովուրդն ապրում է իր բազմադարյան պատմության նշանակալից մի ժամանակահատվածը: Անկախ պետականության վերականգնումով մեր կյանքում հաստատվել են նոր հարաբերություններ, առաջադրվել են նոր խնդիրներ: Փոթորկալից շրջադարձերի ու փոփոխությունների այս դարում տնտեսական ու ընկերային հիմնահարցերից զատ, գուցե և դրանցից ավելի հրատապ, հայության առջև կանգնած են սեփական ազգային դիմագծի պահպանման, հայ մարդկանց հոգեմտավոր բնականոն զարգացման խնդիրները:

Ազգային-պետական գաղափարախոսության ստեղծման ոչ դյուրին գործընթացներում իրենց անփոխարինելի դերն ունեն Հայ Եկեղեցին, հայրենական գիտությունն ու մշակույթը, որոնց ներկայացուցիչներն այսօր ի մի գալով Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ի բարձր հովանավորությամբ և օրհնությամբ մասնակիցը եղան «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովի:

Գիտաժողովի ընթացքում արծարծվեցին Հայ Եկեղեցու, հայագիտության, արվեստի և մշակույթի բազմաթիվ հարցեր: Անկեղծ ու ճշմարիտ էր մեր ձգտումը՝ արժևորել հայ ժողովրդի ներդրումը համամարդկային մշակույթի գանձարանում, քննել պատմական անցյալի և գալիք ժամանակների նրա առաքելության իմաստավորման խնդիրները:

Ուզում ենք հավատալ, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ նախատեսված միջոցառումների շարքում այս գիտաժողովը կարևոր նշանակություն կունենա մեր ժողովրդի համախմբման և

նրա հավաքական աշխարհայացքի ամրապնդման գործում: Այն նրանցի պահից ի վեր, երբ հայ ժողովուրդը, հայոց արքայի ու Կաթողիկոսի գլխավորությամբ, դիմավորեց հայ գրերի ստեղծող Ս. Մեսրոպ Մաշտոցին, Աստվածաշունչը հայ լեզվով խոսեց մեր ժողովրդի սրտի ու հոգու հետ:

Այսօր, քրիստոնեության մեծ Տոնի նախաշեմին, այլ է իրողությունը. անկախ պետականության գոյությունը խորին գոհունակություն, միևնույն ժամանակ ամուր վստահություն է ներշնչում, որ հանձին նրա Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հայ գիտական և ստեղծագործական միտքը ունեն անփոխարինելի սատար և հովանավոր: Վստահ ենք, որ Աստվածաշունչ մատյանը այսօր էլ հատկապես ի զորու է կենարար ազդեցություն գործելու հայ մարդու կամքի վրա, իր պետության հզորությունը կերտող մեր ժողովրդին մղել հայրենանվեր արարումների: Ուրեմն թող իրականություն դառնա մեր Հովվապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա–ի պատգամը, որ մեզանից յուրաքանչյուրը, արժանի լինելով Թարգմանչաց սերնդի ավանդներին, դեպի ժողովուրդը տանի Աստվածաշնչի լույսը՝ «Աստվածաշնչելու համար հայ ժողովուրդը»:

Քրիստոնեության ջահը առնելով հենց Իր՝ Փրկչի ձեռքից, անա արդեն շուրջ 2000 տարի հայ ժողովուրդն այն տանում է խավարչտին դարերի, տառապանքների ու ցավերի միջով: Որպես քրիստոնյա հնագույն ազգ նա այդ սուրբ առաքելության տերն է նաև այսօր: Մաղթենք, ուրեմն, որ Քրիստոնեական թվականության երրորդ հազարամյակը նրա համար բացվի պայծառ արշալույսով, և Տիրոջ անպարագիծ Լույսը նրա մշտական ուղեկիցը լինի դեպի հավերժություն տանող իր ճանապարհին: Ամեն:

### «ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

**գիտաժողովի մասնակիցների կոչը քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ**

2001 թվականը հռչակել Աստվածաշնչի ընթերցանության տարի՝ մեկ անգամ ևս քրիստոնեական շնչով «Հոգեգալուստի փորձառությունը» ապրելու համար:

Նախաձեռնել Աստվածաշնչի նոր տպագրության աշխատանքները՝ իրականացնելու համար Աստվածաշունչը բոլոր ընտանիքներին անվճար բաշխելու կամ մատչելի գնով տրամադրելու շարժումը և դրանով արգելակել աղանդավորական շարժման տարածումը Հայաստանում:

Առավել խթանել աստվածաշնչային ընթերցումներին կիրակնօրյա վարժարաններում:

Հրատարակել Աստվածաշնչի մասին և աստվածաշնչային թեմաներով հանրամատչելի գրականություն ու տարածել այն Հայաստանում և Սփյուռքում:

Հեռուստատեսությամբ, ռադիոյով և մամուլով պարբերաբար ներկայացնել աստվածաշնչային ընթերցումներ և տպագրել հրապարակումներ այդ թեմաներով:

Աստվածաշնչային ընթերցումներ իրականացնել հատկապես պատանիների և երիտասարդների շրջանում:

Տեսաերիզներով բազմացնել և տարածել գրերի գյուտի ու Աստվածաշնչի թարգմանության պատմությունը:

Պատրաստել նկարազարդ քարտեր տարբեր աղոթքներով և աստվածաշնչյան պատգամներով (Տերունական աղոթք, Տասնաբանյա պատվիրաններ, երանիներ, պատգամներ՝ կյանքի տարբեր իրավիճակներին համապատասխան և այլն) ու դրանք անվճար բաժանել ժողովրդին:

Բոլոր թեմերում իրականացնել քարոզխոսության դասընթացներ հայ հոգևորականների համար:

Հայ Եկեղեցու ներսում ստեղծել վարչական մի կառույց, որի սկզբունքը դառնա «Մի հոտ և մի հովիվ» կարգախոսը և այդպիսով նպաստել Ավետարանի քարոզչությանը:

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հարգանքը սրբությունների ու արժեքների նկատմամբ հարգանք է ստեղծում նախ և առաջ հարգանք մատուցողին:

Եվ այդ հարգանքի ու խոնարհումի մատուցման մեջ է, որ յուրաքանչյուրը ծնավորվում է իբրև մարդ, իբրև «ըստ պատկերի և նմանութեան» Աստծու էակ:

Այս ճշմարիտ հասկացության հետևողությամբ, սույն թվականի հուլիսի 5-ին, շաբաթ օրը, երկնասլաց Արարատի հայացքի ներքո, Խոր Վիրապի պատմական վանքում հանդիսավորապես տոնախմբվեց Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու հիշատակը:



Յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար հոգեհարազատ այս ոգեկոչումը փաստորեն հարգանքի մատուցումն է Գրիգոր Լուսավորչի անձի միջով 14 տարիներ խավար ու թունավոր սողուններով լեցուն խոր վիրապում բանտարկված քրիստոնեության:

Լուսավորչի Վիրապից ելնելու օրը քրիստոնեության ազատագրումն է Հայոց Աշխարհում:

Ի հարգանս երանաշնորհ ու առաքելաշավիղ Հայրապետի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տէրտերյանը:

Պատարագին ներկա էին Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արսեն արքեպս. Բերբերյանը, Վազգեն վրդ. Սիրզախանյանը, Խոր Վիրապի վանքի միաբան քահանաները և Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի Ա-Գ լսարանների սաները: Ս. Սեղանին սպասավորեց Մակար արք. Հովհաննիսյանը: Պատարագիչ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց /տե՛ս էջ 75/, որից հետո Լուսավորչի Ս. Աջը թափորով դուրս բերվեց Վանքի բակ, որտեղ հոգևորականաց դասը Անդաստանի կարգ կատարեց՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ: Հավատացյալ ժողովուրդը, որի մեջ կային խմբեր Էջմիածնից, Արմավիրից, Երևանից և Խոր Վիրապի շրջակա բնակավայրերից, ևս մասնակցեցին թափորին և Անդաստանին՝ բարձրաձայն ձայնակցելով երգվող շարականներին ու երգերին: Անդաստանից հետո Վեհափառ Հայրապետի օրհնությունները հավատացյալներին փոխանցեց Գարեգին Սրբազանը, որն այնուհետև ներկաներին հրավիրեց աղոթքներով Լուսավորչի բարեխոսությունը խնդրելու՝ Վեհափառ Տիրոջ առողջության համար: Վերջում ներկաները մեկ առ մեկ համբուրեցին Ս. Աջը, որով և Պատարագի հաղորդությունն իր կատարյալ լրումը ստացավ:

# ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 4-ին, ժամը 11.00-ին, Գևորգյան Հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ամավերջի հանդիսություն՝ նախագահությամբ Գերաշնորհ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով: Հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը Սուրբ Գրքից ընթերցեց Սերմնացանի առակը՝ ընդգծելով այն միտքը, թե Հոգևոր ճեմարանը ևս մի յուրօրինակ դաշտ է, որտեղ ցանված սերմերի պես աստիճանաբար աճում ու հասունանում են ճեմարանի սաները՝ վերջում պտուղ տալով «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, ընդ միոյ հարիւր»:

Այնուհետև Հոգևոր ճեմարանի երգչախումբը, խմբավար Ռուբեն Շարբաթյանի ղեկավարությամբ, կատարեց ճեմարանի քայլերգը և Ս. Ներսես Շնորհալու «Հայր առաքող Միածնի» շարականը:

Տեսչական հաշվետվությամբ հանդես եկավ Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Իր հաշվետու զեկույցի մեջ տեսուչ Հայր Սուրբը խոսեց դասախոսական կազմի, տարվա ընթացքում տեղի ունեցած տարբեր հանդիպումների, մշակութային ձեռնարկումների, այցելությունների և ցուցահանդեսների մասին: Հայր Սուրբը նշեց նաև ուսումնական ցանկացած հաստատության մեջ գրադարանի կարևորությունը և ճեմարանի գրադարանում կատարված իսկայական աշխատանքը: Ցավով խոսելով մի քանի խնդիրների առկայության մասին՝ տեսուչն ասաց. «ճեմարանը, հասցնելու համար իդեալական բարձրության, կարիք ունի հատկապես պատրաստված եկեղեցականների, որոնք, մասնագիտացած լինելով, կարողանան դասավանդել կրոնական առարկաներ, օրինակ՝ Հին և Նոր Կտակարաններ, Աստվածաբանություն, Քրիստոնեական բարոյագիտություն, ծիսագիտություն, հին լեզուներից՝ հունարեն և եբրայերեն, իսկ իր ընթացիկ գործունեությունը սահուն կերպով կազմակերպելու համար ճեմարանը պետք է ունենա իր բյուջեն, որը և ապահովված լինի հիմնադրամով: Մենք հավատում ենք մեր ուսանողների մտային կարողություններին: Եթե ժամանակը և միջոցները ճիշտ օգտագործվեն, մենք առաջիկայում կկարողանանք բավարարել մեր ժողովրդի հոգևոր կարիքները»:

Տեսչական հաշվետվությունից հետո ճեմարանի դահլիճը մեղմորեն լցվեց Կոմիտասի «Սոնա յար»-ի հնչյուններով, որոնք ներկաներին ստիպեցին գոնե մեկ ակնթարթով զգալ այն անկեղծ ապրումները, որ ժամանակին ալեկոծել են մեծ երգահանի զգայուն սիրտը ստեղծագործելու պահերին: Ա. Բաբաջանյանի «Արե-վոկալիզ» ստեղծագործությունը կատարեցին Ա լսարանի սան Զոհրապ Կարապետյանը և Բ լսարանի սան Վասիլ Շահբազյանը, որին հետևեց Ե. Չարենցի «Հայոց լեզու» բանաստեղծությունը՝ Բ լսարանի սան Արման Սիմոնյանի կատարմամբ:

Ուսանողության անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ Ջ

լսարանի սան Արտակ սարկավագ Թումանյանը: Երաժշտական կատարյալ ստեղծագործությունը, լեզվական արգելքներով կաշկանդված չլինելով, ընկալման առումով, զուտ ազգային սահմաններում չի պարփակվում, այլ հասկացվում և ընդունվում է բոլորի կողմից: Է. Դի Կապուայի «O sole mio» գեղեցիկ ստեղծագործությունը կատարեց Ե լսարանի սան Մասիս Իսայանը: Պ. Սևակի խոսքերով, բարի վերադարձի անկեղծ ցանկությամբ ներկաներին «Բարի ճանապարհ» մաղթեց Դ լսարանի սան Գևորգ Մակարյանը: Այնուհետև Արամ Խաչատրյանի՝ ջութակի համար գրված «Անդանտինո» ստեղծագործությունը կատարեց Ա լսարանի սան Արման Բեգլարյանը:

Հանդիսության վերջում երգչախմբի կատարմամբ հնչեց Կոմիտասի «Իմ չինարի յարը» երգը:

Ապա տեղի ունեցավ մրցանակաբաշխություն: Մրցանակներ տրվեցին ուսումնական տարվա ընթացքում իրենց առաջադիմությամբ և վարքով աչքի ընկած ուսանողներին:

Վերջում օրհնության խոսք ասաց Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանը.

*«Շնորհակալություն, տեսուչ Հայր Սուրբ, Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ Հայրեր, բարեշնորհ եղբայրներ, ուսանողներ, տեսչական կազմ, սիրելի ներկաներ:*

*Իմ խոսքը ցանկանում եմ սկսել մի փոքրիկ պատմությամբ.*

*Մոտ հիգ տարիներ առաջ ինքնաթիռով Գրեղե քաղաքից ճամփորդում էի Աթենք: Երբ ինքնաթիռ բարձրացա, նստատեղիս մոտ մահամերձ հիվանդ տեսա, որը առաջին հայացքից անհանգստություն պիտի պատճառեր ինձ թռիչքի ընթացքում: Սակայն, անմիջապես անդրադարձա և շուրջս նայեցի, բոլորն էլ գործի մարդիկ էին, և ինքնաթիռում ուրիշ հոգևորական չկար, այլ միայն ես էի: Ուրեմն ո՛վ պետք է լիներ այս մարդու մոտ այդ ծանր պահին՝ հիարկե հոգևորականը: Հասկացա, որ պատահաբար չէ, որ այդ տեղը հենց ինձ էր վիճակվել:*

*Աիա այս կարճ պատմության վկայությամբ ցանկանում եմ խոսքս ուղղել ձեզ, սիրելի ուսանողներ: Կա արհեստի ասպարեզ և կա առաքելության ասպարեզ: Մերը առաքելությունն է, որտեղ մարդ պիտի ուրանա իր անձը, և այդ սկսում է ճեմարանի առաջին լսարանից: Մարդ ճեմարանում սովորում է, թե ինչպես պետք է կատարի այն աշխատանքը, որին ինքը արդեն իսկ նվիրվել է: Ուսման ընթացքում ուսանողը զինվում է և ավարտելով դառնում մեր Եկեղեցու սպա: Այն, ինչին այսօր դուք կոչվում եք պաշտպանելու, բարդ և դժվարին իրավիճակի մեջ է: Այսօր հոգևոր Հայաստանի սահմաններն ամեն կողմից հարձակման են ենթարկվում, սակայն հարց եմ տալիս՝ ո՞ւր եք, Հայ Եկեղեցու սպաներ, չէ որ նրանց առաջխաղացումը կանգնեցնելու պարտականությունը ձեզ է վստահված:*

*Մեկ տարի առաջ Եվրոպական Եկեղեցիների խորհրդում, որտեղ ես կոմիտեի անդամ եմ, խոսք եղավ, որ Հայաստանում կրոնի ազատություն չկա: Պատասխանեցի, որ Հայաստանը մեր հողն է, և այն նմանեցրի մի ադամանդի հանքի ու ասացի, եթե մենք այսօր միջոցներ չունենք ադամանդները հանելու ու փայլեցնելու, դա, անշուշտ, չի նշանակում, որ այն ձերն է և դուք կարող եք*

*մերոցնել: Հայաստանի իրական արժեքը իր ժողովուրդն է, և ուրիշները փորձում են գողանալ այն: Այդ է պատճառը, որ այսօր իմ խոսքը ցանկանում եմ կենտրոնացնել առաքելության վրա. մենք ունենք առաքելություն, մենք ունենք պայքար: Եթե այսօր մենք բոլորս, սկսած ուսանողից մինչև Կաթողիկոս, մտածենք նույն ուղղությամբ, որ մենք պայքար ունենք, պատերազմ ունենք հաղթելիք, որ պիտի վերարթնացնենք մեր Մայր Եկեղեցին և գործենք, այլևս մտահոգություն չենք ունենա:*

*Իմ քառասուն տարվա հոգևոր կյանքի փորձից, հետադարձ ակնարկով, կարող եմ ասել, երբ եմ իսկապես երջանիկ եղել, և հստակ գիտեմ, որ եղել եմ երջանիկ մեկ կամ երկու անգամ, նույնիսկ արտասվել եմ, երբ տեսել եմ եկեղեցու հաղթանակը: Մենք պետք է ապրենք եկեղեցով, այն մեզ կտա և՛ խաղաղություն, և՛ ուրախություն, և՛ երջանկություն: Սակայն եթե մենք կրավորական կերպով կրենք այս զգեստը, չապրենք եկեղեցով, միևնույն է, դրսում ամեն տեսակ փորձություն կա, և որքան էլ որ հարուստ լինեք, բայց եթե ձեր հոգիները չլցնեք Քրիստոսի սիրով ու եկեղեցով, երբևէ երջանիկ լինել չեք կարող: Ի վերջո որն է կարևորը կյանքում՝ հարուստ, թե երջանիկ լինելը: Իսկ ես, տղաներ, ձեզ ասում եմ՝ երջանիկ եղեք, ամեն մի հաղթանակ, որ տանում եք եկեղեցու համար, թող ձեր երջանկությունը լինի:*

*Ահա, սիրելիներ, իմ հակիրճ պատգամը ձեզ: Այն, ինչ սովորում եք ճեմարանում, իսկա գիտության վերնագրերն են միայն: Ցանկանում եմ, որ յուրաքանչյուրդ շարունակեք ձեր ուսումը, քանզի մեր հաղթանակը նաև դրանով է պայմանավորված: Նվիրում և գիտություն, այս երկուսը միասին մեզ կվերադարձնի այն եկեղեցին, որը մեր հայրերի միջամտությամբ ստացել է յուրահատուկ ձև: Այո, կան եկեղեցիներ, բայց այն եկեղեցին, որ մենք ենք պաշտում, այն եկեղեցին, որ մենք ենք գուրգուրում, մեր հայրերի եկեղեցին է և մենք պարտավոր ենք պաշտպանել այդ եկեղեցին, այլապես դավաճանած կլինենք մեր հորն ու մորը:*

*Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիդ և կրկին անգամ շեշտում, մերը արհեստ չէ. մերը առաքելություն է, ընդունեցեք այն իբրև առաքելություն և ըստ հրամանի Քրիստոսի «Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զԱւետարանն ամենայն արարածոց» (Մարկոս ԺԶ 15):*

*«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:*

Հանդիսությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

*ԳԵՎՈՐԳ ՄԱԿԱՐՅԱՆ*

## ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Մայիսի 4-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի բարձր նախագահությամբ, նշվեց հայ տաղանդաշատ բանաստեղծ Պարույր Սևակի 75-ամյա հոբելյանը:

Ճեմարանի դասախոս Սուրեն Դանիելյանի բացման խոսքից հետո, ավելի քան մեկ ժամ դահլիճում հնչում էր սևակյան պոեզիան: Ճեմարանի 4-րդ լսարանի սաների ներկայացրած գրական-գեղարվեստական հայտագիրն ընդգրկում էր Սևակի կոմիտասական ողողանջները, հայրենասիրական ու սիրային բանաստեղծությունները:

Հանդիսության ավարտին օրհնության խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ցերեկույթն ավարտվեց ճեմարանին բազմիցս իր օժանդակությունը ցուցաբերած «Կայծակյան» հիմնադրամի մրցանակների հանձնմամբ: Մրցանակներ տրվեցին 1997-1998 թթ. ուսումնական տարվա ընթացքում իրենց լսարաններում լավագույնը ճանաչված 10 ուսանողների և երկու մրցանակ՝ լավագույն ստեղծագործական շարադրության համար:

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ

Մայիսի 6-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի ոգեկոչումն նշանավոր կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի 75-ամյա հոբելյանի:

«Մխիթարանք է, որ այսօր աղոթք ենք հղում հանուն հայ ժողովրդի մեծանուն զավակ Սերգեյ Փարաջանովի, մի արվեստագետի, որի արվեստն իր ազգային ակունքներով հանդերձ դասվում է համամարդկային արժեքների շարքը», - ծավարտ արարողության ասաց Սրբազան Հայրը:

Արարողությանն իր հոգելույր երգեցողությամբ մասնակցում էր Արարատյան Հայրապետական թեմի «Մանկունք» երգչախումբը:

Արարողությանը ներկա էին հավատացյալներ, Փարաջանովի արվեստի բազմաթիվ երկրպագուներ:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

# ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*(23 մայիսի, Հոգեգալստյան կիրակի, 1999 թ.)*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. սեղանի վրա, Հոգեգալստյան հրաշափառ տոնին, Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Հընթացս մատուցված Ս. Պատարագի, Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ և Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կարգադրությամբ, ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր և խարտավիլակությամբ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, կատարվեց սարկավագական ձեռնադրություն, Գևորգյան Հոգևոր ճեմարանի տասնյոթ շրջանավարտների և երկու ազատ ունկնդիրների Շիրակի և Սյունյաց թեմերից:

Համաձայն ձեռնադրության սրբազան Սաշտոցի, նորընծաները Ս. Պատարագի նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, ստացան կիսասարկավագության կոչում՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի և Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի:

Սուրբ Պատարագի ընթացքին, «Չի ողորմած և մարդասէր էս ...» աղոթքից հետո, նորընծաները, խարտավիլակ Սրբազան Հոր առաջնորդությամբ, ծնկաչոք բարձրացան Ս Սեղան, որտեղ Սրբազան Հայրը վկայեց նորընծաների ձեռնադրությանն արժանի լինելը. «Գիտեմք և վկայեմք զսոսա արժանաւոր գոլ՝ առ ի բառնալ զլուծ աստիճանաց»:

Ձեռնադրությունը խորհրդանշվեց «Աստվածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ» շարականի երգեցողությամբ, որից հետո նրանք կոչվեցին «ի սպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ»:

Այնուհետև ձեռնադրող Սրբազան Հայրը օրհնությամբ տվեց «Առ քեզ զմաքուր եւ զսուրբ ուրարս ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», որով նրանց իշխանություն շնորհվեց եկեղեցում Ս. Ավետարան ընթերցելու, ինչպես նաև «հրաման խնկարկել ի սպասաւորութիւն խորհրդոյն»:

Հավարտ ձեռնադրության Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը բարեմաղթանքի շնորհավորական և ուսանելի խոսքեր ուղղեց նորընծաներին՝ ի մասնավորի նշելով.

*«Կրթիր քո անձը աստվածպաշտությամբ, որովհետև մարմնի կրթությունը քիչ օգուտ ունի, բայց աստվածպաշտությունը ամեն ինչի մեջ օգտակար է, այս կյանքին մեջ և հավիտենական կյանքին մեջ (Ա Տիմ. Դ 7):*

*Ահա Պողոս առաքյալի խորհուրդը մեր հավատացյալներուն և հատկապես այսօր մեր նոր ձեռնադրված սարկավագներուն: Նոր ձեռնադրված սարկավագները պիտի ծառայեն Եկեղեցուն, այն Եկեղեցուն, որը հիմնված է մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցավ՝ իր իսկ արտահայտությամբ, երբ ըսավ Քրիստոս. «Դու ես վեմը և որի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին և դժոխքի դռները պիտի չկարողանան հաղթել Նրան» (Մատթ. ԺԶ 18):*

*եկեղեցին ունի իր փառավոր պատմությունը, ունի իր նախատակները. այսօր մենք նմանեցրինք մեր սարկավագները առաջին նախավկա սարկավագին՝ Սուրբ Ստեփանոսին: Ս. Ստեփանոս, որը ընտրված էր որպես սարկավագ առաքյալներու կողմե, սպասավոր Սուրբ Սեղանին և Աստուծո Բանին քարոզիչ և մեկնող, նախատակվեցավ, որովհետև ինքը այդ օրվա իր հասարակության մեջ ո՛չ թե միայն ծառայեց սեղանին, ինչպես առաքյալները իրեն պարտավորեցրին, այլ նաև քարոզեց Աստուծո խոսքը, չզլացավ և չվախեցավ: Քարոզեց անդադար, և իր քարոզությունը պատճառ դարձավ, որ ինքը ձերբակալվի, դատվի և ապա քարկոծվի, սպանվի և դառնա Քրիստոսի եկեղեցվո առաջին նախատակը: Ուրեմն Քրիստոսի եկեղեցվո առաջին նախատակը սարկավագ էր, նման այն սարկավագական կարգին, որ մենք այսօր շնորհեցինք տասնինը այս սարկավագներուն»:* .

Հաջորդ օրը, մայիսի 24-ին, սարկավագներն ուղևորվեցին Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Նորընծա սարկավագներին ներկայացրեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Իր խոսքն ասաց նաև ձեռնադրող Սրբազան Հայրը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի շնորհավորանքի և օրհնության խոսքն ընթերցեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը. «Ողջունում եմ ձեզ, հայրական քաղցր սիրով: Հրճվում է սիրտս այս տեսարանի դիմաց: Ուսանող եք, և առաջին վեց եկեղեցական կարգը ստացաք: Բայց ուսանող պետք է լինեք շարունակական ածումով, ո՛չ ուսուցիչը, ո՛չ դասագրքերը ձեզ կարող են ուսանող անել, նրանք ուղեցույցներ են, ձեր ջանքը, չարքաշ աշխատանքը պիտի լինեն միակ միջոցը: Նախ և առաջ, Աստված օգնական ձեզ»:

Սահակ սարկավագ Գասպարյան
Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 15-ին Արտաշատ քաղաքում:
1982-1992 թթ. սովորել է Մասիսի N15 միջնակարգ դպրոցում:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս.Գալփաքյանի:

Արսեն սարկավագ Պատոյան
Ծնվել է 1976 թ. ապրիլի 6-ին էջմիածին քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի Ռաֆայել Պատկանյանի անվան N9 միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Արմեն սարկավագ Հակոբյան
Ծնվել է 1976 թ. փետրվարի 29-ին Երևան քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի N116 միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Վահե սարկավագ Հովսեփյան
Ծնվել է 1976 թ. նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի N69 Սախարովի անվան ռուսական միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:
1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

Արման սարկավագ Սարոյան
Ծնվել է 1977 թ. հուլիսի 28-ին Մասիս քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է Մարմարաշենի միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:
1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

Վահե սարկավագ Վահունի
Ծնվել է 1976 թ. ապրիլի 5-ին Երևան քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:
1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

Արթուր սարկավագ Քարտաշյան
Ծնվել է 1974 թ. հուլիսի 9-ին Էջմիածին քաղաքում:
1980-1991 թթ. սովորել և ավարտել է տեղի N12 միջնակարգ դպրոցը:
1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

Արամ սարկավագ Մալխասյան
Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 17-ին Երևան քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի N30 միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

Արտակ սարկավագ Թումանյան
Ծնվել է 1976 թ. նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում:
1982-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի N106 միջնակարգ դպրոցը:
1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Գևորգ սարկավագ Միրզոյան
Ծնվել է 1975 թ. դեկտեմբերի 28-ին Երևան քաղաքում:
1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի N170 միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Հայկ սարկավագ Պողոսյան
Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում:
1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:
1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի Զ լսարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Արսեն սարկավագ Բարսեղյան
Ծնվել է 1975 թ. դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքում:
1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի Գրիգոր Զոհրապի անվան միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:
1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի Զ լսարանում:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս.Գալփաքյանի:

Խաչատուր սարկավագ Տաշչյան
Ծնվել է 1976 թ. ապրիլի 1-ին Էջմիածին քաղաքում:
1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի N1 միջնակարգ դպրոցը:
1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:
1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Մանվել սարկավագ Շաքարյան

Ծնվել է 1974 թ. նոյեմբերի 14-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Վաղարշակ սարկավագ Ծատուրյան

Ծնվել է 1975 թ. հոկտեմբերի 6-ին Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի N5 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Գևորգ սարկավագ Վարդանյան

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 25-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի Ռաֆայել Պատկանյանի անվան N9 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս.Գալփաքյանի:

Բաբկեն սարկավագ Նանյան

Ծնվել է 1976 թ. հոկտեմբեր 15-ին Երևան քաղաքում:

1983 թ. ընդունվել է տեղի Ձերժինսկու անվան N20 միջնակարգ դպրոցը և 1993 թ. ավարտել N114 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ:

1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Սամվել սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 15-ին Էջմիածին քաղաքում:

1978-1989 թթ. սովորել և ավարտել է Մովսես Խորենացու անվան N10 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել է Հայաստանի Պետական ճարտարագիտական Համալսարան, որն ավարտել է 1994 թ.:

1994-1996 թթ. ծառայել է հայոց ազգային բանակում:

1997-1999 թթ. որպես ազատ ունկնդիր մասնակցել է Գևորգյան Հոգևոր ճեմարանի դասընթացներին:

1999 թ. մայիսի 23-ին, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի միջնորդությամբ, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

Գառնիկ սարկավագ Սարգսյան

Ծնվել է 1963 թ. հունվարի 9-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում :

Սովորել է տեղի Մ. Մաղաքյանի անվան միջնակարգ դպրոցում:

1978-1982 թթ. ընդունվել և ավարտել է Արթիկի Ինդուստրիալ Տեխնոլոգիական տեխնիկումը:

1982-1984 թթ. ծառայել է հայոց ազգային բանակում:

1998 թ. որպես ազատ ունկնդիր մասնակցել է Գևորգյան Հոգևոր ճեմարանի դասընթացներին:

1999 թ. մայիսի 23-ին, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի միջնորդությամբ, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ԽՈՐ ՎԻՐԱՊԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի մայիսի 30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ, Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Ս. Պատարագի ժամանակ, կատարվեց Սամվել սրկ. Թորոսյանի քահանայական ձեռնադրությունն ու օծումը՝ ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի և խարտավիլակությամբ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանի:

Նախորդ օրը, մայիսի 29-ին, Մայր Տաճարում, հավարտ երեկոյան ժամերգության, տեղի ունեցավ «Կոչումն ընծայութեան» կարգը: Արարողության ընթացքում խարտավիլակ Հայր Սուրբը վկայեց նորընծայի հոգևոր և իմացական կարողությունների ու արժանիքների մասին՝ հայցելով առաջնորդ Սրբազան Հոր հավանությունը՝ նրան արժանացնելու քահանայական աստիճանին: Նորընծան, ըստ կարգի, խոստացավ «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն ու հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», ապա «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»:

Արարողության ավարտին նորընծան, ձեռնադրող եպիսկոպոսի հրամանով և ներկայությամբ եկեղեցում գտնվող հավատացյալների, բարձրաձայն կարդաց Ս. Գրիգոր Տաթևացու «Հավատամք»-ը, որը դարձավ կոչում ստացող սարկավագի հավատքի խոստովանությունը:

Կիրակի օրը, մայիսի 30-ին, Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Օրվա պատարագիչն էր ձեռնադրող Սրբազան Հայրը՝ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը: Ձեռնադրության և օծման արարողությունն սկսվեց «Զի ողորմած և մարդասէր ես, Աստուած» աղոթքից հետո: Նորընծան ծնրադիր հրավիրվեց Ս. Խորան՝ խարտավիլակի կողմից պատշաճ սաղմոսների արտասանությամբ, որտեղ նա, շրջվելով դեպի ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան Ուխտի և նվիրումի:

«Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականից հետո, Սրբազան Հայրը, դնելով «զաջն ի վերայ գլխոյն նուիրելոյն», շնորհեց քահանայական աստիճան: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ընթացքում փակվեց խորանի վարագույրը, և նորընծան զգեստավորվեց պատարագչի հանդերձանքով:

Ս. Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Ապա սկսվեց օծման խորհրդավոր արարողությունը «Առաքելոյ աղաւնոյ» շարականով, և Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ Սամվել սարկավագ Թորոսյանին վերանվանելով Տ. Սամուել քահանա:

Ս. Պատարագի ավարտին Գևորգ Սրբազանը ոգեշունչ քարոզ խոսեց, որի

ընթացքում նշեց, որ նորած Տեր Սամուել քահանան, Մայր Աթոռում քառասունքն անցկացնելուց հետո, կվերադառնա՝ ծառայելու Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի Արագովա և Խորենիա գյուղերում:

Քարոզի վերջում Սրբազան Հայրն իր մասնակի շնորհավորական խոսքն ուղղեց Խոր Վիրապ վանքի վանահայր Տ. Մխիթար ավագ քահանայի՝ անմնացորդ աջակցության, և Գևորգյան ճեմարանի Զ լսարանի մի քանի սարկավագների՝ արարողության ընթացքում գործուն մասնակցություն ցուցաբերելու համար:

Ձեռնադրությանը ներկա էին հոգևորականներ և մեծաթիվ հավատացյալներ, ովքեր խորին հարգանքով մոտեցան Տեր Հորը՝ շնորհավորելու և նորած աջը համբուրելու:

*ՍԱՀԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

## ՏԵՐ ՍԱՄՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ
(Ավազանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1974 թ. մարտի 8-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում:

1980-91 թթ. սովորել է տեղի Հովհ. Թումանյանի անվան հայկական թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1991-93 թթ. ծառայել է Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան, ուր ուսանելով չորս տարի, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ու երաշխավորությամբ և ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի, ձեռնադրվել է քահանա:

# ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄՈՒՄ

(23 մայիսի, Հոգեգալստյան կիրակի, 1999 թ.)

Այսօր Կոտայքի թեմի Հրազդան քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը:

Առավոտյան, մինչ պատարագը, ձեռամբ Տ. Առաքել եպս. Քարամյանի և խարտավիլակությամբ Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանի, դպրության 4 աստիճանների տվչության արժանացան՝ Գևորգ Միրզոյանը՝ Կոտայքի թեմի Ս. Հովհաննես եկեղեցի, Արթուր Սարգսյանն ու Գագիկ Բաբայանը՝ Ձորվեժի Ս. Կաթողիկե եկեղեցի, Գրիգոր Սաֆարյանը՝ Հրազդանի Ս. Աստվածածին եկեղեցի, և Աշոտ Չոքյանը՝ Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցի:

Հընթացս Ս. Պատարագի նորընծա դպիրներից երկուսը՝ Գագիկ Բաբայանը և Գևորգ Միրզոյանը, ինչպես նաև Հրազդան քաղաքի Ս. Հովհաննես եկեղեցու դպիր Գևորգ Հակոբյանը, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ավարտական լսարանի սան Վաչագան Բաբայանը, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի և խարտավիլակությամբ Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանի, ձեռնադրվեցին սարկավագ:

Հավարտ ձեռնադրության պատարագիչ Սրբազան Հայրը շնորհավորական և ուսանելի մաղթական խոսքեր ուղղեց նորընծաներին:

Ս. Պատարագին ներկա էր Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը:

*ԳԱԳԻԿ ԲԱԲԱՅԱՆ*

## ՋԵՐՄՈՒԿՈՒՄ ՀԻՄՔԸ ԴՐՎԵՑ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ

Մայիսի 15-ին տեղի ունեցավ Ջերմուկում կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքը: Նախաձեռնությունը Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանինն ու Ջերմուկի քաղաքապետինն էին: Նախօրոք համաձայնեցված էր շինարարության տեղը, կատարվել էին առաջին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Բոլորն անհամբեր սպասում էին բարձրաստիճան հոգևոր հայրերի ժամանմանը: Պահը հուզումնալից էր: Առավել շատ էր հուզվել Վայոց Ձորի հոգևոր հովիվ Տ. Մարտիրոս քահանա Ավետիսյանը: Ցերեկվա ժամը 3-ն էր: Հավաքվել էր հավատացյալ ժողովուրդը, տեղական իշխանության ներկայացուցիչներ, մարզի ղեկավարությունը: Բոլորն անհամբեր սպասում էին: Ահա և սպասված պահը:

Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի գլխավորությամբ Ջերմուկ էին եկել Երուսաղեմի Հայոց Պատրիարք Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Հյուրերին քաղաքում դիմավորեցին Վայոց Ձորի մարզպետ Պ. Մանուկյանը, Ջերմուկի քաղաքապետ Ա. Արսենյանը, ղեկավար այլ այրեր: Կիրակնօրյա հոգևոր դպրոցի աշակերտները աղ ու հաց մատուցեցին: Սրբազան Հայրերը օրհնեցին աղն ու հացը և «Հրաշափառ» շարականի հնչյունների ներքո մոտեցան նոր կառուցվելիք եկեղեցու հիմքերին: Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը դիմեց հավաքվածներին ու շնորհակալություն հայտնեց, որ այստեղ հոգևոր և աշխարհիկ իշխանավորները միասնաբար են ժողովրդին սրբագործության տանում: «Պետք է սովորենք, որ եկեղեցի կնշանակի բոլոր հավատացյալների հավաքատեղի: Այն մեր հոգևոր տունն է»-, այսպիսի խոսքերով հավաքվածներին դիմեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Ողջույնի խոսքերից հետո տեղի ունեցավ եկեղեցու հիմնարկեքը՝ 16 քարերի օրհնման և օծման արարողությունը, որը կատարեցին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Երուսաղեմի Հայոց Պատրաիրք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը: Քավորներ դարձան մարզի և քաղաքի ղեկավարները, հարգված անձեր Ջերմուկ քաղաքից:

Հոգևոր արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել Ջերմուկի և Կեչուտի կիրակնօրյա դպրոցների բազմաթիվ աշակերտ-աշակերտուհիներ՝ իրենց ուսուցիչներ Լ. Բաղդասարյանի, Տ. Գրիգորյանի, Լ. Շահնազարյանի ղեկավարությամբ: Նրանց համար սա առիթ էր՝ ավելի մոտիկից ծանոթանալու եկեղեցական արարողություններին և ծեսին:

*ԲՈՐԻՍ ՔՈՉԱՐՅԱՆ*

## ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Առաջին անգամ լինելով, հիսուն տարիներ հետո, ազատ և անկաշկանդ պայմանների մեջ, սույն թվականի մարտի 27-ին, Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցու մեջ գումարվեց բուլղարահայ պատգամավորական ժողով՝ ընտրելու համար նոր թեմական խորհրդի անդամներ, չորս տարիների համար:

Թեմիս առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի աղոթքով և բացման խոսքով հայտարարվեց պատգամավորական ժողովի բացումը: Թեմական խորհրդի և քննիչ հանձնաժողովի զեկուցումից հետո, գաղտնի քվեարկությամբ տեղի ունեցավ նոր թեմական խորհրդի ընտրությունը: Առաջնորդ Սրբազանի նախագահությամբ թեմական խորհրդին կից ընտրվեց նաև կրոնական ժողով:

Առաջնորդ Հայրը պաշտոնական նամակով Ամենայն Հայոց Հայրապետին հաղորդեց նոր թեմական խորհրդի ընտրության մասին: Պատգամավորական ժողովին իրենց մասնակցությունը բերեցին քսանվեց հոգի, բուլղարահայ հայաշատ զանազան քաղաքներից:

Ժողովի ավարտին տրվեց սիրո սեղան:

Հաջորդ օրը, կիրակի, Ծաղկազարդի տոնին, առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագի ընթացքում սարկավագական ձեռնադրությունը կատարեց երեք երիտասարդ նվիրյալների, որոնցից երկուսը ուսանող են Սոֆիայի բուլղար հոգևոր ակադեմիայում: Այստեղ ուսանող է նաև Պլովդիվի հոգևոր հովիվ Տ. Դանիել քահանա Քարաջյանը:

Առաջնորդ Սրբազան Հայրն ամբողջ Ավագ Շաբաթվա ընթացքում, մինչև Ս. Զատիկ, այցելեց Պլովդիվ հայաշատ քաղաք:

Սրբազան Հայրը նախագահեց բոլոր եկեղեցական արարողություններին և հոգեշունչ քարոզներով մխիթարեց և խանդավառեց հավատացյալ ժողովրդին, ապա վերադարձավ իր պաշտոնատեղին՝ Բուխարեստ, այնտեղ ևս հին տոմարով նշելու Ս. Զատիկը:

### *ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՌՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ*

Թեմական խորհուրդը և Վառնայի ու Ռուսեի եկեղեցական վարչությունները դիմեցին առաջնորդ Սրբազան Հորը, որպեսզի երկու երիտասարդ սարկավագների քահանայական աստիճան շնորհի՝ իրենց եկեղեցիների համար: Մինչ այդ, երեք թեկնածու քահանաները Պլովդիվ քաղաքում, քահանայական խորհրդի ներկայությամբ, հանձնեցին քահանայական քննություն: Երկու սարկավագները՝ Սոֆիայի և Վառնայի, գերազանց գնահատականներով հանձնեցին իրենց քննությունը, իսկ Բուրգասի սարկավագը անպատրաստ էր և մնաց պատրաստվելու այս բարձր կոչմանը: Առաջնորդ Սրբազան Հայրը, ընդառաջելով Վառնայի հոգևոր հովվի և եկեղեցական վարչության ու հավատացյալների բուռն փափագին, որոշեց

քահանայական ձեռնադրություն կատարել Վառնայի Ս. Սարգիս եկեղեցում, որովհետև ավելի քան յոթանասուն տարիներ Վառնայի եկեղեցու մեջ քահանայական ձեռնադրություն չէր կատարվել:

Սրբազան Հայրը մայիսի 25-ին ժամանեց Ռուսե քաղաք, որտեղ նրան դիմավորեցին Տ. Սիոն վարդապետ Ադամյանը, Արթուր սարկավագ Հովհաննիսյանը, որը քահանայական թեկնածու էր Վառնայի Ս. Սարգիս եկեղեցու, և Վառնայի եկեղեցական վարչության անդամները:

Սրբազան Հոր կարգադրությամբ և նախագահությամբ, թեմական խորհրդի անդրանիկ նիստը գումարվեց Վառնա քաղաքում, մայիսի 29-ին:

Սրբազան Հոր աղոթքով բացվեց թեմական խորհրդի անդրանիկ նիստը: Այնուհետև Սրբազան Հայրն ընթերցեց Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը՝ թեմական խորհրդի նոր անդամներին ուղղված հաջողության մաղթանքներով: Ապա թեմական խորհրդի ատենապետ դոկտոր Ռուբեն Գրիգորյանն ընթերցեց բուլղար կառավարության և կրոնի նախարարության կողմից բուլղարահայ թեմական խորհրդի վավերացման գիրը: Նույն ժողովին Սրբազան Հայրն ընթերցեց Վեհափառ Հայրապետի պաշտոնական հրավերնամակը՝ ուղղված Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանին, որպեսզի նա իր մասնակցությունը բերի հուլիսի 2-ից 4-ը Ս. Էջմիածին և Հայաստան Հոմի քահանայապետի այցելության առթիվ: Նույն օրը, շաբաթ երեկոյան, ժամերգությունից հետո, Սրբազան Հոր նախագահությամբ և խարտավիլակությամբ Տ. Սիոն վրդ. Ադամյանի, ինչպես նաև մասնակցությամբ Սոֆիայի և Պլովդիվի քահանա հայրերի, կատարվեց կոչման արարողությունը երկու նվիրյալ սարկավագների՝ Արթուրի և Արամի:

Կիրակի, մայիսի 30-ին, կատարվեց քահանայական ձեռնադրություն՝ Սրբազան Հոր նախագահությամբ և խարտավիլակությամբ Տ. Սիոն վարդապետ Ադամյանի: Օծման պահին Սրբազան Հայրը սարկավագներին վերանվանեց և հոգևոր անուններ շնորհեց՝ Արթուր սարկավագին վերանվանելով Տ. Սարգիս, ի պատիվ եկեղեցու անվան, իսկ Արամ սարկավագին՝ Տ. Տիրայր, ընառաջելով վերջինիս խնդրանքին:

Սրբազան Հայրը քարոզ խոսեց ձեռնադրության առիթով և հորդորեց նորընծաներին՝ անմնացորդ և նվիրված ծառայեն իրենց Մայր Եկեղեցուն և հայ ժողովրդին: Սրբազան Հայրը քարոզի ընթացքում գեղեցկորեն ներկայացրեց նորընծաների հոգևոր անունների բացատրությունները: Ս. Պատարագին և քահանայական ձեռնադրությանը ներկա էին թեմական խորհրդի ողջ կազմը, նորընծաների կնքահայրերը, բազմաթիվ հավատացյալներ ոչ միայն Վառնա քաղաքից, այլ նաև Բուլղարիայի տարբեր վայրերից: Այս արարողությունը լայն արձագանք գտավ բուլղարական հեռուստատեսությամբ և մամուլով:

Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանը պետք է իր քառասնօրյա պահեցողությունն անցկացնի Վառնայի Ս. Սարգիս եկեղեցում, իսկ Տ. Տիրայր քահանա Հատավյանը՝ Սոֆիայում:

Ձեռնադրությունից հետո հյուրերին տրվեց սիրո ճաշ Վառնայի եկեղեցական վարչության կողմից:

**Տ. ՏԻՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՀԱՏԱԿՅԱՆ**

**/ Արամ սարկավագ /**

Ծնվել է 1976 թ. Պլովդիվ քաղաքում:

1984-94 թթ. միջնակարգ ուսումը ստացել է Սոֆիա քաղաքում:

Փոքր տարիքից ծառայել է եկեղեցում և միաժամանակ հակում ունեցել արհեստների հանդեպ, մասնավորաբար՝ ոսկերչության:

1986 թ. ծառայել է Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցում:

1994 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի:

1999 թ. մայիս 30-ին Բարձրաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է քահանա:

Նորընծա քահանան իր ծառայությունը շարունակելու է Ռուսե քաղաքում:

**Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**/ Արթուր սարկավագ /**

Ծնվել է 1978 թ. Էջմիածին քաղաքում:

1985-93 թթ. սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

Փոքր տարիքից հաճախել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի:

1993-96 թթ. սովորել է Գյումրիի հոգևոր ընծայարանում:

1996 թ. սեպտեմբեր ամսից ծառայության է անցել Աշտարակ քաղաքի Ս. Մարինե եկեղեցում:

1997 թ. օգոստոսի 3-ին, ձեռամբ Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. դեկտեմբեր ամսից ծառայության է անցել Բուլղարիայի Վառնա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցում, որպես սարկավագ:

1999 թ. մայիսի 30-ին Բարձրաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է քահանա:

Նորընծա քահանան իր ծառայությունը շարունակելու է նույն եկեղեցում:

***ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՎԱՌՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ***

Հունիսի 6-ին, կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը, Վառնայի Ս. Սարգիս եկեղեցին կրկին լեցուն էր բազմաթիվ հավատացյալներով, որտեղ մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էր առաջնորդ Սրբազան Հայրը:

Սրբազան Հայրն իր քարոզի մեջ վեր հանեց Ս. Էջմիածնի և ընդհանրապես Մեր Եկեղեցու դերը և նշանակությունը հայ հավատացյալների կյանքում: Հավարտ Ս. Պատարագի Սրբազան Հայրը, ընդառաջելով հոգևոր հովվի և եկեղեցական վարչության խնդրանքին, դպրության չորս աստիճաններ շնորհեց Սուրեն Ներսիսյանին:

Այնուհետև կատարվեց բացառիկ պատմական մի իրադարձություն բուլղարահայ թեմական կյանքում: Սրբազան Հոր նախագահությամբ, Տ. Սիոն վարդապետ Ադամյանի և նորընծա Տ. Սարգիս քահան Հովհաննիսյանի մասնակցությամբ ու կնքահայրությամբ Բուլղար Մեթոդիստ Եկեղեցու վերապատվելի Պետրոս Սլթունյանի, կատարվեց տասնինգ երեխաների հավաքական մկրտություն:

Սրբազան Հայրն այս կարևոր իրադարձությունը և հավաքական մկրտությունը նվիրաբերեց քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ռչակման 1700-ամյակին: Նոր մկրտվածները, որոնք մեծ մասամբ Հայաստանից եկած ընտանիքների զավակներ էին, կնքահոր կողմից և Սրբազան Հոր օրհնությամբ ստացան ոսկե խաչեր:

*ԴԻՎԱՆ ԲՈՒԼՂԱՐԻԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

1999 թ. մայիսի 11-ին Գերմանիայի հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանը, Հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի ընկերակցությամբ, Բեռլինի Ս. Խաչ եկեղեցում մասնակցեց Ս. Սեդանի ծածկոցների ցուցահանդեսի բացման արարողությանը: Ցուցահանդեսը կազմակերպվել էր Բեռլին-Բրանդենբուրգի քրիստոնյա տարբեր ազգերի համայնքների միության կողմից, որի պատվավոր նախագահն է Ղպտի եկեղեցու պետ Դամիան եպիսկոպոսը և վարչության ատենապետը՝ Հայ եկեղեցու համայնքի վարչության անդամուհիներից տիկ. Սոնա Այքերը:

Ցուցահանդեսի բացումը կատարվեց միջեկեղեցական աղոթքով՝ կաթոլիկ, ավետարանական, հայ և ղպտի եպիսկոպոսների մասնակցությամբ, Վիետնամի ու Աֆրիկյան կաթոլիկ համայնքների պատվիրակների երգեցողությամբ:

Այնուհետև առաջնորդ Սրբազանը պաշտոնական այցելություն կատարեց Բեռլինի Ղպտի համայնքի նոր եկեղեցի՝ Դամիան եպիսկոպոսի առաջնորդությամբ:

* * *

1999 թ. մայիսի 29-30-ին Քյոլնի Հայոց Առաջնորդարանում գումարվեց Թեմի Պատգամավորական ժողովը՝ 13 համայնքներից 46 պատգամավորների մասնակցությամբ: Ներկա էին նաև թեմի հոգևոր հովիվները՝ առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի գլխավորությամբ:

Ժողովը բացվեց առաջնորդ Սրբազան Հոր աղոթքով: Ապա ներկաներին ողջունեց թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Սարգիս Քեհյայանը, որն իր ուրախությունը հատնեց, որ բոլոր համայնքների պատգամավորները ներկա են և եկել են նոր ու դրական առաջարկություններով:

Նշենք նաև, որ բոլոր համայնքներին նախապես ուղարկվել էին պատրաստված հատուկ հարցաթերթիկներ, որոնք պարունակում էին տվյալ համայնքի գործունեությունը, հաշվեկշիռը, իրագործված ու իրագործելի ծրագրերը, ինչպես նաև մտահոգություններն ու նոր առաջարկները: Այս հարցաթերթիկների պատասխանների հիման վրա կատարված արժևորումները ժողովի աշխատանքին իբրև հիմք ծառայեցին: Նույնպես, համայնքները տեղեկացան միմյանց փորձառությանը:

Բացումից հետո, ըստ օրակարգի հերթականության, Պատգամավորական ժողովի ատենադպիր Հոգեշ. Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի կողմից կարդացվեց անցյալ Պատգամավորական ժողովի /1998 թ. նոյեմբեր 29-30/ ատենագրությունը և վավերացվեց միաձայնությամբ:

Այնուհետև դոկտ. Սարգիս Ադամի կողմից ներկայացվեց 1998 թ. տարեշրջանի Առաջնորդարանի գործունեության Տեղեկագրությունը՝ իր հիմնական և կարևոր ուղղություններով:

Առաջնորդարանի նյութական հաշվետվությամբ հանդես եկավ գանձապահ տիար Հերման Օտապաշյանը:

Այս երկու նյութերի շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակությունից հետո, ժողովը զբաղվեց Առաջնորդարանի հետ կապված համայնքների տեղեկագրությամբ, որոնք ներկայացվեցին համապատասխան համայնքների ներկայացուցիչների կողմից:

1999 թ. մայիսի 30-ին, առավոտյան ժամը 10.00-ին, ժողովը շարունակեց իր աշխատանքները:

«Յոգնոր գործունեությունը Գերմանիայի հայոց թեմում 1992-1998 թթ.» զեկուցումով հանդես եկավ Յոգեշ. Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը: Այս հարցի վերաբերյալ իրենց կարծիքները հայտնեցին նաև առաջնորդ Գարեգին Սրբազանը և Անուշավան աբեղա Ժամկոչյանը: Առաջնորդ Սրբազանն ընդգծեց, որ Յանաու և Կյուփինգենի համայնքները շատ մոտ ժամանակներս պիտի մնայուն հովիվներ ունենան:

Օրվա նիստի վերջին հիմնական մասը զբաղեցրեց «նոր ծրագրեր և առաջարկություններ» բաժինը: Այս թեմայով նախ հանդես եկավ դոկտ. Խաչիկ Թաթարյանը, որը ծանրացավ Առաջնորդարանի գործունեությունն ու առաքելությունն առավել աշխուժացնելու և գործնական դարձնելու մի քանի կետերի վրա՝ ներկայացնելով նաև մի շարք առաջարկություններ, որոնց վերաբերյալ տեղի ունեցավ մտքերի աշխույժ և օգտաշատ փոխանակություն, երբեմն նաև հայտնվեցին իրարամերժ տեսակետներ ու մոտեցումներ, որին մասնակցեցին տարբեր համայնքների ներկայացուցիչները:

Փակման խոսքով հանդես եկան ժողովի ատենապետ դոկտ. Սարգիս Քեհյայանը և առաջնորդ Գարեգին արքեպս. Բեքչյանը:

Սրբազան Յայրն անդրադարձավ Առաջնորդարանի հետագա գործունեության հիմնական կետերին՝ շեշտելով Առաջնորդարան- համայնքներ կապը առավել զորացնելու, մեկ մարմին ու ամբողջություն դարձնելու, նրանց շահերն ու աշխատանքները ներդաշնակելու կարևորությունը: Սրբազանը մեկ անգամ ևս շատ կարևոր նկատեց Յոգնոր Ընծայարան ունենալու գաղափարը և Այխշթեդ քաղաքի կաթոլիկ համալսարանի հետ համագործակցաբար նոր, ուսյալ սերունդ պատրաստելու հարցը, մի ծրագիր, որից, ցանկության դեպքում, կարող է օգտվել ոչ միայն Գերմանիայի հայոց թեմը, այլև Յայաստանյայց Եկեղեցու բոլոր թեմերը:

Սրբազանն անդրադարձավ նաև Գերմանիայում Յայաստանի Յանրապետության դեսպանության Բեռլին տեղափոխության խնդրին՝ մատնանշելով, որ Առաջնորդարանն իր կարելին է անում՝ նյութապես ու բարոյապես սատարելով Յայրենի դեսպանատանը:

Ժողովը փակվեց առաջնորդ Սրբազանի արտասանած «Պահպանիչ» - ով և համատեղ երգած « Յայր մեր»-ով:

## ԼՈՒՐԵՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻՑ

### *ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Արմավիր քաղաքի մշակույթի պալատի մարդաշատ դահլիճում հունիսի 6-ին տեղի ունեցավ մարզկենտրոնի Սուրբ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի տարեմուտի հանդեսը (տնօրեն՝ Գ. Հայրապետյան, կազմակերպիչներ՝ Ս. Սիմոնյան, Ռ. Հարությունյան, խմբավար՝ Գ. Կնյազյան), որին ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժամանած բարձրաստիճան հոգևորականներ, ծնողներ, մեծաքիվ հյուրեր: Մոտ մեկ ժամ տևողությամբ հանդիսությունը կրում էր «Քրիստոնեությունը 1700-ամյա լուսավոր կանթեղ» խորագիրը և նվիրված էր Աստծո ու Աստվածաշնչի, հայոց առաջին լուսավորիչների՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների, մեր Հավատո Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Էջմիածնի, ինչպես նաև Հայոց Հինավուրց երկրի և նրա զավակների ու մեսրոպատառ այբուբենի փառաբանմանը:

Վերջում ներկաներին, աշակերտությանը և ուսուցչական կազմին իր օրհնության խոսքը հղեց Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը:

* * *

Այս հանդիսությանն այնուհետև Մեծամորի մշակույթի պալատի գեղեցիկ դահլիճում հաջորդեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա վարժարանի տարեմուտի հանդեսը (կազմակերպիչներ՝ Օ. Գինոսյան, Ն. Հակոբյան), որը նույնպես անցավ տոնական բարձր մթնոլորտում: Այն էլ ավելի կարևորվեց վարժարանի ավարտական դասարանի թվով տասնմեկ սաների խոսքով, ինչպես նաև նրանց հասցեին ինչած բարեմաղթանքներով:

Սաներին բարեմաղթանքի խոսք ասաց դպրոցի տնօրեն Ենոք Հայրապետյանը՝ կամենալով, որ նրանց ճանապարհին մշտապես կանաչ լույս վառվի:

Տպավորիչ ու սրտամոտ էին հատկապես Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանի՝ տասներորդցիներին ուղղված բարի երթի խոսքերը:

### *ԻՐ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԴՌՆԵՐԸ ԲԱՑԵՑ ԱՐՏԻՄԵՏ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ*

Հունիսի 10-ին Արտիմետ (Էջմիածին) գյուղում, 70-ամյա ընդմիջումից հետո, տեղի հավատացյալ ժողովրդի առջև վերստին իր դռները բացեց Սուրբ

Աստվածածին եկեղեցին: Մեծաթիվ հավատացյալներ էին եկել՝ ներկա գտնվելու ծիսական անդրանիկ արարողությանը՝ երեկոյան ժամերգությանը, որին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժամանած հոգևորականներ՝ Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանի գլխավորությամբ:

Հավարտ ժամերգության ներկա հավատացյալներին իր օրհնության խոսքը հղեց Հոգեշնորհ Հայր Սուրբը: Շնորհավորելով ներկաներին ուրախարար առիթով՝ Հայր Արշենը մաղթեց, որ Աստծու հովանավորությամբ մշտապես մարդաշատ լինի այս եկեղեցին, և այստեղ գան իրենց աղոթքն առաքելու առ Բարձրյալը:

Համագյուղացիների հետ իր ուրախությունը կիսեց նաև Գարսևան Ղազարյանը: Նա որդիների հետ համատեղ է կառուցել այս եկեղեցին ու մշտապես հոգ տարել՝ կանգուն պահելու համար այն:

Ներկաներին շնորհավորանքի խոսք ասաց նաև գյուղապետ Ջավեն Միրզախանյանը:

Ապա ամենքը միասին աղոթեցին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի շուտափույթ ապաքինման համար:

Հոգևոր արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքի երգեցողությամբ:

Վերջում ներկաներին բաժանվեցին հոգևոր բովանդակությամբ թերթոններ և փոքրիկ աղոթագրքեր:

### *ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂՈՒՄ*

Տեղի բնակիչների համար բացառիկ մի իրադարձություն էր Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղում հունիսի 13-ի կիրակի օրը մատուցված Սուրբ և անմահ Պատարագը, որին ներկա էր համարյա գյուղի ողջ բնակչությունը, մեծաթիվ հյուրեր՝ շրջակա բնակավայրերից և մարզկենտրոնից:

Ս. Պատարագը մատուցվեց մշակույթի տանը: Օրվա պատարագիչն ու քարոզիչն էր Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

Քարոզի բնաբան ընտրելով «Ես եմ կենաց հացը» (ՀՈՎՀ. Զ 35)՝ Հոգեշնորհ Հայր Սուրբը, «Հայր մեր»-ից առաջ դիմելով ներկա հավատացյալ ժողովրդին, ի մասնավորի կարևորեց ճշմարիտ Կենաց Հացի՝ Հիսուս Քրիստոսի կենդանարար և լուսատու պատվիրանների կատարումը, մեր Տիրոջ նախանշած լույսի ճանապարհով ընթանալը, որը թեև դժվարին է ու տատասկոտ, սակայն քաղցր է ու բաղձալի: Նաև ուրախությամբ նշեց, որ կամաց-կամաց վեր է բարձրանում անհավատության քողը՝ տեղը զիջելով Կենաց Հացին, Կենաց Լույսին և Կենաց Աղին: Վկան՝ ներկաների հոծ բազմությունը:

Հավարտ Սուրբ Պատարագի, իրենց ուրախ երգ ու պարով, ասմունքով հավաքվածներին մեծ ուրախություն պարգևեց Նոր Արմավիր գյուղի ազգագրական երգի-պարի համույթը, որի հովանավորն է Արմավիրի թեմը:

## ՆՈՐ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՇԱՐ «ԿԱՆԹԵՂ»

Ընդամենը մեկ ամիս առաջ, այսինքն՝ սույն թվականի հունիս ամսին, Արմավիրի թեմի նախաձեռնությամբ, կյանքի կոչվեց մարզային «ԿԱՆԹԵՂ» հոգևոր հաղորդաշարը, որի հիմնական նպատակը՝ իր ունկնդիրներին հոգևոր սնունդ փոխանցելն է:

Անդրանիկ հաղորդումն սկսվեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի օրհնության խոսքով:

Նորաստեղծ հաղորդաշարին բարի երթի իր խոսքը հղեց նաև Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

Շաբաթական երկու անգամ, երեքշաբթի և ուրբաթ օրերին, եթեր հեռարձակվող հաղորդաշարը պարբերաբար անդրադառնում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքին և ծիսական արարողությանը:

«Մեր նամականին» էջում բարձրաստիճան հոգևորականները պատասխանում են ունկնդրին հուզող հարցերին:

Հաղորդաշարն ունի նաև լրատվական բաժին, ուր տեղ են գտնում Արմավիրի թեմում կազմակերպվող հոգևոր միջոցառումների, գրական-գեղարվեստական, ինչպես նաև դպրոցական հանդիսությունների արձագանքները և համանման այլ տեղեկություններ:

Ասենք նաև, որ Արմավիրի թեմը կազմավորվել է ընդամենը երեք տարի առաջ, 1996 թվականին, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ պաշտոնագրով:

Այսօր խոսելով նորաստեղծ թեմի եռամյա պատմության մասին, արդեն իրավամբ կարելի է ասել, որ շատ բան է փոխվել այն ընդգրկող տարածքում: Փոքրաթիվ, բայց և նվիրյալ հոգևորականների ջանքերով Ավետարանական պատգամներին ի հասու է դառնում մարզի բնակչությունը, երեխաները հաճախում են կիրակնօրյա դպրոցներ, գործում են ծնողաց լսարաններ: Հանրակրթական, ինչպես նաև կիրակնօրյա դպրոցներում, կրոն դասավանդելու նպատակով, Քրիստոնեական Քարոզչության և Դաստիարակության Կենտրոնի ջանքերով, վերապատրաստման դասընթացներ անցան մի խումբ ուսուցիչ-ուսուցչուհիներ:

## ԴՐԱՄԱՀԱՎԱՔ-ՄԱՐԱԹՈՆ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Հունիսի 15-ին Արմավիր քաղաքում քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի շրջանակներում անցկացվեց դրամահավաք-մարաթոն, որի նպատակը քաղաքում Ս. Ամենափրկիչ եկեղեցու կառուցումն էր:

Այն կազմակերպվել էր համաձայն Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանի սույն թվականի մայիսի 18-ի հրամանի:

Դրամահավաք-մարաթոնը բացվեց Տերունական աղոթքով, ապա ներկաներին օրվա խորհուրդն ու կարևորությունը մեկնեց Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

Աշակերտների կողմից կատարված գրական-գեղարվեստական հայտագրում գեղեցիկ կերպով ներկայացված էին քրիստոնեության մուտքը Հայաստան, Ս. Առաքյալների և Ս. Կույսերի նահատակությունը, Ս. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքները, խոր Վիրապում անցկացրած տարիները, գրերի գյուտը, հայ ժողովրդի ղեգերումները պատմության քառուղիներում՝ անցյալ դարերից մինչև Արցախյան ազատամարտ:

Այնուհետև, հակիրճ խոսքից հետո, առաջին նեդրումը ուսուցչական կազմի անունից կատարեց դպրոցի տնօրեն Արամ Խաչատրյանը:

Միջոցառման առաջին մասը, որ ավարտվեց 14.30-ին, շարունակվեց համերգային գեղեցիկ ծրագրով, որը մեջընդմեջ ընդհատվում էր ելույթներով և նվիրատվությունների բարձրաձայն հայտարարությամբ:

Օրվա երկրորդ կեսին, կարճատև ընդմիջումից հետո, մարաթոնը շարունակվեց քաղաքի հրապարակում: Այն առավել հրապուրիչ անցկացնելու համար Արմավիր էին ժամանել Արարատյան Հայրապետական թեմի Արաբկիրի, Սալաթիայի և Նոր Նորքի Հայորդյաց տների գեղարվեստական համույթները:

Մարաթոնը շարունակվեց մինչև ժամը 22.00: Այդ ընթացքում ելույթներ ունեցան թիվ 9 միջնակարգ դպրոցի աշակերտուհիներ Տաթևիկ և Լիլիթ Պարույրյանները՝ իրենց եղբոր հետ, ինչպես նաև հրապարակ եկած մեծաթիվ մանուկներ:

Ուշ երեկոյան բացվեց գանձանակը: Հավաքված ընդհանուր գումարը կազմում էր մոտ 175.000 դրամ:

Թեև այնքան էլ մեծ չէր հավաքված գումարը, սակայն կարևորն այն էր, որ կատարվեց մեծ գործի նույնքան կարևոր առաջին քայլը: Արմավիրցին հասկացավ, որ ի վերջո հասել է այն պահը, երբ սեփական ձեռքերով պետք է դնի իր հավատի տան վեմը, որպեսզի այսօրվա մանուկը, բայց վաղվա հասուն քաղաքացին, տարակուսանքով չնայի հարազատ զավակի աչքերին ու երկմտի, թե ի՞նչ է պատասխանելու մանուկ հոգուց բխած անկեղծ ու պարզ հարցին. «Ինչո՞ւ մենք էլ մեր քաղաքում չունենք մե՛ր եկեղեցին»:

*ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

# Ս. ՔԵԹՐԻՆՋՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՁ ԺՈՂՈՎԸ

Կանադահայոց թեմի Պատգամավորական ԺՁ ժողովը գումարվեց Օնթարիո նահանգի Ս. Քեթրինզ քաղաքում մայիսի 27-30-ը, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուրընկալությամբ: Այն նախագահում էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տէրտէրյանը:

Երկօրյա ժողովի օրակարգը բաղկացած էր հինգ կետից: Անդրանիկ նիստին, որ տեղի ունեցավ մայիսի 27-ին, և որին մասնակցում էր միայն հոգևորականաց դասը, բացման աղոթքից հետո հաստատվեցին օրակարգում տեղ գտած հարցերը, ապա անցան դրանց քննարկմանը:

Մայիսի 28-ին, օրվա երկրորդ կեսին, գումարվեց տիկնանց պատգամավորական ժողովը, որի ընթացքում քննարկվեցին անցնող՝ 1998 տարեշրջանում կատարված տնտեսաքարոյական աշխատանքները: Ժողովն ընտրեց կենտրոնական մարմին:

Նույն օրը, քիչ ուշ, Պատգամավորական ԺՁ ժողովին կից գումարվեց նաև Հայաստանի ծնողազուրկ երեխաների մարմնի հանձնախմբերի միացյալ ժողովը, որը քննարկեց 1998 թվականի տնտեսա-քարոյական տեղեկագիրը՝ միաժամանակ օրակարգի գլխավոր նյութ դարձնելով նույն մարմնի կողմից ծավալվելիք առաջիկա գործունեությունը:

Վերոհիշյալ բոլոր ժողովները նախագահում էր Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տէրտէրյանը:

Մայիսի 28-ի երեկոյան գումարվեց Կանադահայոց թեմի ԺՁ ժողովը: Այն պաշտոնապես բացվեց Սրբազան Հոր աղոթքով: Անդրանիկ նիստին ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը: Վեհափառ Հոր պատգամին հաջորդեց Կանադայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Բարխուդարյանի խոսքը՝ ուղղված Պատգամավորական ժողովին:

Մայիսի 29-ի շաբաթ օրը Բ և Գ նիստերի ընթացքում քննարկվեցին Ս. Ներսես աստվածաբանական ընծայարանի, Տիկնանց Պատգամավորական ժողովի կենտրոնական մարմնի, A.C.Y.O.C.-ի, CYMA-ի, Հայ Մշակույթի շրջանակի, Հայաստանի ծնողազուրկ երեխաների, առաջնորդի, թեմական խորհրդի, նյութական հաշվետվությանց, հաշվեքննիչ հանձնախմբի տեղեկագրերը:

Ժողովի ընթացքում քննարկվեցին նաև Կանադահայոց թեմին առնչվող հիմնահարցեր:

Ընտրվեցին նաև հետևյալ մարմինները.

1. Թեմական խորհուրդ,
2. Ընտրողական հանձնախումբ,
3. Կալվածոց մարմնի նորընտիր անդամ:

Ապա ժողովի բոլոր մասնակիցները, Սրբազան Հոր գլխավորությամբ, իրենց ցավակցությունները հայտնեցին տիկին Կարմեն Քեքլիին ամուսնու՝ Վահե Քեքլիի մահվան առիթով:

Ժողովի վերջում ներկաներին իր պատգամն ուղղեց թեմակալ առաջնորդ

Գերաշնորհ Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանը ի մասնաւորի ասելով. «Գանատահայոց թեմը Հայ Եկեղեցին կազմող թեմական կառոյցներէն մէկն է, որուն պատկերը բարեփոխելու բարոյական պարտաւորութիւնը տրուած է բոլորիս հաւասարապէս: Որպէս թեմակալ առաջնորդ, թեմի հոգևոր հովիւներուն և Ձեզի հետ միասին նուիրական պարտականութիւն մը ունինք բարեզարդելու Քրիստոսի եկեղեցին, ուրիշ խօսքով, եկեղեցին հաստատելու իր առաքելական դերին մէջ: Եկեղեցին պէտք է վերապրի Քրիստոսի և իր առաքեալներու ժամանակը: Երբ կը կարդանք Աւետարանները, հոն կը հանդիպինք իր ժողովուրդի կեանքին մէջ նոր խօսք յայտարարող ճշմարիտ հովիւին, որուն կը հետևին նաև առաքեալները: Յովիւն ու իր աշակերտները ներթափանցած էին ժողովուրդի կեանքին մէջ: Այսօր, նիւթականացած աշխարհին մէջ եկեղեցին հետզհետէ հաստատութեան մը կը վերածուի՝ ազդուելով արտաքին ազդակներէ: Ուրախ ենք, սակայն, հաստատելու, որ հակառակ մեր թեմի հաւատացեալներու թիւին, քանի մը հոգևորականներով մենք մեր կարելին կ'ընենք եկեղեցւոյ հաստատութեան ու ժողովուրդին միջև կայացած հեռաւորութիւնը ջնջելու անձնական յարաբերութիւններով: Այս հանգամանքը կը յուսադրէ մեզ, որովհետև տակաւին որպէս երիտասարդ հովիւներ, մեր առջև ունենալով գործունէութեան երկար ժամանակահատուած և լայն հնարաւորութիւններ, անկասկածօրէն, օրէցօր ալ աւելի մուտք գործելով ժողովուրդի կեանքին բոլոր խաւերէն ներս, իւրաքանչիւրս մեր հովուական փորձառութիւնը պիտի դարձնենք նոր յաջողութեանց գրաւականը»:

Ժողովը եզրափակվեց պաշտոնական ճաշով, որի ընթացքում թեմի բարձրագույն «Ս. Էջմիածին» Ա կարգի շքանշանին արժանացավ Մոնրեալի բնակիչ դոկտոր Արտո Դեմիրճյանը՝ ի գնահատություն իր ավելի քան 40-ամյա ազգային եկեղեցանվեր ծառայության: Առաջնորդարանի Բ կարգի շքանշանի արժանացան տիար Արիս Թյութունջյանը, տիկին Անի Քյուրքչյանը,տիար Մաղաք Սամուրյանը, տիար Սարգիս Թեոքմեջյանը, դոկտոր Ջոն Բալաքանյանը:

Որոշվեց Թեմական պատգամավորական ԺԸ ժողովը գումարել Տորոնտոյում, 2000 թ. մայիսի 27-29-ը՝ Ս. Երրորդություն հայոց եկեղեցու հյուրընկալությամբ:

Թեմական Պատգամավորական ԺԶ ժողովի մասնակիցները իրենց որդիական երախտագիտությունը փոխանցեցին ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ աղոթելով Նորին Սրբության շուտափույթ ապաքինման համար:

*ԴԻՎԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԼՈՒՐԵՐ

**ԱԼԲԱՆԻԱ**
**ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԲԵՐՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒՆ**

Ալբանիայի Ավտոկեֆալ Ուղղափառ եկեղեցին, Նորին Ամենապատվություն Անաստասիոս Արքեպիսկոպոսի անմիջական ջանքերի շնորհիվ, շարունակում է իր նպաստը բերել Կոսովոյի փախստականներին: Այդ ծրագրի իրականացման արդյունքում կառուցվել են երկու ճամբարներ, որոնք ընդունել են շուրջ 1.500 փախստականների: Ալբանական եկեղեցին զբաղվում է նաև սննդամթերքի բաշխման գործով:

**ՌՈՒՄԻՆԻԱ**
**ՊԱՊՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՅՑԵԼԵՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՐԿԻՐ**

Հովհաննես-Պողոս Բ Պապը պատմության մեջ մտավ իբրև առաջին քահանայապետը, որն այցելեց ուղղափառ երկիր: Մայիսի 7-ից 9-ը Ռումինիա կատարած այցելության ընթացքում Նորին Սրբությանը ողջունել են Ռումին եկեղեցու պետ Թեոկտիստ Պատրիարքը և Սուրբ Սինոդը: Մայիսի 8-ին Պապն ու Պատրիարքը միասնական կոչ են ուղղել օտար երկրների ղեկավարներին՝ Հարավսլավիայի հակամարտությունը բանակցային և խաղաղ ճանապարհով լուծելու համար: Մայիսի 9-ին, կիրակի օրը, առավոտյան, շուրջ 100.000 մարդ են մասնակցել Բուխարեստի Միության Հրապարակում Թեոկտիստ Պատրիարքի մատուցած Պատարագին, որին ներկա էր նաև Հռոմի Պապը: Ավելի ուշ, պուրակում, Պատարագ է մատուցել Պապը, որին մասնակցելու էին եկել ավելի քան 200.000 մարդ: Իր խոսքում Պապն ասել է, որ մինչև վերջին ժամանակները նման այցելությունը «անհնարին» կլիներ, սակայն, փառք Աստծո, տառապանքի և անհանդուրժողության երկարատև ձմեռն անցել է:

**ՍԵՐԲԻԱ**
**ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՎԵՐՋ ՏԱԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ**

Նորին Սրբություն Պավլե Պատրիարքը և Սերբական եկեղեցու եպիսկոպոսաց Համագումարը, մայիսի 13-ից 15-ը Բելգրադում գումարած ժողովում, դարձյալ կոչ են արել ՆԱՏՕ-ի անդամ երկրներին՝ դադարեցնել կույր ռմբակոծությունները: «ՆԱՏՕ-ի կողմից Հարավսլավիայի ողջ տարածքի ուժգին

ռմբակոծությունները, որոնք տևում են արդեն երկու ամիս, աննախադեպ տառապանք են պատճառել բոլոր մարդկանց և տեղաբնակ յուրաքանչյուր ազգությանը, ինչպես նաև մեծ նյութական ավերածություն են հասցրել»,- ասվում է ժողովում ընդունված հայտարարության մեջ:

***ՀՈՒՆԱՍՏԱՆ***
***ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ***

Նորին Սրբություն Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն պաշտոնական այցով մեկնել է Հունաստան : Նա մայիսի 21-ին ժամանել է Աթենք և անմիջապես ուղեկցվել Աթենքի Մայր Տաճար, ուր տեղի է ունեցել Նորին Սրբության և Հունական Ավտոկեֆալ Եկեղեցու առաջնորդ Նորին Ամենապատվություն Քրիստոդուլոս Արքեպիսկոպոսի պաշտոնական հանդիպումը: Երկշաբաթյա այցելության ընթացքում Պատրիարքը հանդիպել է Հունաստանի նախագահի, նախարարների և պաշտոնատար մի շարք անձանց հետ:

***ՌՈՒՍԱՍՏԱՆ***
***ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 275-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ***

Հունիսի 4-ին Նորին Սրբությունը մասնակցել է Կրեմլի տաճարում տեղի ունեցած Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի հիմնման 275-ամյակին նվիրված միջոցառմանը, որին ներկա էին ՌԴ վարչապետ Ս. Վ. Ստեպաշինը, Մոսկվայի քաղաքապետ Յու. Մ. Լուժկովը և գիտության ու մշակույթի ականավոր գործիչներ: Իր խոսքում Ալեքսիյ Բ-ն մեծապես արժևորել է Գիտությունների Ակադեմիայի կատարած դերն ու նշանակությունը Ռուսաստանի հոգեմտավոր կյանքում:

***«XXI ԴԱՐ՝ ԱՌԱՆՑ ԹՄՐԱԴԵՂԵՐԻ»***

Հունիսի 25-ից 26-ը Մոսկվայում կայացավ «XXI դար՝ առանց թմրադեղերի» խորագիրը կրող միջազգային համաժողովը, որին մասնակցում էր մետրոպոլիտ Սերգին: Նա հանուն Ալեքսիյ Բ-ի ընթերցել է ողջույնի ուղերձը, որտեղ մասնավորաբար ասվում է. «Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների սոցիալ-տնտեսական անկայունությունը պարարտ հող են ստեղծում, որպեսզի մարդիկ իրենց միայնակ և անպաշտպան զգալով՝ թվացյալ ապահովություն փնտրեն թմրադեղերի օգտագործման մեջ»:

***<u>ՄԱՏԻԿԱՆ</u>***
***ՊԱՊԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՀԱՍՏԱՆ***

Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը հունիսի 5-ից 17-ը հովվապետական այցելություն է կատարել Լեհաստան, որը թվով 7-րդն էր և ամենաերկարը: Հռոմի Քահանայապետի կարգավիճակով նա առաջին անգամ իր ծննդավայր է եկել 1979 թ. հունիսի 2-ից 10-ը: Իր այցելության ընթացքին Պապը Պատարագ է մատուցել «Լեհ սուրբ նահատակ եղբայրների» եկեղեցում և սրբացրել մեծ թվով մարդկանց: Այսպես, Տուրինում նա սրբացրել է Հ. Վինսենտի Ֆրելիչովսկուն, Վարշավայում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհ դարձած և համակենտրոնացման ճամբարներում Քրիստոսին խոստովանած թվով 108 հոգու: Մայրաքաղաքում նա սրբացրել է նաև Էդմունդ Բոյանովսկուն և քույր Ռեգինա Պռոտմանին: Այցելության վերջին օրերին, սակայն, Նորին Սրբության առողջական վիճակը կտրուկ վատթարացել է:

***ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆԵԼ***
***ԱՅՑԵԼԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ***

Հունիսի 29-ին Հովհաննես-Պողոս Բ Պապը ցանկություն է հայտնել բացառապես հոգևոր և կրոնական բնույթ կրող անհատական ուխտագնացություն կատարել դեպի Սինայի լեռ և Ուր, Նազարեթ, Բեթղեհեմ ու Երուսաղեմ քաղաքներ:

***<u>ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ</u>***
***ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ***
***ՈՂՋՈՒՆԵԼ ԵՆ ԿՈՍՈՎՈՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱԴԱՐԸ***

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը (WCC), Եվրոպական Եկեղեցիների Համագումարը (CEC), Լութերական Համաշխարհային Դաշնությունը (LWF) և Բարեկարգյալ Եկեղեցիների Համաշխարհային Միությունը (WARC) ողջունել են պատերազմի ավարտն ազդարարող ՆԱՏՕ-ի որոշումը: Այս առիթով նրանք մի հայտարարություն են հրապարակել, որտեղ ասվում է. «Կոսովոյի վերականգնումը հիմնական խնդիրն է և փախստականների վերադարձի նախադրյալը»:

# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

## ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի մայիսի 15-20-ին Ռումինիայի Սիբիու (Հերմանշտադ) քաղաքում, որը գտնվում է Բուխարեստից 272 կմ հեռավորության վրա, տեղի ունեցավ մարդու իրավունքների և կրոնական համոզմունքների փոխհարաբերությանը նվիրված էկումենիկ համաժողով:

Ժողովին Հայ եկեղեցու կողմից, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կարգադրությամբ, մասնակցում էր Միջեկեղեցական բաժնի քարտուղար Սամիկոն սրկ. Ավետիսյանը:

Սեմինարը կամ համագործակցությունը կազմակերպվել էր Լյութերական Միջազգային Ֆեդերացիայի - ԼՄՖ (Lutheran World Federation – LWF) և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերենցիայի - ԵԵԿ (Conference of European Churches – CEC) կողմից՝ նվիրված լինելով այն հարցին, թե մարդու իրավունքների պաշտպանությունը ինչպես է հարաբերակցվում քրիստոնեական հավատքի և եկեղեցական ավանդական ըմբռնումների հետ:

Այս սեմինարը ԼՄՖ-ի կողմից կազմակերպված հերթական՝ 5-րդ միջոցառումն էր մարդու իրավունքների ասպարեզում: Իսկ ԵԵԿ համար՝ 2-րդը, որին մասնակցեցին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մեծամասամբ նախկին Խորհրդային Միության երկրների ու եկեղեցիների ներկայացուցիչներ:

Սեմինարին հրավիրված էին 28 մասնակիցներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 12 երկրների 21 տարբեր եկեղեցիներից և դավանանքներից: Պատվիրակները հյուրընկալվել էին Ռումինիայի Ավետարանական Եկեղեցու և Ռումինիայի եկեղեցիների Էկումենիկ Ընկերության (AIDROM) կողմից, որը գլխավորում է Պրն. Հերբերտ Հ. Հոֆմանը:

Մայիսի 15-ին, առավոտյան, հանդիսավոր կերպով և մասնավոր աղոթքով բացվեց ժողովը Լյութերական-Ավետարանական մի եկեղեցու մեջ, որի պաշտոնական բացումով և ողջույնի խոսքով հանդես եկավ Ռումինիայի Ավետարանական Եկեղեցու պետ Քրիստոֆ եպիսկոպոս Քլայնը: Այնուհետև, հյուրերը եկեղեցուց շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնական հյուրանոց, որի առաջին հարկի ընդարձակ նիստերի հատուկ դահլիճում պիտի տեղի ունենար սեմինարը: Ժողովը նախագահում էին ԵԵԿ-ի «Եկեղեցի և Ընկերություն» գրասենյակից Պատվելի Ռուդիգեր Նոլլը և ԼՄՖ-ի «Մարդու Իրավունքներ և Միջազգային Գործեր» գրասենյակից փաստաբան Պրն. Պիտեր Պրովը, որին իբրև քարտուղարուհի օժանդակում էր Տիկ. Շիլա Ֆրիդմին:

Սեմինարի ընթացքում դասախոսություններն ու քննարկումները կատարվում էին հիմնականում անգլերեն կամ գերմաներեն լեզուներով՝ միաժամանակ ապահովվելով համապատասխան թարգմանությամբ և անհրաժեշտ գրականությամբ: Պետք է ասել, որ ժողովը կազմակերպված էր

բարձր մակարդակով և մեծ հետաքրքրությամբ, քանի որ յուրաքանչյուր պատվիրակ անմիջական մասնակցություն էր ունենում ինչպես աղոթքներին և դասախոսություններին, այնպես էլ քննարկումների ընթացքում ազատորեն արտահայտում էր իր անհատական կարծիքը: Այնպես որ, ժողովի բարեհաջող ընթացքն ու բուն նպատակին հասնելու երաշխիքը մի տեսակ պայմանավորված էր յուրաքանչյուր մասնակցի ոչ կրավորական կեցվածքով, որից զուրկ էին բոլոր ներկաները: Երկրորդ օրը համաժողովի նախագահության կողմից առաջարկվեց և ընդունվեց Մամիկոն սրկ. Ավետիսյանի և Պատվելի Յուլիանա Անա Բուի (Ռումինիայի Բարեկարգված Եկեղեցու ներկայացուցիչ) թեկնածությունը՝ ընդգրկվելու Ղեկավարող Կոմիտեի (Steering Committee) կազմում, և երկուսով իբրև ժողովի խոսնակ կամ վարիչ (Moderator) երկու օր փոխնիփոխ վարեցին սեմինարը:

Ժողովը նվիրված էր մարդու իրավունքների հարցին, որի համատեքստում «Արդարություն Հանուն Ազգային, Էթնիկ և Կրոնական Փոքրամասնության» խորագրի ներքո մեկշաբաթյա դասախոսությունների, զանազան միջազգային կազմակերպությունների, հաստատությունների ու ինստիտուտների ծանուցող-ելույթների, ինչպես նաև ընդհանուր և փոքր խմբակային քննարկումների ու վիճաբանության արդյունքում առանձնացվեցին և հստակեցվեցին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի փոքրամասնություններին վերաբերող կրոնական, պետական, սոցիալական խնդիրները, որոնք անշուշտ դիտարկվեցին ու մշակվեցին նաև իրավական և օրենսդրական տեսանկյունից: Փոքրամասնություններին հուզող հիմնական խնդիրը տվյալ երկրում տիրող թե՛ ազգային և թե՛ կրոնական խտրականությունն է, որ ՄԱԿ-ի գրասենյակի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի տեսանկյունից մարդու իրավունքների ոտնահարում է համարվում: Այլ խոսքով, փոքրամասնություններն իրենց շահերն էին եկել պաշտպանելու՝ միջազգային բարձր ատյաններում լսելի դառնալու համար:

Մամիկոն սարկավագը, որպես Հայաստանում գերակշիռ մեծամասնություն կազմող Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, խոսքի հիմնական շեշտը դրեց մեր ժողովրդի սոցիալական խնդիրների վրա՝ գործազրկություն, ցածր և ոչ կանոնավոր կերպով բաշխվող թոշակներ և աշխատավարձեր, թափառաշրջիկ երեխաների շահագործում՝ հայտարարելով, որ չկա Հայ Եկեղեցի առանց հայ ժողովրդի և ընդհակառակը: Քննարկումների ժամանակ Հայ Եկեղեցու սպասավորը բացասական գնահատեց Հայաստանում աղանդավորական խմբակցությունների վարած մարդորսական (Proselytism) քաղաքականությունը՝ ընդգծելով նաև, որ Հայ Եկեղեցին, իբրև Մայր Եկեղեցի, քրիստոնեական հանդուրժողականություն է ցուցաբերում կրոնական փոքրամասնությունների հանդեպ:

Նշելի է այն փաստը, որ այս ժողովում Ուղղափառ Եկեղեցուց մասնակցում էին միայն երեք ներկայացուցիչներ՝ Հայր Մուրել Նայը՝ Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցուց, Օր. Ելենա Իվանովան՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Պատրիարքարանից, և Մամիկոն սրկ. Ավետիսյանը՝ Հայ Եկեղեցուց, որով պարզ է դառնում, որ Ուղղափառ մեծամասնությունը իր հերթին փոքրամասնություն էր կազմում ժողովի ընթացքում:

Բուն համաժողովից բացի հրավիրված մասնակիցները հնարավորություն ունեցան նաև շրջելու Սիբիու քաղաքի շրջակայքի վանքերն ու եկեղեցիները. հաճույքն ունեցան ճաշի հրավիրվելու գյուղական փոքրիկ համայնքի մեկ հյուրասեր ընտանիքում, ուր սիրալիր կերպով հյուրերին ընդունեցին իրենց ազգային կերակուրներով, տարազով, երգ ու պարով:

Տրանսիլվանիա մարզի Սիբիու քաղաքը, բազմած Կարպատյան լեռնաշղթայի գողտրիկ լանջերին, հայտնի հին էկումենիկ կենտրոն է Ռումինիայի տարածքում, որի նախկին Հերմանշտադ անվանումն ու գերմանական-գոթական մշակույթի ճարտարապետական ոճն իսկ վկայում են, որ այս քաղաքը եղել է հին գերմանական գաղութ: Վերջին տարիներին բազում գերմանացիներ թողել են իրենց տները և գաղթել Գերմանիա: Այստեղ էր գտնվում Լյութերական-Ավետարանական եկեղեցու կենտրոն-առաջնորդարանը, որտեղ էլ սեմինարի բոլոր մասնակիցները Քրիստոֆ եպիսկոպոս Քլայնի կողմից պաշտոնական ճաշկերույթի հրավիրվեցին: Նա իր ողջույնի խոսքում նշեց, որ առաջին անգամն է այսպիսի մեծաթիվ էկումենիկ հյուրեր ընդունում իր հարկից ներս և շատ ուրախ է այդ պատեհության համար: Ճաշկերույթին ներկա էին նաև բարձրաստիճան հոգևորականներ և պաշտոնատար այլ անձինք:

Չնայած ժողովը ուսուցողական բնույթ էր կրում, բայց, այնուհանդերձ, շատ օգտակար էր ինքնաճանաչման, ինքնահաստատման, էկումենիկ փորձառության և մանավանդ նոր կապեր ու ծանոթություններ ստեղծելու տեսանկյունից:

Մեկշաբաթյա քննարկումների արդյունքում ի մի բերվեց և կազմվեց մեկ ընդհանուր նախագիծ, որն արտացոլում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում մարդու իրավունքներին վերաբերող էական հիմնախնդիրներն ու հարցերը:

Ժողովի ընթացքում տրամադրվեց երկու հրավեր էկումենիկ այլ երիտասարդական միջոցառումների մասնակցելու, որը հանձնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական բաժնի գրասենյակին:

Ժողովից հետո Սամիկոն սրկ. Ավետիսյանը առիթ ունեցավ երեք օր հյուրընկալվելու Բուխարեստի Հայոց Առաջնորդարանում՝ թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիկյանի հայրական խնամքի ներքո: Մայիսի 23-ին, կիրակի օրը, Բուխարեստի Սբ. Հրեշտակապետաց առաջնորդանիստ եկեղեցում մասնակցեց առավոտյան ժամերգության, անդաստանին և իբրև սարկավագ Ավետարան կարդաց և վերաբերում կատարեց Սուրբ և Անմահ Պատարագի ժամանակ և վերջում մասնակցեց հոգեհանգստյան արարողության: Մեր մասնավոր շնորհակալությունն ենք հայտնում նաև Հոգեշնորհ Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանին, Արժանապատիվ Տ. Եզրաս քհն. Բոգդանին և Ռադու սարկավագին՝ իրենց եղբայրական ջերմ ու ազնիվ հոգատարության և վերաբերմունքի համար, որոնց շնորհիվ կարողացանք ծանոթանալ Ռումինահայ համայնքի պատմական անցյալին և այսօրվա եկեղեցական կյանքին:

*ՍԱՄԻԿՈՆ ՍՐԿ. ԱՎԵՏԻՍՅԱՆ*
*Միջեկեղեցական բաժնի քարտուղար*

# ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀ

## ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

Հնագույն ավանդության համաձայն, եթովպացիների առաջին մեծ ավետարանողը եղել է Սբ. Ֆրումենտիուսը, որը եպիսկոպոս էր օծվել ձեռամբ Սբ. Աթանաս Ալեքսանդրացու: 4–րդ դարի կեսերին նա և ղպտի ուրիշ քարոզիչներ շատերին դարձի են բերում՝ ներառյալ թագավորին: Շուտով քրիստոնեությունը դառնում է Եթովպիայի պետական կրոնը, հակառակ այն բանի, որ հեթանոսությունը տակավին լայնորեն տարածված էր այդ երկրում:

5–րդ դարի վերջերին «Ինն Սրբերը» գալիս են Եթովպիա և սկսում քարոզչական գործունեություն: Նրանք հավանաբար ունեին ասորական ծագում և լքել էին իրենց երկիրը՝ քաղկեդոնական քրիստոսաբանության հանդեպ ունեցած հակառակության պատճառով: Սա, Եգիպտոսի ղպտիների հետ ունեցած ավանդական կապերի հետ մեկտեղ, հավանաբար բացատրում է Եթովպական Եկեղեցու՝ Քաղկեդոնի մերժումը: Ինն Սրբերին է վերագրվում վանական ավանդության ներմուծումը Եթովպիա և Ջիզ (Gə'ez) կրոնական գրականությանը՝ Աստվածաշունչն ու կրոնական երկերը եթովպական դասական այդ լեզվի փոխառությամբ, էական նպաստ բերելը: Վանքերն արագորեն տարածվում են ամբողջ երկրով և դառնում մտքի կարևոր կենտրոններ:

Եթովպական Եկեղեցին զարգացման իր գագաթնակետին է հասնում 15–րդ դարում, երբ մեծ թվով արժեքավոր աստվածաբանական և հոգևոր գրականություն է ստեղծվում, և եկեղեցին ներառվում է ընդարձակ քարոզչական գործունեության մեջ:

16–րդ դարում պորտուգալացի հռոմեա-կաթոլիկ քարոզիչների հետ շփման ծայրահեղ բացասական փորձառությունը պատճառ է դառնում դարավոր մեկուսացման, որից Եթովպական Եկեղեցին միայն վերջերս է դուրս եկել:

Այս Եկեղեցին բացառիկ է հրեական այնպիսի սովորույթների իր պահպանմամբ, ինչպիսիք են թլպատությունը և դիետիկ օրենքներն ու Շաբաթ, ինչպես նաև Կիրակի օրերի պահպանումը:

Սա պայմանավորված է թերևս այն հանգամանքով, որ քրիստոնության հնագույն ներկայությունը Եթովպիայում սկսվել էր անմիջապես Պաղեստինից՝ հարավային Արաբիայի միջով: Կային նաև քրիստոսաբանական որոշ (պաշտոնապես չընդունված) դրսևորումներ, ինչպես, օրինակ, մի դպրոց, որն ուսուցանում էր, թե Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միությունը տեղի է ունեցել Իր մկրտության՝ օծման պահին:

Հին եթովպերեն լեզուն՝ Ջիզը, ավանդաբար օգտագործվել է ծիսակատարությունների ընթացքում, որն ուներ ալեքսանդրյան (ղպտական) ծագում և ազդվել էր ասորական ավանդությունից: Այդուհանդերձ, ժամանակակից ամհարիկի թարգմանված Պատարագն աստիճանաբար սկսեց օգտագործվել համայնքներում: Վանական ուժեղ ավանդությունը շարունակվեց:

Յնացույն ժամանակներից եթովպիայի բոլոր եպիսկոպոսները եգիպտացի դատիներ էին՝ նշանակված Ղպտի Պատրիարքության կողմից: Իրապես, դարեր շարունակ Եթովպիայի միակ եպիսկոպոսը ղպտի մետրոպոլիտն էր: 1929 թ. համընդհանուր պահանջով ծագումով 4 եթովպացի եպիսկոպոսներ ընտրվեցին՝ օժանդակելու համար բնիկ եգիպտացի մետրոպոլիտին: 1951 թ. առաջին անգամ եթովպացի հոգևորականության և աշխարհիկների կողմից ընտրվեց ծագումով եթովպացի մետրոպոլիտ: 1959 թ. Ղպտի Պատրիարքությունը վավերացրեց եթովպական եկեղեցու անկախությունը՝ նրա առաջնորդին բարձրացնելով Պատրիարքի աստիճանին:

Եթովպական ուղղափառ աստվածաբանության ֆակուլտետը՝ Երրորդության քոլեջը, գործում էր որպես Ադդիս Աբեբայի Յամալսարանի մի մասնաճյուղ, մինչև որ 1974 թ. այն փակվեց կառավարության կողմից: Նույն տարում եկեղեցին, քահանայանալ ցանկացողներին աստվածաբանական կրթություն տալու նպատակով, Ադդիս Աբեբայում բացեց Սուրբ Պողոսի քոլեջը: Ուղղափառ եթովպացի շատ տղամարդկանց մոտ երկար ժամանակ ծեռնադրվելու միտում էր նկատվում, այնպես որ 1988 թ. երկրում հաշվվում էր շուրջ 250.000 հոգևորական: Նրանց համապատասխան կրթական մակարդակը ապահովելու նպատակով, վերջերս հիմնվեցին վեց «Յոգևորականության վերապատրաստման կենտրոններ»: Այժմ ամեն ծուխ ակնկալում է ունենալ կիրակնօրյա դպրոցի ծրագիր:

